Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

# ԲԱԶԵՅԱՆ ԿԱՐԻՆԵ
# 1918-1921ԹԹ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԿՑԻՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ
**Նյութերի ժողովածու**

Republic of Armenia National Academy of Sciences
Shirak centre of Armenological studies

# BAZEYAN KARINE
# REFLECTIONS OF 1918-1921 EVENTS IN THE VERBAL MEMORY OF SHIRAK PEOPLE
**Collection of materials**

Республика Армения Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

# БАЗЕЯН КАРИНЕ
# СОБЫТИЯ 1918 – 1921-х ГОДОВ В УСТНЫХ ВОСПОМИНАНИЯХ ШИРАКЦЕВ
**Сборник материалов**

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Բ 163

Նյութերի ժողովածուն հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի գիտական խորհուրդը:

*Գիրքը հրատարակվել է Հայագիտական ուսումնասիրությունները
ֆինանսավորող համահայկական հիմնադրամի դրամաշնորհով:*

Գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտոր Ա. Մարուքյան,
պատմ. գիտ. թեկնածու Կ. Փահլևանյան
Գլխավոր խմբագիր՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Հայրապետյան
Խմբագիր և ծանոթագրությունների կազմող՝ Գ. Աղանյան
Քարտեզի հեղինակ՝ Լ. Գևորգյան

**Բ 163 Բազեյան Կարինե,** 1918-1921 թթ. իրողությունները շիրակցիների բանավոր հիշողության մեջ. Նյութերի ժողովածու – Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2023, 283 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Ալեքսանդրապոլի գավառի 1918-1921 թթ. իրողությունների ու դրանց սոցիալ-տնտեսական ու մշակութային հետևանքների մասին Շիրակի մարզի 40-ից ավել բնակավայրերի շուրջ 60 բանասացներից հավաքած հիշողություններն ու բանավոր պատմությունները, որոնք համադրվել են մասնագիտական գրականության և արխիվային նյութերի հետ: Վերոհիշյալ նյութերի հիմամբ կազմվել է թուրքական արշավանքների հետևանքները ներկայացնող քարտեզ: Այն նախատեսված է պատմաբանների, ցեղասպանագետների, բուհերի հումանիտար ֆակուլտետների դասախոսների, ուսանողների և այս ոլորտով հետաքրքրվող անձանց համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-1-1756-0
© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2023
© Կարինե Բազեյան, 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հեղինակի կողմից……………………………………………………………………………4

§1 Ձեռագիր անտիպ և տպագիր հիշողություններ……………………13

§2 Բանավոր հիշողություններ………………………………………………25

Նյութեր…………………………………………………………………………………56

§3 Գրավոր հիշողություններ…………………………………………………57

§4 Բանավոր հիշողություններ………………………………………………102

Ծանոթագրություններ………………………………………………………245

Բանասացների աղյուսակ…………………………………………………250

Տեղանունների ցանկ…………………………………………………………255

Reflections of 1918-1921 events in the
verbal memory of Shirak People……………………………………262

События 1918 – 1921-ых гг.
в устных воспоминаниях ширакцев ………………………………270

Հավելված……………………………………………………………………………279

# ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

XX դարի առաջին քսանամյակը հայ ժողովրդի կյանքում ողբերգական, միևնույն ժամանակ հերոսական իրադարձություններով լի ժամանակաշրջան էր: Առաջին աշխարհամարտը, Հայոց Մեծ եղեռնը, Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումն ու անկումը, օսմանյան և քեմալական զորքերի արշավանքները, Մայիսյան հերոսամարտերը և երկրի խորհրդայնացումը անջնջելի հետք թողեցին ժողովրդի պատմական հիշողության մեջ: Ի տարբերություն գիտական կամ պաշտոնական պատմագրության, որը կամա, թե ակամա քաղաքականացված է և լեցուն է կարծրատիպերով, այսպես կոչված ժողովրդական պատմագրությունը զերծ է կաղապարված կարծրատիպային գնահատականներից, քիչ է քաղաքականացված, քանի որ իր հիմքում ունի բանավոր, սերնդե սերունդ փոխանցվող պատմական հիշողությունը: Գիտական և ժողովրդական պատմագրությունների մոտեցումները միշտ չէ, որ համընկնում են մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի քաղաքական պատմության ընկալումների, գնահատականների ու հետևությունների հարցերում: Վերոհիշյալը ցայտուն երևում է 1918-1921թթ. թուրքական երկու արշավանքների մասին Շիրակի բնակչության բանավոր հիշողության մեջ:

Ինչպես հայտնի է կարծրատիպերը արդյունք են բազմակողմանի, ամբողջական ինֆորմացիայի պակասի: Դրանք կշարունակեն իրենց գոյությունը քանի դեռ պատմական իրողությունները քննության կառնվեն առանց հաշվի առնելու դրանց նախորդող իրադարձությունները, քանի դեռ հանրայնացված չեն բազմաթիվ արխիվային նյութերը, քանի դեռ ըստ արժանվույնս և անաչառ

գնահատված չեն պետական քաղաքական բազմաթիվ գործիչները և տեղայնացված չեն համահայկական նշանակություն ունեցող դեպքերը: Վերոհիշյալ և շատ այլ հարցերի ուսումնասիրությունը առավել ամբողջական կդառնա, երբ օգտագործվեն և գիտական շրջանառության մեջ դրվեն նաև այդ մասին բանավոր պատմությունները ու հիշողությունները: Պատմության այս կամ այն դրվագի, իրադարձության մասին ժողովրդի մեջ առկա պատկերացումների վերականգնումը բարենպաստ հող է նախապատրաստում պատմական ու ազգագրական ամբողջական ուսումնասիրությունների համար, քանի որ հնարավորություն է տալիս «ներսից» հասկանալ մշակութային նախընտրությունների և արժեքային կոնֆլիկտների աշխարհը:

Չնայած այն հանգամանքին, որ հայ պատմագրության մեջ Արևելյան Հայաստանում թուրքերի գործողությունները համարվում են ցեղասպանության քաղաքականության շարունակականություն, սակայն դեռ լիովին բացահայտված և հասարակության կողմից գիտակցված չեն: Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921 թթ. դեպքերն անմիջականորեն պայմանավորված են դրանց նախորդած իրադարձություններով, որոնք էին շարունակվող ցեղասպանությունը, թուրքական ժխտողական ռազմավարությունը, արևմտահայ գաղթականության և որբերի հոծ խմբերի առկայությունը, 1917թ. ռուսական փետրվարյան հեղափոխությունն ու հոկտեմբերյան հեղաշրջումը, բանակի բարոյալքումը, Այսրկովկասում ստեղծված նոր իշխանությունների գործելակերպը, սոցիալ-տնտեսական ծանր դրությունը, մեծ տերությունների երեսպաշտությունը, հայ քաղաքական մտքի ոչ ճկունությունը և այլն: Հիշյալ իրողություններն իրենց ազդեցությունը թողեցին մարդկանց ճակատագրերի, տրամադրությունների, ապրելակերպի վրա և պայ-

մանավորեցին բնակչության սոցիալական պրակտիկաներն ու առօրյա կյանքը՝ իրենց հետքը թողելով գավառի բնակչության աշխարհընկալման վրա, արժեհամակարգում, ինչն էլ ամրագրվեց նրանց պատմական հիշողության մեջ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է դառնում տարբերակել անցյալի այն կերպարը, որը գոյություն է ունեցել ավանդական կամ գոյություն ունի ժամանակակից հասարակական գիտակցության մեջ, այսինքն՝ սոցիալական հիշողությունը մի կողմից և մասնագիտական գրավոր պատմությունը՝ մյուս կողմից: Սոցիալական հիշողություն ասելով նկատի ունենք հասարակական և մշակութային երևույթների շատ լայն շրջանակ, ներառյալ ինչպես առարկայացված հիշողությունը, այնպես էլ գործողության մեջ հիշողությունը: Սրա հետ մեկտեղ, կա անհատական հիշողություն, որը կապված է կամ իր սեփական փորձի հետ, կամ այն, ինչին մարդը ժառանգում է իր ամենամոտ նախնիներից՝ անձնական հիշողություններ, նամակներ, լուսանկարներ, ընտանեկան ժառանգություններ և այլն: Ավելին, նման հիշողությունը կարող է խստորեն համաձայնել անցյալի այն վարկածի հետ, որը մարդկանց պարտադրվում է պաշտոնական ուղիներով: Ըստ Հալվբաքսի, «անհատական հիշողությունը հիմնված է ոչ թե սովորած, այլ ապրած պատմության վրա», և, հետևաբար, այն կարճաժամկետ է: Իսկ սոցիալական հիշողությունը պարունակում է իդեալականացված և պարզեցված խորհրդանշական պատկերներ, որոնք այլևս անձին չեն պատկանում, այլ խմբին:[1]

[1] Шнирельман В.А., Социальная память: вопросы теории, Историческая память и российская идентичность / под. ред. В.А. Тишкова, Е.А. Пивневой. М.: РАН, 2018, с. 12-35.

Թերևս հենց սա նկատի ունենալով է, որ տարիներ շարունակ գրավոր ու բանավոր ձևով, նպատակային ու ծրագրավորված, հավաքվել են հայոց Մեծ Եղեռնի ականատեսների հիշողություններն ու պատմությունները, որոնք համարվում են թուրքական եղեռնագործությունների կարևորագույն վկայություններ:[2] Նույն ծավալներով և հետևողականությամբ չեն հավաքվել ու հանրայնացվել արևելահայության ջարդերի ու Արևելյան Հայաստանում թուրքերի կատարած ոճրագործությունների, դրանց տնտեսական ու սոցիալ-մշակութային հետևանքների վերաբերյալ հիշողությունները, բացառությամբ Վ.Հախոյանի մի քանի արժեքավոր հրապարակումների[3]:

Այս հանգամանքը նկատի ունենալով ՇՀՀԿ գիտաշխատողների խումբը (ղեկ. պ.գ.թ. Կ. Բազեյան, անդամներ՝ պ.գ.թ. Կ. Ալեքսանյան և երիտասարդ հետազոտող Ա. Շահինյան) 2018 թ. դիմեց ՀՀ Գիտության Պետական կոմիտեի մրցույթին և ստացավ դրամաշնորհ՝ «1918-1921 թթ. իրողությունները Շիրակի բնակչության պատմական հիշողության համատեքստում» թեմայի իրականացման համար, որի շրջանակներում հատուկ կարևորություն էր

---

[2] Տե՛ս Սվազլյան Վ., Մեծ եղեռն. արևմտահայոց բանավոր վկայություններ, Եր. 1995; Նույնի՝ Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը,Եր. 2000; Նույնի՝ Հայոց ցեղասպանություն. ականատես վկայողների վկայություններ, Եր. 2011 և այլք:

[3] Վ. Հախոյանը Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի գավառակում թուրքերի կողմից իրականացված ոճրագործությունների մասին արժեքավոր հիշողություններ է հավաքել, որոնց հիման վրա հրատարակել է մի քանի հոդված: Տես՝ Հախոյան Վ., Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Փամբակի տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես վերապրածների ընտանեկան հիշողությունների (1920-1921 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 9, հ. 1(2021), էջ 83-122; «Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Ալեքսանդրապոլի գավառում (1920-1921թթ.)», Հայագիտության հարցեր, 3 (24), 2022:

տրվում բանավոր պատմությունների գրանցմանը՝ վեր հանելու այն դեպքերն ու իրողությունները, որոնք վերագնահատման կարիք ունեն: Ըստ այդմ նախատեսվել էր գրանցել Ալեքսանդրապոլի գավառի 1918-1921 թթ. իրողությունների ու դրանց սոցիալ-տնտեսական ու մշակութային հետևանքների մասին Շիրակի բնակչության մեջ պահպանված հիշողություններն ու բանավոր պատմությունները, դրանք համադրել մասնագիտական գրականության և արխիվային նյութերի հետ:

Այդ նպատակով ուսումնասիրվել են թեմայի վերաբերյալ առկա գրականությունը, մամուլի նյութերը և հետազոտական աշխատանքներ կատարվել ՀՀ տարբեր արխիվներում ու թանգարանների հավաքածուներում: Վերոհիշյալ ուսումնասիրությունների արդյունքում դուրս են բերվել մինչ օրս գիտական շրջանառության մեջ չդրված արխիվային բազմատեսակ ու հարուստ նյութեր: Մասնավորապես Հայաստանի ազգային արխիվում ուսումնասիրվել է 221 ֆոնդը, որտեղ հավաքված են «Իմպերիալիստական պատերազմի ժամանակ հայերի կրած վնասները որոշող բյուրոյի» գործունեությանը վերաբերող նյութերը: Այստեղից դուրս են բերվել 1914-1918թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ կրած վնասների մասին Քննիչ հանձնաժողովի գրությունները, Ալեքսանդրապոլի բնակիչների կորուստների մասին ցուցակները, իրենց վնասները փոխահատուցելու վերաբերյալ Ալեքսանդրապոլի գավառի բնակիչների խնդրագրերը, Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության կողմից հավաքած ցուցակները գավառի գյուղերի վնասների մասին, Ալեքսանդրապոլի գավառի բնակիչների ցուցակները թուրքերի կատարած գազանությունների և թալանի վերաբերյալ, Ալեքսանդրապոլի գավառի մի շարք գյուղերի բնակիչների ցուցակները իրենց կրած վնասների մասին, Ալեքսանդրապո-

լում ՀՀ ներկայացուցիչ Գ.Խոյեցյանի ցեկուցումը ՀՀ արտգործնախարարին Ալեքսանդրապոլում տիրող իրավիճակի մասին, հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի գրությունները զանազան անձանց՝ հայ ժողովրդի կրած վնասների և հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմում ռազմական պատմական ակնարկ գրելու վերաբերյալ և այլն: Ուսումնասիրվել են նաև ազգային արխիվի 1456 ֆոնդը՝ Ատրպետի հուշերը և 57 ֆոնդը՝ Արտակ Վարդապետի հուշերը:[4]

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում ուսումնասիրվել են Պարույր Բարսեղյանի «Եղելություններ. Գյումրի, Ալեքսանդրապոլ, Լենինական» (ձեռագիր) և Հրաչ Մկրտչյանի «Շիրակի բանահյուսական նյութեր» (մեքենագիր) հավաքածուները, որտեղից դուրս են բերվել նրանց կողմից գրանցված՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի

[4] Այդ մասին տես՝ Ալեքսանյան Կ., Վիրաբյան Ա., Շիրակի թեմի առաջնորդ Արտակ Վարդապետի հուշերը 1918 թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը թուրքերի կողմից գրավելու մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, 2020, N 129, էջ 85-119, Կ.Ալեքսանյան, Թուրք-հայկական հարաբերությունները Ալեքսանդրապոլի գավառի բռնազավթման շրջանում 1918-1921թթ, Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ, 2015, հ.35, էջ 293-327; Նույնի՝ Ալեքսանդրապոլի գավառի բնակչության կորուստները թուրքական բռնազավթման շրջանում՝ 1918 թ. մայիս-դեկտեմբերին, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ.23 (1), 2020, էջ 92-104; նույնի՝ Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի զեկուցումները Արտաքին գործերի նախարարին՝ ներկայացուցչության գործունեության և Ալեքսանդրապոլի գավառի դրության վերաբերյալ (1918թ. սեպտեմբեր-դեկտեմբեր), Բանբեր Հայստանի արխիվների 2014, թիվ 1, էջ 112-149, նույնի՝ Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ, Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2012թ., 512 էջ :

ու 1918-1920 թթ. թուրքական արշավանքների մասին առանձին մարդկանց հիշողություններն ու պատմությունները:[5]

Ուսումնասիրություններ են կատարվել նաև Բաթումի պետական արխիվում, որտեղ թվայնացվել (սկանավորվել) են պետական փաստաթղթեր[6], որոնցից հատկապես կարևոր են, պատմական, աղբյուրագիտական բացառիկ արժեք ներկայացնող՝ Բաթում քաղաքի և համանուն մարզի կառավարման խորհրդի նախկին նախագահ Պ.Մասլովի մեքենագիր հիշողությունները[7]: Այս հուշերում տեղ գտած փաստերը, որոնք վերաբերում են Արևմտյան Վրաստանի Աջարիայի տարածաշրջանում թուրքական օկուպացիային, արժեքավոր են Ալեքսանդրապոլի գավառում 1918 թ. թուրքական բանակի ներխուժման, օկուպացիայի ու դրա հետ կապված իրողությունների հետ ընդհանրություններն ու տարբերությունները վեր հանելու և համեմատական վերլուծություն կատարելու առումով:

Որոշ հուշային և բանահյուսական նյութեր ձեռք են բերվել նաև առանձին անհատներից: Օգտագործվել են նաև Շիրակի առանձին

---

[5] Բարսեղյան Պ., Եղելություններ. Գյումրի, Ալեքսանդրապոլ, Լենինական և այլ վայրերի, Երևան 1967, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (հետայսու ՀԱԻԲԱ), FFV, Հ. Մկրտչյան, Շիրակի բանահյուսական նյութեր, թղթապանակ N 1, «Իրապատումներ», ՀԱԻԲԱ չմշակված ֆոնդ:

[6] Доклад члена Уполномоченного Ардануче-Шавшетского района о состоянии и возвращении беженцев на их прежные места жительства, Протоколы заседания Батумского областного комитета помощи беженцам, пострадавшим от войны и переписка по вопросу помощи беженцам, Государственный архив Аджарии, fond. i- 67, op. 1, del. 4.

[7] Воспоминания Маслова/бывшего председателя совета по управлению Батумом и ее областью, Государственный архив Аджарии, fond. i- 67, del. 13, 14.

բնակավայրերին նվիրված հայրենագիտական բնույթի,[8] հուշային[9] և այլ հրատարակություններ[10], որոնք հարուստ նյութեր են պարունակում սույն թեմայի վերաբերյալ:

Երկրորդ փուլի համար նախատեսված աշխատանքների շրջանակում կատարվել են համակողմանի դաշտային հավաքչական աշխատանքներ Շիրակի մարզի Ամասիայի, Աշոցքի, Ախուրյանի, Անիի, Արթիկի նախկին վարչական շրջանների 40-ից ավելի գյուղերում և Գյումրի քաղաքում, որի արդյունքում գրանցվել է շուրջ 60 հիշողություն: Կարևոր ենք համարում փաստել, որ գրանցված նյութերը, ցավոք, ականատեսների ու դեպքերի անմիջական մասնակիցների վկայությունները չեն, այլ նրանց սերունդների, որոնք լսել են իրենց մեծերի՝ ծնողների կամ տատիկ-պապիկների պատմությունները սկսած մանուկ հասակից մինչև երիտասարդության տարիները: Մեր բանասացները երկու սեռի տարբեր տարիքի ներկայացուցիչներ են, որոնցից ամենամեծը 1925, իսկ ամենակրտսերը՝ 1987 թ. ծնունդ են, մնացածները գերազանցապես 1930-1960-ական թվականներին ծնվածներ:Անշուշտ, ինչպես նշում են հենց բանասացները, շատ մանրամասներ մոռացվել են, շատե-

---

[8] Իկիլիկյան Հ., Գյուղ Ախուրյանի ափին, Եր. 1986; Իկիլիկյան Վ., Ազատանն ու ազատանցին, Գյումրի, 2007; Կնյազյան, Նոր Կյանք գյուղի պատմությունը, Եր. 2001; Մելիքյան Հ., Մարալիկի հնագույն գերդաստաններից մեկի պատմությունը, Եր. 2008; Վիրաբյան Ս., Շիրակի Գեղանիստ, Եր. 2013; Խաչատրյան Մ., Տիկոր Բանդիվան, Եր. 2013:

[9] Իրազեկ Յ., Մոտիկ անցեալից: Պատմական դեպքեր և ապրումներ. 1917-1922, Պեյրութ, 1956; Ավագյան Ի., Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից. Աղասի Մակարյանի հուշապատումը, Գյումրի 2015; նույնի՝ Մեր գնդի ճակատագիրը. Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը, Գյումրի, 2016:

[10] 1918 թ. Շիրակի մայիսյան գոյամարտը, 1918 թ. մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ. 1918 թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության 85 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր. 2005:

րը դրվագային բնույթ ունեն, բայց դա չի նվազեցնում դրանց փաստական, աղբյուրագիտական արժեքը:[11]

Հիշողության պահպանման գործում որոշակի դեր են խաղում պատմական լանդշաֆտները, ինչպես նաև պատմական տարածքների սահմանների վերաբերյալ գաղափարները:[12] Հատկանշական է, որ մեր բոլոր բանասացները հստակ հիշում ու ցույց էին տալիս այն վայրերը, որտեղ իրականացվել էին մարդկանց սպանությունները, անկախ այն բանից խոսքը գնում է մեկ մարդու, թե մարդկանց խմբի մասին (տան, բակի, գյուղի, որ մասում և գյուղից դուրս որ ձորում): Այս հանգամանքը նկատի ունենալով խումբը յուրաքանչյուր գյուղում, ձայնագրություններին զուգընթաց, իրականացրել է նաև վերոհիշյալ դեպքերին առնչվող տեղավայրերի արձանագրում: Այդ նյութերի հիմամբ կազմվել է 1918 և 1920 թթ. թուրքական արշավանքների հետևանքները ներկայացնող քարտեզ, որը դրված է աշխատության հավելվածում:

Հարկ է նշել, որ մեր կողմից գրանցված բանավոր հուշերը, հուշագրություններն ու արխիվային փաստաթղթերը առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Ձայնագրությունները թվայնացվել են պահպանելով ասացողի լեզուն, իսկ ռուսերեն արխիվային տեքստերը ներկայացվել են հայերեն թարգմանությամբ:

---

[11] Ծրագրի շրջանակում հավաքված բանավոր, գրավոր և արխիվային նյութերը թվայնացված և ձայնագրված տարբերակներով պահվում են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվում:

[12] Шнирельман В. А., Социальная память: вопросы теории, Историческая память и российская идентичность / под. ред. В.А. Тишкова, Е.А. Пивневой/, М., РАН, 2018, с.18.

## §1 ՁԵՌԱԳԻՐ ԱՆՏԻՊ ԵՎ ՏՊԱԳԻՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության մեջ ի սկզբանե օգտագործվել են ականատեսների բանավոր հիշողություններն ու գրավոր հուշագրությունները՝ որպես արժեքավոր ու կարևոր սկզբնաղբյուրներ: Հիշողություններ պարունակող փաստաթղթերը, որոնցում տարբեր մասշտաբներով կամ ծավալով ամրագրված են նախկինում կատարված դեպքերը, իրողություններն ու առանձին փաստերը, երկու տեսակի են՝ հենց փաստագրական հիշողություն և պատմական փաստավավերագրական հիշողություն:[13] Փաստավավերագրական հիշողությունն ունի առնվազն չորս բաղադրիչ: Նախ, դա յուրաքանչյուր կոնկրետ մարդու հիշողությունն է, ով, Աստծո կամ Բնության կամքով ապրել է Երկրի վրա: Երկրորդ, դա անցյալի առօրեականության յուրաքանչյուր պահի մասին հիշողությունն է, որում ապրել է մարդը: Երրորդ, դա անցյալում տեղի ունեցած փաստերի, երևույթների, իրադարձությունների, գործընթացների մասին հիշողությունն է, որոնք որոշել են մարդկանց կենսագործունեությունն ու առանձին, կոնկրետ մարդկանց ճակատագիրը և, հակառակը, հիշողությունը մարդկային այն գործունեության մասին, որը կանխորոշել է անցյալի որոշակի իրադարձություններ, փաստեր, երևույթներ, գործընթացներ: Չորրորդ, փաստավավերագրական հիշողությունը կարող է հանդես գալ որպես անցյալ կյանքի կազմակերպման իրավական բաղադրիչ, որը կա-

[13] Козлов В. П., Документальная память в архивоведческом, археографическом и источниковедческом знании, // Историческая память и российская идентичность / под. ред. В.А. Тишкова, Е.А. Пивневой. М.: РАН, 2018, с. 424. http://www.valerytishkov.ru/engine/documents/document2625.pdf

րող է ուղղակի կամ անուղղակի նշանակություն ունենալ ներկայի համար: Փաստավավերագրական հիշողությունն ունի արտահայտման չորս ձև՝ բանավոր կամ գրավոր, տեսողական, ձայնային և համակցված:[14]

Վերը հիշատակված Պ.Ն.Մասլովի մեքենագիր հուշերը պատմական փաստավավերագրական հիշողության տիպական օրինակ է, քանի որ ունի դրան բնորոշ բոլոր հատկանիշները, ուստի և որոշակի հետաքրքրություն է ներկայացնում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հարավային Կովկասում ընթացող գործընթացները «միջից» տեսնելու ու եզրակացություններ անելու առումով:

Կադետական գործիչ Պ.Ն. Մասլովն ապրել և աշխատել է Բաթումիում մինչև հոկտեմբերյան հեղաշրջումը: Եղել է Բաթումի դումայի պատգամավոր: Բրիտանական օկուպացիայի տարիներին նա համագործակցել է վերջիններիս հետ և ղեկավարել նրանց ստեղծած Բաթումի շրջանի կառավարման խորհուրդը: Իր հիշողությունները նա գրանցել է Ռուսաստանից արտագաղթելուց հետո՝ 1920-ական թթ, որի բնօրինակը գտնվում է Պրահայի Ռուսական արտասահմանյան պատմական արխիվում (№8140): Հետագայում դրա կրկնօրինակը բերվել է Բաթում և պահվում է Աջարական ինքնավար հանրապետության արխիվում՝ «գաղտնի» գրիֆով (մակագրությամբ), որը դրվել է խորհրդային տարիներին և դեռ չի հանվել, չնայած այս հիշողություններում չկա որևէ բան, որը պետական գաղտնիք է պարունակում կամ կարող էր վտանգ ներկայացնել երկրի համար: Ուղղակի խորհրդային գրաքննությունը

[14] Козлов В. П., նշվ. աշխ.:

Մաալովի կարծիքը՝ որպես բուրժուական տարրի, համարել է վնասակար, ուստի և որակել «գաղտնի»:

Այս հուշերում տեղ են գտել փաստեր, նկարագրություններ ու անձնական տպավորություններ, որոնք վերաբերում են Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հարավային Կովկասում ու մասնավորապես Աջարիայում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձություններին, թուրքական արշավանքներին ու տեղի ժողովուրդների հետ նրանց հարաբերություններին, Բաթումի գրավմանը, Բաթումի պայմանագրի կնքմանը և այլ իրողությունների:

Հուշերը ներկայացված են երեք հատորով, որոնցից յուրաքանչյուրում դեպքերը նկարագրված են առանձին՝ համապատասխան վերնագրեր ունեցող գլուխներում, որոնք են.

1. Բաթումին և Բաթումի շրջանը մինչև պատերազմը – էջ 1:
2. Մեծ պատերազմը 1914-1917 թթ.- էջ 14:
3. Հեղափոխությունը. Ամառ 1917 թ. -էջ 24:
4. Կոռնիլովյան ելույթը և իրական խռովության սկիզբը. Սահմանադիր ժողովի ընտրությունները - էջ 54:
5. Խռովության զարգացումը և իշխանության կաթվածահարությունը - էջ 66:
6. Ողբերգական իրադարձությունները Անդրկովկասյան երկաթուղու երկարությամբ. ճակատի փլուզման հետևանքները - էջ 91:
7. Բրեստ-Լիտովսկի հաշտության հետևանքները. Բաթումի գրավումը – էջ 109:
8. Թուրքերի առաջին քայլերը Բաթումիում – էջ 137:
9. Վրաստանի և Հայաստանի անկախության հռչակումը. Հաշտություն թուրքերի հետ – էջ 156:
10. Թուրքերը Բաթումում /1918 թ. ապրիլ-հոկտեմբեր/ - էջ 167:

11. Թուրքական տիրապետության անկումը. Անգլիացիների առաջին քայլերը Անդրկովկասում – էջ 215:
12. Անգլիական զորքի ժամանումը. Նոր իշխանության կազմակերպումը Բաթումի շրջանում – էջ 225:
13. Բաթումի շրջանի կառավարման խորհրդի գործունեությունը. Քաղաքական դրությունը – էջ 337:
14. Անգլիական քաղաքականության մուտքը նոր փուլ. Բաթումի շրջանի կառավարման խորհրդի ցրումը – էջ 260:
15. Գլխավոր իրադարձությունները Անդրկովկասում 1919թ. սկզբից մինչև 1920 թ. հունիսը – էջ 274:
16. Անգլիական կառավարումը Բաթումիում. Բաթումի գրավումը վրացիների կողմից – էջ 282:
17. Ղրիմում. Փախուստի մեջ. Եզրակացություններ – էջ 291:

Մեզ համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում թուրքերի կողմից հայերի կոտորածների, հայ-թաթարական բախումների, հայերի ու Հայաստանի նկատմամբ թուրքերի ու թաթարների վերաբերմունքի, նրանց պանթուրքական ու պանիսլամիստական նկրտումների մասին հեղինակի վկայությունները:

Չնայած Մասլովը նկարագրում է Բաթումիում, Աջարիայում ու Թիֆլիսում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները, սակայն անդրադարձել է նաև դրանց հետ կապված այլ բնակավայրերի ու տարածաշրջանների իրողություններին, մասնավորապես Արևմտյան Հայաստանում թուրքերի կողմից իրականացրած հայերի կոտորածներին: Այս դեպքում նա ականատես չէ, բայց իր կողմից բերված փաստերը հիմնավորում է ռուսական պետական մարմինների կողմից հաստատված նյութերով: Մասլովը գրում է. «Այդ ժամանակ արդեն հայտնի դարձան թուրքերի կողմից Փոքր Ասիայում հայերի նկատմամբ կատարված գազանությունները: Աջարի-

այում իրենց հարձակման ժամանակ թուրքերը նույն տակտիկան էին կիրառում. Հայկական բնակավայրերը ամբողջովին թալանում էին, իսկ մի քանիսում բնակիչներին զանգվածաբար սպանում: Բնական է, որ երբ ռազմական հաջողությունը թեքվեց ռուսական զորքերի կողմը, հայերը, վրեժխնդրությամբ լցված, դարձան մեր ամենանվիրված օգնականները: Նրանք խանդավառությամբ էին դիմավորում մեր առաջխաղացող զորքին և սիրով մատնացույց էին անում դավաճան աջարներին: Իհարկե, եղան նաև կեղծ մատնություններ, բացի այդ, հայերն իրենք զենք վերցրին ու իրենց հերթին ոչնչացրին մի քանի մահմեդական գյուղեր: Ճիշտ է, դա տեղի ունեցավ այն տարածքում /Արդվինից դեպի Արդանուճ ճանապարհին/, որտեղ մի քանի ամիս առաջ թուրքերը անդունդն էին գցել 300 հայերի՝ նախապես նրանց 5-6 հոգով կապելով պարաններով: Անդունդի հատակին գտնված հայրենակիցների քայքայված դիակները հայերին մղեցին դեպի իրենց մահմեդական հարևանների նկատմամբ արյունոտ դատաստանի:»[15]

Հայերի կոտորածներին անդրադառնում է նաև դեպի Բաքու թուրքական բանակի առաջխաղացման մասին պատմելիս. «Հայերը խառնվեցին: Չխոսելով դեռ այն հսկայական ունեցվածքի մասին Բաքվում, որ գտնվում էր նրանց ձեռքում (նավթային արդյունաբերություն, բանկեր, տներ), նրանց աչքին երևում էր հայ ժողովրդի կործանման սպառնալիքը: Այո, ճիշտն ասած հայերի մտահոգությունն ու վախը հիմքեր ունեին. բոլոր հայերի հիշողության մեջ էին 1914-15 թթ. Փոքր Ասիայում հայերի նկատմամբ թուրքական գազանությունները: Եվ եթե հեռուներից ժողովրդական պատումների ձևով տեղ էին հասնում սահմռկեցուցիչ, սակայն պաշտոնա-

---

[15] Воспоминания Маслова, ст. 19.

պես չստուգված տեղեկություններ (չնայած Էրցբերգերն իր «Հիշողություններում» որոշակիորեն խոսում է տասնյակ հազարավոր հայերի ոչնչացման մասին), ապա Աջարիայում ու Տրապիզոնում հայերի զանգվածային (այդ թվում կանանց ու երեխաների) սպանություններն ու սարսափելի պայմաններում Փոքր Ասիայի խորքերը տեղափոխելու դեպքերը փաստագրորեն հաստատվել են ռուսական ռազմական ղեկավարության կողմից: Տրապիզոնում, օրինակ հայերին՝ 3-4-ական մարդ, կարում էին պարկերի մեջ ու խեղդում ծովում: [16]»

Հայ-թաթարական բախումների մասին նրա հիշողությունները վերաբերում են Վրաստանի ու Բաքվի հայերի հետ ընդհարումներին, մասնավորապես գրելով. «Ռուսական զորքի հեռանալու հետևանքները բառի բուն իմաստով կործանարար էին ոչ միայն տեղի ռուսների, այլև ողջ Անդրկովկասի համար: Անարխիան ուժգնանում էր ռուսական ռազմական ուժի կրճատմանը համապատասխան, որի ներկայությունը՝ նույնիսկ անկազմակերպ ու կազմաքանդված, զսպում էր կրքերը: Հատկապես կատաղեցին թաթարները՝ զինվելով ու իրենց զգալով բացարձակապես անպատիժ: Նրանց առաջնորդները առանձնապես ազդեցություն չունեին իրենց վրա, և, ճիշտն ասած, առանձնապես չէին էլ փորձում հետ պահել իրենց ազգակիցներին այլազգի հարևաններին թալանելուց ու բռնություններից: ... Հայերի վիճակը դառնում էր բոլորովին անտանելի, հատկապես թաթարների հետ սահմանակից տարածքներում: Ընդհանրապես թաթարները նրանցից ուժեղ ու խիզախ էին, և հայկական բնակավայրերի կողոպուտը համատարած էր, ու քանի որ այդ ժամանակ դեռևս պահպանվել էին ընդհանուր հեղա-

[16] Воспоминания Маслова, ст. 122.

փոխական կազմակերպություններ, այնտեղից էքսցեսի տեղերն էին գնում խառը հաշտեցնող կոմիսիաներ: Բայց դա քիչ էր օգնում և հայերը սկսեցին կազմակերպել ինքնապաշտպանություն:[17]»

Հայաստանի իրադրության մասին գրում է. «Հեռավոր Հայաստանից շատ քիչ լուրեր էին հասնում. այնտեղ թուրքերին ու կատաղած թաթարներին դեմհանդիման (հայերը-Կ.Բ.) ստիպված էին առաջնորդվել հետևյալ ասացվածքով «Ոչինչ չեմ ուզում, միայն կենդանի մնամ» / Не до жиру, быть бы живу/:» էջ 192

Շատ հետաքրքիր ու արժեքավոր են Մասլովի հիշողությունները հայերի նկատմամբ թուրքերի ու թաթարների ունեցած կարծիքի և դրանով պայմանավորված նաև վերաբերմունքի մասին: Նկարագրելով Էնվերին նա գրում է. «...առանձնապես բացառիկ էր նրա ատելությունը հայերի հանդեպ, որոնք գլխավորապես նրան էին պարտական Փոքր Ասիայում իրենց ողբերգության համար: Վրացիներին նա արհամարհում էր, իսկ Կովկասի մահմեդական ժողովուրդների վրա նայում էր որպես միջոց՝ իր ծրագրած նպատակներն իրականացնելու համար:»[18]

Ինչ վերաբերում է Կովկասի թաթարներին, ապա, ըստ Մասլովի բնութագրության, «Բնավորությամբ նրանք ավելի մոտ են վրացիներին, քան հայերին, որոնց արհամարհում են՝ համարելով վախկոտներ ու առևտրականներ:» Բացի այդ, խոսելով Անդրկովկասյան Սեյմի ընտրությունների ժամանակ միասնական ցուցակ կազմելու գործընթացից, նա գրում է. «Բլոկը չկայացավ, ընդ որում վերջնական հրաժարականի ձևով՝ ցուցակը կազմելու վերջնաժամկետի նախօրեին, ափսոսանքի խոսքերից ու արևելյան հաճոյախո-

[17] Воспоминания Маслова, ст. 97-98.
[18] Նույն տեղում, էջ 155:

սություններից հետո, ինչի գլխավոր մոտիվը մեկ ցուցակում հայերի ու մահմեդականների լինելու անհնարինությունն էր: «Մենք ինքներս, ասում էին չափավոր մահմեդական ինտելիգենցիայի ներկայացուցիչները, հասկանում ենք, որ հայերը մեր նման մարդիկ են և մենք պատրաստ ենք նրանց հետ ձեռք-ձեռքի տված գնալ, բայց մեր ժողովրդական զանգվածը մեզ չի հասկանա և չի ների հայերի հետ միությունը. այս դեպքում մենք կկորցնենք մեծ թվով ձայներ»: Սա ճիշտ էր, հատկապես այն պատճառով, որ հենց նույն ներկայացուցիչներն իրենց ընտրողների միջավայրում հայերին կոչում էին, մեղմ ասած, «երկրորդ սորտի» ժողովուրդ»[19]:

Շատ կարևոր են պանթուրքիզմի ու պանիսլամիզմի մասին Մասլովի վկայությունները, որոնց մասին նա խոսում է երեք առիթով: Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո ստեղծված իրադրությունը ներկայացնելիս նա փաստագրում է. «Դեպի Անդրկովկաս թուրքական բանակի առաջխաղացման հետ Բաքվում գլուխ բարձրացրին պանիսլամիստական էլեմենտները. Ադրբեջանի անկախությունը չցանկանալով ու մշուշոտ խոսելով Թուրքիայի սահմաններում ինքնավարության մասին, նրանք երազում էին թուրքական տիրապետությունը տարածել ընդհուպ ողջ Հյուսիսային Կովկաս այնպես, որ Անդրկովկասի հետ թուրքական սահմանը սկսվելով Բաթումից անցներ Ախալցխա, Ախալքալաք ու Սաղախլո (Թիֆլիսի մոտ), Ելիզավետպոլ, Բաքու՝ այնուհետ դեպի հյուսիս: Վրացիներին մեծահոգաբար թողնվում էր Թիֆլիսի ու Քութաիսիի նահանգները, որոնք, սակայն, բոլոր կողմերից շրջափակված էին թուրքական տիրույթներով (Աբխազիան Սուխումի հետ ըստ այդ հայեցակարգի նույնպես ընդգրկվելու էին թուրքական տիրապե-

[19] Воспоминания Маслова, ст. 30-31.

տության ներքո, իսկ Հյուսիսային Կովկասի մահմեդական լեռնականների հետ նախատեսվում էր գալ համաձայնության): Նման պլաններով Հայաստանն ընդհանրապես վերանում էր՝ ընկնելով թուրքական տիրապետության տակ: Բաքվի բարեկամների այս նկրտումները լրիվ ձեռնտու էին (թուրքերին-Բ.Կ.) և նրանք անմիջապես Բաքու ուղարկեցին իրենց էմիսարներին ու զինվորական հրահանգիչներին և Կարսից սկսեցին իրենց դանդաղ առաջխաղացումը դեպի Արևելք՝ Բաքվի ուղղությամբ:[20]»

Մյուս հիշատակումը դարձյալ կապված է Էնվերի անվան հետ, որի մասին Մասլովը գրում է. «...փառասիրությունն անսահման էր. հենց նա էր 18 թ. ամռանը երազում թուրքական տիրապետությունը տարածել գրեթե մինչև Տիխորեցկ: Նրա վերջը տխուր եղավ. Անտանտի հաղթանակից ընկճված, բայց ոչ կոտրված, նա փախավ սկզբում Ադրբեջան, հետո Միջին Ասիա՝ թուրքմենների մոտ, պանիսլամիստական շարժում սկսելու նպատակով: Այստեղ էլ 23 կամ 24 թ.-ին ձիամարտի ժամանակ սրախողխող եղավ բոլշևիկների դեմ կռվում՝ որպես թուրքմենների ղեկավար:[21]»

Երրորդ անգամ պանթուրքիզմին անդրադառնում է Բաթումի պայմանագրի մասին խոսելիս, մասնավորապես նշելով. «Այն ժամանակ, երբ մահմեդականները, սկզբից ևեթ, ոգևորությամբ դիմավորեցին թուրքերին որպես իրենց հավատակիցների՝ նրանց առաջխաղացման մեջ տեսնելով իրենց պանիսլամիզմի երազանքի իրականացման հնարավորությունը, վրացիները, կորցնելով Բաթումը, այժմ ցանկանում էին պահպանել Վրաստանի էթնիկ սահմանները, որոնք որոշ չափով համընկնում էին 1878 թ. սահման-

[20] Воспоминания Маслова, ст. 121-122.

[21] Նույն տեղում, էջ 155:

ների հետ: Իսկ հայերը սարսափով էին հետևում թուրքական բանակի առաջխաղացմանը՝ աչքի առաջ ունենալով Փոքր Ասիայում այլացեղ բնակչության ոչնչացման արյունոտ փորձը: Այսպիսով, չնայած երեք ժողովուրդների արհեստական միավորմանն այդ Անդրկովկասյան Ֆեդերացիայում, նրանց միջև գաղափարների, հետաքրքրությունների և ձգտումների ընդհանրություն չկար:[22]»

Հիշողություններում հետաքրքիր տեղեկություններ կան դաշնակցական կուսակցության, Հայ Ազգային Խորհրդի, հայ-ռուսական հարաբերությունների, Բաթումի պայմանագրի կնքման, Հայաստանի անկախացման, Անդրանիկի ու հայկական բանակի մասին, տրված են աջարների, թաթարների, վրացիների, թուրքերի խիստ ուշագրավ նկարագրերը, ինչպես նաև բազմաթիվ այլ տվյալներ ու պատմություններ:

Մասլովի հուշերը արժեքավոր են ոչ միայն Արևելյան Հայաստան թուրքական բանակի ներխուժման, օկուպացիայի ու դրա հետ կապված դեպքերի հետ ընդհանրություններն ու տարբերությունները վեր հանելու և համեմատական վերլուծություն կատարելու առումով, այլև 1918-1921թթ. վերաբերվող հայոց պատմության որոշ այլ հարցերի լուսաբանման տեսանկյունից:

1918 թ. թուրքական ներխուժման ու դրա հետևանքների մասին ականատեսների հիշողություններ են տպագրվել ժամանակի մամուլում, ինչը կարևոր աղբյուրագիտական արժեք է ներկայացնում բանավոր հուշերի հետ համադրության, դրանց իսկությունը գնահատելու առումով: Ըստ այդմ սույն աշխատանքում ընդգրկել ենք դրանցից մի քանիսը, որոնցից Իրազեկի կողմից Ջիթհանքով գյուղի սպանդի մասին պատմող ակնարկաշարն ամբողջացնում է

[22] Воспоминания Маслова, ст. 156-157:

մեր կողմից գրանցած բանավոր հուշագրությունը:[23] Ալեքսանդրապոլի գրավման, դրան նախորդած ու հաջորդած թուրքական գործողությունների մասին հետաքրքիր ու արժեքավոր հուշեր են տպագրվել Երևանում հրատարակված «Աշխատանք»[24], «Коммунист» թերթերում, Բոստոնում հրատարակված «Հայրենիք»[25] ամսագրում և այլն: Թուրքերի հեռանալուց հետո Ալեքսանդրապոլի գավառի ծանր սոցիալ-տնտեսական ու առողջապահական վիճակը ներկայացված է տեղի «Բանվոր» թերթի համարներում:[26]

Մամուլի նյութերից առանձնացրել ենք նաև Մարալիկում հրատարակված «Անի» թերթում տպագրված «Ճանաչիր արմատները քո» վերնագրով հոդվածի մի հատվածը, որը վերաբերում է 1918-1920 թթ. թուրքական արշավանքներին:[27] Այս նյութի մասին անվանի պատմաբան, պրոֆեսոր Հենրիկ Մելիքյանը գրել է. «...հրապարակումը պատմական սկզբնաղբյուրի արժեք ունի: Այդ հոդվածի հեղինակը նախկինում Զորակապ գյուղի բնակիչ Անդրանիկ Դավթյանն է, որը իր հոր՝ բանիմաց ու կիրթ Ս.Դավթյանի հավաքած նյութերի և գրառումների հիման վրա համառոտակի ամբողջացրել և խմբագրությանն էր ներկայացրել նշված հոդվածը:

[23] Իրազեկ Յ., Տաճկական վայրագութիւնը Ալէքսանդրապօլի գաւառում, Յառաջ, Երեւան, 1919, 19 հոկտեմբերի, № 24, 22 հոկտեմբերի № 26:

[24] Աշխատանք, 8 (26) Յունիս, 1918, № 6 (206):

[25] Յովակիմ Մելիքեան, Արեան ճանապարհով, Հայրենիք, Բոստոն, 1925, № 6, էջ 128-136:

[26] Մասնավորապես տես. Բնակարանային հարցը Ալեքպոլում, Բանվոր, 1923, № 59, Անապաստան յերեխաները, 1923, № 63, Ժողովրդական առողջապահությունը Ալեք-պոլի գավառում, 1923, № 84, Հանցագործություններն Ալգավառում առաջ և հիմա, 1923, № 86, Մեծ Քյափանակ, Հարկավոր ե ոգնության հասնել, 1924, № 133 և այլք:

[27] Դավթյան Ա., Ճանաչիր արմատները քո, Անի, Մարալիկ, 1987, № 100 (4516), օգոստոսի 22:

Դրանում շարադրված են Ալեքսանդրապոլի գավառի 4-րդ գավառամասի շուրջ 45 գյուղերի կենտրոն Մոլլա-Գյոքչայի (Մարալիկ) պատմության շատ արժեքավոր փաստեր, որոնց մեծ մասը ճշմարտացի է, համապատասխանում է արխիվային հավաստի նյութերին»:[28]

Քանի որ Հ. Մելիքյանը, շարունակելով Ա. Դավթյանին, իր հոդվածում ներկայացրել է նաև իր կողմից գրանցած հիշողություններ, նպատակահարմար ենք գտել դա ևս ներառել հավելվածում, հատկապես որ խոսքն այստեղ գնում է մարալիկցիների կողմից կազմակերպած ինքնապաշտպանական մարտերի մասին:

Հավելվածում ընդգրկել ենք նաև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվից մի քանի ձեռագիր հիշողություններ ու պատմություններ, որոնք գրանցվել են բանահավաքներ Պ.Բարսեղյանի և Հ.Մկրտչյանի կողմից: Պ.Բարսեղյանի «Սամաաբարոնցիները» պատմությունը վերաբերում է 1920թ.-ի թուրք-հայկական պատերազմի ժամանակ ալեքսանդրապոլցիներից կազմված կամավորականների ջոկատի ռազմաճակատ մեկնելու ու այնտեղ տիրող իրավիճակի նկարագրությանը: Հ.Մկրտչյանի գրանցած նյութերը կոնկրետ ընտանիքների ու մարդկանց պատմություններ են, որոնք ներկայացնում են թուրքական վայրագություններն ու դրանից փրկվածների ծանր կյանքը:

[28] Մելիքյան Հ., 1918 թ. Շիրակի մայիսյան գոյամարտը, 1918 թ. մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ. 1918 թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության 85 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր. 2005, էջ 54:

## §2 ԲԱՆԱՎՈՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդի պատմագիտության մեջ բանավոր պատմությունները դիտարկվում են որպես սկզբնաղբյուր, իսկ հիշողությունը՝ որպես պատմական երևույթ, քանի որ անցյալի մասին գիտելիքները ապահովում են բարոյական ու գաղափարական արժեքների փոխանցումը՝ կողմնորոշելով պատմական կոնկրետ ժամանակաշրջանի և սոցիալական տարածության մեջ:Ի լրումն գրավոր պատմությանը՝ կա նաև կենդանի պատմություն, որը պահպանում և թարմացնում է ինքն իրեն ժամանակի միջով ու այդպիսով թույլ է տալիս վերականգնել բազմաթիվ հին իրողություններ, որոնք թվում է թե անհետացել են: Եթե «պատմությունը» դա պատմական գիտելիքն է, ապա «հիշողությունը» հիմնված է ազգային արժեքների վրա: «Պատմական հիշողությունը» պատմական գիտելիքների կիրառական գործածումն է, պատմության շարժումը դեպի սոցիալական հիշողության հարցադրումներն ու պահանջները: [29]

Կոլեկտիվ և պատմական հիշողությունը փոխանցվում է ինչպես բանավոր (ավագներից՝ կրտսերներին), այնպես էլ գրավոր աղբյուրներով, որոնք մատուցվում են ընտանիքում, դպրոցում, բուհում, հասարակության լայն շրջանակներին նաև զանգվածային լրատվության միջոցներով: Պատմական հիշողությունը, լինելով սոցիալական հիշողության մաս, բարդ կատեգորիա է ու բաղկացած է սեփական ժողովրդի պատկերացված պատմությունից, նրա

[29] Красильников С.А., Аблажей Н.Н., История и память: Потенциал и взаимодействие, XII Конгресс антропологов и этнологов России: сб. материалов. Ижевск, 3–6 июля 2017г./Отв. ред.: А.Е. Загребин, М.Ю. Мартынова. – Москва; Ижевск: ИЭА РАН, УИИЯЛ УрО РАН, 2017, с. 96. https://rusanthro.files.wordpress.com/2020/08/pdf

իրական, ռեալ պատմությունից, ինչպես նաև պատմության մասին ընդհանուր պատկերացումներից: Բարոյական նորմերը, որոնք մատուցվում են պատմական իրադարձությունների մեկնաբանություններում, սեփական ժողովրդի պատմության հիմնական գործող անձանց ու հերոսների վարքի նորմերը մոդելավորում են անհատի, անհատների խմբերի ու ամբողջության մեջ վերցրած ժողովրդի վարքի նորմերը:

Այս համատեքստում էլ կարևորվում է սոցիալական հիշողության դերը, որը հասարակության և անհատի նույնականացման ու կողմնորոշման հիմնական միջոցն է: Կարևոր է նաև այն, որ պատմական հիշողությունը սերունդների մշակութային ժառանգորդման և ազգային-քաղաքացիական ինքնության հիմքն է կազմում:[30] Կոլեկտիվ և պատմական հիշողությունը «ազգ, ազգային ինքնություն» եզրերը բնորոշող կարևորագույն տարրերից է: Այն հենված է իրենց ազգի իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագների շուրջ մարդկանց գիտելիքների և վերաբերմունքի վրա: Անցյալի ամենացավոտ հարցերի վերաբերյալ բնակչության մեջ առկա ինքնակենսագրական, կոլեկտիվ ու պատմական հիշողությունը անցյալը դարձնում է իրական արժեք, հարստություն, մեր կյանքի նշանակալի մաս:

Արդի Շիրակի մարզի տարածքում 1918-1921 թթ. իրողությունների մասին տեղի բնակչության մեջ պահպանված բանավոր ու գրավոր հիշողությունները գերազանցապես վերաբերում են թուրքական երկու՝ 1918 և 1920 թթ. արշավանքների ու դրանց հետևանքների նկարագրությանը: Գրանցված հիշողություններն ա-

[30] Մարության Հ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. Տեսական հարցադրումներ., «Նորավանք» ԳԿՀ, Եր 2006:

պացույցն են թուրքական ցեղասպանության շարունակականության Արևելյան Հայաստանում, ինչը տասնամյակներ շարունակ արգելված թեմա է եղել խորհրդային իշխանության տարիներին: Սրա պատճառն այն էր, որ Խորհրդային պետությունը փորձում էր հասարակության ինքնությունը կառուցել գաղափարական հենքի վրա, զոհաբերելով ինքնության մյուս հիմնական (էթնիկական, կոնֆեսիոնալ, մշակութային, համայնքային, ընտանեկան) ձևերը: Դրա արդյունքներից մեկը դարձավ դեֆորմացված, «կտրատված» տրավմատիկ պատմական հիշողության առաջացումը: Ինքնության որոնման հաջորդ շրջափուլում իշխանությունները սկսեցին օգտագործել պատմական անցյալի ներուժը՝ հիշողության «կառավարման» միջոցով, որը դարձավ պատմական հիշողության պետական քաղաքականություն:[31]

1920-ական թթ. հետո, համաձայն այդ քաղաքականության, Խորհրդային Միության և Թուրքիայի միջև բարեկամական հարաբերություններով պայմանավորված, ցեղասպանության թեման փակվեց ու դուրս մղվեց պատմագրությունից, իսկ Խորհրդային Միությունում ապաստան գտած Եղեռնից մազապուրծ հայերի նկատմամբ կիրառվեց մի քաղաքականություն, որը կարելի է անվանել «հրամայված է մոռանալ»: «Եղեռնի» թեման դարձավ հիշողությունը խեղդելու քաղաքականության օբյեկտ, երբ արգելվում էր վշտի զգայական դրսևորումը փախստականների խմբերում, կենդանի մնացած հարազատների մեջ, ընտանիքների ներսում:[32] Թեր-

---

[31] Красильников С.А., Аблажей Н.Н., История и память, с. 96.

[32] Харатян Г.С., Политика покорения памяти, или «приказано забыть»: Превращение памяти в социальную и семейную «тайну» (На примере армянского геноцида), // Устная история (Oral history) на постсоветском пространстве, (отв. ред. Щеглова Т.К.), Барнаул 2017, с. 124-156. https://www.academia.edu/69923153/

ևս սրանով է պայմանավորված այն, որ Շիրակի մարզի մի շարք գյուղերում արդեն հիշողության կրողներ չկան, քանի որ մարդիկ՝ հատկապես 1930-1950-ական թվականներին ուղղակի վախենում էին այդ մասին խոսել, որովհետև դա համարվում էր ծայրահեղ ազգայնականություն, ինչը խիստ մեղադրանք էր, որի հետևանքով կարող էր մարդը ոչ միայն ձերբակալվել, այլև աքսորվել:

Հարկ է նշել, որ թուրքերի կողմից Շիրակում իրականացված ջարդերի մասին կարելի է առանձնացնել հիշողությունների ակտիվացման երեք փուլ, որոնք արտահայտվում են դրանց հուշարձայնացման ձևով: Այսպես. առաջին փուլը կապված է Հայոց Մեծ Եղեռնի 50-ամյակի և հանրապետությունում ընթացող իրադարձությունների ու Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշարձանի կառուցման հետ, որին զուգահեռ, 1962 թ.-ին ցեղասպանության զոհերի հուշարձան կառուցվեց նաև մարզի Ջրառատ գյուղում, որն իրականում 1920 թ.-ին թուրքերի կողմից բարբարոսաբար սպանված համագյուղացիների հիշատակին էր նվիրված, քանի որ կանգնեցվել էր այն վայրում (Համբարենց օղայի տեղում), որտեղ կենդանի այրվել էր գյուղի բնակչության մի մասը: Այնուհետև, 1968 թ-ին, դարձյալ թուրքերի կողմից 1920 թ-ին իրականացրած զանգվածային կոտորածի վայրում՝ Հերհերի կամ Հզազի ձորում (Ջարդի ձոր) կառուցվեց աղբյուր-հուշակոթող, որն այնուհետև Շիրակի բնակչության համար դարձավ Ցեղասպանության զոհերի մարզային հուշարձան, որին այցելում են յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին:

Երկրորդ փուլը պայմանավորված էր հետպատերազմյան տարիներին, մասնավորապես 1970-1980-ական թթ. երկրում իրականացվող լայնածավալ գյուղատնտեսական ու շինարարական տարբեր աշխատանքների հետ, երբ մարզի որոշ գյուղերի տարածքնե-

րում ու մերձակայքում հողի տակից դուրս էին գալիս մարդկանց ոսկորներ կամ բացվում էին զանգվածային թաղումներ: Դրա օրինակը 1980 թ-ին Բասեն գուղում կանգնեցված 1920 թ-ի զոհերի հիշատակին նվիրված հուշաքարի կառուցումն է, որի մասին այսպես է հիշում բանասացը. «Երբ սկսեցին հուշարձանը սարքել (Հայրենական պատերազմի –Կ.Բ.), տարածքը մաքրեցին, այդ ժամանակ մարդկանց ոսկորներ, զանգեր դուրս եկան ու էդ պատմությունը բացվեց: Դա էլ առիթ դարձավ, որ հուշաքարը դրվի» (գ. Բասեն, Մնացյան Միեր):

1918-1920 թթ թուրքական կոտորածների ու դրանց զոհերի մասին հիշողությունների նկատմամբ հետաքրքրությունների երրորդ ալիքը բարձրացավ Ղարաբաղյան շարժման, Արցախյան առաջին պատերազմի ու հատկապես դրա ընթացքում թուրքադրբեջանցիների կողմից իրականացրած նոր ջարդերի ու տեղահանությունների ազդեցության տակ:[33] Այս համատեքստում 1920 թ. Ջարդերի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող կանգնեցվեց վերը հիշատակված Հերիերի ձորում 1990 թ., 1990-1991 թթ. Չիթհանքով գյուղում դրվեց խաչքար-հուշակոթող գյուղի մարազներում թուրքերի կողմից այրված անմեղ զոհերի հիշատակին և 1997թ. Արփենիում, Հովսեփ Ենգոյանի կողմից, խաչքար կանգնեցվեց «Ի հիշատակ Արփենի գյուղում թուրքերի ձեռով բարբարոսաբար սպանված համագյուղացիների»:

---

[33] Ղարաբաղյան շարժման տարիներին հայոց ազգային ինքնության մեջ հայերի ցեղասպանության հիշողության գործոնի դերակատարության մասին ուշագրավ ուսումնասիրություն է կատարել Հ. Մարությանը: Տես՝ Հայ ինքնության պատկերագրությունը, հ.1, Ցեղասպանության հիշողությունը և ղարաբաղյան շարժումը, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2009, 432 էջ:

Պետք է նշել, որ միակ հուշարձանը, որը նվիրված է ոչ թե սպանությունների ու կոտորածների զոհերին, այլ, ընդհակառակը՝ շիրակցիների դիմադրական շարժմանը, կանգնեցվել է Սառնաղբյուր գյուղի մոտ 2016 թ. և խորհրդանշում է սառնաղբյուրցիների ու հարևան հինգ գյուղի բնակիչների հերոսական ինքնապաշտպանությունը: Այս հուշակոթողը կառուցվեց «1918 թ. մայիսյան գոյապայքարի նոր էջ» խորագրով 2003 թ. գիտաժողովի արդյունքում, որն անցկացվեց Սառնաղբյուր գյուղում ԳԱԱ պատմության ինստիտուտի, Ռուս-հայկական սլավոնական համալսարանի և Շիրակ հայրենակցական միության կողմից, որտեղ քննարկվեցին նաև 1918 թ. մայիսի 16-22-ին կազմակերպված ինքնապաշտպանական կռիվները՝ հիմնված գերազանցապես մասնակիցների հիշողությունների վրա: Այդ ժամանակ էլ որոշվեց ընդհանուր ջանքերով կառուցել այդ իրադարձությունը խորհրդանշող հուշարձան:

Մասնագիտական գրականության մեջ բազմիցս ընդգծվում է, որ հիշողությունը սոցիալական տրավմայի դեպքում առանձնահատուկ բնույթ է ստանում, և որքան խորն է տրավման, այնքան անցյալի հիշողություններն ավելի ուժեղ են ազդում ներկայի ընկալման վրա: Հիշողության հարցերին նվիրված ուսումնասիրություններում «տրավման» դարձել է կենտրոնական տերմիններից մեկը, բայց միևնույն ժամանակ այն պրոբլեմատիկ հասկացություն է:[34] Ինչպես գրում է Վ. Շնիրելմանը «Այս երևույթը նկարագրելու համար Ջ. Վուրչը նույնիսկ ներմուծել է «մտավոր ցավեր» հատուկ տերմինը, որը ցույց է տալիս, որ երկար ժամանակ խորքային տրավմա ապրող հասարակությունը չի կարող ազատվել ծանր հիշողություններից և ոչ միայն նորից ու նորից վերադառնում է

[34] Մարության Հ., նշվ. աշխ., էջ 59:

նրանց, այլև, կարծես նորից վերապրում է վաղուց տեղի ունեցած իրադարձությունները:»[35]

Ընդ որում անձամբ ապրած անցյալը շատ ավելի է գունավորված էմոցիաներով, քան սերտած անցյալը: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, մանկության և երիտասարդության հիշողություններն ավելի լավ են տպավորված հիշողության մեջ, քան հետագա իրադարձությունները: Թերևս սրանով կարելի է բացատրել այն, որ մեր բանասացների մի մասն արտասվում էր, երբ վերհիշում էր թուրքերի դաժանությունների մասին այն պատմությունները, որոնք ինքը լսել էր ծնողներից ու հարազատներից ու որոնք ուղեկցել էին իրեն տարիներ շարունակ: Մեր կողմից գրանցված պատմությունների գրեթե կեսը հենց մանկական ու պատանեկան տարիքում (ինչպես իգական, այնպես էլ արական սեռի 6-ից 16 տարեկան) տեսածի ու վերապրածի հիշողություններ են: Այս առումով կարելի է ասել, որ ցեղասպանական գործողությունների վերապրողները նույնպես զոհեր են, քանի որ նրանք վկան են եղել բազմաթիվ դաժանությունների, իրենց հարազատների կորստյան, տեսել են տասնյակ ու հարյուրավոր դիակներ և այլն: Այդ ճանապարհով ձևավորված զոհի կարծրատիպը ժամանակի ընթացքում այս կամ այն չափով անցնում է նաև վերապրողների այն ժառանգներին, որոնք լսել են այդ պատմություններն իրենց մեծերից և կամ էլ պարզապես տեղյակ են եղել նրանց բաժին հասած դառնություններին: [36]

---

[35] Шнирельман В. А., Социальная память: вопросы теории, Историческая память и российская идентичность / под. ред. В.А. Тишкова, Е.А. Пивневой/, М., РАН, 2018, с. 20.

[36] Մարության Հ., նշվ. աշխ, էջ 58:

Մեր կողմից ձայնագրված հիշողություններում հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Շիրակի բնակչության թալանին ու կոտորածին տեղի մահմեդական ցեղախմբերի (ղարափափախների, քրդերի) մասնակցության, կաթոլիկ (ֆրանկ) հայերի և հույների նկատմամբ թուրքերի քաղաքականության, օկուպացիոն իշխանությունների հետ տեղի բնակչության հարաբերությունների, և հատկապես թուրքական վայրագությունների ու եղեռնագործությունների մասին (զանգվածային սպանությունների, մարագներում կանանց, երեխաներին ու ծերերին փակելու ու այրելու, ոսկիների տեղն իմանալու կամ տալու համար խոշտանգումների և այլն): Բավականին կարևոր փաստեր ու պատմություններ են գրանցվել, որոնք յուրովի են մեկնաբանում խնդրահարույց այնպիսի իրողություններ, ինչպիսիք են 1918թ. թուրքական արշավանքի և 1920թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում Ալեքսանդրապոլի գավառի բնակչության չկռվելը, որոշ բացառություններով դիմակայության բացակայությունը, թուրքերի հետ համագործակցելը, նրանց «աղ ու հացով դիմավորելը», և այլն:

Բանասացների կողմից պատմական իրադարձությունների մեկնաբանություններում անդրադարձ կա նաև այդ պատմությունների ականատեսների ու մասնակիցների, հիմնական գործող անձանց ու հերոսների վարքի նորմերին և բարոյական արժեքներին, մասնավորապես տղամարդկանց փախնելու ու թաքնվելու դեպքերի, բարոյական արժեքների երկակի բնույթի՝ համագյուղացիների դավաճանության ու, միևնույն ժամանակ նրանց փրկելու, կանանց ու աղջիկների՝ մի կողմից տարբեր ձևերով թուրքերից թաքնվելու, նրանց ձեռքը չընկնելու համար տարբեր միջոցներ կիրառելու, մյուս կողմից «փաշաների» սիրուհի դառնալու ու նրանց նկատմամբ տարբեր վերաբերմունքի մասին և այլն: Հետաքրքիր բազմա-

թիվ այլ պատմություններ ևս փաստագրված են գրանցված հիշողություններում, որոնք վերաբերում են արևմտահայ գաղթականությանը, «փախեփախին», Անդրանիկին, հայ քաղաքական կուսակցություններին, խորհրդային իշխանությանը, թուրքերին դիմադրելու ու խորամանկությամբ սպանելու դեպքերին, բնակչության նկատմամբ որոշ թուրքերի բարյացկամ վերաբերմունքին կամ «բարի թուրքերին», թուրքերի հեռանալուց հետո ավերածություններին, սովի ու համաճարակային հիվանդություններին և այլն և այլն:

Հատկանշական է, որ գրանցված հիշողություններում կարմիր թելի պես անցնում է թուրքերի նկատմամբ ունեցած վախի, սարսափի զգացողությունը: Այդ ապրումներն այնքան վառ են արտահայտվում ականատեսների հիշողության մեջ, որ դառնում են խորապես սիմվոլիկ: Ուսումնասիրողները նշում են, որ «վախն իր տարբեր ձևերով յուրաքանչյուր հասարակության, խմբի ու անհատի կյանքի համար անհրաժեշտ զգայական բաղադրիչ է, քանի որ դա յուրատեսակ ազդանշան է իրադարձությունների ու գործընթացների հնարավոր բացասական զարգացումների սպասման»[37]:

Շիրակի բնակչության սպասումները հենց կողմնորոշված էին դեպի տարբեր աղետներ՝ աչքի առաջ ունենալով 1915 թ. ցեղասպանությունից մազապուրծ հազարավոր գաղթականներին, առավել ևս, երբ չկար իրադարձությունների զարգացման մասին որևէ կոնկրետ ու հավաստի տեղեկություն: Իշխանության ներկայացուցիչներից ոչ ոք, ըստ գրանցված նյութերի, ստեղծված պայմաննե-

[37] Никулина Т.В., Киселева О.А., Советско-финляндская война в памяти гражданской населении Карелии (По материалам устных опросов) //Военно-историческая антропология: Ежегодник, 2003/2004, Новые Научные направления, М. 2005, с. 319. http://www.iriran.ru/files/VIA_2003-2004.pdf

րում մարդկանց կյանքը կազմակերպելու վերաբերյալ որոշակի քայլեր չի ձեռնարկել ու դա ավելի էր ամրապնդում վաղվա օրվա նկատմամբ անվստահության զգացողությունը: Դրանով էր պայմանավորված յուրաքանչյուր բնակավայրում մարդկանց՝ թուրքերի հետ հարաբերությունները կառուցելու նախընտրելի ձևը: Եթե որոշ տեղերում փորձում էին ինքնակազմակերպվել ու դիմել ինքնապաշտպանության (Սառնաղբյուր-Մարալիկ) կամ ժամանակավոր դիմադրության՝ ապահովելով համագյուղացիների հեռանալը գյուղից(Ազատան, Ջրառատ, Հացիկ, Կապս, Գուսանագյուղ), ապա մյուսներում գնում էին թուրքերի հետ բանակցելու՝ անցանկալի իրադարձությունները կանխելու համար: Այստեղից էլ ժողովրդի մեջ մնացել է Շիրակի բնակիչների կողմից թուրքերին «աղուհացով դիմավորելու» թեման: Այս մասին հիշողություններ պահպանվել են գերազանցապես տղամարդկանց մեջ, որոնց տրվել են նաև որոշակի մեկնաբանություններ: Հետաքրքիր է, որ նման դեպքերին երկու բացատրություն է տրվում. առաջինն, անշուշտ, անպաշտպան բնակչության ինքնապաշտպանական բնազդն է, երբ դեմառդեմ եկող թշնամուն սիրաշահելու ու քաղաքը կամ գյուղը ավերածությունից և բնակչությանը կոտորելուց փրկելու հույսով ու հավատով էր արվում (Ալեքսանդրապոլ, Ջրառատ, Ղազանչի, Լեռնուտ, Ջույզաղբյուր, Բասեն, Արևիկ): Երկրորդը հետապնդում էր թուրքերին մոլորության մեջ գցելու, նրանց ներս հրավիրելու ու հետո հաշվեհարդար տեսնելու նպատակ (Ղազանչի, Հոռոմ, Կամո, Արևիկ): Այս միջոցին են դիմել նաև Սառնաղբյուրի գյուղացիները ինքնապաշտպանական կռիվներից առաջ, ինչի մասին (հոր հիշողությունների հիման վրա) գրել է Ռուդիկ Գևորգյանը. «Ըստ որոշման գյուղում մնացածները թուրքերին պետք է ընդունեին առանց դիմադրության և անհրաժեշտության դեպքում գիշերելու տեղ տա-

յին: Մայիսի 16-ին գյուղ մտավ մի փոքր թուրքական ջոկատ Ալլա փաշայի գլխավորությամբ: Գյուղացիները նրանց տեղավորեցին «Հովեյ» օդայում, իսկ փաշային «Հովեյ» օթախում:Գիշերը դիրքերից գյուղ իջան Հարութի Մարալովը, Նիոյի Սարգիսը, Մնեյի Սմբատը և մի քանի այլ զինված տղաներ: Հարութի Մարալովը սպանեց փաշային, մյուսները հարձակվեցին ասկյարների վրա, կանանցից Գրիգորյան Նուբարը (վանեցի) կացնով սպանեց երկու թուրքի:[38]»

Ինչ վերաբերում է թուրքական բանակի առաջխաղացման հետ բնակչության մեջ տիրող սարսափի, հուսալքման, անելանելիության զգացողություններին ու դրանից բխող քայլերին, ներկայացնենք ականատեսների աչքերով:

Ալեքսանդրապոլ քաղաքում 1918 թ. մայիսի 15-ի իրադրությունը մանրամասն նկարագրված է բժիշկ Հովակիմ Մկրտչյանի հիշողություններում. «Թնդանօթաձգութիւնը քաղաքում եւ գիւղերում յառաջ է բերում մեծ խուճապ: Շատերը առաւօտեան վաղ, թնդանօթաձգութիւնից յանկարծակի եկած, մերկ փողոց են վազում, շատերը խելակորույս այս ու այն կողմերն ընկնում լուր իմանալու, շատերը թողնում են ամէն ինչ եւ քաղաքից դուրս փախչում: [...] Տաճիկները ստանալով համաձայնագիրը (քաղաքը հանձնելու-Կ. Բ.) ժամի 6-ին ուղարկում են քաղաքը մէկ էսկադրօն, իսկ մեր կողմից մնում է գնդապետ Յեանկովսկին քաղաքը յանձնելու համար: Քաղաքացիական իշխանութեան հեռանալու պատճառով նրա դերը

[38] Գևորգյան Ռ., 1918 թվականի մայիսյան հերոսամարտերի մի նոր էջ՝ Սոզյութլուի հերոսամարտը, 1918թ. մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ. 1918թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության 85-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր. 2005, էջ 34-35:

ստանձնում են Լեւոն Սարգսեան, Ղազար Ղազարեան եւ Եգոր Տէր Մարտիրոսեան:[39]»

Նույն օրվա դեպքերի մասին այսպես է հիշում Արտակ վարդապետ Սմբատյանը. «Թնդանօթի առաջին ռումբը տրաքւելուց յետոյ, ժողովուրդը մնաց շշմած դրութեան մէջ, երբ դորան յաջորդեցին երկրորդը, երրորդը, և լուր տարածւեց, թե տաճիկները քաղաք են մտնում: Էլ ո՞վ կարող է ասել, թե ինչ էր կատարւում քաղաքում: Ժողովուրդը այնպիսի սարսափի ենթարկւեց, որ ինչպէս ասում են՝ մայրն իր երեխային մոռացաւ: Ամբողջ ժողովուրդը փողոցում էր, մի գոռիւն, մի գոչիւն, մի լաց, ամենքը վազում են դէպի կայարան, դէպի Ջաջուռ: […] Առաջին ռումբի տրաքելուց յետոյ, երբ տողերիս գրողը, որ Ալեքսանդրապոլի շրջանի փոխանորդն էի, փողոց դուրս եկայ և բանի էութիւնն իմացայ, անմիջապէս դիմեցի քաղաքային ինքնաւարութեանը՝ դրութիւնը պարզելու համար: Սակայն դռները փակ տեսայ և անդամներից ոչ ոքի չտեսայ: Ետ դառնալիս՝ իր տան դռանը կանգնած տեսայ առևտրական դպրոցի տեսուչ Լևոն Սարգսեանին: Նա բացատրեց ամեն հանգամանք: Խորհրդակցեցինք ինչ անել: Ես խնդրեցի Սարգսեանին քաղաքացիներից մարդիկ հաւաքենք առաջնորդարան, դրօշակ պատրաստենք՝ միասին տաճիկների առաջը գնալու:[40]»

Հարկ է նշել, որ նույն իրավիճակն է եղել նաև Բաթումում 1918 թ., որի մասին հիշում է Պ. Մաւլովը. «Մարտի 14-15-ին մոտենալով Բաթումին թուրքերը 5-6 օրվա ընթացքում գրեթե առանց դիմադրության հանդիպելու գրավեցին ամրությունների առաջին գի-

[39] Մելիքեան Յ., Արեան ճանապարհով, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1925, Գ տարի, թիւ 6 (30), էջ 134-135:

[40] Վիրաբյան Ա., Ալեքսանյան Կ., Երևանի թեմի Շիրակի շրջանի փոխառաջնորդ Արտակ վարդապետ Սմբատյանի հուշերը, էջ 90-91:

ծը: Մարտի 28-ին ընկավ նաև երկրորդ գիծը: Իշխող շրջանակում սկսվեց իսկական խուճապ [...] Դեռ 31-ի առավոտյան, չնայած էվակուացիոն միջոցները բավարար էին (վրացիները Բաթումում թողեցին մի քանի երկաթուղային կառախումբ՝ 3-ական վագոններով), գնացքները շարժվում էին Թիֆլիս՝ ճանճերի պես իրար վրա լցված զինվորներով. վագոնների տանիքները, թափարգելներն ու ներքին տարածություններն ամբողջությամբ զբաղեցված էին մարդկանցով, նույնը կատարվում էր նաև շոգեքարշերի վրա: Ինչ վերաբերում է խաղաղ բնակիչներին, ապա նրանցից շատերը մնացին քաղաքում [...] Ընդհանրապես գրեթե ողջ քաղաքային վարչությունը դուրս եկավ Բաթումից. քաղաքի ճակատագիրը քիչ էր հետաքրքրում սոցիալիստ ընտրյալներին, բացի այդ նրանք վախենում էին թուրքական դագանակից: Ժամը 12-ի մոտ Դումայի շենքում հավաքվեցին Բաթումում մնացած ձայնավորներն ու նշանավոր քաղաքացիներից մի քանիսը. որոշվեց թուրքերի մոտ պատգամավորություն ուղարկել [...][41]»

1920 թ. թուրքական արշավանքի ժամանակ ևս կրկնվում է նույն սցենարը: «Քաղաքում (Ալեքսանդրապոլում-Կ.Բ.) տիրում է սոսկալի դրութիւն և խուճապ: Մօտենում է անողոք թշնամին և ամենքը ահ ու սարսափի են մատնված: Ցնծում են միայն քաղաքի հայ բոլշեւիկները և բոլոր բոլշեւիկամիտները, որովհետեւ, չէ՞որ եկողները իրենց եղբայր տաճիկներն են և գալիս են վերջ դնելու իրենց ատելի «դաշնակների» իշխանութեանը: [...] Ու դա այն պայմաններում միանգամայն հնարաւոր էր, որովհետեւ թէեւ քաղաքում հրամանատարութիւն, զինուոր, իշխանութիւն տակաւին կային, բայց նրանց գոյութիւնը անուանական էր: Իշխանութիւնը

[41] Воспоминания Маслова, ст. 129-132.

ներքուստ բարոյալքուած, կաթուածահար էր եղած, իսկ խուճա-պահար հասարակութիւնը սարսափից իր գլուխն ու կամքը այն-պէս էր կորցրել, որ ոչինչ չէր ըմբռնում, ինքն իրեն կառավարել չէր կարողանում:

Ահա թե ինչու դրութիւնը ուղղակի յուսահատական էր, անիշխանութիւնը՝ ծայրահեղ, խուճապը՝ աննկարագրելի: Ու այդ բոլորի հետեւանքով՝ զօրքից ու իշխանութիւնից այլ եւս փրկու-թեան յույս չունենալով, քաղաքացիք իրենք են մտածում իրենց գլուխը մի կերպով կոտորածից ազատելու մասին: Եւ միջոցը հա-մարւում է միայն մի բան, այն է՝ անպայման հաշտութիւն տաճիկ-ների հետ, ինչ գնով ուզում է լինի:»[42]: Բախտի քմահաճույքին մնա-ցած բնակչությունն, այսպիսով, ստիպված է լինում «աղ ու հացով» դիմավորել իր թշնամուն

Թշնամուն աղ ու հացով դիմավորելու դեպքեր եղել են ոչ միայն Շիրակի, այլև նաև Փամբակի գյուղերում: «Ինչպես նշվեց Ղալթախչի մտած թուրքերին դիմավորել են աղ ու հացով: Գյուղի ազդեցիկ մարդիկ քյոխվայի նախաձեռնությամբ փաշային ընդա-ռաջ են գնացել աղ ու հացով, սակայն թուրքերը խաղաղասիրու-թյան դրսևորում են ցույց տվել ընդամենը մեկ օր՝ հաջորդ օրն իրա-կանացնելով սարսափելի կոտորած: Թուրք փաշային աղ ու հացով է դիմավորում նաև Ղալթախչի գյուղի քահանան՝ Տեր Գևորգը, որին թուրքերը տանում են իրենց հետ և սպանում, կոտորածի առաջին օրը քահանային և գյուղից երեք ազդեցիկ մարդկանց տա-նում են Փոքր Քափանակի ուղղությամբ: Հայտնի է, որ Աղբուլաղ գյուղի քյոխվան մի քանի մարդկանց հետ աղ ու հացով գնացել էր

[42] Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից, էջ 73-74:

թուրքերին ընդառաջ: Թուրք փաշան սրով խփել, աղն ու հացը թափել էր գետնին, իսկ քյոխվային սպանել»[43]:

Բոլոր ձեռնարկված միջոցներն, այդուհանդերձ, չփրկեցին շիրակցիներին թուրք-քրդական վայրագություններից, որոնց ամենատարբեր ու դաժան ձևերի մասին հիշողությունները խոր կնիք են թողել բանասացների մեջ: Բնական է, որ ամենաշատ հիշողություններն անհատների, խմբերի ու զանգվածային սպանությունների մասին են, որոնք ներկայացված են ինչպես թռուցիկ՝ ընդհանրական ձևով, այնպես էլ հնարավորինս մանրամասն, երբեմն սահմռկեցուցիչ դետալներով: Կարևոր ենք համարում փաստել, որ մեր կողմից հավաքած նյութերում նկարագրված գրեթե բոլոր դեպքերը բացառիկ նմանություններ են դրսևորում թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանի, թե՛ Թուրքիայի ու Անդրկովկասի հայաբնակ այլ բնակավայրերում թուրքերի ու նրանց օժանդակող մահմեդական տարրերի կողմից հայերի նկատմամբ իրականացրած դաժանությունների հետ:

Փորձենք ամփոփ ձևով ներկայացնել հավաքված նյութերի մեջ առկա այն սյուժեները, որոնք առավել կրկնվող են: Այսպես, ամենաշատ հիշողություններն անհատների, խմբերի ու զանգվածային սպանությունների մասին են, որոնք ներկայացված են ինչպես թռուցիկ՝ ընդհանրական ձևով, այնպես էլ հնարավորինս մանրամասն, երբեմն սահմռկեցուցիչ դետալներով:

Գրանցվել են երեխայի սեռն իմանալու համար հղի կանանց փորը բացելով սպանելու դեպքերի (Սպանդարյան, Հայկաձոր, Բայանդուր), տղամարդկանց անհատական և խմբակային սպանու-

[43] Հախոյան Վ., Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Փամբակի տարածքում, էջ 88:

թյունների (Չիթհանքով, Սպանդարյան, Սարիար, Արփենի, Զույգաղբյուր, Հայկաձոր, Կրասար, Ջաջուռ, Արփենի և այլք), երեխաների ու կանանց դաժան սպանությունների (Չիթհանքով, Հայկաձոր) նկարագրություններ: Զանգվածային սպանությունների մասին հիշողություններում նկարագրվում են թուրքերի կողմից մարագներում, մեծ տներում հավաքած մարդկանց սպանելու ու այրելու (Չիթհանքով, Ջրառատ, Բասեն, Մայիսյան, Հողմիկ, Կամո, Բաշգյուղ), գյուղից դուրս ձորերում՝ հատկապես Հզազի կամ Ջարդի ձորում անզեն բնակչության կոտորածի սահմռկեցուցիչ դեպքերը:

Նույն իրավիճակն է եղել նաև Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի գավառակի գյուղերում, որտեղ թուրք բարբարոսների կողմից կատարված զանգվածային ու անհատական սպանությունների ահասարսուռ պատմություններ է հավաքել Վազգեն Հախոյանը[44]:

Թուրք արյունարբուները չէին բավարարվում միայն սպանելով, այլև նվաստացնում էին իրենց զոհին, չարախնդում ու զանգվածային կոտորածը վերածում էին տոնախմբության: Մասնավորապես Չիթհանքովի մասին հիշողություններում նկարագրված են դհոլ-զուռնայի նվագակցությամբ մի դեպքում՝ տղամարդկանց պարեցնելուց հետո սպանելու, մյուսում՝ աղջիկներին ու ջահել հարսներին մերկացած վիճակում պարեցնելուց հետո բռնաբարելու պատմություններ: Թե սրանցից որն է իրականը, դժվար է ասել ու էական չէ, քանի որ երևույթը եզակի չէ: Մարդկանց այրելը և բռնություններին տոնական բնույթ հաղորդելը նորություն չէր թուրքերի համար. Արևմտյան Հայաստանի Վանի և Բիթլիսի նահանգներում լայնորեն տարածված էր ողջակիզումները նվագակ-

[44] Հախոյան Վ., նշվ. աշխ:

ցությամբ ու պարերով ուղեկցելը[45]: Նույնը կատարվել է Փամբակի Աղբուլաղ գյուղում. «Բերում են դհոլ-զուռնան և մարագի խոտի մեջ թաքնված տղամարդկանց նվագի ուղեկցությամբ այրում են՝ նախապես շղթայելով նրանց պողպատե լարերով և նավթ լցնելով նրանց վրա: Թուրքերը չարախնդորեն հռհռում են, հետո դհոլ-զուռնան տեղափոխում են այն գոմի և մարագի առջև, որտեղ այրվում էին մյուսները:[46]» Կարսի մարզի Ժռչի գյուղում. «Մեր աչքերի առաջ տեսնում էինք, թե ինչպես գերի վերցրած երիտասարդներին չփլաղցրին ու զուռնայի տակ պարել էին տալիս, ծաղր ու ծանակի ենթարկում: Այդ տեսարանը տևեց մի քանի ժամ: Երեկոյան դեմ, դեռ մի մըզըրըղ բոյ կար արևը մտնելուն, պարողներին գնդակահարեցին, որոնց ճիչերը լսում էինք և գլխներիս խփում:[47]»

Հիշողությունների հաջորդ խումբը կազմում են կանանց, հարսների ու աղջիկների նկատմամբ թուրքերի ու նրանց ուղեկցող մահմեդական «խուժանի» ցուցաբերած վերաբերմունքի մասին պատմությունները (Սպանդարյան, Սարակապ, Սարիար, Ղազանչի, Հոռոմ, Կապս, Ջաջուռ, Ջույզաղբյուր, Արևիկ), որոնք սյուժետային առումով կարելի է բաժանել չորս մասի. ա/ թուրք «փաշաների» ու ասկյարների կողմից նրանց փախցնելու, բռնաբարելու դեպքերը, բ/ թուրքերից պաշտպանելու համար աղջիկներին ու հարսներին տգեղացնելու, այլանդակելու կամ թաքցնելու մասին պատմությունները, գ/ փաշաների հայ սիրուհիների մասին պատմությունները, դ/ իրենց պատիվը պահելու, թուրքերից ճանկը չընկնելու

[45] Գրիգորյան Հ., Ջանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը, Երևան, 2017, էջ 134:

[46] Հախոյան Վ., նշվ. աշխ., էջ 98:

[47] Կարս, Հայոց բանահյուսական մշակույթը, Եր., ԳԱԱ հրատ., 2013, էջ 494:

համար հարսների ու աղջիկների փախուստի, ինքնախեղման, անձնազոհության դեպքերի նկարագրությունները:

Բռնաբարությունները զանգվածային բնույթ էին կրում: Այդ մասին պատմում են ոչ միայն մեր զրուցակիցները (օրինակ. «ամենից շատ վնաս հարսներին ու աղջկներին են տվե, որտեղ որ բռնե, խայտառակ են էրե:»[48]), այլև դրանք փաստագրված են արխիվային նյութերում: Մասնավորապես «Պատերազմներում հայերի կորուստները պարզելու ռազմապատմական հանձնաժողովի» անդամ Օգանեզովի զեկուցագրում կարդում ենք. «Կանայք և աղջիկները, սկսած նույնիսկ 8 տարեկանից, բռնաբարված են, ինչից հետո ծեծված, իսկ մեծ մասն էլ գտնվում են թուրքերի կամ հարևան Աղբաբայի շրջանի թաթարների մոտ: Այս գյուղերում պատկերը սարսափելի է, նկարագրելը՝ դժվար, պետք է ունենալ շատ ամուր նյարդեր, որ տեսնես ու նկարագրես. տները կամ ավերված են կամ այրված և ավերակների տակ տասնյակ դիակներ են, որոնց մեջ հանդիպում են երբեմն կիսամեռ, փոքր երեխաների ու պառավների սոված կմախքները: Հիմա հնարավոր չէ որոշել թե բնակչության քանի տոկոսն է սպանվել, բոլոր դեպքերում ոչ պակաս 80-85%-ը: Բնակչության մնացած մասը սպանվել են ապրիլի 22-28-ի (1921 թ. – Կ.Բ.) միջակայքում, երբ թուրքերը, իմանալով բոլշևիկների մոտենալու մասին, շուտափույթ նահանջեցին, կոտորածն ավարտելու գործը հանձնարարելով տեղի թաթարների պարտիզանական ջոկատներին: Հարյուրավոր կանանց թուրքերն ազատեցին գերությունից, որոնք վերադարձան իրենց ավերված գյուղերը: Ես ի վիճակի չեմ նկարագրել այն ամենն ինչ տեսել եմ, բայց գիտեմ մի բան, որ հարկավոր է անհապաղ օգնություն 1-մթերքներով, 2-

[48] Բանասաց՝ Մարգարյան Մարիամ, գյուղ Կապս:

հագուստով ու սպիտակեղենով, 3-բժշկական /գլխավորապես մանկաբարձական ու վեներական հիվանդությունների, այլապես կվարակվեն նաև կենդանի մնացածները/:[49]»

Անհրաժեշտ է արձանագրել, որ 1921 թ. զարնանը թուրքական բանակի հետ քաշվելուց հետո, Ալեքսանդրապոլի գավառում հայտնվեցին կենցաղային սիֆիլիսի բազմաթիվ օջախներ, որոնց մասին փաստում են ժամանակակիցներն ու տեղական մամուլը: Այսպես, «Բանվոր» թերթի 1921-1925 թթ. համարներում պարբերաբար հոդվածներ էին լույս տեսնում, որոնցում բարձրացվում էր վեներական տարբեր հիվանդությունների լայն տարածվածության ու դրա դեմն առնելու հարցերը[50]: Այս թեման բանասացների կողմից շրջանցվում էր, ու եթե նույնիսկ պատմում էին, խնդրում էին չհանրայնացնել, համարելով որ դա իրենց գյուղի հեղինակությանը վնաս կտա:

Անդրադառնալով փաշաների սիրուհիների թեմային, հարկ ենք համարում նշել, որ համաձայն գրանցված նյութի, պատմողները որոշ դեպքերում դրական էին գնահատում վերջիններիս, ասելով, որ այդ կանայք երբեմն կարողանում էին ազդել փաշաների վրա ու փրկել համագյուղացիներին, կամ գաղտնի տեղյակ էին պահում սպասվող ոճրագործությունների մասին ու օգնում մարդկանց թաքնվելու կամ փախնելու: Սակայն կային նաև հակառակ վերաբերմունքի՝ նրանց որպես դավաճաններ համարելու պատմություններ:

Կանանց վերաբերող հիշողություններում առանձնանում են նաև հերոսական վարք դրսևորած կանանց պատմությունները,

[49] ՀՀ ԱԱ, ֆ.202, գ. 1271, թ. 64:

[50] Բանվոր, 1923 N 42 (օգոստոսի 19), N 59 (սեպտեմբերի 30), N 69 (հոկտեմբերի 24), N 84 (դեկտեմբերի 2) և այլն:

թուրքերի դեմ կռվելու ու սպանելու, վրեժխնդիր լինելու դեպքերը, որոնք, հաճախ, վերաբերում են կոնկրետ, անվանական դեմքերին ու նրանց գործերին: Մեր կողմից հավաքված պատմությունները լրացնում է նաև Հ. Մելիքյանը, գրելով. «Մոլլա-Գյոքչայում մինչև այժմ էլ հպարտությամբ են պատմում, թե ինչպես Բոզիկյան Այվազի կինը Պետոենց Սիրունն իր օջախում խեղդել էր մի թուրք ասկյարի, որը ցանկացել էր օջախի երեխաների բերանից կտրել ու տանել, թալանել վերջին պատառ սննդամթերքը, յուղն ու պանիրը ... Այսպիսի փաստեր կային ինչպես Մոլլա-Գյոքչայում ու Սառնաղբյուրում, այնպես էլ Շիրակի այլ գյուղերում:[51]»

Սառնաղբյուրի ինքնապաշտպանությանը կանանց մասնակցության մասին հիշում է Ռ. Գևորգյանը, գրելով. «Արժանին պետք է հատուկ նշել այն բոլոր կանանց, որոնք գյուղից չհեռացան և թև ու թիկունք դարձան իրենց ամուսիններին: Գյուղացիներն այսօր էլ մեծ ակնածանքով ու հարգանքով են խոսում արծվասիրտ կանանց՝ Ղուրշուդյան Ջեյրանի (Ջեյրո), Սարգսյան Թարգյուփ, Ենոյի Վարսիկի, Հովեյի Նոյեմի, Մալխասի Շուշիկի մասին (ինձ բախտ է վիճակվել նրանցից մի քանիսին տեսնելու): Հրաշքներ են պատմում Գրիգորյան Նուբարի մասին: Գյուղացիները նրան ուղղակի վանեցի էին ասում, որովհետև գաղթել էր Վանից: Վանի ջարդերի ժամանակ Նուբարի աչքի առաջ թուրքերը սպանում են հորը և չորս եղբայրներին, ամուսնուն [...] Այդքան դաժանություններ տեսած կինը մտքում մի ուխտ է անում որտեղ թուրք հանդիպի, իր վրեժը պիտի լուծի: Ահա եկել էր ամենապատեհ առիթը: Գտնվելով ամենաթեժ տեղում, ըստ հորս պատմածի (նաև այլ ականատեսների), վանեցին մեծ ճարպկությամբ ուղղակի տեղից տեղ թռչելով դիպուկ

---

[51] Մելիքյան Հ., 1918 թ. Շիրակի մայիսյան գոյամարտը…, էջ 68-69:

կրակով իրար հետևից գետնին էր տապալում դեպի առաջ շարժվող թուրքերին...[52]»

Բավականին մեծ թիվ են կազմում ավարառության ու թալանի մասին հիշողությունները, որոնք ևս կարելի է բաժանել երկու մասի՝ հենց թուրքերի կողմից մարդկանց ունեցվածքը (խոսքը վերաբերում է ոչ միայն ոսկու, այլև անասունների ու հացահատիկի և այլնի մասին ) թալանելու նկարագրություններ ու նրանց ուղեկցող կամ իրենցից հետո գյուղ մտած մահմեդական խմբերի՝ ղարափափախների, քրդերի ու թաթարների (որոնց բանասացները կոչում էին խուժան) կողմից իրականացրած ավերածությունների ու թալանի նկարագրություններ (Սարակապ, Շիրակավան, Ղազանչի, Ձորակապ, Կրասար, Ջույգաղբյուր, Հողմիկ, Բավրա, Ձիթհանքով): Այս առումով կարևոր է նշել, որ հիշողության կրողները հատկապես շեշտում էին վերջիններիս անմարդկային ու դաժան էությունը՝ հաճախ ասելով, թե դրանք թուրքերից վատն էին և նրանց ազահությունն ու անհագուրդ տեսակը, թվարկելով, թե ինչեր են տարել իրենց հետ (բացի ոսկուց, հացահատիկից ու անասուններից, նաև դուռ, լուսամուտ, ձիթհանի փայտե մասեր և այլն): Այս առումով հետաքրքիր է Վ. Նազարեթյանի (Ձորակապ) պապի նկատառումը. «Պապս ասում էր, որ կանոնավոր բանակի զինվորների հետ հնարավոր էր լեզու գտնել, հատկապես 18-19 տարեկան երիտասարդների հետ, նրանք ավելի բարեգութ էին, քան խուժանը, որի հետ հնարավոր չէր խոսել:»

[52] Գևորգյան Ռ., 1918 թ. մայիսյան հերոսամարտերի մի նոր նոր էջ՝ Սոգյութլուի գոյամարտը, «1918 թ. մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ», 1918 թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության 85-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր. 2005, էջ 36-37:

Գրանցված պատմությունները հաստատվում են նաև արխիվային նյութերով. վերը հիշատակված հանձնաժողովը այսպես է նկարագրում տիրող իրավիճակը. «Թուրք-թաթարական բանդաների կողմից իրականացված ավերածությունների մասին կարելի է դատել նրանից, որ այդ բանդաներն իրենց հետ տանում էին ոչ միայն այն ամենն ինչ հնարավոր էր՝ սկսած անասուններից ու հացահատիկից և վերջացրած տախտակներով, գերաններով ու գյուղացիների տների պատուհանների շրջանակներով, այլև ոչնչացնում էին այն, ինչ չէին կարողանում տանել՝ գետնին հավասարեցնելով նախկին ծաղկուն գյուղերը:[53]»

Այն փաստը, որ հայերին կողոպտելու, կոտորելու համար թուրքերն օգտագործում էին հարևան մահմեդական այլ ժողովուրդներին թե՛ Արևմտյան, թե՛ Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասում, հաստատում են ոչ միայն մեր կողմից գրանցված հուշերը, այլև հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ հուշագրություններն ու արխիվային փաստաթղթերը: «Յառաջ» թերթի հոդվածում (տես Հավելվածը) այս մասին գրված է. «Պատկերն ամբողջացնելու համար պէտք է յիշատակենք նաև այն տխուր դերը, որ կատարել են Ալէքսանդրապօլի գաւառի հայութեան կոտորածների գործում հարևան թաթարներն ու քրդերը, մանաւանդ քրդերը: Զարմանալի է հայ ժողովրդի ճակատագիրը: Նրան հասած աղէտի օրերում իր հարեւանները փոխանակ նրան մխիթարելու ու աջակցելու, ընդհակառակը, մի չարախնդաց պատրաստակամութեամբ, իրանք էլ միւս կողմից են հարւածել նրան: Այդպէս է եղել այստեղ, Անդրկովկասում, մեր հարևանների վերաբերմունքը դէպի մեզ, այդպէս է եղել և Տաճկահայաստանում հարևան ժողովուրդների

[53] ՀՀ ԱԱ ֆ. 202, ց. 1, գ. 1271, թ. 68:

վերաբերմունքը դէպի ոճրախտութեան վերջին ծայրը հասած հայութիւնը: Բաւական է ասել, որ Բաշկալէի վերջին կոտորածների ժամանակ հրեաները, իրենց հռչակաւոր հարուստ Նուրիլայի գլխաւորութեամբ, փողոցէ փողոց ընկած, տաճիկ կատաղած զորքին, թիւրք ու քիւրդ հրոսակախմբերին ցույց էին տալիս հայոց տները, որպէսզի նրանք իրենց սև գործը հաջողութեամբ կատարեն:[54]»

Բաքվի հայերի կոտորածին ու կողոպուտին ադրբեջանցիների մասնակցության մասին ուշագրավ հիշողություն է թողել Պ. Մասլովը. «Թուրքերն առայժմ մնացին քաղաքից դուրս և առաջ մղեցին ադրբեջանական ջոկատները, ավելի ճիշտ բանդաները: Երեք օր Բաքվում տիրում էր համատարած կողոպուտ ու թալան և խաղաղ հայ բնակչության չտեսնված ու չլսված կոտորած, որոնց թիվը հասավ 30000-ի: Չորրորդ օրը թուրքերը մտան քաղաք ու կոտորածը դադարեց կարծես կախարդական ձեռքի մի շարժումով:[55]» Հետագայում այդ թալանին միացան նաև թուրքերը, ինչի մասին վերջինս գրում է. «Մեր դրամարկղի (Բաթումի) անսպասելի համալրողները դարձան թուրք սպաները, որոնք Բաքվից Բաթումով գնում էին Կոստանդնուպոլիս: Խուզարկու ոստիկանությունն ինձ զեկուցեց, որ նրանց մոտ միշտ առկա են բավականին քանակությամբ ոսկե իրեր, ռուսական թղթադրամներ ու ոսկեդրամներ: Ես կարգադրեցի նրանց բռնել և պարզել իրենց ճամպրուկների ու դրամապանակների պարունակության ծագումը: Առաջին բռնվածին ես հարցաքննեցի ոստիկանապետ Կոբիևի հետ: Անհերքելիորեն պարզվեց, որ իրերն ու փողերը ձեռք էին բերվել Բաքվի հայերի

[54] Իրազեկ Յ., Տաճկական վայրագութիւնը Ալէքսանդրապօլի գաւառում, Յառաջ, 1919, № 26:

[55] Воспоминания Маслова, ст., 212:

կողոպուտի միջոցով: Մենք դրանք բռնագրավեցինք ու փոխանցեցինք պետական գանձատուն, թուրքերին թողնելով մի փոքր ավելի նրանից, որքան կարող էին ունենալ իրենց դիրքին համապատասխան: Նրանք զուտ ձևականորեն էին ընդդիմանում, ինչն ավելի էր վստահեցնում մեր իրավացիության մեջ:[56]»

Նորից վերադառնալով թուրքերի ու մահմեդական հրոսակախմբերի թալանին ու ավարառությանը, հարկ ենք համարում նշել, որ բազմաթիվ արխիվային փաստաթղթեր են պահպանվել, որտեղ ցուցակագրված են ինչպես ամբողջական գյուղերի վնասները, այնպես էլ Ալեքսանդրապոլ քաղաքի անհատ բնակիչներից թալանված ունեցվածքը: Հատկանշական է, որ մշակվել էր պաշտոնական ձևաթուղթ, որտեղ առանձին սյունյակով են հաշվառվել «զորքի ձեռքով ու խուժանի ձեռքով» գյուղերում կատարված հանցագործությունները: Իսկ քաղաքի բնակիչներն իրենք են կազմել իրենց կորուստների ցանկը[57]:

Հարկ է նշել, որ մեր կողմից գրանցված հիշողություններում պահպանվել են նաև համագյուղացիների դավաճանությունների ու թուրքերի հետ համագործակցելու մասին բազմաթիվ պատմություններ (Վահրամաբերդ, Սարիար,Կրասար, Լեռնուտ, Ջույգաղբյուր, Ջաջուռ, Արևիկ): Բանասացները դավաճան էին որակում այն մարդկանց, որոնք թուրքերին ցույց են տվել ոսկի, հացահատիկ, ինչպես նաև գեղեցիկ աղջիկներ ու հարսներ ունեցողների տները: Հատկանշական է, որ սրանց մասին պատմելով, փորձում էին նաև բացատրել նման վարքը, երբեմն՝ արդարացնել, ասելով «... երևի ստիպված են ասել, քանի որ վախեցել են, դրանց էլ են կոտանքնե-

---

[56] Воспоминания Маслова, ст., 224:
[57] ՀՀ ԱԱ ֆ. 202, ց. 1, ֆ. 221, ց.1:

րի ենթարկել, որ իրենց ուզածն իմանան, սրանք էլ մատնել են:» (Հ. Կարապետյան, Մեծ Սարիար): Այդ կտտանքներն ավելի պատկերավոր է նկարագրում Կ. Ալեքսանյանը (Լեռնուտ) «Տատս պատմում էր, թե ինչ դաժանությամբ են վարվել այն կանանց հետ, որոնցից ուզել են իմանալ իրենց ոսկիների տեղը. երբ վերջիններս չեն ասել, տաքացրած շամփուրներով դաղել են նրանց մարմինները, ու երբ քաշում էին շամփուրները, կաշին մսի հետ միասին դուրս էր գալիս: Տատս պատմում է, որ էդ վառած մսի հոտից իրենց ուշքը քիչ էր մնում որ անցներ: Սա ասում եմ նրա համար, որ հասկանանք, թե ինչու էր ժողովուրդը վախեցել թուրքերից ու կատարել նրանց պահանջները, որովհետև ահավոր դաժանությամբ են նրանք վարվել բնակչության հետ:»

Հետաքրքիր են նման մարդկանց հետագա ճակատագրի մասին պատմությունները, այսինքն, թե ինչ վերաբերմունքի են արժանացել դավաճանները թուրքերի գնալուց հետո:Այստեղ դրսևորվում են երկու հակասական մոտեցումներ. առաջինը, որը տրամաբանական է, դա բացասական, մերժողական, դատապարտող վերաբերմունքն է, որի հետևանքով վերջիններս կամ սպանվել են հենց համագյուղացիների կողմից, կամ թողել են տվյալ բնակավայրը, կամ նրանց դեմ քրեական գործեր են հարուցվել: Մյուսը կոնկրետ իրավիճակով պայմանավորված արդարացնող մոտեցումներն են, ինչպես օրինակ Ա. Դավթյանն է հիշում (Ջաջուռ). «Մեր գյուղից Բաղդոյի կնիկ Սինամ, Արխվալցի է էղի, դավաճան կեղնի. սաղ լավ-լավ աղջկներին գերիների մեջ մատնացույց կեներ էդ մեկ, մյուսը՝ իրան կհարցնեին ձեր գյուղը ոսկեղեն, հարստություն ունեցող ո՞վ կա, ինքը տեղերն ասել է: [...] Հիմի Բաղդոն չի ուզե առնե, կսե ինքը թուրքերին կնիկ է էղե (Բաղդոն իմ ամուսնու ընգերն էր, գլխավոր հաշվապահ էր), կսե ինքը ընձի պետք չէ, ես կվռնդեմ.

նոր ջոջոն՝ տատիկը խնդրելով, աղաչելով կհամոզե, թե Բաղդասար ջան թուրքի զուլում էր, թուրքի զուլում, ներե, իրան պաշտպանելու համար է էրե, վերջը կպայե: Հետո լավ էրեխեք ունեցավ, 5 աղջիկ, 3 տղա:»

Մարդկանց հիշողության մեջ մնացել են ոչ միայն բացառիկ դաժանության մասին փաստերը, այլև թշնամու կողմից բարյացկամ վերաբերմունքի պատմություններ (Սպանդարյան, Ղազանչի, Ձորակապ, Կապս, Մայիսյան, Բասեն, Բայթար, Գետք): Ժողովրդի հիշած «բարի թուրքերը» թաքցրել են հայերին, օգնել են փախնել, փրկվել, ազատել են ոմանց գերությունից, ուտելիք են տվել սովյալներին և այլն: Ըստ գրանցված նյութի, «բարի թուրքերի» նման վերաբերմունքը պայմանավորված էր մի դեպքում մորը տված խոստումով (քանի որ նրանց մայրերը երդում էին վերցրել, որ հայերին չվնասեն), մյուս դեպքում իրենց նկատմամբ հայերի մարդասիրական վերաբերմունքին ի պատասխան: Բերենք երկու օրինակ. «Ինքը պատմել է, օր էդ թուրքի մերն իրեն ասել էր, որ գյուղն օր կմտնես, ոչ մեկին ձեռ չես տա, կպաշտպանես ընպես, ինչ որ ես քու մայրն եմ, քեզ եմ պաշտպանել: Էդ մարդը պատմում էր, որ այդ թուրքը շատ խելացի, բարեխիղճ անձնավորություն է եղել: Ու էդ թուրքը 6 ամիս էդ մարդու տունն է նստե ու ոչ մեկին ձեռ չի տվե: Ինչ որ իրա մերն ըսել է, ինքն էլ արել է էս գյուղի հասարակության համար:» (Աբրոյան Մ., Ղազանչի) «Մամս գեղեցիկ կին էր, որբևերի, ասում էր մի հատ թուրք կար՝ ասկյար, որ չլիներ էս հարս ու աղջիկներին բոլորին կտանեին: Մեր հարսներն ու աղջիկները երեսներին կեղտ էին քսում, որ գեղեցկությունը չերևա, երբ թուրքերը գալիս էին նրանցից որևէ մեկի հետևից, ինքը գալիս էր ու չէր թողնում: Մամիս կիսուրը Ղարսից էր, թուրքերեն գիտեր, հարցնում էր, թե էդ ինչից է, որ բոլորը մեր տղամարդկանց սպանում են,

դու մեր աղջիկներին պաշտպանում ես: Սա պատասխանում է, թե երբ տանից դուրս էի գալիս, մայրս ինձ երդումի քաշեց՝ բացեց կուրծքը, ասեց գլուխդ դիր ու երդվիր, որ դու հանկարծ հայ կնոջ մատով չես դիպչի ու չես սպանի: Ես իմ խոստումը կատարում եմ:» (Վ. Մխիթարյան, Սպանդարյան)

«Բարի թուրքերից» մեկը ծագումով հայ Գեղամ փաշան էր Ավդիբեգ գյուղից (Բասեն, Գյումրի), որի մասին հիշողություններ է գրանցել նաև Վ. Հախոյանը[58]:

Մարդկանց հիշողություններում պահպանվել են պատմություններ Անդրանիկի, Դրոյի, Սեպուհի ու այլ նշանավոր մարդկանց մասին, որոնցից ամենաշատ հիշատակվողը Անդրանիկն է (Մուսայելյան, Ղազանչի, Հոռոմ, Կրասար, Ջիթհանքով, Կապս, Լեռնուտ, Զույգաղբյուր, Ջրառատ, Արևիկ, Բայթար): Հատկանշական է, որ բոլոր դեպքերում Անդրանիկը ներկայացվում է որպես դրական կերպար՝ սիրելի զորավար, որն օգնել, շատ դեպքերում փրկել է հայերին, հաշվեհարդար տեսել թուրքերի հետ: Հետաքրքիր հիշողություններ կան այն մասին, թե ինչքան են վախեցել թուրքերն Անդրանիկից, որ նույնիսկ նրա անունն այնպիսի սարսափ է առաջացրել, որ այն լսելուն պես փախել են: Դեպքեր կան, երբ այդ անունը կրող երեխաներին անգամ սպանել են: Նման դեպքի օրինակ է Կ. Ալեքսանյանի (Լեռնուտ) պատմությունը. «Տատս պատմում էր, որ էն կինը, որի տանը մնում էր փաշան, մի տղա է ունեցել Անդրանիկ անունով: Մի օր, երբ տղան չի երևացել, դուրս է եկել ու գոռացել Անդրանիկ, Անդրանիկ, փաշան դա լսելով անմիջապես հագնվել է ու նստել են ձիերը որ փախնեն, վախենալով թե Անդրանիկ զորավարն է, մեկ էլ հասկացել է որ դա Անդրանիկ զո-

[58] Հախոյան Վ., նշվ. աշխ., էջ 106-107:

րավարը չէ, տեղնուտեղը այդ տղայի գլուխը կտրել է: Հետագայում այդ կինը նորից ամուսնացել է ու որդու անունը նորից Անդրանիկ է դրել, որին ես ճանաչում եմ:» Նման դեպք է տեղի ունեցել Կաքավասար (Քեֆլի) գյուղում. «Ներս են մտնում ասկյարները և պահանջում ոսկի: Իրեն հասակակից Քոչարյան Ասլիի աղջկա հետ ներս ու դուրս վազվզող տղային կարգի հրավիրելու համար Մարանը ձայնում է. «Անդրանի՛կ ջան, ներս արի՛, հանգիստ մնա՛, մինչև սրանք գնան»: Լսելով Անդրանիկի անունը, հարձակվում են երեխայի վրա, բռնում են նրան, պառկեցնում, վիզը դնում են տան շեմքին և սրով կտրում երեխայի գլուխը: Կտրում են նաև Անդրանիկի հետ խաղացող աղջնակի գլուխը:[59]»

Ի տարբերություն Անդրանիկի, Դրոյի ու Նժդեհի մասին հիշողությունները դրական չեն: Դրանք մեծաթիվ չեն, ինչպես Անդրանիկի պարագայում, սակայն հետաքրքիր են այնքանով, որ չեն համապատասխանում այսօր ներկայացվող նրանց կերպարներին: Քանի որ Նժդեհի մասին ընդամենը մի հիշողություն է գրանցվել, որը կարող է լինել սուբյեկտիվ, դրան չենք անդրադառնա, սակայն Դրոյի կերպարը միանշանակ է երկու դեպքում էլ (Կապս, Կամո): Համաձայն բանասացների. «Նա (տատը) վատ էր խոսում Դրոյից, պատմում էր՝ որ աղջիկը որ գյուղից իր դուրը գալիս էր, ուրեմն իրեն պետք է պատկաներ և այլն:» Կամ «Դրոյի խմբի համար ինքը (պապը) վարշե լավ չէր խոսա. կսեր ինչ կէնեին՝ կմտնեին մեկի գոմը, տունը, ունեցածը կտանեին, ուրդեղ լավ հարսմ կտեսնեին կմտնեին, կտանեին, ինչ կենեին դաշնակները: Ինքը ճշտի կողմ մարդ էր, Դրոյի համար միշտ կսեր մի քանի հոգով եկան Արփաչայի եկեղեցու մոտ կերան, խմեցին, Հայաստանը ծախեցին:»

[59] Վ. Հախոյան, նշվ. աշխ., էջ 101:

Հիշողություններում պահպանված մյուս դեպքերի՝ փախե-փախի, գաղթականության, որբության, գերեվարության, համաճարակի, սովի ու դրանց հետևանքների մասին պատմությունները չենք մեկնաբանում՝ թողնելով ընթերցողին: Միայն ցանկանում ենք նշել, որ Ալեքսանդրապոլի գավառից թուրքերի դուրս գալուց հետո ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Շիրակում առկա ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը բարելավելու ու կայուն կյանք սկսելու նախապայմանը բնակիչներից ոմանք համարում էին խորհրդային կարգերի հաստատումը. «Մամաս էլ կսեր սովետն էկավ, էլ մեր խաթրին կպնող չեղավ: Թե չէ ամեն տարի թուրքը գուքար, դուռը կբացեր, ինչ կուզեր կառներ-կտաներ, ռիսկ չէինք էնե դեմն առնե:» (Ն. Խաչկալյան, Մայիսյան)

Ամփոփելով կարող ենք ասել, որ Շիրակի բնակչության մեջ պահպանված հիշողություններն ու մասնավորապես մեր կողմից գրանցված պատմություններն ինչպես ամբողջական սյուժեներով, այնպես էլ առանձին դրվագներում շատ նմանություններ ունեն արևմտահայության նկատմամբ թուրքերի կողմից իրականացրած ցեղասպանության սյուժեների ու առանձին դեպքերի նկարագրությունների հետ: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ հայերին բնաջնջելու թուրքերի ձեռագիրը չի փոխվել, այն էթնիկ բնույթ ունի ու չի փոխվելու նաև հետագայում, ուստի գրանցված նյութերը, որպես փաստական վավերագրեր, աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացված բանավոր ու գրավոր հիշողությունները, արխիվային տարաբնույթ նյութերը, հաճախ իրար լրացնելով ու համընկնելով, հաստատում են դրանց հավաստիությունն ու վավերականությունը: Այս պատմությունները հնարավորություն են տալիս ավելի ամբողջական դարձնել ժա-

մանակաշրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային համապատկերը, իրադարձությունները տեսնել ու գնահատել ոչ միայն որպես զուտ պատմական դեպքեր, այլ ներթափանցել տվյալ հասարակության, հանրույթի ու առանձին մարդու առօրյա կյանքի, կենցաղի ու ապրելակերպի մեջ, փորձել հասկանալ իրադարձությունների բնույթը ներսից:

Այդ պատճառով թուրքական երկու արշավանքների ուսումնասիրությունն առանց օգտագործելու այն ոչ պաշտոնական պատմական տեղեկությունները, որոնց կրողները այդ իրադարձությունները վերապրած մարդիկ են, անխուսափելիորեն հանգեցնելու է պատմաբանների համար շատ կարևոր ինֆորմացիոն դաշտի սահմանների նեղացմանը: Վերը շարադրվածը հնարավորինս ճշմարտացի սահմանել պատմական իրողությունների իրական ծավալները և ապագա իրադարձությունների վրա դրանց ազդեցության աստիճանը: Ըստ այդմ, «բանավոր պատմությունների» տվյալները, որպես ժողովրդի պատմական հիշողության փաստեր, հնարավորություն են տալիս ձևավորել պատերազմական ժամանակաշրջանի իրական կյանքի ու իրողությունների այսպես կոչված «ժողովրդական» ներկայացման պատկերը և էապես լրացնել պատերազմի հետահայաց կերպարը:[60]

Հարկ է նշել նաև, որ 1918-1921թթ. թուրքական արշավանքների արդյունքում բնաջնջվեց Ալեքսանդրապոլի գավառի հունա-

[60] Никулина Т.В., Киселева О.А., Советско-финляндская война в памяти гражданского населения Карелии (По материалам устных опросов), Военно-историческая антропология. Ежегодник. 2003/2004. Новые научные направления /Отв. ред. и сост. Е.С.Сенявская. М., 2005, с. 317-318. http://www.iriran.ru/?q=node/277

բնակ գյուղերի բնակչությունը, ինչ մասին հիշողություններին առավել մանրամասն անդրադարձել ենք  առանձին հոդվածով:[61]

Վերջում ցանկանում ենք ավելացնել, որ դեռ բազմաթիվ հիշողություններ կան, որոնք չեն գրանցվել և որոնք սպասում են իրենց փաստագրմանը: Հասկանալի է, որ մի քանի ամսում հնարավոր չէր զրուցել մարզի բոլոր բնակավայրերի ողջ բնակչության հետ, ուստի համոզված ենք, որ դեռ բազմաթիվ հիշողություններ մնացին չգրանցված: Բացի այդ, 1918-1921 թթ. Շիրակում տեղի ունեցած դեպքերի ու իրադարձությունների ականատեսների սերունդների մի ստվար զանգված գտնվում է հայրենիքից դուրս, ճակատագրի բերումով սփռվել է աշխարհով մեկ, ուստի, հույս ունենք, որ այս աշխատանքը կշարունակվի և կհամալրվի նորանոր հետաքրքիր հիշողություններով ու պատմություններով:

[61] Bazeyan K., Aghanyan G., The Greek Population of the Province of Alexandropol during the Turkish Invasions of 1918-1920: An Analysis based on Oral History, Athens, Athens Journal of History, 2022, Volume 8, Issue 4, p. 321-332. https://www.athensjournals.gr/history/2022-8-4-3-Bazeyan.pdf

# ՆՅՈՒԹԵՐ

## §3 ԳՐԱՎՈՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Բաթումի և Բաթումի շրջանի կառավարման խորհրդի նախկին նախագահ Պ.Մասլովի մեքենագիր հիշողությունները (թարգմանություն ռուսերենից)

### Воспоминания Маслова/бывшего председателя совета по управлению Батумом и ее областью

Թուրքերը մոտեցան Բաթումին 6 վերստ հեռավորությամբ և քաղաքում պարզ լսվում էր ոչ միայն հրետանային համազարկերի թնդյունը, այլև գնդացիրների կրակահերթերը/կտկտոցները: Բնակչության մեջ խուճապ սկսվեց և բաթումցիները սկսեցին զանգվածաբար էվակուացվել: Զինվորական ղեկավարությունը հանգստացնում էր բնակչությանը՝ վստահեցնելով որ Բաթումի ամրոցը թուրքերը չեն կարող գրավել և միայն զորքի անբավարար քանակն է ստիպել հրամանատարությանը մոտենալ Բաթումին՝ ամրոցում ու դրա ամրակետերում պաշտպանվելու, մինչև օգնական ուժերի տեղ հասնելը: Այս նկատառումները համապատասխանում էին իրականությանը, սակայն ինչպես միշտ է լինում նման դեպքերում, թույլ ազդեցություն ունեին: Մեր ռազմական անհաջողությունները, թուրքական պրոպագանդայի հետ միասին, շատ բացասական ազդեցություն էին թողնում տեղաբնիկների՝ աջարացիների տրամադրության վրա: Արևելքն, ընդհանրապես, հարգում է միայն ուժը, իսկ տվյալ դեպքում կարևոր դեր խաղաց աջարների ֆանատիկ նվիրվածությունը իսլամին: Նրանք տատանվեցին ռուսական պետականության հանդեպ իրենց հավատարմության մեջ ու սկսեցին օգնել թուրքական զորքերին որպես կապավոր, հետախույզ,

երբեմն նաև զենքը ձեռքերին: Այս տակտիկան հետագայում նրանց բերեց շատ դժբախտություններ, սակայն, միաժամանակ շատ բան էլ սովորեցրեց: (էջ 18)

Աջարիան պատերազմից հետո խիստ դատարկվեց, միաժամանակ պետք է նշել, որ ինչպես դատարկմանը, այնպես էլ ռուսական իշխանության ու տեղի մահմեդական բնակչության միջև հարաբերությունների սրմանը մեծապես օժանդակում էին տեղի հայերը (հատկապես Արդվինի): Այդ ժամանակ արդեն հայտնի դարձան թուրքերի կողմից Փոքր Ասիայում հայերի նկատմամբ կատարված գազանությունները: Աջարիայում իրենց հարձակման ժամանակ թուրքերը նույն տակտիկան էին կիրառում. Հայկական բնակավայրերը ամբողջովին թալանում էին, իսկ մի քանիսում բնակիչներին զանգվածաբար սպանում: Բնական է, որ երբ ռազմական հաջողությունը թեքվեց ռուսական զորքերի կողմը, հայերը, վրեժխնդրությամբ լցված, դարձան մեր ամենանվիրված օգնականները: Նրանք խանդավառությամբ էին դիմավորում մեր առաջխաղացող զորքին և սիրով մատնացույց էին անում դավաճան աջարներին: Իհարկե, եղան նաև կեղծ մատնություններ, բացի այդ, հայերն իրենք զենք վերցրին ու իրենց հերթին ոչնչացրին մի քանի մահմեդական գյուղեր: Ճիշտ է, դա տեղի ունեցավ այն տարածքում (Արդվինից դեպի Արդանուճ ճանապարհին), որտեղ մի քանի ամիս առաջ թուրքերը անդունդն էին գցել 300 հայերի՝ նախապես նրանց 5-6 հոգով կապելով պարաններով: Անդունդի հատակին գտնված հայրենակիցների քայքայված դիակները հայերին մղեցին դեպի իրենց մահմեդական հարևանների նկատմամբ արյունոտ դատաստանի: Արդարությունը պահանջում է նշել, որ գեն. Լյախովը երկաթյա ձեռքով ճնշում էր այդ էքսցեսները և, խստագույնս պատժելով աջարներին, տվյալ դեպքում հայերի հանդեպ ևս ավելորդ նե-

բողամտություն չցուցաբերեց, նրանցից մի քանիսին գնդակահարելով՝ իր կողմից ստեղծված դաշտային դատարանի վճռով: Իսկ ընդհանրապես ոչ միայն մինչև պատերազմը, այլև նկարագրված դեպքերից հետո հայերն ու աջարները համեմատաբար հաշտ ու խաղաղ ապրում էին իրար հետ: (էջ 19)

Բանը նրանում է, որ դեպի Ռուսաստան զորքերի շարժմանը զուգընթաց Սովդեպը (պատգամավորների խորհուրդ-Կ.Բ.) լքում էին դրա ռուս անդամները և տեղաբնիկ էլեմենտը ավելի ու ավելի ազդեցություն էր ձեռք բերում: Այդ առումով ամենաքիչ հետաքրքրություն ցուցաբերում էին հայերը, ամեն կերպ ձգտելով հարթել տարաձայնություններն ու խուսափել կոնֆլիկտներից: Վրացիներն ավելի պահանջկոտ էին, և հստակ արտահայտում էին իրենց ձգտումը խլելու զենքը ռուս զինվորներից և այն փոխանցել առաջին հերթին նոր ձևավորվող Ժողովրդական Կարմիր Գվարդիային, երկրորդ՝ իրենց ազգային զորամասերին, որոնք ևս սկսում էին կազմավորվել: Սակայն զինաթափման իրականացման ուղղությամբ ամենամեծ հետաքրքրություն դրսևորում էին թաթարները, որոնք, ինչպես և Կովկասի բոլոր մահմեդականները (ինչպես և ոչ մահմեդականները),զենքի նկատմամբ հատուկ կիրք ունեին:(էջ 93)

Եվ ահա, երբ թաթար պատգամավորները Սովդեպում, փրփուրը բերանին, ջանում էին իրականացնել պաշտոնական լայն զինաթափում, նրանց առավել մութ ու ագահ ազգակիցները նետվեցին երկաթգծի ուղղությամբ՝ չսպասելով իրենց պատգամավորներից ստանալու զենքերը՝ դրանք տեղում առգրավելով: Բառացիորեն հոծ ամբոխներով թաթարները հավաքվում էին երկաթգծի երկայնքով, կանգնեցնում էին գնացքը (գծերը քանդելով ու հավաքելով) և խլում էին զենքերը անզեն կամ փոքրաթիվ էշելոններից: Սրան, անշուշտ, ավելանում էր կողոպուտը, բռնությունն ու սպա-

նությունը: Այս մասին լուրերը տարածվեցին երկաթգծի ողջ երկարությամբ և զինվորները պարտքի տակ չէին մնում, երբ իրենք ավելի ուժեղ էին լինում:

Հետագա արյունոտ դեպքերի համար (նկատի ունի Շամխորի դեպքը-Կ.Բ.) այդպիսով հողը նախապատրաստված էր: (էջ 94)

Ավելի քան 8000 ռուս զինվորներ սպանվեցին Շամխորի տակ. շրջակա բոլոր ջրհորները լցված էին նրանց դիակներով, թաթարները շտապում էին թաքցնել իրենց ոճրագործության հետքերը: (էջ 95)

Շամխորի դեպքից փրկված զինվորներն, իհարկե, չմոռացան այդ ջարդը: Նրանց վրեժը լուծվեց /մի փոքր առաջ ընկնեմ/, երբ 20 թ. ապրիլին բոլշևիկները վերցրին Բաքուն, ինչպես նաև Ադրբեջանը, սկսվեցին տեղային ապստամբություններ՝ հատկապես բեկերի /ազնվականների/կողմնակիցների կողմից, որոնք բոլշևիկների գալուց հետո կորցրել էին ողջ իշխանությունը: Բոլշևիկները դաժան հաշվեհարդար տեսան ապստամբների նկատմամբ, որոնք պատասխանում էին նույն ձևով՝ թաքստոցից: (էջ 96)

Ռուսական զորքի հեռանալու հետևանքները բառի բուն իմաստով կործանարար էին ոչ միայն տեղի ռուսների, այլև ողջ Անդրկովկասի համար: Անարխիան ուժգնանում էր ռուսական ռազմական ուժի կրճատմանը համապատասխան, որի ներկայությունը՝ նույնիսկ անկազմակերպ ու կազմաքանդված, զսպում էր կրքերը: Հատկապես կատաղեցին թաթարները՝ զինվելով ու իրենց զգալով բացարձակապես անպատիժ: Նրանց առաջնորդները առանձնապես ազդեցություն չունեին իրենց վրա, և, ճիշտն ասած, առանձնապես չէին էլ փորձում հետ պահել իրենց ազգակիցներին այլազգի հարևաններին թալանելուց ու բռնություններից: Էշելոնների անցնելուց հետո թաթարները շարունակում էին կողոպտել սովորական գնացքները, որոնք շարժվում էին Թիֆլիսից-Բաքու՝

կիրառելով իրենց սիրած ձևերը. քանդելով երկաթգծի ռելսերը: Արդյունքում Թիֆլիսը երկար ժամանակ (մինչև 18 թ. դեկտեմբերի 20-ը) փաստորեն կտրված էր Բաքվից: (էջ 97)

Հայերի վիճակը դառնում էր բոլորովին անտանելի, հատկապես թաթարների հետ սահմանակից տարածքներում: Ընդհանրապես թաթարները նրանցից ուժեղ ու խիզախ էին, և հայկական բնակավայրերի կողոպուտը համատարած էր, ու քանի որ այդ ժամանակ դեռևս պահպանվել էին ընդհանուր հեղափոխական կազմակերպություններ, այնտեղից էքսցեսի տեղերն էին գնում խառը հաշտեցնող կոմիսիաներ: Բայց դա քիչ էր օգնում և հայերը սկսեցին կազմակերպել ինքնապաշտպանություն:

Հայրենակիցների հեռանալը ծանր զգացին Անդրկովկասի ռուս տեղաբնիկները և գերմանացի գաղութաբնակները: Ինչպես ես արդեն նշեցի, մեծավմասամբ սրանք հարուստ տարրեր էին: Դեպի նրանց հատկապես էին ձգվում ավելի աղքատ ու ծույլ հարևանների – տեղաբնիկների ագահ ձեռքերը: Վերջիններիս մեջ կորսված, նրանք գրեթե զրկված էին պաշտպանվելու հնարավորությունից: Հարյուրավոր ու հազարավոր ռուսական ու գերմանական տնտեսություններ սնանկացան: Այն ժամանակ, երբ ռուս մուժիկը կողոպտում էր կալվածատերերին կենտրոնական Ռուսաստանում, այստեղ իրենց հայրենակիցներն էին կողոպտվում տեղի բնակչության կողմից. ռուսների կողմից թողնված Մուղանի դաշտավայրի ու Կարսի մարզի հնադավաններին՝ թաթարները և թուրքերը, Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների մոլոկաններին՝ թաթարներն ու վրացիները, Ելիզավետպոլի ու մասամբ Թիֆլիսի նահանգի գերմանացիներին՝ թե սրանք, թե նրանք:Բաթումի շրջանի մասին կասեմ հետո: (էջ 98)

Թուրքական վտանգի առջև վրացիների ու հայերի հետաքրքրությունները համընկնում էին, սակայն այդ վտանգը կանխարգելելու և դիմակայելու տակտիկայի հարցում տարբերվում էին: Վրացիները, միանշանակ չընդունելով բոլշևիկներին, կոչ էին անում ողջ Կովկասի ուժերը միավորել ընդդեմ թուրքերի, իսկ հայերը, քիչ հավատ ընծայելով նման միավորման հաջողությանը և պատրաստ լինելով գնալ թուրքերի դեմ «թեկուզ սատանայի հետ», սրտի խորքում հույսը դնում էին միայն ռուսական ուժի վրա և նույնիսկ առաջարկում էին օգնության համար դիմել Բաքվի բոլշևիկներին, որոնք այդ ժամանակ գրեթե անկախ էին կենտրոնից ու հակաթուրքական կողմնորոշում ունեին՝ թուրքերի մեջ տեսնելով «հեղափոխության խեղդողներին»: Ինչ վերաբերում է մահմեդականներին, նրանք սկզբում երկիմաստ դիրք գրավելով, շուտով որոշակի ցույց տվեցին իրենց դիրքորոշումը: Սկզբում նրանց մեջ որոշակի տարակարծություններ կային և նրանց սոցիալիստական էլեմենտները փորձում էին ինչ-որ բան փնթփնթալ «Անդրկովկասում հեղափոխական ճակատի միասնության մասին»: Բայց թաթարներն, ընդհանրապես, վատ սոցիալիստներ են:

Անդրկովկասի վրա իրենց հավատակից թուրքերի հարձակումը փակում էր նրանց բերանը, դրանից պանիսլամիստներն առավելություն ստացան և Սեյմի թաթարական մասը փաստացի դադարեց մասնակցել Անդրկովկասի պաշտպանության հարցերի քննարկման աշխատանքներին: (էջ 111)

Այստեղ տեղին է ներկայացնել երեք ժողովրդի բնութագիրը:

Վրացիները չափազանց էքսպանսիվ են – դա նրանց ամենատարբերակիչ հատկությունն է: Նրանց վրա հսկայական ազդեցություն ունի գեղեցիկ ժեստը, գեղեցիկ խոսքը: Նրանք արագ յուրացնում են նոր գաղափարը, նոր առարկան, բայց միայն արտաքի-

նից՝ առանց խորանալու դրա էության մեջ: Նրանք կարող են հրնթացս ինչ-որ լավ բան անել, բայց նրանց մոտ բացակայում է սիստեմատիկ տքնաջան աշխատանքի և կազմակերպվածության ունակությունը: Շատ կրակոտ է վրացու սերը դեպի իր իսկապես հրաշագեղ հայրենիքը, բայց այստեղ էլ ավելի շուտ դա էսթետի սերն է առ գեղեցիկ համայնապատկերը, քան քաղաքացու սերը դեպի պետությունը:

Նրանց բնավորության մեջ կա ի ծնե ազնվազարմություն, որը զուգակցվում է անկարգապահության, անխոհեմ խրախճանքներին հակվածության, կյանքը վատնելու հետ, Վրաստանում դեռ կենսունակ են նախկին կյանքի ավանդույթները՝ ասպատակություններով ու ընդհարումներով, դրա համար Վրաստանում հաճախակի են կողոպուտներն ու օտար ունեցվածքի նկատմամբ թեթևամիտ վերաբերմունքը: Հակասական հատկանիշների այս ամբողջ խառնուրդը խիտ ներծծված է հարավային տաք արյունով ու բարձր ինքնահավանությամբ: Վրացին հետաքրքրաշարժ է հասարակության մեջ, նա լավ բաժակակից է ու բարեկամ, բայց նրա ընկերության վրա հույս դնել չի կարելի: Վերջապես, չի կարելի ժխտել վրացիների խիզախությունը, բայց դա դրսևորվում է ավելի շուտ երիտասարդ տարիքում քան հասուն տարիքում; շարակարգում վրացիները շատ անկայուն դրսևորեցին իրենց:

Հայերը որոշակիորեն վրացիների հակապատկերն են: Չնայած այստեղ էլ հարավային արյունը վառ դրսևորվում է, և, երբեմն, բռնկվում, սակայն հայերը բավականին հավասարակշռված են: Դարավոր մահմեդական լուծը նրանց սովորեցրել է խորամանկության, հնարամտության/ճարպկության, զգուշության: Նրանք վատ կազմակերպիչներ չեն, հատկապես առևտրի ասպարեզում, իզուր չէ, որ նրանց կոչում են «Արևելքի հրեաներ»: Փոքր Ասիայում ու

Անդրկովկասում առևտուրը գտնվում էր հիմնականում հայերի ու հույների ձեռքում: Հայերի պետական ունակությունների մասին դժվար է որոշակի ինչ-որ բան ասել. շատ անբարենպաստ են եղել նրանց համար արտաքին պայմանները: Բայց սիստեմատիկ ու համառ աշխատանքում նրանք իրենց ավելի լավ են դրսևորում քան վրացիները: (էջ 112)

Հայերը շատ տնտեսող են և թիֆլիսյան տների մեծ մասը նրանցն են: Սրա հետ կապված Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում մի այսպիսի անեկդոտ էր տարածված: Ազգայնական թշնամության սուր պահերից մեկի ժամանակ վրացիները իբր թե պահանջել են բոլոր հայերին արտաքսել Թիֆլիսից՝ խոստանալով նրանցից հետգնել իրենց անշարժ գույքը 30 տարում: Հայերն էլ մի քանի ժամից հավաքել են այնքան գումար, որը բավարար էր բոլոր վրացիների տները գնելու համար և, իրենց հերթին առաջարկել նրանց 24 ժամվա ընթացքում թողնել մայրաքաղաքը, որի հետ նրանց այլևս ոչինչ չէր կապում: Անեկդոտն ուներ փաստական հիմնավորում. շատ վրացիներ նյութական հարաբերություններում գտնվում էին հայերի կառչուն ձեռքերում:

Հայը պրակտիկ է. սիրո և ընկերության զգացմունքը նրանց մոտ հարաբերական նշանակություն ունի, սակայն ընտանեկան հարաբերությունները շատ ամուր են և հատկապես հոգատար են երեխաների հանդեպ: Քաջությունը չի կարելի համարել նրանց բնորոշ, բայց անելանելի վիճակում նրանք խիզախորեն դիմադրում են՝ հատկապես հայրենի օջախը պաշտպանելիս: Նրանց երկիրը քիչ բարենպաստ է (շատ են առանց բուսականության ժայռոտ լեռները), բայց նրանք այն սիրում են ուրույն ձևով:

Վերջապես Բաքվի ու Ելիզավետպոլի (Ադրբեջանի) թաթարներն իրենցից ներկայացնում են առավելապես բնության զավակ-

ներ: Հասարակ ժողովրդի ու փոքրաթիվ ինտելիգենցիայի միջև անդունդը նշանակալիորեն խորն է, քան վրացիների ու հայերի մոտ: Սակայն ինտելիգենտներն էլ արտաքին շերտի տակ պահում են իրենց ժողովրդի բնորոշ գծերը. ծուլությունը, հակումը հայեցողական կյանքին ու դրա հետ միասին անսանձ բարքը, ցանկացած՝ իրական կամ ենթադրյալ վիրավորանքի համար արյունոտ հաշվեհարդարի ծարավը: Թաթարները գրեթե զուրկ են պետականաստեղծ գործունեության ունակությունից և կազմակերպված աշխատանքից ընդհանրապես: Արևելյան կեղծավորությունը փոխարինում է նրանց մտքին: Նրանք ագահ են ինչպես երեխաները և հակված են բռնության. ավազակությունն ու կողոպուտը նրանց մոտ ծաղկում են: Նրանք վախկոտ չեն, բայց նախընտրում են թշնամու դեմ գործել ցրված ու դարան մտած: Բաց ճակատամարտի ժամանակ թաթարական զորքը հաճախ խուճապի մեջ է ընկնում, սակայն լինելով ֆատալիստներ, ինչպես բոլոր մահմեդականները, նրանք երբեմն ցուցաբերում են կատաղի դիմադրություն, հատկապես մենակ կամ խմբով պաշտպանվելիս: Բնավորությամբ նրանք ավելի մոտ են վրացիներին, քան հայերին, որոնց արհամարհում են՝ համարելով վախկոտներ ու առնետականներ: (էջ 113)

Երբ հայտարարվեց Անդրկովկասի երեք հանրապետությունների անկախությունը, նրանց կառավարությունները, բնականաբար, հակված չէին հովանավորելու ռուսական իշխանությունների ձևավորումը: Մյուս կողմից Թիֆլիսի ռուսական հրամանատարությունը վերջնականապես լիկվիդացվեց 18 թ. ամռանը, այնպես որ աշնանը արդեն ռուսական զորքեր Անդրկովկասում փաստորեն գոյություն չունեին:

Ռուսների հետ համարյա միաժամանակ Անդրկովկասում սկսեցին ձևավորվել այլ ժողովուրդների Ազգային Խորհուրդներ՝

նույն ծրագրով: Վրացիները, հայերն ու թաթարները շուտով փոխարինեցին այդ Խորհուրդները պետական կազմակերպություններով, բայց և իրենց Խորհուրդները որոշ տեղերում մնացին մինչև բոլշևիկների գալը:

Բրեստ-Լիտովսկի հաշտության կարևոր հետևանքներից մեկը եղան Բաքվի՝ 1918 թ. մարտի ցավալի դեպքերը: Այնտեղ բարդ իրավիճակ էր ստեղծվել: Դեպի Անդրկովկաս թուրքական բանակի առաջխաղացման հետ Բաքվում գլուխ բարձրացրին պանիսլամիստական էլեմենտները. Ադրբեջանի անկախությունը չցանկանալով ու մշուշոտ խոսելով Թուրքիայի սահմաններում ինքնավարության մասին, նրանք երազում էին թուրքական տիրապետությունը տարածել ընդհուպ ողջ Հյուսիսային Կովկաս այնպես, որ Անդրկովկասի հետ թուրքական սահմանը սկսվելով Բաթումից անցներ Ախալցխա, Ախալքալաք ու Սադախլո (Թիֆլիսի մոտ), Ելիզավետպոլ, Բաքու՝ այնուհետ դեպի հյուսիս: Վրացիներին մեծահոգաբար թողնվում էր Թիֆլիսի ու Քութաիսիի նահանգները, որոնք, սակայն, բոլոր կողմերից շրջափակված էին թուրքական տիրույթներով (Աբխազիան Սուխումի հետ ըստ այդ հայեցակարգի նույնպես ընդգրկվելու էին թուրքական տիրապետության ներքո, իսկ Հյուսիսային Կովկասի մահմեդական լեռնականների հետ նախատեսվում էր գալ համաձայնության): (էջ 121)

Նման պլաններով Հայաստանն ընդհանրապես վերանում էր՝ ընկնելով թուրքական տիրապետության տակ: Բաքվի բարեկամների այս նկրտումները լրիվ ձեռնտու էին և նրանք անմիջապես Բաքու ուղարկեցին իրենց էմիսարներին ու զինվորական հրահանգիչներին և Կարսից սկսեցին իրենց դանդաղ առաջխաղացումը դեպի Արևելք՝ Բաքվի ուղղությամբ:

Հայերը խառնվեցին: Չխոսելով դեռ այն հսկայական ունեցվածքի մասին Բաքվում, որ գտնվում էր նրանց ձեռքում (նավթային արդյունաբերություն, բանկեր, տներ), նրանց աչքին երևում էր հայ ժողովրդի կործանման սպառնալիքը: Այո, ճիշտն ասած հայերի մտահոգությունն ու վախը հիմքեր ունեին. բոլոր հայերի հիշողության մեջ էին 1914-15թթ. Փոքր Ասիայում հայերի նկատմամբ թուրքական գազանությունները: Եվ եթե հեռուներից ժողովրդական պատումների ձևով տեղ էին հասնում սահմռկեցուցիչ, սակայն պաշտոնապես չստուգված տեղեկությունները (չնայած որ, օրինակ Էրցբերգերն իր «Հիշողություններում» որոշակիորեն խոսում է տասնյակ հազարավոր հայերի ոչնչացման մասին), ապա Աջարիայում ու Տրապիզոնում հայերի զանգվածային (այդ թվում կանանց ու երեխաների) սպանություններն ու սարսափելի պայմաններում Փոքր Ասիայի խորքերը տեղափոխելու դեպքերը փաստագրորեն հաստատվել են ռուսական ռազմական ղեկավարության կողմից: Տրապիզոնում, օրինակ հայերին՝ 3-4-ական մարդ, կարում էին պարկերի մեջ ու խեղդում ծովում: Պատահականորեն քաղաքում մնացած թուրքական դահիճը ռուսական զինվորականության կողմից դատարանով դատապարտվեց կախաղանի: Մաքուր արևելյան ֆանատիզմով ենթարկվելով իր ճակատագրին և չժխտելով իր «աշխատանքը», նա արդարանում էր նրանով, որ ինքը, ըստ էության, ունտեր-օֆիցեր էր ու կատարում էր իր ղեկավարության հրամանները: (էջ 122)

Սկսած փետրվարի վերջից թուրքերը սկսեցին դանդաղ առաջխաղացումը դեպի Անդրկովկասի խորքերը: Դեռ մարտ ամսին նրանք վերցրին Կարսը գրեթե առանց դիմադրության հայերի կողմից, որոնք չցուցաբերեցին բավականին խիզախություն, որից իրականում զրկված էին: Ճիշտն ասած, դիմադրության հնարավո-

թությունները խիստ սահմանափակ էին հայկական կանոնավոր բանակի չափազանց փոքր թվաքանակի պատճառով: Դրանից հետո թուրքերն իրենց ուշադրությունը կենտրոնացրին Բաթումի վրա: Սակայն թուրքական հարձակումը կատարվում էր համեմատաբար փոքրաքանակ զինուժով, քանի որ ռուսական ռազմաճակատի լիկվիդացումից հետո թուրքական բանակի մի մասը տեղափոխվեց Միջագետք, Կոստանդնուպոլիս և նույնիս Բուլղարիա՝ գերմանական կոալիցիային օգնելու համար: Դեպի Բաթում թուրքերը առաջանում էին Փոքր Ասիայի խորքերից՝ Սվազից, ընդ որում գալիս էին առանց գրաստի՝ սայլախմբի: Հաջորդաբար նրանք գրավեցին Արդահանը, Արդանուճը, Արդվինը և մարտի կեսերին մոտեցան Բաթումի ամրություններին: Դառը և սարսափելի օրեր էին դրանք մեր՝ ռուսներիս համար, որոնք մնացել էին Բաթումում: Ինչ մանկական, չափազանցված էին թվում մեր վախերն ու խոցելի՝ մեր ազգային ինքնասիրությունը, որոնք մենք զգացել էինք 1914-15թթ. Բաթումին թուրքերի մոտենալու ժամանակ: (էջ 125)

Այդ ժամանակ թշնամու ժամանակավոր հաջողության դեմ կանգնած էր ողջ Ռուսական կայսրության հզորությունը, իսկ փախստականների ծառայությունների համար՝ ողջ Մեծ Ռուսաստանը: Հիմա մեր թիկունքում՝ հյուսիսում կատաղած, խելքը թռցրած, ամոթն ու պարտքը մոռացած ժողովրդական տարերքն էր, իսկ պաշտպանները՝ մեզ թշնամացած վրացիները, որոնք դատապարտված էին պարտության:

Թուրքերի առաջխաղացման հետ բաթումյան իշխանությունները ավելի ու ավելի էին կորցնում գլուխը: Նրանք հայտարարեցին մինչև 60 տարեկան տղամարդկանց համընդհանուր զորահավաք՝ արտակարգ միջոցառում, որը բացարձակապես արդարացված չէր տվյալ իրադրության պայմաններում, քանի որ քաղա-

քի կայազորը բաղկացած էր 8000 վրացի զինվորներից: Այս քանակությամբ զորքը, մինիմալ կազմակերպվածությամբ և դիմադրելու ունակությամբ, ռազմական մասնագետների կարծիքով ամբողջովին բավարար էր ամրոցի երկարատև պաշտպանության համար (Զորակոչին արձագանքեց գլխավորապես քաղաքի ռուս երիտասարդությունը, որն այդ պահին ղեկավարվում էր ազգային զգացումներով: «Չէ որ Բաթումը ռուսական քաղաք է»-ասում էին նրանք և զինվորական պարտքի զգացումը, ուստի Բաթումի ամրոցում ընթացող վրացական ու թուրքական զորքերի միջև պայքարի ժամանակ ընկան բազմաթիվ երիտասարդ ռուսներ):

Հազարավոր տարիքով տղամարդկանց, որոնք կյանքում զենք չէին բռնել, ուղարկեցին ներքին պահակային ծառայության և միլիցիոների պարտականություն կատարելու, որպեսզի, ինչպես ասվում էր Բաթումի դեպուտատների խորհրդի հրամանում, «այդ պարտականություններից ազատվեն բոլոր մարտունակ տարրերն ու մինչև վերջին մարդն ուղարկվեն ռազմաճակատ՝ նենգ ու հանդուգն թշնամու դեմ»: (էջ 126)

Մարտի 14-15-ին մոտենալով Բաթումին թուրքերը 5-6 օրվա ընթացքում գրեթե առանց դիմադրության հանդիպելու գրավեցին ամրությունների առաջին գիծը: Երկրորդի դեպքում մի փոքր դանդաղեց, ընդ որում վրացիները կրակում էին նրանց վրա նույնիսկ ամրոցի ծանր զենքերով: Սակայն կրակը հազվադեպ էր ու անվստահ. ժամանակ առ ժամանակ քաղաքի վրայով թռնում էին 9, 12 և 14 դյույմանոց արկերը, օդը լցնելով սուլոցի ու ճարճատյունի ձայնով: Սակայն քաղաքում ոչ մի վտանգ չկար. թուրքերը այն չէին գնդակոծում և, թերևս, չէին էլ կարող:

Մարտի 28-ին ընկավ նաև երկրորդ գիծը: Իշխող շրջանակում սկսվեց իսկական խուճապ. խոսում էին Թիֆլիսից արտակարգ

լիազորություններով օժտված ինչ որ սոցիալ-դեմոկրատի գալու մասին, արձակեցին ևս մի կրակոտ կոչ, բայց արդեն պարզ էր, որ հանգուցալուծումը մոտենում է: Դրան սպասում էին ապրիլի 5-6-ին, քանի որ վրացիների ձեռքում էր ամրությունների երրորդ գիծն ամբողջությամբ: Սակայն մարտի 30-ին Փոթիից եկան երկու հատուկ նշանակության շոգենավեր ու մարտի 31-ի լուսաբացին սկսվեց նավերի ու բազմաթիվ երկաթուղային կառախմբերի արագ բեռնումն ու նստեցումը: (էջ 129)

Թուրքերը համեմատաբար հեշտությամբ կարողացան կտրել երկաթգիծը, քանի որ վրացական առաջապահ զորամասն այնտեղ թույլ էր ու ոչ հուսալի: Սակայն դա, հնարավոր է չէր մտնում նրանց հաշվարկների մեջ և ընդհանրապես նրանք չէին խոչընդոտում այդ ժամանակից շուտ կատարվող էվակուացիային: Բոլոր դեպքերում այն իրականացվում էր, բացարձակապես անհասկանալի՝ գլուխները կոտրելով, խուճապահար, ինչը համակել էր նահանջողներին: Դեռ 31-ի առավոտյան, չնայած էվակուացիոն միջոցները բավարար էին /վրացիները Բաթումում թողեցին մի քանի երկաթուղային կառախումբ՝ 3-ական վագոններով/, գնացքները շարժվում էին Թիֆլիս՝ ճանճերի պես իրար վրա լցված զինվորներով. վագոնների տանիքները, թափարգելներն ու ներքին տարածությունններն ամբողջությամբ զբաղեցված էին մարդկանցով, նույնը կատարվում էր նաև շոգեքարշերի վրա:

Ինչ վերաբերում է խաղաղ բնակիչներին, ապա նրանցից շատերը մնացին քաղաքում. ռուսներն ու հույները փախնելու տեղ չունեին, պարսիկներին ու աջարներին դա պետք չէր, պետք է ասել, որ բազմաթիվ վրացիներ էլ մնացին քաղաքում: Դժվար է ասել, հայերը խելացի վարվեցին փախնելով, այստեղ պետք է ասել,

որ մնացած ընտանիքները բացարձակապես չտուժեցին. թուրքերը նույնիսկ նրանց ունեցվածքին ձեռք չտվեցին: (էջ 130)

Ճնշող մեծամասնությամբ մոբիլիզացված ռուսները մնացին քաղաքում՝ հանձնելով զենքերն ու հանելով զինվորական հագուստը, փայլուն բացառություն կազմեց քաղաքային դումայի նախագահ Բուլգակովը, որն ամենավերջինը հեռացավ վերջին գնացքներից մեկով: Ընդհանրապես գրեթե ողջ քաղաքային վարչությունը դուրս եկավ Բաթումից. քաղաքի ճակատագիրը քիչ էր հետաքրքրում սոցիալիստ ընտրյալներին, բացի այդ նրանք վախենում էին թուրքական դազանակից: (էջ 131)

Ժամը 12-ի մոտ Դումայի շենքում հավաքվեցին Բաթումում մնացած ձայնավորներն ու նշանավոր քաղաքացիներից մի քանիսը. որոշվեց թուրքերի մոտ պատգամավորություն ուղարկել հիմնականում նրա համար, որպեսզի նրանց նախազգուշացնեն քաղաքի փողոցներում բերդանկաներով զինված տեղացի միլիցիոներների առկայության մասին, որոնք թուրքերի նկատմամբ ոչ մի թշնամական տրամադրվածություն չունեին, որոնց միակ նպատակը կարգուկանոնը պահպանելն էր: Որպես պատգամավորներ ընտրվեցին աջարներ Լորդկիպանիձեն /ս.-հ./ և ազդեցիկ սեփականատեր Տավբերիձեն ու հույն սեփականատեր Դմիտրիադին: Նրանց պաշտոնապես հանձնարարվեց իմանալ թուրքերի մտադրությունները աջարացիների քաղաք մտնելու մասին: Խորհրդարանականները, վերցնելով մեծ սպիտակ դրոշ /թերևս սավան/, ավտոմոբիլով շարժվեցին դեպի թուրքական պահակակետները: Մոտավորապես կես ժամ հետո նրանք վերադարձան մի երևելի ու էլեգանտ թուրք գնդապետի հետ, որին ուղեկցում էր կրտսեր սպա: Մտնելով դումայի նիստերի դահլիճ ու հարգալից խոնարհվելով

ներկաներին, գնդապետը բարձրացավ նախագահական ամբիոն ու թուրքերեն հայտարարեց.

-Բանակի հրամանատար Վեհիբ փաշայի հրամանով ու նրա անունից շնորհակալություն եմ հայտնում Բաթումի բնակիչներին պատգամավորներ ուղարկելու և քաղաքի պահպանության ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու համար: Մենք խնդրում ենք տեղացի միլիցիոներներին մնալ իրենց տեղերում, բայց մթնշաղն ընկնելուն պես ցրվել տներով՝ զորքերի հետ պատահական վեճերից խուսափելու համար: (էջ 132)

Առաջին իսկ ծանոթությունից Էնվերը թողեց երկաթյա կամք ու բացառիկ ունակություններ ունեցող մարդու տպավորություն և այդ տպավորությունը համապատասխանում էր իրականությանը: Նա լավ վարվելակերպ ուներ, հրաշալի խոսում էր ֆրանսերեն, դիմելու մեջ հարգալից էր, զրույցը վարում էր խելոք ու սրամիտ ձևով, սակայն ժեստերում, հայացքում և վարվեցողության մեջ զգացվում էր գիշատիչ գազանը:

Նա շատ ճնշվում էր գերմանական հովանավորությունից, որով շրջապատված էին թուրքերը պատերազմի ժամանակ իրենց բեռլինյան դաշնակիցների կողմից և հոգու խորքում ատում էր գերմանացիներին իրենց առավելության համար, առանձնապես բացառիկ էր նրա ատելությունը հայերի հանդեպ, որոնք, գլխավորապես նրան էին պարտական Փոքր Ասիայում իրենց ողբերգության համար: Վրացիներին նա արհամարհում էր, իսկ Կովկասի մահմեդական ժողովուրդների վրա նայում էր որպես միջոց՝ իր ծրագրած նպատակներն իրականացնելու համար: Ռուսաստանն ու ռուսներին նա չէր սիրում, սակայն, ինչպես թուրքերի մեծ մասը հարգում էր ու վախենում մեզանից: Սրանով էր բացատրվում, որ նա իր ազդեցությամբ չափավորում էր Բաթումի թուրք կառավարիչնե-

րի ջերմեռանդ ջանքերը Բաթումում ռուսական տիրապետության հետքերը արագ վերացնելու ուղղությամբ:

Էնվերի փառասիրությունն անսահման էր. հենց նա էր 18 թ. ամռանը երազում թուրքական տիրապետությունը տարածել գրեթե մինչև Տիխորեցկ: Նրա վերջը տխուր եղավ. Անտանտի հաղթանակից ընկճված, բայց ոչ կոտրված, նա փախավ սկզբում Ադրբեջան,հետո Միջին Ասիա՝ թուրքմենների մոտ, պանիսլամիստական շարժում սկսելու նպատակով: Այստեղ էլ 23 կամ 24 թ.-ին ձիամարտի ժամանակ սրախողխ եղավ բոլշևիկների դեմ կռվում՝ որպես թուրքմենների ղեկավար: (էջ 155)

Մինչև 18թ. մայիսը Անդրկովկասը ձևականորեն իրենից ներկայացնում էր միասնական միավոր, որը կառավարվում էր Անդրկովկասյան սեյմի կողմից, որտեղ հավասար մասնակցություն ունեին (այնպես, ինչպես գործադիր իշխանության մեջ) Անդրկովկասի երեք գլխավոր ժողովուրդների ներկայացուցիչները, սակայն նրանց վերաբերմունքը կատարված փաստի՝ թուրքական հարձակման նկատմամբ բոլորովին նույնը չէր: Այն ժամանակ, երբ մահմեդականները, սկզբից ևեթ,ոգևորությամբ դիմավորեցին թուրքերին որպես իրենց հավատակիցների՝ նրանց առաջխաղացման մեջ տեսնելով իրենց պանիսլամիզմի երազանքի իրականացման հնարավորությունը, վրացիները, կորցնելով Բաթումը, այժմ ցանկանում էին պահպանել Վրաստանի էթնիկ սահմանները, որոնք որոշ չափով համընկնում էին 1878 թ. սահմանների հետ: (էջ 156)

Իսկ հայերը սարսափով էին հետևում թուրքական բանակի առաջխաղացմանը՝ աչքի առաջ ունենալով Փոքր Ասիայում այլացեղ բնակչության ոչնչացման արյունոտ փորձը: Այսպիսով, չնայած երեք ժողովուրդների արհեստական միավորմանն այդ Անդրկով-

կայան Ֆեդերացիայում, նրանց միջև գաղափարների, հետաքրքրությունների և ձգտումների ընդհանրություն չկար:

Թուրքերը հրաշալի ձևով հաշվի էին առնում այդ իրավիճակը և ձևակերպեցին մի շարք կատեգորիկ ու խորամանկ դրույթներ: Բանակցությունները Բաթումում սկսվեցին ապրիլի 20-ից, ընդ որում թուրքերի կողմից պատգամավորությունը գլխավորում էր Վեհիբ փաշան և արտաքին գործերի նախարարի ընկերը /անունը չեմ հիշում/: Առայժմ միասնական Անդրկովկասը ներկայացնում էին. վրացիների կողմից՝ Ակակի Չխենկելին, հայերի կողմից՝ Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսովը՝ շատ խելացի և խորամանկ մարդ,Կովկասի նախկին փոխարքա Վորոնցով-Դաշկովի կնոջ սիրելին,թաթարների կողմից՝ Բեկ-Սուլխանովը:(էջ 157)

Հեռավոր Հայաստանից շատ քիչ լուրեր էին հասնում. այնտեղ թուրքերին ու կատաղած թաթարներին դեմհանդիման ստիպված էին առաջնորդվել հետևյալ ասացվածքով «Ոչինչ չեմ ուզում, միայն կենդանի մնամ» (Не до жиру, быть бы живу), պարենամթերքի հարցն ու շատ փոքրաթիվ կանոնավոր բանակի մատակարարումը գտնվում էին անհամեմատ վատ պայմաններում,քան Վրաստանում էր /կապված երկրի հեռավորության ու աղքատության հետ/: Թաթարների կողմից կոտորվելու մշտական վտանգն ու Բաթումի պայմանագրով հայկական կառավարության գործունեության սահմանափակումը՝ «դաշնակցության» շարքերից կյանքի կոչեց վրացական կարմիր գվարդիայի նմանությամբ ինչ որ միավորման: Արդեն այդ ժամանակ ժողովրդական հերոս դարձած դաշնակցական գործիչ Անդրանիկը, որն աչքի էր ընկնում անձնական անմնացորդ խիզախությամբ, իր շուրջը ստեղծեց կոնսպիրատիվ երիտասարդական ռազմական ջոկատներ, որոնք արագ շարժվում

էին այն բնակավայրեր, որտեղի բնակիչներին վտանգ էր սպառնում և վրեժխնդիր էին լինում կեղեքիչներից: (էջ 192)

Հայկական կառավարությունը, որը միշտ փառաբանում էր Անդրանիկին, թուրքերի ճնշման տակ, սպառնալի հրամաններ էր տալիս ու նրա դեմ ռազմական էքսպեդիցիաներ էր ուղարկում, սակայն իրականում նրա հետ գտնվում էին գաղտնի ու ոչ պաշտոնական կապի մեջ:

Թիֆլիսից արևելք կիսաանարխիա էր տիրում: Բաքվում նստած էին բոլշևիկները հայերի հետ: Ելիզավետպոլում /այժմ Գյանջա/ նոմինալ ղեկավարում էր Ադրբեջանի ժամանակավոր գործադիր կոմիտեն, բայց իրականում ոչ մի իշխանություն երկրամասում չկար: Ադրբեջանը լեփ-լեցուն էր ավազակային հրոսակախմբերով, որոնք կողոպտում էին ոչ միայն օտարներին, այլև իրենց հայրենակիցներին: (էջ 193)

Երբ թուրքերը Խալիլ փաշայի հրամանատարությամբ գրավեցին Բաքվի վրա գերիշխող դիրք ունեցող բարձունքները, քաղաքի ճակատագիրը կանխորոշվեց: Այնտեղ մնացած բոլշևիկներն ու զենք բռնելու ընդունակ բոլոր հայերը շոգենավերով ու գնացքներով փախան Աստրախան: Թուրքերն առայժմ մնացին քաղաքից դուրս և առաջ մղեցին ադրբեջանական ջոկատները, ավելի ճիշտ բանդաները: Երեք օր Բաքվում տիրում էր համատարած կողոպուտ ու թալան և խաղաղ հայ բնակչության չտեսնված ու չլսված կոտորած, որոնց թիվը հասավ 30000-ի: Չորրորդ օրը թուրքերը մտան քաղաք ու կոտորածը դադարեց կարծես կախարդական ձեռքի մի շարժումով: (էջ 212)

Մեր դրամարկղի (Բաթումի) անսպասելի համալրողները դարձան թուրք սպաները, որոնք Բաքվից Բաթումով գնում էին Կոստանդնուպոլիս: Խուզարկու ոստիկանությունն ինձ զեկուցեց, որ

նրանց մոտ միշտ առկա են բավականին քանակությամբ ոսկե իրեր, ռուսական թղթադրամներ ու ոսկեդրամներ: Ես կարգադրեցի նրանց բռնել և պարզել իրենց ճամպրուկների ու դրամապանակների պարունակության ծագումը: Առաջին բռնվածին ես հարցաքննեցի ոստիկանապետ Կոբինի հետ: Անհերքելիորեն պարզվեց, որ իրերն ու փողերը ձեռք էին բերվել Բաքվի հայերի կողոպուտի միջոցով: Մենք դրանք բռնագրավեցինք ու փոխանցեցինք պետական գանձատուն, թուրքերին թողնելով մի փոքր ավելի նրանից, որքան կարող էին ունենալ իրենց դիրքին համապատասխան: Նրանք զուտ ձևականորեն էին ընդդիմանում, ինչն ավելի էր վստահեցնում մեր իրավացիության մեջ: (էջ 244)

## ՏԱՃԿԱԿԱՆ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆԸ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ԳԱՒԱՌՈՒՄ

*Յառաջ, Երեւան, 1919, 19 հոկտեմբերի, № 24, 22 հոկտեմբերի № 26*

Մենք արդէն տեսանք տաճկական գազանութիւնների սոսկալի արդիւնքը Ալէքսանդրապօլի գաւառում: Այժմ տանք մի փոքր, բայց յատկանշական նմուշ ևս այդ գազանութիւններից, իբրև լրացումն ամբողջական պատկերի:

Նախ և առաջ չպէտք է մոռանալ, որ Ալէքսանդրապօլի գաւառում համարեա բոլոր գիւղերն էլ հանդիսացել են մի-մի սպանդանոց, ուր գազանաբար մորթոտուել են ու հօշոտուել բնակչութեան ամենապիտանի տարրերը:Սակայն այն, ինչ որ կատարուել է Ձիթհանքով կամ Բազիրխանա գիւղում միանգամայն աննախընթաց է ու եզակի իր ահռելիութեամբը: Առաջնութեան պատիւը յիշեալ գաւառին վիճակւած աղէտի մէջ պատկանում է Ձիթհանքովին:

Չիթհանքովը գտնւում է երկաթուղագծից դէպի Մաստարա տանող ճանապարհի վրա, Էջմիածնի գաւառի սահմանին մոտ:Գիւղը երեք կողմից շրջապատւած է լեռներով, իսկ արեւմտեան կողմից բաց է և միանում է այն հարթութեանը, որի վրայով անցնում է երկաթուղին: Ներկայումս գիւղն ունի մոտաւորապէս 190 տուն բնակչութիւն, որից մոտ 60 տունը կաթոլիկ: Դէպքը տեղի է ունենում մայիսի 25-ին, Սարդարաբադի կռւի այն պատմական օրերին, երբ Ալէքսանդրապօլի գաւառի գիւղերը, փախչելու հնարաւորութիւն չունենալով՝ աղ ու հացով հպատակութիւն էին յայտնել տաճիկներին և մի շաբաթից աւելի ապրել տաճկական ռայեայի ծանր վիճակը:

Սարդարաբադի մոտ իրենց անհաջողութիւնները տեսնելով՝ տաճիկ զորահրամանատարութիւնը յղանում է մի դիւային ծրագիր: Նա որոշում է՝ բնաջնջել, ոչնչացնել իր թիկունքում գտնւող հայ ժողովուրդը, գլխաւորապէս նրա երիտասարդ և արական մասը, երկու պատճառով, առաջին՝ իր թիկունքն ապահովելու նպատակով, որովհետև երկիւղ է կրում թէ մի գուցէ հայերը թիկունքից հարւածեն իրենց, և երկրորդ՝ իր պարտութեան անյաջողութիւնների վրէժը խաղաղ հայ ժողովրդից հանելով:

Ու սկսում են խնամքով ու նախաւրոք կազմած ցուցակներով հաւաքել տղամարդկանց Էջմիածնի գաւառի սահմանամերձ գիւղերում՝ Թալին, Մաստարա, Գեոզլու [ծնթ.1], Դաղալու [ծնթ.2], Կըրմզլու [ծնթ.3] և այլն՝ և Ալէքսանդրապօլի գաւառի այն գիւղերում Աղհաման [ծնթ.4], Մուսլուխլի [ծնթ.5], Զարնջի [ծնթ.6] և այլն, որոնք գտնւում էին տաճիկ զորքի թիկունքում, Չիթհանքովից մինչև Սարդարաբադի ճակատը:

Հաւաքում են բոլորին և խումբ-խումբ, պահակների խիստ հսկողութեան տակ, բերում են Չիթհանքով ու այնտեղ բանտարկում մարագներում ու մեծ շենքերում: Թշվառ ժողուուրդը նոր

միայն գլխի է ընկնում, թե ինչ հրէշային դաւ է լարւում իր դէմ, բայց անօգուտ: Փրկութեան որևէ ելք գտնել այլևս անհնարին էր:

Չիթհանքովցիք – ինչպէս բնիկները, այնպէս էլ մոտակայ գիւղերից այնտեղ հաւաքւածները սրտատրոփ սպասում են իրենց ճակատագրին: Փախչելը համարւում էր անկարելի և միևնոյն ժամանակ վտանգաւոր, որովհետև նախ՝ ամէնքն արդեն ցուցակագրւած էին տաճիկների կողմից, և երկրորդ՝ ճանապարհ չկար, քանի որ բոլոր ճանապարհները բռնւած էին Ալէքսանդրապօլից դէպի Սարդարաբադ և Սարդարաբադից դէպի Ալէքսանդրապօլ անւերջ շարժւող տաճկական զորքերով:

Մայիսի 25-ին, ճաշին մոտ, երկաթուղու կողմից մեծ ճանապարհի վրա յանկարծ երևում է տաճկական երրորդ ֆրդայի աւչի թարուքը, որ իր վայրագութեամբ արդէն յայտնի էր գաւառի ամբողջ հայութեանը: Սա երրորդ ֆրդայի այն զորամասն է, որ ռուսական զորքերի մէջ կոչւում էր охотники որսորդ:

Դեռ Չիթհանքով գիւղը չմտած, աւչի թարուքը իր հեծեալներից մի մասի ուղարկում է ... երկու ուղղութեամբ, ճանապարհից դէպի աջ և ձախ: Սրանք անմիջապէս հասնում ու բռնում են գիւղը շրջապատող լեռները երեք կողմից՝ աջից, ձախից և առջևից: Փախուստի որևէ ճանապարհ այլևս չի մնում:

Ժողովուրդը տեսնելով այդ ամենը՝ գուշակում է իր գլխին սաւառնող փոթորիկը: Թէպէտ փախչելու ոչ մի ճանապարհ չկար, բայց և այնպէս տղամարդկանց մի աննշան մասը փորձում է լեռներով փախչել, սակայն բոլորն էլ սպանվում են լեռներում ու ձորերում: Մնացած մեծամասնութիւնը ճարահատեալ մնում է գիւղում՝ սպասելով իր դառն ճակատագրին:

Չմոռանանք նկատել, որ դեռևս տաճիկների ներխուժումից առաջ Չիթհանքով էին հավաքվել մերձակայ գիւղերից մի քանիսը՝

ենթադրելով, թէ նման պայմաններում համախմբւած ապրելը կարող էր աւելի ապահով համարւել:

Զորքը մտնում է գիւղը և ստեղծւում է մի դժոխային կացութիւն: Այլևս ոչ մի կասկած չկայ, որ կոտորածն ու զազանութիւններն անխուսափելի են: Եւ շատերը որոշում են մեռնել պատւաւոր մահով, որոնց թւում առաջին հերթին իր պատիւն ամէն բանից թանգ գնահատող հայ կինը:

Պէտք է իմանալ, որ Շիրակի գիւղերից շատերում, ջրի պակասութեան պատճառով, շինւած են բաւական մեծ և խորունկ լճեր կամ ջրամբարներ: Գարնան անձրևների ժամանակ գիւղացիք այդ լճերի մէջ են հաւաքում գիւղի բոլոր ջրերը և ամառւայ ամիսներին օգտագործում են անասուններին ջրելու և լողացնելու համար: Նման մի մեծ լիճ էլ ունի Չիթհանքովը գիւղի հարաւ-արևմտեան կողմում:

Երբ տաճիկ զորքը գիւղ մտնելով սկսում է իր սովորական զազանութիւնները, դեռատի կանայք և օրիորդները իրենց պատիւը փրկելու համար այլևս ուրիշ ելք չգտնելով, գնում թափւում են լիճը և ջրերի խորքում պաշտպանում իրենց պատիւը: Ամբողջ գիւղի միահամուռ վկայութեամբ, մի քանի օր յետոյ, երբ խեղդւած դիակները ջրի երեսն են բարձրանում, լճի բովանդակ մակերեւոյթը պատւած է լինում նրանց գոյնզգոյն հագուստներով: Դժբախտաբար մենք չկարողացանք այդ հերոսուհիների ստոյգ թիւն իմանալ, սակայն ոմանց ասելով 150-ի մոտ պիտի լինի, իսկ ըստ միւսների՝ 200-ից էլ անց:

Զորքի առաջին գործն լինում է բոլոր երիտասարդ տղամարդկանց, երբեմն մինչև անգամ նաև ծերերին ու պատանիներին ի մի հաւաքել: Այնուհետև շրջում են տնէ տուն և նախորոք կազմած ցուցակներով անուն-անուն հանում են տներից տղամարդ-

կանց և տանում որոշուած տեղը: Երբ աւարտում են իրենց դիւային գործը բոլորին՝ այն է թէ Չիթհանքովում հաւաքուածներին և թէ Թալինի ու Մաստարայի շրջաններից բերածներին տանում և լցնում են նախօրոք Շահբազեանների մարագը:

Իրիկնապահին արդէն սկսւում է սոսկալի ոճրագործութիւնը: Զորքը, որին միացած տեղական թաթար ու քիւրդ խուժանը, օղակաձև պաշարում է մարագները: Փակում են դռները և ժողովրդին սկսում կոտորել ձեռքի ռումբերով՝ որ մարագների նեղլիկ լուսամուտներից շպրտում են ներս:

Ներսում ստեղծւում է մի աներեւակայելի կացութիւն: Ժողովրդի ճիչն ու հառաչանքները քարեր են լացացնում, սակայն մարդազազանները դիւային չարախնդութեամբ շարունակում են լուսամուտներով ռումբերը ձգել հա ձգել, ամեն մի ռումբի հետ բազմաթիւ կեանքեր ոչնչացնելով: Ապա, երբ ներսի նվոցն ու ձայները քիչ քիչ նւազում են և ոճրագործները համոզւած են, որ արդէն կարելի է կիրառել մարդասպանութեան երկրորդ մէթոդը, մի կերպով բաց են անում մարագների դռները, - դռների յետևում իրար վրա թափւած են եղել բազմաթիւ դիակներ ու վիրաւորներ- և գնդացիրներ ունենալով սկսում են գնդակների կարկուտ թափել ներս:

Այնուհետև, երբ ոճրագործները տեսնում են, որ ներսից լսւող ձայները աւելի նւազեցին, ներս են մտնում մարագները և դաշոյնների ու սրերի հարւածներով վերջ դնում բոլոր վիրաւորների կեանքերին: Իրենց մութ դաւը ի կատար ածելուց յետոյ մարդ-գազանները գիշերը գնում և հանգիստ խղճով քնում են:

Մարագների վրա էլ իջնում է մահւան լռութիւնը: Առաւօտը կանուխ մի քանի զինւոր կրկին գալիս են մարագների մոտ և բարձր ձայնով կանչում «Փաշան սրանից յետոյ ներում է խոստանում. ով ողջ է թող դուրս գայ և նրան մենք կխնայենք»:

Դրակների տակից դուրս են սողոսկում արիւնաթաթախ ու մի գի-շերուայ ապրումներից արդէն կիսամեռ ուրւականներ, ընդամենը 8 հոգի: Սակայն փոխանակ սրանց խնայելու, գազանաբար սպանում են ամենքին: Հէնց նոյն մարագների առաջ շարք են կանգնեցնում և հրացանազարկ անում: Վերջում իրենց գազանութիւնների հետքը թաքցնելու նպատակով, հրդեհում են մարագները, որոնց ծածկերը հրդեհելով՝ իրենց տակ թողնում են 3000-ից աւելի դիակներ:

Մենք դժբախտութիւն ունեցանք մեր սեփական աչքերով տեսնելու այդ մարագ-գերեզմանները և այն մի հատիկ մարդուն, որ կարողացել էր մի հրաշքով ազատուել այդքան աղէտներից: Այդ մարդը նոյն տեղացի Սմբատ Մաղաթեանն է, որ սկզբից մինչև վերջը գտնուելիս է եղել մեծ մարագում, որը հաղորդեց մեզ դեպքերի բոլոր մանրամասնութիւնները:

Նա նոյնպէս վիրաւորւում է տաճկական ռումբով, որի վէրքը ձեռքի վրա դեռ ևս չէր առողջացել մեր տեսած ժամանակ: Երբ դիակները թափւում են իր շուրջը, նա հագնում է իր շորերը, պահելով վրան միայն սպիտակեղէնը և թաթախւելով ամբողջովին արիւնի մէջ, պառկում է և դիակները քաշում իր վրա: Այդ անում է այն նպատակով, որ եկողները իրեն էլ սպանուած կարծեն ու ձեռք չտան: Այդպէս էլ լինում է. երբ չարագործները սրերը ձեռներին մտնում են մարագները և ողջ մնացածներին ու վիրաւորներին սկսում հարւածել, նա ազատւում է նրանցից՝ դիակների տակ թաքնւած լինելու պատճառով: Երբ գիշերը մարդասպանները հեռանում են մարագների մոտից, նա դուրս է սողոսկում դիակների տակից և մի կերպով իրեն գիւղի տներից մէկը ձգում: Այդպիսով և ազատւում է:

Մինչև այս տարուայ յունիսի 12-ը, երբ մենք եղանք Չիթհանքով, յիշեալ նահատակների ոսկորները դեռևս հաւաքւած ու թա-

ղւած չէին: Մարագներում, ծածկի հողերի տակից երեւում էին ոսկորներ և հագուստի կտորներ: Հողի երեսին նոյնպէս թափւած էին ահագին քանակութեամբ ոսկորներ ու գանգեր, որոնք հաւաքւած էին գիւղի կալերում և փողոցներում ու մարագները բերւած: Այսպէս, մի մարագում մենք բազմաթիւ ոսկորների մեջ գտանք 21 գանգ, իսկ մյուս մարագում 2 գանգ, որոնցից շատերի վրա երևում էին դաշոյնների ու սրերի հետքերը:

Առաջին խոսքը, որ Չիթհանքովցիք ասացին մեզ, դա խնդիր էր՝ այդ նահատակներին թաղելու մասին: Ժողովուրդը մեզ հետ միասին մի անգամ էլ այցի գնաց նահատակներին, խնդրելով ու կրկին խնդրելով հաց չտալ իրենց, բայց նահատակների ոսկորները հանգստացնել: Խոստացանք հարկաւորը:

Եւ ուրախ ենք արձանագրելու, որ մեր խնդրի համաձայն նոյն ամսի 29-ին գաւառական իշխանութիւնը կազմակերպել է հանդիսաւոր թաղում, ներկայութեամբ գիւղերից ու Ալէքսանդրապօլից գնացած բազմաթիւ ժողովրդի, զինւորական պատիւներով ու երաժշտախմբով:

Պատկերն ամբողջացնելու համար պէտք է յիշատակենք նաև այն տխուր դերը, որ կատարել են Ալէքսանդրապօլի գաւառի հայութեան կոտորածների գործում հարևան թաթարներն ու քրդերը, մանաւանդ քրդերը:

Զարմանալի է հայ ժողովրդի ճակատագիրը: Նրան հասած աղէտի օրերում իր հարեւանները փոխանակ նրան մխիթարելու ու աջակցելու, ընդհակառակը, մի չարախնդաց պատրաստակամութեամբ, իրանք էլ միւս կողմից են հարւածել նրան: Այդպէս է եղել այստեղ, Անդրկովկասում, մեր հարևանների վերաբերմունքը դէպի մեզ, այդպէս է եղել և Տաճկահայաստանում հարևան ժողովուրդների վերաբերմունքը դէպի դժբախտութեան վերջին ծայրը հասած

հայութիւնը: Բաւական է ասել, որ Բաշկալէի վերջին կոտորածների ժամանակ հրեաները, իրենց հռչակաւոր հարուստ Նուրիլայի գլխաւորութեամբ, փողոցէ փողոց ընկած, տաճիկ կատաղած զորքին, թիւրք ու քիւրդ հրոսակախմբերին ցույց էին տալիս հայոց տները, որպէսզի նրանք իրենց սև գործը հաջողութեամբ կատարեն: Մասնաւորելով խոսքը Ալէքսանդրապօլի գաւառի կոտորածների մասին, պէտք է ասենք, որ այդ գործում չափազանց տխուր է նոյն գաւառում գտնւող քրդերի դերը: Նրանք ամենագործուն մասնակցութիւնն են ունեցել հայ ժողովրդի կոտորածների ու հարստահարութեան մէջ, ղեկավարուելով զանազան բէկերից ու աղաներից:

Աւելորդ չենք համարում հրապարակել գոնե ամենագլխաւորների անունները, որոնք հետեւեալն են. Բուղուղլեցի քոռ Նամէի տղա Զորբէն, Սուսուղցի Շամիլ Մամէ օղլին, նոյն տեղացի Խուդո Բշար օղլին, քրդի Ղլիջեաթաղցի Ջալացի Սունի Ամարը և Այիր Քեալալ օղլին, Հըկօցի Սայեադ Բրո օղլին, Ղարազուլեցի Դաւրէժ օղլին, Ալաջեցի երկու եղբայրներ՝ Տայո բէգը և Հասան բէգը և Ղզլ-Մաղարեցի՝ Ամար Հասան Աղաօղլին: Սրանք ամենամեծ մասնակցութիւնն են ունեցել հայ ժողովրդի կոտարածների գործում - գոնէ Ալէքսանդրապօլի գաւառում: Ամբողջ ժողովուրդը զայրոյթով է յիշում նրանց անունները, մանաւանդ որ եղել են իրար մոտիկ հարևաններ:

## ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ՝ ԳՐԱՒՈՒՄԷՆ ԵՏՔ
### (Ականատեսի պատմութիւնը)

*Աշխատանք, 8 (26) Յունիս, 1918, № 6 (206)*

Ալէքսանդրապոլի զին. հիւանդանոցի մէջ ծառայող ֆէլդշեր Մելքոն Յովսէփեանը, քաղաքի գրաւումէն ետք 14 օր հոն մնացեր է

և այժմ Երևան գալով՝ հետևեալ կարևոր տեղեկութիւնները կը պատմէ:

Թուրքական բանակը առաւօտ կանուխ յարձակման սկսաւ. ժամ 9-ին անիկա արդէն հասած էր քաղաքէն 5 վերստ հեռաւորութեան վրայ գտնվող ռուսաց փոքր եկեղեցիի քովը, ուրկէ ըսկսաւ թնդանօթաձգութեան:

Քաղաքը խուճապի մատնուեցաւ, իսկ բերդի մեր զինուորները սկսան դիմադրել և մեկ ժամ կռուելով սպաննեցին 180 թուրք ասքեարներ, իսկ իրենցմէ սպաննուեցան 9 հոգի:

Ժամը 10-ին թուրքերը ճերմակ դրօշակով պատգամաւոր ղրկեցին յայտնելով թե՝ «մենք քաղաքը գրաւելու կամ ժողուրդի և զինուորութեան դէմ պատերազմելու նպատակ չունինք, ինչու՞ զուր տեղը դուք կկռուիք: Բաթումի հաշտարար պատգամաւորներու որոշման համաձայն՝ արդէն երկաթուղագծերը տրուած են մեզի, որով մենք մեր զորքը պիտի փոխադրենք Ջուլֆա, և պիտի մնանք կայարանի մէջ, առանց քաղաքը մտնելու և զինուորութեան կամ բնակչութեան վնասելու:»

Չգիտցայ թե մերոնք ինչ պատասխանեցին ասոր, կերևի ընդունեցին, բայց իրիկունը ժողովուրդը տուներ մտաւ, իսկ զինուորները խուճապի մատնուելով ոմանք դուրս ելան քաղաքէն, և ոմանք ալ մնացին քաղաքը, իսկ թուրքերը գրաւեցին կայարանը:

Քաղաքը գրաւելէն ետք յայտարարուեցաւ, թէ 4 օր ժամանակ տրուած է, որոնք որ կը ցանկան կրնան հեռանալ քաղաքէն, իսկ մնացողներուն իբր խաղաղ ժողովրդի վտանգ չի սպառնար: Փողոցներու գլուխն արդեն տրուած էին պահակներ:

Միւս առաւօտը ժողովրդի մեծ մասը պատրաստուեցաւ ֆուրկուններով ու զանազան յարմարութիւններով դուրս ելնել քա-

ղաքէն, սակայն թուրքերը իրենց տուած 4 օրուա խոստումը չձանցան, և չի թողին ոչ ոքի դուրս ելնել:

Երկու օրուայ ընթացքին թուրքերը ոչ մէկ վնաս տուին քաղաքին, միայն արձանագրութեան տակ առին պահեստները, բոլոր կառաւարական շենքներն և այլն:

Գ. օրը փողոցներու վրայ փակցուցին յետնեալ յայտարարութիւնը.- «19-են մինչր 32 տարեկան բոլոր զինուորները պարտաւոր են գալ և իրենց զէնքերով ու փամփուշտներով յանձնուիլ, պետք է յանձնուին նաև քաղաքի մեջ եղած ժողովրդական զէնքերը, այս հրամանին չի հնազանդողներն անմիջապէս կը պատժուին դաշտային դատարանով:»

Ասկե զատ ասքէրներ ղրկուեցան շրջակայ գիւղերէն կամ դաշտերէն զինուորներ հաւաքելու, որով երկու օրուայ մէջ, թե քաղաքէն, թե շրջաններէն հաւաքուեցան մոտ 4000 զինուորներ, իսկ զենքի տերերն անձամբ յանձնեցին իրենց զենէրն ու փամփուշտները:

Բոլոր հաւաքուածները վագոններու մէջ լեցուցին և մէկ օրուայ համար իբր միակ ուտելիք անձգլուխ ¼ ֆունդ սուխարի տալով ղրկեցին Ղարս: Կայարանի քով այդ ատեն գնդակահարեցին թուրքահայ մը:

Բ. յայտարարութիւն մը բաց թողին ըսելով, թե «Բոլոր բժիշկներ, ֆելդշերներ, գթության քոյրեր և հիւանդանոցի մէջ ծառայողները պէտք է երեք ժամուայ ընթացքին ներկայանան, որմէ յետք ուզողները կրնան իրենց փափակած տեղն երթալ, իսկ փափակողներն ալ կրնան մնալ և միջազգային օրէնքով քաղաքի մէջ գտնուող հիւանդներն ու վիրաւորները խնամել:»

Անմիջապէս բոլոր կանչուածները հաւաքուեցան կայարանը, արձանագրուեցան և ցանկացան երթալ Մեծ- Ղարաքիլիսէ, թուր-

քերը խոստացան ղրկել զանոնք իրենց ուզած տեղը, լեցուցին վագոնները, բայց ...հակառակ կողմը, Ղարս ղրկեցին:

Բերդի մէջ գտնուած 180 թուրք գերիներն անմիջապէս զինուեն մեր մոսիններով: Դ. օրը սկսան քաղաքի մէջ եղած պահեստները շաքար, ալիւր, ռազմամթերք նն փոխադրել Ղարս: Ե. օրը կազմուեցին «աւչի թաբուլի» (որսորդական գումարտակ) անունով հայերէ և թուրքերէ բաղկացած խառն միլիցիական խումբ մը, որպէս զի քաղաքը պաշտպանէ: Թուրքերը զինեցին մուսիններով և փամփուշտներով, իսկ հայերուն առանց փամփուշտի հրացաններ տուին միայն:

Յետոյ առանց յայտարարութեան գաղտնի հաւաքեցին 500-ի չափ հայ օրիորդներ և ղրկեցին զանոնք կրկին Ղարս: Յայտարարեցին նաև թէ որոնք որ ապրանք ունին ծախելու, պետք է խանութները բանան և իրենց առևտուրովը զբաղին, հակառակ դէպքին՝ ուր որ ապրանք գտնուի, պիտի գրաւուի:

Ժողովուրդն սկսաւ մաս առ մաս ապրանքները դուրս հանել և ծախել 100 ր. արժող օսմանեան ոսկինոց արժեթուղթով:

Մեր հիւանդանոցներու մէջ գտնուած հիւանդներէն և վիրաւորնենէն օրական 10-20-ը կմեռնէին խնամք և սնունդ չլլալուն պատճառով:

Ալէքսանդրապոլ քաղաքի և կայարանի մէջ գտնուած թուրք կանոնաւոր զօրքի թիւը 500-ի հազիւ կը հասնէր, իսկ տեղական թուրք և քիւրդ խուժանը շատ էին:

Կառաւարութիւնը մեր զինուորներու և ժողովրդի ոտքերէն կօշիկները կը հանէր և իր ասքերներուն կը հագցնէր, իսկ փոխարէնը անոնց հնամաշ տրեխները կուտար:

Ցերեկները գրեթէ խաղաղ կանցնէին, բայց գիշերները տեղի կունենային սպանութիւններ: Ասքերները փողոցները շրջելով տու-

ները կը մտնէին, կը թալանէին և չպատմուելիք վայրենութիւններ և բռնաբարութիւններ կկատարէին:

## ԴԱՎԹՅԱՆ Ա., ՃԱՆԱՉԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՔՈ

Անի, Մարալիկ, 1987, № 100 (4516), օգոստոսի 22

1918-1920 թթ. թուրքական բանակի երկու ավազակային հարձակումները Արևելյան Հայաստանի վրա մեծ ավերածություններ են պատճառում նաև Մոլլա-Գյոքչային: Բնակչության մի մասին քշում են Արզրում գերության, մի մասին էլ սպանում են: Թալինի (պետք է լինի Չիթհանքովի-Կ.Բ.) մարագներում ողջ-ողջ այրում են Հեպոյան Արշակին, Ուռուտյան Խաչատուրին, Ավդալյան Սաքոյին: Գյուղից 40 մարդու քշում են Արզրում գերության, մի մասին էլ սպանում են, այդ թվում՝ Սարոյան Տիգրանին:

Գյուղի բնակիչները թուրքերի դեմ դիմադրություն են կազմակերպում, որի ակտիվ մասնակիցներից էին Սիմոնյան Առաքելը և Աղաբալյան Աղանիկը: «Տանուտեր Գևորգյան Ալեքը Տերտերանց գերդաստանից մերժում է գեղեցիկ կանանց թուրքերին հանձնելու պահանջը: Թուրքերը նրան պաշտոնանկ են անում, փոխարենը նշանակում Իգնատիոսյան Կարոյին: Իգնատիոսյանը ոչ միայն մերժում է թուրքերի պահանջը, այլև վճռում է պայքար կազմակերպել նրանց դեմ: Ղեկավարելով 50-60 մարդու՝ «Գող մաղարա» հանդամասում կռվում է թուրքերի դեմ: Թուրքերը չկարողանալով ծնկի բերել ջոկատին հրաժարվեցին հետագա պայքարից: Այդ կռվում աչքի ընկան Չարչօղլյան Հովհաննեսը, Բոզիկյան Սիրեկանը, Ավդալյան Մկրտիչը և ուրիշներ:

## Հենրիկ Մելիքյան

## 1918 ԹՎԱԿԱՆԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԸ

1946 թվականին, երբ ես սովորում էի Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 3-րդ կուրսում և արդեն նոր-նոր էի սկսել պատմական գիտության «համն առել», Շիրակի ցրտաշունչ ձմռանը, բուհական արձակուրդների ժամանակ, մի 2-3 օր «Կարո ապոր»՝ Բոզիկյան Կարոյի, անմոռաց հրաշալի ձիթհանքում գյուղացիների հետ զրուցում էի գյուղի պատմության շուրջ: Հայրենական պատերազմը նոր էր ավարտվել, մարդկանց հայրենասիրական տրամադրությունները դեռևս կապանքի տակ չէին ու բանիմաց, խելացի գյուղացիները, մեկը մյուսին լրացնելով, պատմում էին նաև 1918-1920 թթ. թուրքական արշավանքների մասին: Ուզում եմ հատկապես վկայակոչել գյուղացիներից մեկի՝ իմ դպրոցական ընկերոջ Վելիխանի հոր Անդիկյան Հարութի հուշերից մի երկու փաստ:

«Թուրքերն անխնա թալանեցին ամբողջ գյուղը, տարան անասունների մեծ մասը, խոտի դեզերը, սայլերն ու ֆուրգոնները, գյուղատնտեսական գործիքները, մեղվափեթակները: Լացուկոծը ընկել էր գյուղը: Իրենց դիմադրողներին, կամքը չկատարողներին սպանում էին... Ցուցակագրված շատ գյուղացիների թուրքերը տարան «աշխատանքի»: Որոշ ժամանակ հետո պարզվեց, որ նրանց, Շիրակի մյուս գյուղերի երիտասարդներին տարել են դեպի Կարս, Սարիղամիշ, էրզրում... Մի մասին սպանել են ճանապարհին, մյուսներին կենդանի-կենդանի թաղել նրանց իսկ փորած փոսերում...

Ես էլ եմ տեսել, ուրիշներն էլ էին պատմում, որ դեպի Երևան գնացող թուրքական ջոկատները հաճախ փոքրաթիվ էին, մի 20-30

հոգի: Նրանց առջևից ու հետևից մի-մի սպա էր գնում, և եթե հայերը տեղերում կազմակերպված զինված ուժ ունենային,ապա նրանց ոչնչացնելը շատ հեշտ կլիներ: Ցավոք, սկզբում տեր չկար, կազմակերպող չկար: Եթե հանկարծ թուրք զինվորի մազին կպնեին, ապա ամբողջ գյուղը կոչնչացնեին...

Որոշ ժամանակ ինչ-որ մարդիկ եկան գյուղ ... սկսեցին խիստ գաղտնի գործել: Շատերը տեսել էին ու գիտեին, որ Տերտերանց տան կտուրում գնդացիր էր դրված: Դա գյուղի ամենաբարձր, ամուր ու բարետես շենքն էր...

Տեղի ակտիվ, ազգասեր հայ մարդկանցից հայտնի էին Բոզոենց Մելիքը, Մեսրոպը, Սերգոն, Աբաջոնց Տիգրանը, Սիմոնյան Առաքելը, Աղանիկը, Տերտերանց Ալեքը, Տիգրանը, Վահանը, Չարչօղլոնց Սերգոն, Իգնատիոսյան Կարոն և էլի ուրիշներ: Նրանք սկսեցին կազմակերպված պայքարել թուրքերի դեմ...

Մոլլա-Գյոքչայի գյուղացիները լավ տեղյակ էին, որ թուրքերին դիմադրելու գործը հաջողությամբ է ընթանում հատկապես Սոգյութլուում /Սառնաղբյուր/, որտեղ հարմար դիրքի պատճառով ապաստան էին գտել հազարավոր մարդիկ: Արևմտահայ որոշ գործիչներ, տեղի ակտիվ գյուղացիները միասին ջոկատներ էին ստեղծել, զինվել ու մի քանի կիլոմետր շղթա էին կազմել Շիրվանջուղ [ծնթ.7] – Սոգյութլու [ծնթ.8] – Տաշղալա [ծնթ.9] - Մոլլա-Գյոքչա [ծնթ.10] գյուղերի սարերում... Այդ ժամանակ մեր և մյուս գյուղերում հաճախ էին լինում Պանդուխտը, Սեպուհը, Սմբատը, Մուրադը, Մակեդոնը, Հովսեփը, Մելքոնը և էլի ուրիշներ: Ակտիվ էին հատկապես պատերազմի տարբեր ռազմաճակատներից վերադարձած ջահելները...

Թուրքերի համար ամենից հարմար ճանապարհը Ղազարապատ [ծնթ.11]-Չռփլու [ծնթ.12]-Աղին հատվածից Արփաչայն անցնելն ու դեպի մեր կողմը շարժվելն էր: Ահա այստեղ է, որ թուրքերն ու նրանց հետնից եկող «խուժանը» հանդիպեցին Սոգյութլուի և հարևան այլ գյուղերի գյուղացիների զինված դիմադրությանը: Դա Շիրակի գյուղացիության գոյապայքարն էր մինչ Սարդարապատի կռիվը: Դրանից հետո էլ Սոգյութլուի զինված ջոկատները շարունակում էին գործել թուրքերի դեմ, որոնք նահանջում, փախչում էին դեպի Արփաչայ, դեպի Ալեքսանդրապոլ...

Մոլլա-Գյոքչայի 100-ից ավելի խիզախ գյուղացիների, բազմաթիվ փախստական-կամավորների պայքարը հատկապես հերոսական, անձնազոհ բնույթ ընդունեց «Գող մաղարա» կոչված հանդամասում: Թուրքերին չհաջողվեց հաղթանակի հասնել զինված գյուղացիների դեմ և նրանք ստիպված հեռացան մարտադաշտից թողնելով շատ դիակներ»: Գյուղացիները հուշեր էին պատմում նաև Չիթհանքովի կոտորածի, 1920 թվականի թուրքական նոր արշավանքի մասին, երբ գյուղում դարձյալ թուրքերի դեմ դիմադրություն էր կազմակերպվել:

**Հրաչ Մկրտչյան**[62]

## ԹՈՂ ԽԱՂԱԽՈՒԹՅՈՒՆ ԷՂՆԻ ԱՇԽԱՐՀԻՆ

*Գրանցվել է 1961 թ. Լենինականում՝ բանասաց Աննա Մկրտչյանից, որը Կարսի մարզի Մազրա գյուղից է:*

Ի՞նչ է էղել մեր մանկությունը, հըմի օր կը հիշեմ…

[62] Հ. Մկրտչյանի այս գրառումները հրատարակվել են «Կարս. Հայոց բանահյուսական մշակույթը» աշխատության մեջ: Երևան 2013 թ., էջեր 485-486 և 494-497:

Տաս տարեկան էյ, քաղաքի ժողովուրդը իիրար խառնըվավ, թե թուրքը էսօր-էգուց Ղարս բըդի լցվի: Վով որ ինչ հասցրեց, հիրան հեդ վերցրեց, ու բռնեցինք գաղթի ճամպեն: Մենձամասնությունը դիպա Ալեքսանդրապոլ էգավ (էն վախտ Լենինականի անունը Ալեքպոլ էր, Ալեքսանդրապոլ կըսեյն): Հերս, օղորմի հիրան, մեզի Լենինական բերեց, չեմ հիշե՝ ծանոտի տուն էր, ինչ էր. գիդեմ, որ մե պըստի քողմ [ծնթ.13.] էր, բերեց տեղավորեց: Ըսեմ, որ մեզի հետ բերել էյինք թանկարժեք բաները, մնացածը մնացել էր Ղարս: Հերս չիդեմ ինչ մտաձեց, դե իսնի թամայ է, իմացել, որ թուրքը հըլը Ղարս չի հասել, մորս ըսեց.- Դուք ըստեղ մնացեք, ես, Աննան (իմ մասին է խոսքը), էրտանք եդ՝ Ղարս, մեր տունը տեսնինք ինչ օրի է, համ էլ ընտեղ մնացած ապրանքը մե կերպըմ եդ բերենք: Հընչի՞ մնա թուրքին:

Ոչ բարով էրտայինք: Էլանք պոյեզով Ղարս գնացինք: Մեր էրտալն ու քանիմ ժամ հետև թուրքի Ղարս մտնելը մեկ էղավ: Սոտոմ-Գոմոր օր կըսեն՝ էդ էր: Մերը մանուկն էր ուրացէ:

Թուրքը տղամարդոնց կը հավաքեր…

Հորս էլ տարան, ես մնացի մենազ: Գուզեմ մեր տուն էրտամ, ճար ու ճամպա չիտեմ: Մոռացա ըսեմ, մեծ ախպորս էլ ենք կորցըրէ: Կըսեյն քանիմ հընգերոջ հետ էլ ինքն էր փախել՝ գլուխը ազատել:

Գլուխըդ ինչ ցավցնեմ, լաց կէղնիմ, գուլամ, կայնել եմ մեր տան դուռը: Հարևան էլ չկա՝ գոնե մեկի տունը մտնիմ: Հիրկվա կողմ թուրքերը հավաքել եյն քաղաքի կնանոնց, թուրքի ասկյրները էսոնց քաղաքի միջով կը տանին: Մե թուրքըմ, ասքյար էր, էգավ ընձի էլ տարավ խառնեց էտ կընկըտոնց: Լաց, կոծ… զուլըում էր, որ պատմելու բան չէ: Գիշերով մեզի տարան Ղարսի մոտիկ մալականի գեղը: Թուրքերը մալականներին ձեռ չէին տա: Թե հընչի՞, չի-

տեմ: Տարան մալականի գեղը, սաղիս լցրին մե մարաքիմ [ծնթ.14] մեջ ու դուռը վըրներս փակին:

Լուսը բացվավ, խաբար հասավ, օր թուրքերը մեզի մարագի մեջ բըդի վառեն: Մարագի մեջ գտա մեր հարևանի կընգան: Էսիկ՝ հարց ու փորձ, թե.- Դուք շուտ էյք փախէ, ինչըղ օր էլի ըստեղ եք հընգէ:

-Ըշտը.- հալ-հեքյաթ…

Ըսիկ թե.- Աղջիկ ջան, չեմ հուզէ ըսե, բայց իմացի, քու հերն էլ իմ ախպըրտանց հետ էր, թուրքերը տարան ըսպանեցին:

Է… էրեխա մարդ… լաց էղա, մազերս պոկի, օգուտն ինչ…

Էս կընիկը թե.- Աղջիկ ջան լալով բան չես շինէ, թե կըռնաս մե կերպըմ գլխուտ ճարը տես: Ի՞նչ կըռնամ էնէ:

Բախտ էր, ինչ էր, թուրքերը մարագի դուռը բացեցին, բոլուգով նես մտան, ըսկսեցին ջահել հարս-աղջիկ ջոկելը: Էսոնք հիբար խառնըվան, ես դուս պրծա, կը վազեմ: Մե ռուս կընիկըմ՝ մալական, հետևես էգավ, ընձի կայնըցրեց (հասկըցավ, օր թուրքերեն կը փախնիմ) ընձի տարավ իիրանց տունը: տարավ լողցրեց, շորեր հագցրեց, քիչ-քիչ հաց կուղար, չէ՞, քանի օր էր՝ հացի կտոր չէյ կերէ: Էդպես կէներ, օր մեկից չուդեյ, վնաս տար: Դու մի ըսէ, ընձի պես չորս հայի էրեխա է բերէ, թուրքերից պայէ, օր գոնե էս էրեխանցը փրկէ:

Լուսը բացվավ էս կընիկը կըսէ.- Գուզե՞ս էրտաս ձերոնց քովը: Գիտէ, թե իմ հարազատներն էլ մարագի մեջ են: Էրտամ ըսեմ: Օր իմ մասին չմտածեն: Գնացինք, օր մարագի մեջ քիչ են մնացէ, մե խեղճ ասքյարիմ թողել են, օր էսոնք չը փախնին, մեկելներին տարել են… Ի՞նչ ըսեմ՝ բռնաբարության… օր բերեն վառեն: հարևանիս կընիկը մեծահասակ էր, մնացել էր, գնացի տեսա:

Էսիկ թե.- Աղջի, խո չե՞ս խելըռէ, հընչի՞ ես էգե, փախի, քանի թեզ է, քիչըմ հետև գուկան:

Մալականը ընձի ետ բերեց: Պայեցին հիրանց աղջըկա պես: Իրեք աղջիկ էյնք, էրկու տղա: Սաղս էլ կորցրել էյնք հարազատներիս:

Թուրքերը քանիմ օր հետո էկան ըսոնց տները խուզարկելու: մալականի մարդը մեզի լցրեց մեծ-մեծ սնդուկները, վըրեքս չուլ ու փալաս լցրեց: Թուրքերը էկե խուզարկել են, գլխի չեն ընկէ:

Ինչ օրա, մալականները դիմել էյն թուրքերին, օր յիրանք չեն հուզէ մնա, զուզեն Ռուսաստան էրտան: Թուրքերը էսոնց գեղացոնց թույլ էյին տվել Ռուսաստան էրտըլու: մեզի էլ հետները վերցրին: Պոյեզով Ղարսից Լենինական բըղի գայինք: Հինգ էրեխիս դրին յաշիկների մեջ՝ թաք-թաք… յաշիկները մխեցին ու բարձան վագոնները: Էդպես օր չէնեյին, թուրքերը մեզի կը բռնեյին, չէ՞ Լենինականն էլ լցված էր թուրքերով: հասանք Վրաստանի սայմանը, նոր մեզի յաշիկներից հանեցին… Ռուսաստան հասանք, սովետական կարգեր էր հաստատվել: Էս մալականը մեր հինգ որբերին էլ հիրան հարազատ էրեխանց հետ մեզի պայեց, փայփայեց, ամուսնացրեց: Ընձի տվեց մեզի հետ էղած Գարեգինին… Տուն ու տեղ էղանք, կոմսոմոլի մեջ մտանք, կուսակցության… Նոր բըղի կյանք քաշեյինք, էս անգամ էլ աչքը խավարած Հիտլերը… Պատերազմ: Ամուսնուս ֆրոնտ տարան: Տղես՝ Ստյոպիկը, 17 տարեկան էր, կամավոր գնաց… տեզրս գնաց, տեքերկինս մեռավ: Էրեխոնցը ես բերի պայելու: Հիտլերը հասել էր Դոն, ըստեղից մեզի էվակուացիայի էրին… պատմելու բան չէ, թե ինչ տանջանքներով եմ էս որբերին ու աղջկաս բերէ Լենինական հացրէ:

Իմացանք՝ ամուսինս, տղաս զոհվել էին, զոհվել էր տեզրս:

Թուրքի փախեփախի վախտ կորած քուրոջս գտա: Բայազե-տի շրջանը կապրի: Էսիգ պատմեց, թե ինչըղ է մեռել մերս սովից: Թուրքերն օր Լենինական էին լցվե, քանիմ օր հետո մերս կը մեռնի, հո՞ւմ պետքն է… էնքա՛ն մեռել կար… Մորս թաղող չի էղնի: Էնքան կը մնա, օր…

Քուրս կը պատմէ, օր դիյակը կռիսները կռծել էին… էէ՜ պատ-մելու բան չէ, բալամ:

## ՓԱԽԵՓԱԽ ԷՐ

*Գրանցվել է 1981 թ. Լենինականում՝ բանասաց Բագրատ Ենգոյանից, որը Կարսի մարզի Փալդրվան գյուղից է*

Տասնութ թվի փախեփախն էր:

Էզանք Ճլոխան (հըմի էդ գեղի անունը Բենիամին է, թե չեմ սխալվի), էզանք, թուրքերը Ճլոխան լցվան: Մեզի հետ քանիմ գլուխ մալ օչխար էյինք բերել, թուրքերը խլեցին, քշեցին տարան: Քանիմ օր չէր անցել՝ հորս պլեն տարան:

Մեր ունեցած-չունեցածը Նիկոլի հինգ հարուր հիցուն մանեթ փողն էր, էն էլ էզան ըսին՝ մարտը հինգ հարուր մանեթ տա, էրթան թուրքին տան, պլեններին ազատեն, բերեն… Խաբեցին, տարան, էդպես էլ հորս, մեկել պլենների հետ թուրքերը գըշերը ըսպանել էյին…հուր էյին տարել, ինչղ էյին ըսպանել, էդպես էլ չիմցանք:

Պըզդի քուրոջս որբանոց քցեցինք, մնացինք ես ու մերս… Հը-մի էլ, օր էս քուրոջս կը հիշեմ, չիտեմ, աշխարը գլխուս փուլ գուկա: Ա՜խ, քուր ջան… Մե օըմ մերս ըսավ.- Տըղա, թե կըռնաս, գնա քա-ղաք (Ալեքպոլ), քուրոջիցտ մե խաբարըմ բէէ՝ մեռա՞ծ է՜, սաղ է՜… Ես ու հընգերս, էնոր էլ փոքր ախպերն էր էր որբանոցը, հէլանք (էրե-խա տղեք) էզանք, որբանոցը գտանք (ամերիկացիների բացած որ-

բանոցն էր), քուրոջս գտա… էսիգ ընձի օր տեսավ, հիրան կորցրեց. Կուլա, փոթըրթվել է, պոկ չի գա, կըսէ.- Ես էլ ձեզի հետ գուզամ, թե չէ ըստեղ կը մեռնիմ:

Գուզեյ հետս առնեմ, բերեմ, կառավարիչները չթողին: Էս էրեխուն քաշքշելով նես տարան, մենք, գլխներս կախ, թողինք էզանք: Երանի մե կերպըմ փախցրած էղնեյի: Քանիմ շաբաթ հետև հիմացանք, օր քուրս մեռել է: մենք օր տեսանք, կըսեր՝ հիվանդ եմ: Գերեզմանի տեղն էլ չիմցանք:

Ալեքպոլ մնացի, Բոշի Մնոյի մոտ հոտաղ էղա: Բոշի Մնոն դաշնակցական միլիցիայի վայխմեստիր էր, իրեք հատ ձի ուներ, տաճանկա կը լծեր, փափաղը կը դներ, գէլներ քաղքի մեջ խշտիկ-խշտիկ ման գուզար: Ըբը Բոշի Մնոյի հերեսից ինչքա՜ն ծեծ եմ կերէ… Դաշնակները հիրանց փարեն ունեյին, էդ վախտ էլ դալբ փարա [ծնթ.15] կը կտրեյին՝ փոշտի մարկեկու չափ էր՝ քառսըննոց կըսեյն, դու մի ըսա, դալբ փարա էր: Մնոն համեն հառավոտ հելնըմ էր, մե դալբ փարեմ էր տալըմ ընձի, կըսեր.- հելի թեզ գնա ֆռնչի Պետուշի քովը, էս փարեն տու, հաց բէ:

Էրտըմ էյի.- Պետուշ եղբար, Մնոն ըսում է՝ հաց ու, ան փարեն:

Փարեն վերցընըմ, տեսնըմ էր քառսուննոց է, քյուֆուրը կապըմ էր.- Ես քու Մնոյի հոր քյալլեն, քու հոր քյալլեն… էսի կըսեն՝ դալբ փարա է, հընչի՞ է էս դալբ փարեն ղըրկըմ:

-Ուստա Պետուշ, ես ինչ մեղք ունիմ…

Քաշըմ ընձի էր ծեծըմ, հացը տալըմ, ըսըմ էր՝ գնա:

Համեն օր նույն պատմությունը, համեն օր էդ դալբ փարեն, ծեծ ու ջարդ:

Մորըս զանգտվա, թե.- ըսման աշխատել չեմ կըրա:

Մերս թե.- Արի, էլի Ճլոխան էրտանք, ընտեղ տես ծանո՞թ կա…

Ճրլոխանից էլ գնացինք Մեչըտլի (հըմի էդ գեղի անունը նոր Կյանք է), ըստեղ մե հարուստ տունըմ հոտաղ մշակ էղա: Էտտեղ էլ որպես մշակ աշխատա մինչև քանիրեք թիվը… Ինչ ըսես, օր չտե-սա էդ հարուստի տունը աշխատածս ժամանակ:

## ՕՍԿԻՆ ՎՈ՞Վ Է ՎԱՅԵԼԷ

*Գրանցվել է 1980 թ. Լենինականում՝ բանասաց Միրանուշ Մկրտչյանից, որը Կարսի մարզի Փալդրվան գյուղից է:*

Մարդոյենց Դավոն մեր գեղի քյոխվեն էր: Կոտով օսկի ուներ: Թամաքյար, անխիղճ, չկամ մարտ էր:

Թուրքի կոտորածին մշեցիք գաղթել էին էգել մեր գեղը. Թալ-նըված, խեղճ ու կրակ, դուսը մնացած մարտիկ: Բերինք համեն մեկս մեր տըները տեղավորեցինք, ապրուստ տըվինք էս մարտ-կանց: Մարդոյենց Դավոն իմացավ, օր գաղթականները որոշել են մնան մեր գեղը, մինչև Երկիրը բացվի: Կանչեց էս գաղթականնե-րին՝ ծեր, կընիգ, էրեխա, թե.- մեր գեղից դուս բըղի գաք, իրավունք չունիք ըստեղ ապրելու, վո՞վ բըղի ձեզի հող տա, հու՞մ վրա էք հույսներըդ դրէ:

Գեղացիք կայնան էս քյոխվին մեղադրեցին, էսիկ.- Չէ, օր չէ, թող ըռադ էղնին, էրտան: Էսոնց գեղից դուս էրեց:

Անցավ էրկու-իրեք տարի, էգավ 18 թիվը, էս անգամ թուրքը մեզի գաղթական շինեց: Թողինք տուն-տեղ, համենքս մեր գըլուխը ազատեցինք, շաղերը չհասցրին…

Ինչ օրա, Մարդոենց Դավոն էլ գաղթական, դառավ, թուրքը Դավոյի ունեցվածքըն էլ տարավ, կոդով օսկին էլ, ինչ ուներ-չուներ, գնաց խըտ Թորոսին (Այս արտահայտությունը նշանակում է ու-

նեցվածքի անտեղի վատնում. ծանոթ. Բանահավաք Հ. Մկրտչյան) … Թուրքը կընկըտանց, էրեխանց սրի քաշեց Արզինու ձորը: Էս մարտը ինչղ էր էղէ, գլուխը փրկել էր…

Էզավ Ավդիբեկ (այժմ Ծաղկաշեն), մեր քովը: Ման գալով էգել էր գդել: Խեղճ մարտը հիրան կորցրել էր: Ինչ օր պետք էր, էղածից-չեղածից օժանդակեցինք, քանիմ վախտ մնաց… Համոզեցինք, մխիթարեցինք, թե էլի գեղը կէրտանք, մեր հողերի վրա, էլի լավ կապրիս:

-Էէ՜,- ըսեց, - աշխըրի մալ, աշխար է մընացէ, աչքածակությունն էլ բանըմ չէ…

Ինչ օրա, քանիմ ամիս չանցավ, Դավոյին Լենինական տեսա: Քսան թիվն էր, թուրքը էլի էս կողմն էր լցվէ: Էս մարտը ճընկըլը ձեռը, ըստեղ-ընդեղ ման գուգար, հուրտեղ օր մալ կը մոռթեյին, կէրտար հարուն կը հավաքեր, խմեր, օր ապրեր: Օղորմի հոգուն, սովից էլ մեռավ:

Աիան քեզի կողով օսկի, հեչ մարտ էլ թող չը պարզենա՝ էս ունի՜մ, էն ունի՜մ…

**Պարույր Բարսեղյան**

## ՍԱՄԱԱԲԱՐՈՆՑԻՆԵՐԸ

Աբոզ գրվինք, պատվով մեռնինք
(Երևանցոց ասածվածքը գյումրեցոց մասին)

1920 թվականի պատերազմն էր թուրքերի և դաշնակ կառավարության միջև: Թուրքերը առաջ էին շարժվում, դաշնակների զորքը նահանջում: Այդ ժամանակ քաղաք եկավ դաշնակ կառավարության հատուկ լիազոր՝ Վալադ Վալադյանը ընթանուր մոբիլիզացիա անցկացնելու համար:

Քաղաքի պատերին հայտարարություն փակցվեց, որտեղ ասված էր, որ 16-ից 60 տարեկան հասակ ունեցող տղամարդիկ, որոնք քաղաքում են, պարտավոր են ներկայանալ զինվորական կոմիսարին: Չը ներկայացողները կը ենթարկվեն խիստ պատժի, ընթուպ մինչև գնտակահարության:

Էլ ո՞վ էր գլխից անցել, որ չը գնար ներկայանալու:

Բացի մի քանի արտոնյալներից ու ճարպիկներից ով որ ներկայացավ, առանց հաշվի առնելով նրանց առողջությունը և պիտանությունը, բոլորին վերցրին զինվորական ծառայության:

Օգտվելով հատուկ դրությունից գյումրեցի գնդապետ Ջատիկովը՝ բոշենց Յակոբը քաղաքի տարիքովներից կազմակերպեց մի զորաբաժին, որը անվանվեց «Սամաաբարոնա»: «Սամաաբարոնայի» կազմը ստացվեց շատ խայտաբղետ: Նրա մեջ ընկան տարբեր զբաղմունքի, հոգեբանության և կենցաղի տարեց մարդիկ: Զանազան արհեստավորներ, առևտրականներ, ծառայողներ, գործակատարներ, ռանչպար-բոստաջիներ, ֆայտոնչիներ, միկիտանչի-դայֆաճիներ [ծնթ.16], լոթի-փոթի տղերք, անորոշ զբաղմունքի մարդիկ: Ի միջի այլոց խմբի մեջն էին կախեթցի Օնիկը (զինեվաճառ), Եկանենց Հակոբը (առևտրական), Երանոսովենց ջուխտ աղբերը (հրուշակագործներ), եղբայրներ Ճերմակ Համոն, Չանկի Խաչոն (բախալներ), Բմբլե Բերդը (ոսկերիչ), Վխկրենց Աղասին ու Արամը (դերձակներ), Բոյաջոնց Աշոն ու Բեխլի Բլոն (դիրզարներ), Դալլաքենց Ռուբենը (բիլիարդատեր), Կոլոճ Յոնեսը (բառբառ) [ծնթ.17], Ղոնղառ Յակոն (ռանչպար), Ղլըր Յակոն (մկիտան-հյուրանոցի տեր), Բակմզենց Օնիկը (ցարական սպա), կուզիկ տերտերը (հոգևորական) և այլն և այլն շատ փեշակի տեր գյումրեցիներ:]

«Սամաաբարոնցիներից» շատերը դեռ հրացան ձեռները առած չկային:

Իրանց սեփական հագուստներով, զինված զանազան սիստեմի հրացաններով. Ռուսական «Մոսին» և «Կարաբին», ֆրանսիական «Լեբել», անգլիական «Վինկերս», թուրքական «Քուչուկ չափլի», բեռնավորված մի քանի օրվա ուտելիքներով ու խմիչքի պաշարով «Սամաաբարոնային» ուղարկում են Սարիղամիշի ճակատը թուրքերի հետ կռվելու:

Նրանց մեջ կային խելահաս, համեստ մարդիկ, որոնք հասկանալով դրության լրջությունը, եկել էին թուրքերին դիմադրելու, հայրենիքը պաշտպանելու, որպիսզի այլևս երեվանցիք չհեգնեին ու ասեին. «Օնիկ, Օնիկ, աբոզ [ծնթ.18] զրվինք, պատվով մեռնինք»: բայց կային այնպիսի լոպազ անձնավորություններ, «լոթի տղեք», որոնք քանի չէին շփվել թուրքերի հետ սրախոսում էին. «Գյումրեցի տղեն էնպես լիպաս պիտի ունենա, որ թուրքը դեմեն գա՝ զարզնդի»:

«Սամաաբարոնցիների» առաջին մարտական մկրտումը լինում է այն, որ նրանք անցնում են սահմանված զիծը և գրավում են թուրքական Ջիարեթ գյուղը: Բայց ենթադրելով, որ թուրք գյուղացիությունը կարող է հարձակվել իրանց վրա…առանց արյուն թափելու նահանջում են: Բայց տեղի է ունենում ուրիշ դժբախտություն: Տղերքը իրանց հետ բերած «իշկին» [ծնթ.19] խմել վերջացրել են, իսկ Սարիղամիշում խմիչք չկա: Խմիչքին (ուրիշ խոսքով «առյուծի կաթին») սովոր տղոնց դրությունը վատանում է, տրամադրությունները ընկնում:

Այդ ծանր դրության ելքը գտնում է «Սամաաբարոնայի» զինվոր, զինեվաճառ Եկանենց Յակոբը: Նա գնում է իրենց հրամանատար զնդապետ բոշենց Յակոբի մոտ ու ասում.

-Աղաշ ջան, տղոց իշկին վերջացել է, քթերը կախել են, առանց իշկի կռիվ չի էղնի, մե թուղթմ գրե, էրթամ քաղաք զինի բերեմ, տղերքը էշխի գան:

Հրամանատարը համաձայնվում է իր աղաշի տեսակետի հետ ու ձևակերպում գործուղումը: Եկանենց Յակոբը գնում է քաղաք (Ալեքսանդրապոլ) ու տակառներով գինի է բերում Սարիղամիշ: Տղերքը երբ տեսնում են տակառներով լիքը գինին, աշխուժանում են:

-Տո, էթքան գինին որ խմենք, էլ թուրք կդիմանա, քշենք, հասցնենք կը տեյմոր Էրզրում:

Սկսվում է կռիվը (ճակատամարտը): Քեֆերը լավ տղերքը իջնում են խրամատները: Թուրքերը կրակ են բաց անում: Տղերքն էլ սկսում են կրակել մի ինչ որ տեղ: Թուրքերը ուժեղացնում են կրակը:

-Տո էդ անաստվածները,-հեգնում է Պոլոզ Մուկուչը,- ինչ էշխով կկրակեն, հանաք չեն էնե, կրնա պատահի մե քոռ գիլլեմ ու զուր տեղը էրթաս քոռ ու փուչ էղնիս… էս չեղավ:

Երբ պայմանները ստիպեցին մի ինչ որ տեղ հետախուզություն կատարել, որոշեցին ուղարկել դաշնակցություն կուսակցության անդամ Շահրիարցոնց Նիկողոսին:

-Ցնձի միք ղրկե,-ասում է նա,- իմ տեղս յուրիշիմ ղրկեք, ես հազամ կը, թուրքերը գիմանան…

Չեն ուղարկում:

Իսկ երբ ժամապահ են նշանակում Դալլքենց Ռուբենին, նա չի առարկում ու գնում է նշանակված տեղը: Գիշերը իր պոստին կանգնած ժամանակ նա ինքն իրան խորհում է.

-Ախպեր, գիշեր ժամանակը չասավոյ կայնելը խաթայ է, մութ տեղը մեկմ եկավ ու խշտիկը փորդ կոխեց, ցերեկը եղնի էրթա ու

գա, կրնաս կրակե, կրնաս ճվա, հավար կանչե…հմը գիշերը, չէ, էսիկ իմ բանս չէ… Ռուբե՛ն, սմիրնո՛,-հրաման է տալիս ինքը իրան,- խշտիկը զարկ գենտնին (խշտիկը զարկում է գետնին), նապրա'վո (դառնում է աջ), շագոմ շա'րշ (շարժվում է): Քայլերը ուղղում է դեպի երկաթգծի կայարանը, մնաս բարով ֆրոնտ…

Կռվի ընթացքում «Սամաաբարոնցիները» ունենում են երկու սպանված, մեկը Թութխլենց Արտաշը՝ թուրքի գնդակից, մյուսը՝ Կոլոճ Յոնեսը՝ հրացան չը տիրապետող իր անշնորք ընկերոջ Բոյաջոնց Աշոյի հանկարծակի գնդակից:

Դաղարի ժամանակ, երբ տղերքը հավաքված մի տեղ խորհում են ստեղծված դրության մասին, մեկը արտայայտում է մի հոյակապ միտք:

-Ախպրտիք, մենք մեր պարտքը կատարեցինք, եկանք, զարկինք-զարկվանք, հիմի էլ թող յուրիշները գան մեր տեղը կռվին, մենք էլ կերթանք քաղաք, «Յոթվերքի» պատը կը պաքենք, մերոնց յաջողություն կը խնդրվինք:

Այդ գայթակղեցուցիչ խոսքերը դուր են գալիս շատերին: Դրանից հետո ուժեղանում է մեկ-մեկ կամ խմբերով թողնել ճակատը ու վերադառնալ իրանց հարազատ քաղաք՝ Գյումրին:

Երբ քաղաքում հարցնում են ֆրոնտից վերադարձածներին.

-Յնչի՞ փախաք:

Տղերքը պատասխանում են.

-Վո՞վ կսե փախանք, մենք խո չփախանք: Ախպե՛ր, կռիվ, յանձրև, ցուրտ մութ գիշեր, յաչք յաչքի չի էրվա, ճամփեն կորցուցինք, էկանք, էկանք… յնկանք քաղաք:

# §4 ԲԱՆԱՎՈՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ա Ղ Ի Ն

Բանասաց՝ ***Համբարձումյան Արմենակ Միշայի,*** *ծնվ. 1951 թ.*
գ. Աղին, համայնքի վարչական ղեկավար: Ձայնագրություն 151206 – 2149

Իմ հիշողությունները նախ ծնողներիս, հետո մորական պապիս պատմություններն են: Պապս Մուշից է գաղթել եղեռնի տարիներին. իմ պապ Անուշավանն ու իրանց գյուղից մի հոգի էլ կար՝ Գալուստը, որոնք երկուսով էին փրկվել ողջ գյուղից ու իրենց ընտանիքները նս կոտորվել էին,Մուշից փախել, եկել են այստեղ 18թ. աշնան-ձմռան ամիսներին: Հաստատվել են Աղինում, հետո 22 թ. պապս ամուսնացել է տատիս հետ, իսկ էդ Գալուստը, մեր դիմացը մի հատ թուրքական գյուղ կար, որ հիմա Ախուրյանի ջրամբարի տակ է, էդ գյուղից մի կնոջ հետ է ամուսնացել: Էդ Գալուստը դաչաղ [ծնթ.20] մարդ է եղել, էդ գյուղից Նիգյարին փախցրել, բերել է, տնավորվել է, ըդպես հաստատվել ու ապրում են մինչ օրս:

1920 թ. Աղինը փոքր գյուղ է եղել, մոտ 270 բնակիչ է ունեցել, էն կողմից թուրք ասկյարները 2 հրացան կամ կարաբինի նման բան վերցրած 10 օրը մեկ գալիս էին գյուղ, հավաքում էին տղամարդկանց, տանում էին գյուղից դուրս, մենք Ջարդի ձոր ենք ասում, էդտեղ սպանում էին: Մարդկանց, 15-20 հոգու լցրել են մարագները, թոնիրների մեջ այրել: Մի անգամ էլ հավաքել են 50-55 հոգի տղամարդ ու կին, տարել են դարձյալ նշածս տեղն ու խփել: Որը սպանվել է, որը վիրավորվել, հետո գյուղացիները գնացել են, ով որ մահացած չի եղել, բերել են: Ըդպես թուրքերը գնացել են Բարձրաշեն, հետո էլ դեպի Սառնաղբյուր, բայց շրջանցել են Սառնաղբյուրը,

քանի որ էդ գյուղացիները ըմբոստ են եղել, 18 թ. ինքնապաշտպանական կռիվներ են մղել, ու անցել են Արազածի փեշերը:

## ԱՐԵՎԻԿ

Բանասաց՝ ***Թորոյան Հակոբ,*** ծնվ. 1955 թ.

գ. Արևիկում, դպրոցի տնօրեն, պ.գ.թ.: Ձայնագրություն 151023- 2348

Գյուղի մեծերից, որոնք պատմել են թուրքական երկու արշավանքների մասին, ես հիշում եմ մի քանի պատմություն: Գիտեմ, որ գյուղում մնացել է թուրքական երկու զորաջոկատ:

Հարց.- Իսկ ում տներում են մնացել, կա՞ն հիշողություններ:

Պատասխան.- Կան, իհարկե, բայց մի տնում չեն մնացել, այլ մի քանիսում, մեկը փողոցի վրա էր, հիմա ասում են Գադրի Ռուբիկ, Գադրը փաշայի անունն է եղել, Ռուբիկի հայրը Աբրահամ է կոչվել, էդ Աբրահամի տունն են մնացել, քիչ թե շատ բարվոք տուն պետք է լիներ: Հիմա շատերը չգիտեն, թե ինչի են էդ ընտանիքին ասում Գադր, որը փաշայի անունն է եղել: Օրական մի ոչխար էին տալիս թուրքերին, որ ուտեն, նրանք ոչխարը ուտում էին, իսկ գլուխը դուրս էին նետում: Գյուղացիները պայմանավորվում են, թե որ օրը ով պետք է էդ գլուխը տանի, որ մշակի, ուտեն: Դժվարին տարիներ են եղել: Երբ որ գալիս են, իրենց ժամանցի, ուրախության համար Գադրը իր հետ փահլևան է բերում, որ տեղում մրցություն անցկացնի, նայեն, զվարճանան, ժամանակ անցկացնեն: Նա հայտարարում է, թե ով մրցի էս փահլևանի հետ ու մեջքը գետնին զարկի, ես գյուղին ձեռք չեմ տա, իսկ եթե չհաղթեց, բոլոր տղամարդկանց կոտորելու եմ: Շատերը վախենում են, բայց գյուղի քահանան՝ տեր Աբրահամ Զաքարյանը, որ շատ ուժեղ մարդ էր /կարող էր ցլիկի պոչից բռնել ու կանգնեցնել/, ասում է ես կմրցեմ, բայց մի պայմա-

նով, որ կռիվը լինի երթիկի վրա:Էն ժամանակ բոլոր տները երթիկներով էին, գարունը որ գալիս էր, երեխաները ելնում էին կտուրների վրա խաղում, որ դրանք ամրանան, քանի որ հողից էին. համ կանաչ չէր աճի, համ կաթոց չէր լինի: Գաղրը չի հասկանում, թե ինչի համար է Տեր Աբրահամը ուզում մրցի երթիկի վրա ու ասում է ես համաձայն եմ: Երբ կպնում են, ինքը փահլևանին գլորում, բերում է երթիկի եզրին, գլուխը զցում է ցած, որ սպանի, բայց փաշան հասկանում է ու վերջին պահին ասում է լավ, բավական է, ես պարտված եմ: Ինքը ավելի մեղմ է վերաբերվում գյուղի նկատմամբ, այսինքն կոտորած չի անում, բայց ամեն հետ գնալուց 100-110 տղամարդ է իր հետ տանում Կարս՝ աշխատացնելու: Նրանցից շատ քչերին է հաջողվում հետ վերադառնալ՝ 4-5 հոգի, որոնց պատմությունն էլ գիտեմ:

Օրինակ Մքոյան Միսակ է եղել, որ մեզ հեռու բարեկամ է, պատմել է, որ հավաքում էին տղամարդկանց գյուղի մեջ, ոտքով տանում Գյումրի, էնտեղից էլ գնացքով Կարս: Էդ 100 հոգին հլունազանդ մի քանի թուրքին ենթարկվում են, քանի որ թուրքերը հայտարարում են, թե ով փախչի, չենթարկվի, նրա ընտանիքին կսպանենք, երևի դրանից վախենալով դիմադրություն ցույց չեն տալիս ու գլուխները կախ գնում են: Բայց որ հասնում են Գյումրի, էնտեղ լցնում են վագոնները, Միսակը տեսնում է, որ հնարավոր է փախչել և վագոնի տակից անցնելով գալիս է տուն ու փրկվում է:

Մեր գյուղում եղել է մեկը, որին Ջաղո են ասել, սերունդները շատ քչերը հիմա գիտեն, որ թուրքերը նրան պահում էին որպես մատնիչ, որ ասի, թե գյուղում ով գեղեցիկ հարս ու աղջիկ ունի: Նմանատիպ ես երկու պատմություն գիտեմ, որից մեկը մեր ընտանիքի մասին: Տատիկս իմ հայրիկին է պատմել, հայրիկս էլ ինձ, որ մեր տանը երկու հորաքույրներս՝ Ոսկեհատը և Նուշը շատ գեղե-

ցիկ են եղել, մատնել են նրանց մասին, որ գնան տանեն, բայց գյուղում պատերի մեջ պատուհաններ են եղել ու լուրը շատ արագ հասել է, թե ասկյարները գալիս են Հակոբի տուն: Տատիկս այդ ժամանակ հղի է եղել հորեղբայրովս՝ Հովիկով, որը գնաց պատերազմ ու հետ չվերադարձավ, անմիջապես երկու աղջիկներին, որոնք եղել են 16-17 տարեկան, մտցնում է թոնիրը, փակում, վրան քեչա է գցում, ինքն էլ փորը բացում ու պառկում է վրան, քանի որ 7-8 ամսական հղիություն է ունեցել, սկսում է տքալ, իբր ծննդաբերում է: Ասկյարները գալիս, չորս կողմը ստուգում են, որ մի բան չեն գտնում, թողնում գնում են: Լույսը չբացված, ժամը 4-ին, հորս հորեղբայրը գալիս է, քանի որ գյուղում ջաղաց չկար, իր ալյուրը տանում է Ջաջուռ աղալու: Ցորենի պարկերը շարում է սայլի վրա, դրանց տակից երկու փայտ է ամրացնում ու հորաքույրերիս տեղավորում դրանց արանքն այնպես, որ չերևան, քանի որ ճանապարհներին հսկողություն կար, տանում է այնտեղ հեռու բարեկամ կար, դրանց տանը պահում այնքան, մինչև թուրքերը հեռանում են, նոր գնում են բերում: Այդպես փրկվում են իմ հորաքույրները:

Մյուսն էլ էլի նմանատիպ պատմություն է. ասկյարին ուղարկում են Խաչատրյաններ կան, նրանց տունը, որ իրենց գեղեցիկ հարսին, որի ամուսինը մահացած էր, բերի, էդ ասկյարի անունը եղել է Դուրան: Որ գալիս է, կեսուրը ասում է հարսս տանը չի, հիմա կկանչեմ, բայց նստի հյուրասիրենք քեզ, հետո կկանչենք, կտանես: Զվածեղ է սարքում, լավ թունդ գինի է դնում, որը խմելուց հետո էս ասկյարը քնում է ու էդ հարսի կիսուրը յուղը տաքացնում է, լցնում ասկյարի ականջը, սպանում: Էդպես հանկարծամահի տպավորություն է ստացվում, թե չէ թուրքերը ասել էին, եթե որևէ ասկյարի մազին կպնեք, ողջ գյուղը կլցնենք եկեղեցին, կվառենք բոլորին, ինչպես եղավ Քյափանակում: /Դա էլ կպատմեմ, որովհե-

տև Արևիկցի մեկի մեղքով է եղել:/ Քանի որ ձմեռ է եղել, էն ժամանակ էլ ձյունը առատ է եղել՝ 1-2 մետր ու հավաքվել է տների առջևում, ասկյարին ձյան թմբի տակ են թաքցնում: Որ ժամանակ է անցնում, թուրքերը սկսում են Դուրանին ման գալ, թե ինչ եղավ, չկա, հարցնում են նաև իրենց, սակայն ոչ ոք տեսած չի լինում: Մի քանի օր անընդհատ գոռում են Դուրան, Դուրան, բայց ձայն չի լինում. ոչ ինքը կա, ոչ դիակը: Որոշ ժամանակ հետո գաղտնի տանում, թաղում են, որի հետքը այդպես ծածկվում է ու թուրքերը չեն գտնում:

Մեր գյուղից մեկն է լինում՝ Տեր Ստեփանյանների ազգից, Պետրոս էր անունը, Պետիկ էին ասում, կռվել էր ցարական բանակում, պարուչիկի կոչում ուներ,Անդրանիկի կամավորական ջոկատում էր եղել ու պատմում են, որ Անդրանիկը նրան ճանաչել է անձամբ: Նա որ ուզում էր կրակել, խրամատից դուրս էր գալիս, չոքում, նշան էր բռնում, նոր էր կրակում, որ լավ խփի. Անդրանիկը նրան դիտողություն է անում, թե քեզ կխփեն, խրամատից դուրս մի արի, այդտեղից կրակի, վերջինս պատասխանում է. –Փաշա, որ դու ձիով անցնում ես, քեզ չեն խփում, ես ինչի պիտի վախենամ որ ինձ խփեն: Ահա ինքը գյուղում էր, էդ ժամանակ թուրքերը հետաքրքրվում էին, թե ով է բանակից եկել, ով է զինվորական, ով զենք ունի և այլն, համարելով, որ դրանք վտանգավոր են, այդ մասին իմանալով ինքը որոշում է, որ չի մնա գյուղում, որ գյուղացիներին չվտանգի, բայց նաև թուրքերին էլ չենթարկվի: Գյուղի ծայրին, Ֆոնդեր կոչվող դաշտի վերջում, սարի տակ փոքր քարայրներ կան ինքը էդտեղ էր մնում: Թուրքերը մեկը մյուսի հետ կապ պաշտպանելու համար հեռախոսի գիծ են անցկացնում ու կապավորները հեռախոսի գիծը քաշում են, որ տանեն Քյափանակ /հիմա՝ Բասեն/ գյուղը, ինքը հետևում է նրանց, քանի որ զենքով էր, երկուսին էլ

սպանում է: Թուրքերը չեն կարողանում գտնել, թե ով է նրանց սպանել, մեղքը գցում են քյափանակցիների վրա, լցնում են ողջ գյուղի ժողովրդին եկեղեցին ու այրում են:

Հարց. – Իսկ դուք տեղեկություն ունե՞ք այն մասին, որ իբր թուրքերը կաթոլիկ գյուղերին վնաս չեն տվել, որովհետև Հռոմի Պապը այդ մասին խնդրել է Թուրքական իշխանություններին:

Պատասխան. – Այո, լսել եմ, բանավոր տեղեկություն ունեմ, բայց գրավոր որևէ փաստաթուղթ չեմ տեսել: Կարծում եմ դա այնքան էլ ճիշտ չէ, քանի որ Լանջիկն էլ է կաթոլիկ գյուղ, բայց բնակչությանը կողքի ձորում կոտորել են: Հետո ամեն անգամ վերադարձին գյուղից 100-110-ական երիտասարդ ու տղամարդ են տարել, որոնցից 4-5-ն են հետ վերադարձել: Աշխատացրել են Կարսի երկաթգծի վրա, ցուրտ, անմարդկային պայմաններում, շատերը չեն դիմացել, մահացել են, մի մասին սպանել են, չէ որ սա էլ մարդկային վերաբերմունք չէ: Նրանք, ովքեր փախել եկել են, խիստ հյուծված են եղել: Ոմանց սայլով են բերել, այնքան թույլ են եղել: Մկոյան Հակոբը սպանված եղբորը թաղել է ու տեսնելով, որ երբ այլևս գործ չի մնացել անելու և թուրքերը սկսել են կենդանի մնացածներին սպանել, մի կերպ փախել է: Ինքը 90 տարի ապրեց, ու պատմել է, որ երբ թուրքերը սկսել են մասսայական սպանությունները, եղբայրը ընկել է իր վրա, ինքը մնացել է նրա տակը ու անշարժացած սպասել է, որ թուրքերը հեռանան, քանի որ մի փոքր շարժում նկատելով սվիններով հարվածել են, որ վերջնական սպանեն վիրավորներին: Հետո գիշերով եղբորը թաղել է ու փախել: Այնպես որ կաթոլիկների նկատմամբ հատուկ վերաբերմունք ունենալու մասին լուրերը չեն համապատասխանում իրականությանը:

Հարց. –Իսկ ո՞վ է եղել էդ ժամանակ ձեր գյուղի գյուղապետը՝ քյոխվան:

Պատասխան – Քահանան եղել է տեր Աբրահամ Զաքարյանը, իսկ գյուղապետը եղել է Կատունյանների ազգից Անանիան, ընդ որում ասեմ, որ ասում են թե աղ ու հացով են դիմավորել, գնացել են գյուղ մտնող թուրքերին դեմ, խնդրելով, որ գյուղը չկոտորի: Դա փաստ է:

## ԱՐՓԵՆԻ

*Բանասաց՝ **Ենգոյան Հովսեփ Մարտունի**, ծնվ. 1931թ.*
գ. Արփենի: Ձայնագրություն 151207-0048

Արփենի գյուղում ապրել եմ մինչև 1949 թ., երբ փակվեց Ջաջուռի ածուխի հանքը, որտեղ աշխատում էր հայրս պատերազմից վերադառնալուց հետո և մեր ընտանիքը տեղափոխվեց Աբխազիա: 1995 թ. վերադարձա Հայաստան, իմ հայրենի գյուղը, որտեղ հողամաս ստացա և հաստատվեցի այստեղ:

1920 թ. երբ թուրքերը մտել են Շիրակի մարզը, գյուղացիները լսել են, որ նրանք գալիս են դեպի իրենց գյուղ, ով կարողացել է ճամփա կտրել հավաքվել են ու կազմակերպված հեռացել են գյուղից, ոմանք թաքնվել են քարայրներում, ոմանց բռնել սպանել են, մնացածները փախել են Լոռի: Դա ձմեռն է եղել, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, մարդիկ ճանապարհին են մնացել, իմ հորաքույրս (էդ ժամանակ 18 տարեկան է եղել) պատմում էր լաց լինելով (ինքն էլ է լաց լինում), որ սառնամանիքին էնքան են ընկել ձյան մեջ, ցրտահարվել, որ մի կտոր սաղ տեղ մաշկի վրա չի մնացել: Վերջը մի կերպ հասել են Լոռի՝ Շահնազար գյուղը, որտեղ նրանց ընդունել են, տիրություն են արել, ոտքի են կանգնեցրել ու այդպես փրկվել են: 1995 թ. երբ ես եկա, հորաքույրս նորից հիշեց էդ պատմությունը:

Տատս ու պապս պատմում էին, որ մեր տունը հին գյուղում գերեզմանների մոտ է եղել, ես հիշում եմ, որ պապս, երբ հիշում էր իր ծնողներին, գնում էր այդտեղ, որտեղ եղբայրական գերեզման էր, որտեղ ինքն էր թաղել իր ծնողներին, գյուղացիներին ու ծնկաչոք լաց էր լինում, խառնում էր հողը: Թուրքը երբ մտել է գյուղ, հավաքել է գյուղի բոլոր այն տղամարդկանց, ովքեր չեն կարողացել փախնել, կանգնեցրել է շարքի որ գնդակահարի: Հետո մի թուրք մոտեցել է ու հարցրել ջաղացպան կա, թե ոչ, ցույց են տվել իմ պապին, որի մասին պատմում եմ, նրան շարքից հանել են, իսկ մյուսներին՝ մոտ 25-27 հոգի տեղում գնդակահարել են, թողել տեղում: Սկսվել է լաց, կոծ ողբերգություն: Թուրքերը թալանել են գյուղացիների հացահատիկը, բերել են պապիս ջրաղաց որ աղա, ալյուրը տարել են: 10 տարեկան հորեղբայրս միշտ հաց ու կերակուր է տարել պապիս, որ սնվի, իսկ թուրքը էնտեղ հերթապահություն է արել, ու հորեղբորս կանչել է իր մոտ ու ասել, որ գնա գյուղ ու այսինչ մարդուն կանչէ էստեղ: Հորեղբայրս գնացել ասել է, տնեցիները նրան խնդրել են, թե Հովանես ջան, ոտդ պաչեմ, գնա, ըսա տունը չէր: Երեխեն հետ կգա թուրքի մոտը, կսե չգդա: Թուրքը չի հավատա, կկանչե հորեղբորս իր մոտ, մազերից կբռնե, խանչալը կհանե որ գլոխը կդրե, սա վախից գլուխը թափ է տվել, թուրքի ոտքերի արանքից փախել է ու հասել ձորը, թաքնվել դաշտի մեջ ու թուրքը նրան չի գտել: Գիշերը հորեղբայրս վերադարձել է գյուղ, գտել է պապիս սպանված, որտեղ դիակներն են ընկած եղել, Բավոյի օդա [ծնթ.21] է կոչվում, էդտեղ, 25-27 դիակ թափված է եղե, մտել է պապիս փեշի տակ, մնացել մինչև լուսաբաց, հետո մի կերպ եկել է տուն, որտեղ նրան թաքցրել են:

Դրա համար երբ ես եկա, փող ունեի մոտս, խորհրդակցեցի իմ ընտանիքի հետ ու գյուղացիների աջակցությամբ ու օգնությամբ

այդ եղբայրական գերեզմանի տեղում հուշարձան կառուցեցինք, որի բացումը կայացավ 1997 թ. օգոստոսի 7-ին: Բացմանը ներկա էին մարզպետարանից ու Ղուկասյանի շրջանի ղեկավարությունից շատ ներկայացուցիչներ, որի տեսաձայնագրությունը կա:

✱ ✱ ✱

*Բանասաց՝* ***Բարսեղյան Լիլիթ,*** *ծնվ. 1981 թ.*
գ. Արփենի: Ձայնագրություն 150131- 2303

Ես ինչ որ պատմում եմ, լսել եմ իմ հայրիկի հորաքրոջից՝ Շողիկ հորքուրից: Ինքը իր մամայի պատմածն էր հիշում, որ առաջին անգամ թուրքերից փախել են, մայրը վերցրելա իրան՝ բարուրի մեջ ու քրոջը, որն ավելի մեծ է եղել: Բայց անձրևոտ եղանակա լինում ու չեն կարողանում հեռու գնալ, մայրը իրան թողելա թփերի մեջ, մտածելով որ չի կարա հեռու փախնի, մեծ աղջկա հետ գնացելա: Մի քիչ գնալուց հետո խիղճը չի թողել, հետ ա եկել, վերցրելա բարուրը ու շարունակել դեպի սարերը: Մի քանի օր հետո հետ են եկել: Հետագայում հորքուրը, որ շատ ծանր կյանք ա ունեցել, միշտ ասում էր երանի հետ չգար, ինձ չվերցներ:

Հետո չգիտեմ ինքն էր տեսել, թե ուրիշի պատմածն էր հիշում, պատմում էր, թե ոնց են իր մորն ու հարևանի կնոջը մերկացրած կապել դրսում նստարանին, փայտե կացիններով խփել են մեջքերին, մինչև զոլ-զոլ արյուն են բերել, պարտադրելով որ իրանց ոսկիների տեղն ասեն:

Պապայիս տատիկի հայրը գյուղի տերտերն է եղել, իրանք գրագետ ընտանիք են եղել: Գյուղի գերեզմանոցում իրա գերեզմա-

նաքարին թուրքերը կրակոցներով վնասել են: Մինչև հիմա էլ գյուղի եկեղեցու վրա մնացել են թուրքերի կրակածների հետքերը:

## ԲԱՅԱՆԴՈՒՐ

*Բանասաց՝ **Բաղդասարյան Ալետա,** ծնվ. 1946 թ.*

գ. Բայանդուր: Ձայնագրություն 151213-2303:

Իմ տատիկն ու պապիկը այս գյուղից են, տատիկս ծնվել է այստեղ, իսկ պապիկս եկել է Արևմտյան Հայաստանից՝ Տարոնի գավառի Արտոնց գյուղից: Պապիկս 1915 թ. ամուսնացած է եղել, կինը՝ հղի, ունեցել է մայր, քույր ու եղբայր, հայրը մահացած է եղել: Քույրը շատ գեղեցիկ աղջիկ է եղել, թուրքերը տարել են: Մորն ու եղբորը թուրքերը փակել են ուրիշ շատերի հետ մի մարագում ու ուզել են վառել, բայց մայրը հաղթանդամ կին է եղել, կարողացել է քարը շուռ տալ, անցք բացել ու երկուսով փախել են: Ճանապարհին հանդիպել են մի քրդի, որն իրենց պահել է մի 2-3 օր որ թուրքերը չգտնեն, հետո ճանապարհել են դեպի էս կողմերը: Եղբայրը հաստատվել է Լենինականում, որտեղ էլ ամուսնացել է:

Պապիկս՝ Պետրոս Աբրահամյանը գրագետ մարդ էր, եղել է Անդրանիկ զորավարի զինվորը, կռվել է թուրքերի դեմ, պատմում էր թե ինչպես էին ձիերի փորերի տակ մտնում, որ թուրքերն իրենց չտեսնեն: Հետո եկել գտել է իր մորն ու եղբորը, հաստատվել Բայանդուր գյուղում, այստեղ էլ ամուսնացել տատիկիս՝ Շարաբանի հետ: Իր հայրենի գյուղի մասին շատ էր պատմում, ասում էր որ շատ անասուն են ունեցել, գարու ու ցորենի հորեր: Դաժանաբար են վերաբերվել իր հղի կնոջ հետ՝ սվինով փորը բացել ու երեխային հանել են: Այդ մասին ինքը իմացել է հետո իր համագյուղացիներից:

Բայանդուրում թուրքերի ներխուժման մասին պատմում էր տատիկս, որը այդ ժամանակ աղջիկ է եղել: Նա հիշում էր, թե ինչպես են թուրքերը քշել ու հասել Լենինական, նստել են հիմիկվա Կումայրի արզելոցի տարածքում, վատ են վերաբերվել հատկապես աղջիկների նկատմամբ՝ փախցնելով, ժողովրդին սպանելով, սովամահ անելով: Ինքը ավելի շատ հիշում էր թե ինչ դժվարություններ են ունեցել ու ինչքան ծանր կյանքով են ապրել:

* * *

*Բանասաց՝ **Բաղդասարյան Սիմֆեր Հրաչի**, ծնվ. 1945 թ.*
գ. Բայանդուր, Ալետայի ամուսինը:

Բաղդասարենց ազգը ապրել է Պոլիսում, երեք եղբայր են եղել՝ Բաղդասարը, Մելքոնը և Գասպարը: Էս երեքից Մելքոնը տղա չի ունեցել, միայն աղջիկներ է ունեցել, իսկ մյուս եղբայրները մեծ ընտանիք են կազմել: Իրենք Պոլսում թուրք են սպանել ու փախել են Թիֆլիզ, այստեղ երկար տարիներ ապրել են, բայց նորից թուրք են սպանել ու փախել են Կումայրի: Այստեղ ապրած ժամանակ կեսը ձկնորս են եղել, կեսը ուսանող են եղել, նույնիսկ ջրաղաց են ունեցել Արփաչայի ափին՝ մեր Ախուրյան գետն է: Այս պատմությունները հորեղբորիցս եմ լսել: Գետի ափի ողջ տարածքը՝ Բայանդուրից մինչև Երազգավորս իրենցն է եղել ու տեղացիները դրանց ասել են Թիֆլիսցոնց չայիրներ [ծնթ.22], քանի որ իրենք Թիֆլիսից էին եկել այստեղ: Մինչև հիմա էլ էդ հողերից դեռ կա, մնում է: Իմ հայրն ունեցել է 6 եղբայր 3 քույր: Պապս՝ հորս հայրը շատ լավ նվագող է եղել, մինչև անգամ աշուղ Շերամի հետ է նվագել:

Հորեղբայրս պատմում էր, որ իրենք երեխա են եղել, երբ թուրքերն իրենց գյուղ են մտել: Հիշում էր, որ երբ թուրքերը գալիս էին հարկ հավաքելու, իրենց դուրս էին հանում, որ հարկ քիչ վերցնեն, քանի որ երեխաները շատ էին:

Բայանդուրում սպանություններ ու այլ ավիրածություններ չեն եղել, այդ մասին ոչինչ չեմ լսել:

## ԲԱՅԹԱՐ

*Բանասաց՝* ***Առաքելյան Գառնիկ Եգորի,*** *ծնվ. 1935 թ.*

գ. Բայթար: Ձայնագրություն 150101 - 2022

Էսի հունական գյուղ է եղե: Ծնողներս օր կգաղթեն Ղարսից, կփախնեն, կգան էս գյուղ. էս բլբլած, հողե տներով գյուղ է եղել, կպաշտպանվեն, էլի: Կերթան Կալինինոյի գյուղերը, ընդեղ կտեղավորվեն, մի տարի-երկուս, հետո կտեղափոխվեն կուգան ըստեղ: Կեսը կմնան ընդեղ, կեսը կուգան ըստեղ, կտեսնեն, օր հույները արդեն քաշվել են (մի մասը փախել են, մի մասը սպանվել): Կուգան ամեն մեկը մի տուն կզբաղեցնե, կապրեն մի քանի տարի, վերջը էս գյուղը կդառնա հայկական գյուղ: Սաղ եկած կլնեն Ղարսի Գյուլերան, Տիգոր գյուղերից: Կուգան ստեղ, մի վախտ կապրին, կսեն յավաշ է, թուրքը դադարել է, ելնինք էթանք մեր հող ու ջրի վրա: Հերս է պատմե, հիշում եմ լավ: Կսե գնացինք, որ մեր տները կողպեքներն էլ չէին կիսե, դրա համար ասում են, թե թուրքը դիվանագետ է: Դռները բացինք, տեսանք ոչ մի բանի ձեռ չեն տվել: Կսե մնացինք, սկսեցինք վարել, ցանել / գարունն են գնացե, գարնան գլուխ/, ցանեցինք, պրծանք, կսե ընպես էլ բերք եղավ էդ տարի:

Հարց - Ո՞ր թվերին են հետ գնացել:

Պատասխան- 16-17 թվերին:

-Այսինքն 15 թվին փախել են, 16-17-ին հետ վերադարձե՞լ: (Բանասացը շփոթում է, խոսքը վերաբերում է 1918թ.-ին, երբ առաջին անգամ փախել են ու 1919 թ. գարնանը վերադարձել – Կ.Բ.)

-Հա, տնվորել են, աշունը բերքը հավաքել, ամբարել, որ պիտի ապրեն: Մեկ էլ տեսանք ակրուժենու մեջ առան, դրա համար կսեն դիվանագետ են. ձեն չեն հանել, մինչև ժողովուրդը բերքը բերել, ամբարել է, պահեստավորել է: Կսե առան ակրուժենու մեջ: Ով սել ուներ՝ սելով, ով չուներ՝ ոտով փախան: Ղարսից Լենինական 60 կմ է հերս կսեր, ելանք քաղաքից, գյուղերից միասին, սարերով, ջրերով՝ երևի Արփաչայի ջրերը կլնեին: Չեն կռնա, գիշերով, կեսը խեղդվելով, բայց անցել, եկել են: (Այստեղ պատմելիս բանասացը հուզվում է, լալիս): Եկել են Նորաշատ, Նորաշատից Լենինական, ու էդպես պտտվելով եկանք, եկանք ու եկանք: Պահեցին, կսե, ընպես էլ կնայեին, ռսինք արդեն խախնդել է, էլ բան չեն էնե:

(Հարսը ասաց, որ դա 20 թվին է եղել):

Պատմեին զը մամս էլ, քեռիս էլ, օր թուրքի փաշի տղեն գուկա ըստեղ, ինչ որ հարսնիքից հետո հարսի հետ ինքը պիտի մնա գիշերը, ըտեղ կսպանեն փաշի տղին: Կանցնի որոշ ժամանակ, փաշեն մարդ կղրկե հետևից, 9 հոգով, կսեն փաշեն մարդ կկանչե աշխատանքի: Գյուղով կորոշեն. կեսը կսե էրթանք, կեսը՝ չերթանք, որ չերթանք ավելի վատ կեղնի: Ըդպես տարել են, գնացել են, հենց գյուղից դուս են եկե, մե կտորմ էն կոմ, կսե արդեն գյուղի մուխը ելավ: Կանանց, աղջիկներին, ծերերին սպանել են, իրանց էլ՝ ըստեղ Չարդի ձոր կսեն, ըղեղ են սպանել:

Ախր հլը պատկերացրա ջանիդ մեռնիմ, չիդեմ էդ ժամանակ ինչղ է էղե, 70 հոգի են էղե էս գյուղից, 9՛ հոգով, երևի պատրոն էլ չի եղե, կնիկ, երեխա սարերով կտանեն Բանդիվանի ձորը, կտան,

զարբով կուղան, կզարգեն, կջարդեն, երկու հոգի կմնան. դիակնե-րի տակը կընգնեն, կմնան:

- հարսը- Մեկը պապս է եղել՝ Իվանյան Իվան:

- Վերջը, բոլորը հույն են եղե. 70 հոգի, դրանց հրացանի մեջ երնի պատրոն էլ չի եղել. որ հուպ տային, խեղդեյին, կուդեյին ըդոնցը:

հարսը. – Էդ վախտ որ կրակել են, պապիս ոտքին է կպե, ընկել է դիակների տակ: Պապս կսեր, որ հետո 3 օր հերթապահեին զը, օր տեսնեն հո մարդ չի մնացե սաղ: Հետո պապս եկել է գյուղ, 3 հոգի են եղե, բայց չեմ հիշե, թե ով էին, եկել է գյուղ, տեսել, որ լրիվ գյուղը վառել են, հատկապես իրանց տունը: Փաշին խփողը իրա ախպերն է եղե: Կսե իրանք հարուստ են եղե, մի մեծ խալի են ունե-ցել պատից կախ, տակն էլ լիքը զենքեր. զենքը թողել են, տարել են իրանց առանձին-առանձին սպանել են: Ըդպես սաղ տունը վառել են, ինքը ախպոր տղա է ունեցել 7 տարեկան, որ պահվել է ու տե-սել էդ բոլորը: Բայց իրան գտել են, ասել են ձեր ոսկու տեղն ըսա, էս էրեխեն չի իմացել, ըսել է մենակ գիտեմ, որ (պապիս Ապեր են ըսել) Ապերը աղբրի գլխից բահը ձեռը եկավ: Գնացել, քանդել գտել են, ինչ որ բան տարել. էդ էրեխին չեն սպանել, ծեծել են լավ: Հետո ըդպես ապրել են: 3 հոգի են եղել, որ փրկվել են հունական հա-մայնքից: Կսե, որ եկել են գյուղը լրիվ դատարկ է եղել, դիակները գյուղով մեկ փռված: Մեր պապի /սկեսրայրի՝ Գառնիկի/ մաման կպատմեր, որ ինքը երբ եկել են 12 տարեկան աղջիկ է եղել, իրա մերը՝ Նուբար մամը կսե ես ըստեղ չեմ կրա մնա, չնայած կառավա-րությունն է իրանց ըդտեղ ուղարկել, թե դատարկ գյուղ է, գնացեք, մնացեք: Կսե լիքը՝ թնդիրների մեջ, հորերի մեջ ջանդկները լցրած... վռպշեմ ըդպես էլ ապրել են: Ղարսի գյուղերից եկածներ են եղել:

Գառնիկ.- Կսեմ հլը պատկերացրա, փախե եկել են էս մարդիկ, նորից ետ են գնացե, նորից փախե եկել են, տեղավորվել, իրանց համար ապրել են, Հաշտվանք: Աղրբեջանցիք, էս մեր Ամասիայի ռայոնից, գործկոմի նախագահն էր էն ժամանակ,եկավ ժողով էրավ ըստեղ, ըսավ. - այ մարդ, Ամասիայի գյուղերով 16 000 աղրբեջանցի դուրս էրեցին. բերնով կսեւ, որ դուրս չէնեին, կելնեին մեզի կուտեին 15 թվի նման: 3 հոգի էդոնցից, որ կռվել, ջարդել են, պատմել են հորս (էդ ժամանակ հիվանդանոցը պառկած է եղել, էդ պատմությունը հերս ուրիշից էլ է իմացե). ընդեղ օր ապրել են թուրքերի հետ, 5-6 հոգի պաշտոնյա մարդիկ կեղնին հայերը, Թալեաթ փաշեն կսե անցրեք էդ սահմանից էն կողմ, գետի բերան ոչնչացրեք: Կառնին կանցնեն մեր կողմը, օր պղի սպանեն, կըսեն այ մարդ մենք ըսոնց հետ ապրել ենք, հաց ենք կերե. կբռնեն օդի մեջ կկրակեն, իրանց բաց կթողեն կսեն անցեք, գնացեք: Ընդեղ էլ են եղել բարի մարդիկ:

Հարց. – Էս գյուղ քանի՞ ընտանիք է եկել տոհմերով:

-Առաքելյանները,Տոնոյանները, Ավետիսյանները, Շահբազյանները. ըստեղ եղել են միայն Իվանյաններն ու Գալոյանները /հույն/:

Հմի ես քեզ պատմեմ Անդրանիկի մասին, էդի հերս է պաղմե. էդ վերի սարը օր կա /ֆիշինկի սար [ծնթ.23] են ասում. մի կողմը Ամասիան է, մյուսը՝ Ղուկասյանը/, թուրքերն օր քաշվել են, Անդրանիկը մի քանի զորավարների հետ էդ սարով պաշտպանել են ժողովրդին: Անդրանիկը կռվե, չի թողել ջարդեն ժողովուրդը: Իրեն պատրոնը կպարպի, մի կերպ թե ձիով է, թե ոտով է, մի կերպ կհաղորդի, թե ժողովրդին եմ պաշտպանում, էսինք սարում եմ, պատրոն ուղարկեք: Ձիով թե էշով մակարոնի տուփեր են ուղարկել, կսե բացի օր ինչ՝ սուխարի, պատրոն չէ: Դրա համար Անդրանիկը միանգամից հիասթափվավ ու գնաց Ֆրանսիա: Եթե Անդրանիկի

նման ունենայինք մի 100 հոգի, վայթե Թուրքիան չկրնանար մի հոգի էլ սպաներ: Հայրիկս կպատմեր, կսեր երբ ասեիր Անդրանիկ գյալդի [ծնթ.24], թուրքերը կփախնեին: Ստեղից էլ օր կերթա, կիմանա օր Ստեփանավանի կողմերը, Կալինինոյի ձորի մեջ թուրքերը փաշի հետ որոշել են էդ գիշերը գյուղերը մտնեն: Անդրանիկը մեր կողմերը լավ կիմանա, Ղարախաչով [ծնթ.25] կերթա մյուս ձորը, կմնա էդեղ /ինքը թուրքերեն լավ է իմացել/ ինքը, Սերոբ փաշեն /իմա.՝ Սմբատը/, Շուտո Գևորը, 5-6 հոգի կեղնին, մութը կընգնի, ակռուժենու մեջ կառնի ըդոնց, սաղ քնած, ու հիստակ կջարդե:

Իվան ապերը, ըստու պապը կպատմեր. մեր, հարս, աղջիկ լցրել են էդ ժամը, թուրքերը դռները փակել են, սալոմ ու խոտ, պաժառ են տվել, ժողովրդին խեղդել են:

## ԲԱՆԴԻՎԱՆ

*Բանասաց՝* ***Սուքիասյան Հովհաննես***, *ծնվ. 1936 թ.*

գ. Բանդիվան, ձայնագրություն 150101-1934 և 1942

20 թվին եկել են, պապս մահացած է եղել: Պապիս հանձնում են հողին ու թուրքը ներս է լցվում:

Հարց - բա տատդ առանց ամուսնու ոնց է երեխեքին պահել, բան չի պատմել:

Պատասխան - Տատս ստեղ չի եղել: Հերս ուրիշ կին է ունեցել, որին թուրքերը սպանել են, նա Ցողամարգցի է եղել ու երեխա չի ունեցել: Հերս գնացել Թորոսգյուղից ուրիշ կին է բերել, որից հետո նոր մեր երեխեքը ծնվել են, 24 թվից նոր ծնվել են 6 երեխա՝ 4 քույր, 2 ախպեր: Թորոսգյուղի կնոջ մարդուն էլ են թուրքերը սպանած եղել:

Հարց - Իսկ Աղբաբու թուրքից ինչ գիտեք, ասում են դրանք թուրքերի հետ են եղել:

- Աղբաբու [ծնթ26.] թուրքից գիտեմ, որ դրանցից մարդ կար որ պահել է հայերին, չի թողել որ թուրքերը սպանեն: 60-ական թվերին էդ գյուղերից մեր մոդը հովիվ կար, էդի կպատմեր. էդ մարդն էլ էր կենդանի, ում որ պահել էր: Պահել է քանիմ օր, մինչև թուրքերը քաշվել են, հետո թողել են հետ գա:

Հարց - փաստորեն իրար հետ լավ են եղել, կոնֆլիկտ չի եղել:

- Չէ, լավ են եղել, էն կողմից եկողը խուժան ասկյար է, իսկ սրանք փրկել են մարդկանց:

18 թվին Բայթար են մտել, ըտեղ հույներ են ապրել, տարել են մի 30-40 հոգի թոփ են էրել [ծնթ.27], մեր մոտ գերեզմանի տեղը կա, սպանել են, լցրել ըտեղ:

- Փաստորեն Բայթարից բերել են Բանդիվանի սինորը, նոր սպանել:

- Հա, բոլորին գնդակահարել են, 2 հոգի սաղ են մնացել. մնացել են դիակների տակը: Թուրքերը օր գնացել են, իրանք դուրս են եկել: Մինչև էս քանի տարի էդ մարդիկ կային:

## ԲԱՇԳՅՈՒՂ

*Բանասաց՝* ***Մովսիսյան Վոլոդյա,***

գ. Բաշգյուղ, Բաշգյուղի գյուղապետ: Ձայնագրություն 151026 – 2312-01

Թուրքերը երկու անգամ են եկել մեր տարածաշրջան, առաջին անգամ 1918 թ. երբ եկել են, ոչ մեկին ձեռք չեն տվել այն պատճառով, որ մեր գյուղում մի մարդ կար Կնո անունով՝ Կնյազ Հովհաննիսյան, որը ծառայել էր ռուսական բանակում ու տիրապետել էր զենքին, դուրս է եկել թուրքերի դեմ, կրակել է, սրանք էլ թողել գնա-

ցել են: Երկրորդ անգամ թուրքերը եկել են նույն ճանապարհով, հավաքել են Ձորի գյուղերից [ծնթ.28] մարդկանց, որոնց մի մասը փախել է, մյուսներին բերել են մեր նախկին դպրոցի մոտ մի մարագ է եղել, էդ հինգ գյուղի գերիներին լցրել են ու այրել են: Թվաքանակով չեմ կարա ասե, թե քանի հոգի են եղել, բայց բոլորին հավաքել են ու էդ մարագում այրել:Էդ մարագը հիմա կանգուն չէ, բայց հիմքերը կան: Մեր գյուղում թուրքերը չեն նստել, նստել են Ալիխան [ծնթ.29] գյուղը, որի անունը մնացել է թուրքի Ալիխան փաշայի անունից: 1970-ական թթ.-երից այդ գյուղը անմարդաբնակ է:

Հարց- իսկ ո՞ր գյուղերից, չէիք ասի

Պատասխան.- Ձորաշեն, Կաքավասար, Սարապատ, Փոքր Սարիար

## ԲԱՍԵՆ

*Բանասաց՝* ***Շալիկո Մկրտչյան***, *ծնվ. 1936 թ.*

Բասեն, Բանասացը վատ էր լսում ու դժվար խոսում:

Ձայնագրություն 151024 – 2328

Պատմեց, որ իր հոր երկու հորեղբոր տղաներին, որոնք ծառայել էին ցարական բանակում, թուրքերը բռնել են, տարել են Սարիղամիշ ու սպանել:

Հիշեց, որ թուրքերի հետ եղել է Գեղամ փաշա անունով մեկը, որը հայկական ծագում ուներ: Նրան փոքր ժամանակ թուրքերը տարել են իրանց հետ, կրթության են տվել ու իրենց մոտ ծառայության վերցրել: Թուրքական արշավանքների ժամանակ նա շատ է օգնել հայերին, բայց թուրքերի գնալուց հետո բոլշևիկները նրան սպանեցին:

* * *

*Բանասաց՝* ***Մնացյան Միեր****, ծնվ. 1967 թ.*
Բասեն: Ձայնագրություն 151024- 2352

Իմ պապը՝ Գալստյան Երեմը 1904 թ. է ծնված եղել ու թուրքերի ներխուժումների մասին միշտ պատմում էր: 1918 թ. թուրքերը եկել հետո հետ են քաշվել, իսկ 1920 թ. երբ եկել են, մեծերի պատմելով մինչև Կառնուտ աղուհացով են դիմավորել, երբ մեր գյուղ են եկել, մենք Թոփ քար կոչվող տեղամաս ունինք, գյուղացիները հավաքվել են, եղաններով, փոցխերով թուրքերին չեն թողել գյուղ մտնի, թուրքի փաշա են սպանել, դրա համար մեր գյուղի ժողովրդին հավաքել են, լցրել Բոզոենց մարագը ու վառել են:

Երբ թուրքերը եկել են, պապս եղել է 14 տարեկան, միշտ պատմեր գը, ով ինչ կարողացել, վերցրել է, գյուղի վերևը Խանվալի կոչվող յայլա տեղամաս կա, գնացել են յայլա [ծնթ.30]: Պապս ու իրա եղբոր, թե հորեղբոր տղեն մեր սարերում են եղել, տեսել են, որ թուրքերը եկան, իրանք էլ գյուղ չեն իջել: Սպասել են, եկել է իրիկուն, սաղ փախել են, պապիս հերը՝ Մնաց է եղել անունը, ասել է Երեմս չեկավ, վայթե երեխուս թուրքերը սպանել են: Պապս իր հորեղբոր տղի հետ գիշերով չի փախել, եկել են տուն, գոմը բացել են, կովը արձակել է, եզը լծել է, տանից էլ ինչ գտել է՝ վերմակ, դոշակ, լցրել է ու քշել է դեպի Ջրառատ, այն կողմը, ուր փախել էր ժողովուրդը: Գնացել է այնքան ժամանակ, մինչև հասել է ընտանիքին: Մնաց պապը ասել է.- որ Երեմս կենդանի գա, մատաղ եմ անելու: Երեմ պապիս հասնելու պես նրան աչքալուսանք են տվել, թե Երեմդ սաղ սալամաթ [ծնթ.31] եկել է, նա էլ եզ է մորթել, մատաղ արել, կերել են ու մնացել են այդտեղ այնքան, մինչև թուրքը

եա է քաշվել: Երբ հետ են վերադարձել, ով հորերի մեջ պահած ցորեն ու գարի է ունեցել հանել են, մի կերպ յոլա են գնացել:

Այս պատմությունների մասին գրքի մեջ էլ է գրված. Մուսաեյան գյուղի պատմությունը գրքում: Գրքի հեղինակը Սաբախերենց Մարտինն է, որ գյուղի մեծերից լսածների հիման վրա է գրել գիրքը:

1920 թ. որ եկել են թուրքերը ու գյուղացիները դիմադրել են, թուրքի փաշային էլ սպանել են, դրա համար գյուղի ժողովրդին հավաքել են, կողքի Հովիտից են հավաքել ու մի հոգի էլ Մարմաշենից է եղել, որ եկել է իր բարեկամի տունը, բոլորին մարագում վառել են: Էդ ժամանակ ժողովուրդը միամիտ է եղել, 3-4 հոգով հավաքել են, թվանքներով քշել, լցրել են մարագը, էնտեղ, որտեղ հիմա քարը դրված է: Հետագայում երբ այդտեղ քանդել են, ոսկորներ են դուրս եկել:

Երբ հայրենական պատերազմի հուշարձանը սարքեցին, որից հետո մենք գյուղում Ռաշիդ Առաքելյան քանդակագործ ունեինք, ինքը Ջարդի ձորի հուշարձանն էլ է սարքել, շատ լավ արվեստագետ էր, երբ սկսեցին հուշարձանը սարքել, տարածքը մաքրեցին, այդ ժամանակ մարդկանց ոսկորներ, գանգեր դուրս եկան ու էդ պատմությունը բացվեց:Դա էլ առիթ դարձավ, որ հուշաքարը դրվի:

## ԲԱՎՐԱ

Բանասաց՝ ***Ալավիկ Սումբուլյան***, ծնվ. 1958 թ.

գ. Բավրա: Ձայնագրություն 150102-1929

Եկել հասել է 18 թիվը, թուրքերը մտել են: Թուրքերը ո՞նց են մտել. իրանք տեղյակ չեն եղել, որ Ամասիայի թուրքերը կան. եկել

հարձակվել են, թալան են արել՝ ոչխար, մալ, անասուն: Դե իրանք էլ պաշտպանվել են, դիմադրել են:

Հարց – էստեղ եղե՞լ է դիմադրություն, ովքե՞ր են եղել, կա՞ն մարդկանց անուններ:

Պատասխան.- Գյուղում զենք չեն ունեցել, ունեցողն էլ թաքցրել է. պատի մեջ դրել շարել են:

- Ինչի՞ համար են թաքցրել, համ ունեցել են, համ թաքցրե՞լ են:

- Չէ՞ որ էն թվերին զենքը հավաքել, նոր են կոտորել հայերին, ճի՞շտ է: Չեն իմացել, որ Ամասիայի թուրքեր են եղել:

– Դրանք Ամասիայի՞ թուրքերն են եղել:

-Հա Ամասիայինը: Բավրային պաշտպանել է Տրոիցկոյե գյուղի ժողովուրդը: Մեր գյուղի ժողովուրդը փախել է իրանց մոտ, մնացել է այնքան, մինչև թուրքերը, որ մտել են գյուղ ու տեսել են մարդ չկա, գնացել են: Թուրքերը թալանել են գյուղը՝ դուռ, լուսամուտ են քանդել, տարել:

-Փաստորեն ամբողջ գյուղով տեղափոխվել են:

-Հա, մեր գյուղի տղերք են եղել, որ լուրեր են տարել-բերել: Իրանք իմացել են, որ թուրքը պիտի գա Բավրա մտնի: Իրանք զգուշացրել են ու գանցել են:

-Էդ 18 թվին, իսկ 20-ի՞ն:

-Նույն պատմությունն է:

-Այսինքն գյուղից մարդկային զոհեր չեն եղել, միայն ալան-թալան:

-Էղել է. մի հոգու սպանել են կնոջ հետ, որ երեխա չեն ունե-ցել: Նրան են սպանել, ով չի հավատացել, որ թուրքը պիտի մտնի գյուղ: Էդ մարդը չի հավատացել ու մնացել է գյուղում, իրեն էլ կնոջ հետ սպանել են:

## Գ Ե Ղ Ա Ն Ի Ս Տ

Բանասաց՝ ***Մարգուշ Խաչիկի Սարգսյան***, ծնվ. 1948 թ.
գ. Գեղանիստ Ձայնագրություն 151025 – 2230

Մորս պատմածն եմ հիշում, 20 թվի մասին, ինքը 1905 թվի ծնված էր, ըսեց մեզի տարան, լցրին Չրախլվա դաշտը [ծնթ.32], մե-րը մանուկն ուրացել էր, խո չէին լա, խո չէին ողբա, որ մեզ պտի կտրեն, մեկել հրաման էկավ, թե թուրքի փաշեն հրամայել է թե չկտրեք, ու մեզի թողեցին: Ես էսօրվա պես հիշում եմ, որ մերս պատմում էր: Նույնը, ինչ որ ես պատմեցի, ես ռադիոյով լսեցի մի մարդուց, որը Գեղանիստից էր, ու նույն պատմությունը պատմեց:

Պապս էլ՝ մորս հերը էդ ժամանակ 40 տարեկան է էղել, Հով-հաննիսյան Սարո է էղե անունը, ինքը պատաշար, հաղթանդամ մարդ է եղե, ինքը ընտանիքը տարել է Արնշատ, ինքը մնացել է տունը, որ սնունդ տանի ժողովրդին: Տեսել է, որ թուրքերը գալիս են, իրանք քիլար [ծնթ.33] են ունեցե, մտել է մեջը, վռազ պատ է շարե, մնացել է մեջը, որ թուրքերը չգտնեն, բայց թուրքերն օր էկել են, ինչդ են ջոկել, օր պատը թաց է, թազա է շարվե, ուրեմն ըստեղ մարդ կեղնի: Պատը քանդել են, պապիս սպանել, հարազատները իրան տարել Արնշատ են թաղե, որովհետև թուրքը էս կողմն է էղե, տեղում չեն կրցե:

## Գ Ե Տ Ք

*Բանասաց՝* ***Թորոսյան Անդրանիկ,*** *ծնվ. 1960 թ.*
գ. Գետք Ձայնագրություն 151231-0433

1918 թ. մեր գյուղը մեծ գյուղ է եղել ու դիմադրություն է ցույց տվել թուրքերին, շատերը ֆիդայիններ են եղել, մի մասը մտել են

Անդրանիկի զորքի մեջ ու կռվել են: Հորս հորեղբայրը՝ Մկրտիչ Թորոսյանը նույնպես կռվել է: Գյուղի 20-21-23 տարեկան երիտասարդներ գնացել են կռվի ու չեն վերադարձել: Երբ թուրքը մտել է գյուղ, գյուղի տղամարդկանցից ով կռվել, դիմադրել է, մյուս մասը փախել են դեպի Ազատան, որ միավորվեն տեղի բնակիչների հետ ու դիմադրություն ցույց տան: Էդ ժամանակ Ազատանում՝ Ղարաքիլիսայում ջոկատներ են կազմավորվել ու կռվել են թուրքի դեմ: Մինչև 23 թ. թուրքերը մեր գյուղ մտել են, թալանել են, անասուններին լրիվ քշել տարել են: Երիտասարդները հսկել են, որ թուրքերը վնաս չտան մարդկանց, դիմադրել են: Մարդկանց շատ չեն վնասել, երիտասարդ կին ու աղջիկ են փախցրել, տղամարդկանց գերի են տարել: Մեր գյուղից կնոջս հարազատներից մեկին՝ երիտասարդ կնոջ, դաշտից են բռնել ու տարել: Իմ հորս հորոխպորը իր փեսայի հետ Ալեքսանդրապոլի շուկայում են բռնել ու գերի տարել, որոնք հետ չեն վերադարձել:

Էս բոլորը ես լսել եմ մեր մեծերից, իմ հոր ազգականներից Արիստակեսյան Վազգենից, որը ապրում էր Նորագավիթում, շատ պատմություններ գիտեր ու սիրում էր պատմել: Իրա պատմելով մեր գյուղացիները Սարդարապատի կռվին էլ են մասնակցել:

Մորս տատը Ղալթախչիից [ծնթ.34] է եղել, իմ երկու տատերս էլ Ղարսից են, թուրքերից փախել են. մորական պապս եղել է 10 տարեկան, քրոջ հետ ձեռք-ձեռքից բռնած մոր հետ փախել են, թուրքը հասել է, մայրը հասկացրել է իրենց որ փախնեն, հետո պապս տեսել է, որ թուրքը իր մորը սվինահարել է: Պապս քրոջ հետ փախել է Պարնի գյուղ, պատսպարվել են, հետո գնացել են Ղալթախչի, էդտեղ հոր է եղել մեջը 50 հոգի սպանված: Երբ ես 22 տարեկան էի, գնացի գյուղ, ուզում էի բացել էդ հորը, բայց գյուղա-

ցիները չթողեցին, ասացին որ էդ գերեզման է դարձել, պետք չէ ձեռք տալ:

Մյուս, հորական տատս 7 եղբոր քույր է եղել, թուրքերը երբ սկսել են ժողովրդին սպանել, իրանց հարևան թուրքը, անունը Ալադին, իրանց ընտանիքի կանանց ու երեխեքին սայլի վրա է վերցրել, ծղոտով ու խոտով ծածկել, բերել հասցրել է մեր գյուղ, էդ լավությունն արել է: Տատս ասում էր, որ իրանք Բայրամ փաշա թաղամասում են ապրել, իրանց հարևանը Չարենցն է եղել, նույնիսկ հիշում էր որ նա շատ աշխույժ տղա է եղել: Ինձ միշտ ասում էր ես կմեռնեմ, դու երբ գնաս Ղարս, տունս կգտնիս, եկեղեցու մոտ է, ոսկիներս պահել եմ ընդեղ, թոնրի տակը, հարսների ու իրա ոսկիները պահել են, վրեն ցախը վառել են, որ չտեսնեն: Հորական պապս էդ ժամանակ Ամերիկայում է եղել, 1909 թ-ից մինչև 1918 թ., երբ սկսվել է թուրքերի արշավանքը: Գյուղից շատերն են Ամերիկա գնացել աշխատելու: Ինքը այնտեղ եղած ժամանակ՝ 1914 թ. գյուղում խոլերա է տարածված եղել, իր կինն ու երեխան մահացել են: 18 թվին երբ եկել է, հետո հանդիպել է տատիս, որի ամուսինն էլ զոհված է եղել ու ամուսնացել են, նոր ընտանիք կազմել:

## ԳՅՈՒՄՐԻ

*Բանասաց՝ **Էլբակյան Սուսաննա**, ծնվ. 1954 թ.*

գ. Մարմաշեն: Ձայնագրություն 150108-0036

1918-20 թթ. թուրքական արշավանքների ու հայ-թուրքական պատերազմի մասին պատմում էր իմ մայրը, որը ապրեց 98 տարի ու միշտ հպարտանում էր իր Ղարսեցի ծագումով: Սկզբում մամաս ապրել է Ղարսի Ղզլչախչախ գյուղում, ունեցել է 7 քեռի և 4 հորեղբայր: Մեծ քեռին՝ Հակոբը/Հակոն եղել է Ղարսի շրջանի 32

գյուղերի ղեկավար-կառավարիչ, մամաս ասում էր գլավնի Ակոն, որի մասին պատմությունն առանձին է:

Մամաս ավելի շատ գաղթի մասին էր հիշում ու պատմում, պատմել է իրենց կենցաղի մասին, տան կառուցվածքի, կահավորանքի մասին, որ խսիրներ են գցել, նոր վրան կարպետներ փռել, իսկ երբ հյուրեր են ունեցել կարպետի փոխարեն գորգեր են գցել հյուրերի տակ: Մամաս պատմում էր թե ոնց են սպանել իր քեռուն՝ գլուխը կտրել, ցցի վրա են դրել. ասում էր որ դուրս եկանք տանից, տեսա քեռու գլուխը ճոճվում էր ցցի վրա ու էդ պատկերը մնաց իմ հիշողության մեջ, ես ասում էի ինքը սաղ էր, ինքը գլխով արեց մեզ: Քեռին շատ հայտնի մարդ է եղել, Արգինայի ձորում կռվել է թուրքերի դեմ, մինչև վերջին փամփուշտը կրակել է, վերջինով էլ իրեն է կրակել, որ թուրքերի ձեռքը չընկնի: Թուրքերը նրա գլուխը կտրել, տարել են փաշին, սա էլ ուղարկել է հարազատներին:

Մամաս փախեփախի մասին էր պատմում, նույնիսկ հիշում էր պապիս պատմածները: Տատս եղել է հարուստ ընտանիքի աղջիկ, թանթանա է ունեցել 32 ոսկով, քանի որ 32 գյուղ են ղեկավարել իր քեռիները: Փախեփախին տատս որ կռացել է ջուր խմելու, էդ թանթանեն ընկել է ջրի մեջ, ճամփին նոր տեսել են որ չկա: Հասել են Գյումրի, գաղթականներից իրենց բակում գիշերելու համար ուզել են մի եզ մի գիշերվա համար: Գյումրին որ էդպես է ընդունել իրանց, իրանք որոշել են գնան Վրաստան, բայց հասել են Դիլիջան ու չգիտեմ ինչի չեն ուզեցել մնան: Էդ ժամանակ թուրքերը գնացած են եղել ու իրանք նորից հետ են եկել՝ 2 հորեղբայրը մնացել են Դիլիջան, 3-ը՝ եկել են Գյումրի, հաստատվել են Մայիսյան գյուղում:

18 թվից հետո մամայենքս նորից են գնացել Ղարս, ճանապարհին հիշել են թե որտեղ կարող է լինել թանթանան, փնտրել ու գտել են, բայց էլի չեն վայելել: Երբ երկրորդ անգամ փախել են, էլ

ոսկեղենը հետները չեն վերցրել՝ մտածելով որ նորից հետ կվերադառնան. պապս բոլորին ասում էր գնացեք մեր տունը, սան գլխի սալը հանեք, ոսկին ըդտեղ է: Մամայիս հորոխպոր թոռը գնացել էր, տունը գտել էր, բայց բոլոր սալերը քանդած-հանած են եղել: Տանից մի բուռ հող էր բերել մամայիս, ինքը շորով փաթաթած միշտ իր մոտն էր պահում ու հուզվում էր ամեն անգամ: Ինքը ջարդը չի տեսել, գաղթն է տեսել, քանի որ ինքը ուննոր տանից է եղել, շատ ծանր հիշողություններ ուներ որպես գաղթական իրենց նկատմամբ վերաբերմունքից, քանի որ տեղի բնակչությունը նրանց երկրորդ սորտի մարդ էին համարում:

Հիշում եմ տատիս քրոջ՝ Փեփրոնի պատմածը, որը ապրում էր Գյումրիում ու շատ հարգված կին էր: Տատս որ մահացել է, ինքը երեխա չի ունեցել ու տարել է քրոջ երեխաներին որ պահի: 20 թվին որ թուրքը մտել է Գյումրի, պապս եղել է գնացքի մեքենավար, 3 երեխա է ունեցել՝ պապաս, հորեղբայրս ու հորաքույրս. պապաս եղել է 10 տարեկան, եղբայրը՝ 8, իսկ քույրիկը՝ 6 տարեկան, որոնց պահել է Փեփրոն տատը: Թուրքերը երբ մտել են քաղաք, բնակիչները աղ ու հացով դիմավորել են, թուրքերը հայտարարել են, որ պատերազմ չկա, բոլորը կարող են դուրս գալ աշխատելու: Պապս անվախ է եղել, դուրս է եկել գնա աշխատանքի, բայց բոլորին, ովքեր դուրս էին եկել, թուրքերը հավաքել են, մի մասին հենց քաղաքում սպանել են: Պապս պատմում էր որ Պալիգոնների [ծնթ.35] հատվածը ամբողջությամբ լցված է եղել սպանվածներով՝ տղամարդկանց ու տղա երեխաների: Մնացածին, ում որ հավաքել են, տարել են քաղաքից դուրս որ էդտեղ սպանեն: Տատիս քույրիկն էլ վերցրել է ինչքան ոսկի ունեն լցրել է ծոցը, տեքերկա հետ գնացել են գերիների հետևից, որ փաշին գտնեն ոսկիները տան, Արշակին /պապիս/ ազատեն: Ասում էր մենք վերևից գնում էինք, իրանք տա-

կով էին անցնում, հասան Ջաջուռի ձորը ու գյուղի ձեներն եկան: Վախից փախանք, հետո իմացանք որ բոլորին էդ ձորում սպանել են, վերնից էլ քարեր են քցում, որ դիակները ծածկեն: Իմ եղբայր- ները ամեն տարի էդտեղ պատարագ են անում, էն հավատով, որ պապս էլ է էդտեղ զոհվել:

Մամաս ավելի սարսափելի բաներ էր պատմում, թե ոնց են ժողովրդին մարազները լցրել, վառել:

Հարց.- որտե՞ղ:

-Արևմտյան Հայաստանում: Էստեղ իրա հիշելով նման բան եղել է Չրախլիում:

Տատս պատմում էր, որ թուրքերը ընկնում էին տնետուն սի- րուն հարս ու աղջիկ էին ման գալիս, մեկը մյուսին էլ խաբար էր տալիս թե որտեղ կան նրանք: Ասում էր մենք ղալախը շարել էինք աթարով, հեչ տեղ բաց չէինք թողել, իրա տեքերկնոջը՝ Հերիքին պառկացրել են կովերի մսուրքը, աթարի ղալախը շարել են վրեն: Տատս աթարներից մեկը հանել է Հերիքին հաց ու ջուր է տվել, տղերքն էլ կողքերը:Երեխեքը կեղտոտ, մրոտ, ինքը քռչոտ շորերով, մրոտ դեմքով, սև գլխաշորը գլխին, որ մենակ աչքերն էր երևում, որ թուրքերը չիմանան ով է: Ինքը խեձախ է էրել, տվել է երեխեքին, երբ իմացել են որ թուրք փաշան ընկել է տնետուն, տղերքին լցրել են թոնիրները, բերանը փակել են, վրան նստացրել են երեխեքին, խեձախ են տվել, որ ուտեն, որ փաշեն գլխի չընկնի էդտեղ մարդ կա: Պատմում էր, որ թուրքերը մզրխի կոթով աթարներն ու դեզերը ստուգում էին, թե տակը մարդ չկա՞ պահված:

Հարց.- Իսկ պաշտպանվելու, կռվելու մասին բան չէ՞ր պատմում:

-Մամաս պատմում էր իրա Ակո հորոխպոր մասին, ասում էր որ նա ունեցել է ջոկատ, ուրիշներ էլ են եղել, որ ջոկատ են

ունեցել, թվանքները պատերից կախ են եղել, ասում էր 7 ախպերով /որոնցից 4-ն են եկել հասել էստեղ, 3-ը զոհվել են/ կռվել են թուրքերի դեմ:

Մամաս հետո պատմում էր, որ 14 թե 15 թվականին շատ ցուրտ ձմեռ է եղել, ճամփեքը փակվել են, ռուսական զորքը մնացել է Ղարս, յուրաքանչյուր տուն պարտավորվել է զորքի էնքան մասին կերակրելու: Մամաս պատմում էր, որ իրա չգիտեմ որ հորոխպոր կինը շատ լավ կրակել է, ինքը շատ սիրուն է եղել, դրա համար միշտ թվանքն ուսն է դուս ելել, որ ինքն իրան պաշտպանի, բայց մի անգամ թվանքն իջեցրել է որ մաքրի, սխալմամբ կրակել է, իրան սպանել: Մամաս ասում էր ինքը ներկա է եղել էդ պահին ու երբ ոստիկան է եկել, իր խոսքով հորեղբորն ազատել են:

Հիմա շատ բան երևի մոռացել եմ, որովհետև մամաս ժամերով պատմում ու պատմում էր:

* * *

Բանասաց՝ **Ղարիբյան Գրափիոն (Նինա) Բաբկենի**, ծնվ. 1939 թ. ք. Գյումրի/Լենինական: Պատմում է իր հորից լսածը, որը ծնվ. 1907թ.: Ձայնագրություն 151023-1735

1915 թ.-ին պապաս եղել է 8 տարեկան ու իրա մոր հետ գնացել է Թուրքիա՝ առևտրով են զբաղվել, առևտուր են արել, եկել են: Էդ վախտվանից ինքը տուն է պահե: Ընտանիքում իրեք ախպեր են էղե, մեկը գնացել է զինվորական, կորել է, չկա, թե որ վախտն է գնացե չեմ կրնա ըսե:Ինքը մոր հետ պահել է ընտանիքը՝ իրեք քուր /Արմենուհին, Տիգրանուհին, Գրապիոնը/ և ախպերը՝ Գուրգեն: Ամբողջ ընտանիքի հոգսը էղել է իրան վրա. մերն էլ օր չի գնացե,

ինքն է զբաղվել հաց փախցնելով, ճարելով, էրթալ էս կոմ-էն կոմ էնելով բերե, ընտանիքը պայել է: Ինքը շատ ժիր, ճարպիկ էրեխա է էղե, իրան ճարպկությամբ թուրքերի ֆուրղոնների վրայից աղ, տարբեր բաներ է փախցրե, բերել է տուն: Թուրքերը որ եկել են քաղաք, մի անգամ էլի որ ֆուրղունից հաց է փախցրե, թուրքերը ընգել են հետևից: Ինքը երեխա տղա, վախից փախել է ու ճամփին ընկել հորը թե փոսը չիդեմ, տակը լիքը մահացած ջանդակներ են եղել. լեղապատառ է էղե, վախեցել է, բայց թե ինչ էնե, ձեն չի հանե, որ իրան չտեսնին: Թուրքերն եկել են, անցել են քովից, խոսացել են, նստել են դաժե էդ քարին, իրար հետ խոսել են, թե ուր անհետացավ, /ինքը թուրքերեն գիդեցել է, հասկցել է/: Դողայի զը կսե, մինչև անցան կողքիցս, գնացին, նոր ելա, հացերը ղոլթուղս [ծնթ.36] զարգի տուն հասա:

Շատ բան է պատմե հերս, էնքան է պատմե, բայց չեմ կրնա հիշե:

Իրան մերը զոմի մեջը ինչքան մարդ է պահե: Իրանք ապրել են վայեննի հոսպիտալի քովը, Ինտերնացիոնալի [ծնթ.37] վրա. էդ ֆուրղունները, դավեքը, իրանց տան դեմով են անցե, փողոցը ըդտեղ է եղե, ու ինքը ասկյարներից էդ մարդկանց իրա տունն է պահե՝ զոմի մեջը: Կսե կնիկմարդու շոր կհագցներ, օր տենան զոմի մեջը, ըսեր զոմի աշխատողներն են:

Կսեր ֆուրղունները կբերեին կքաշեին դեմի հայաթը, մեծ հայաթ էր, թուրքերը ապրանքը ֆուրղուններով կբերեին ըտեղ, ինքն էլ կգողնար:

Իրանք պիտի ըլնեին, որ պատմեին, ես շատ բան չեմ հիշե: Մերս էլ կպատմեր, հենց էդ թվերին (մերս 1911 թ. ծնված է, էդ ժամանակ էրեխա աղջիկ է էղե) 20 թվին, կսեր ֆուրղուններով դիակները, ինչղոր փեղը, փեղցած, կրեին, լցնեին ու տանեին զը, կսեր

մենք էլ կսեինք.- էլի մեռել բերին, ու կվազեինք հեղններից: Էդ թուրքերի գնալուց հեդո է էղե, կսե մերոնք էին կրե ու տարե թաղելու: Մերս կսեր գաղթականները հիվանդ-հիվանդ, հաց կսեին ու կմեռնեին, ատամները կսևնար, կսե, ով որ եռլազան էր՝ տեղացի էր, էլի ապրուստ ունեին: Մորս մերը թանթանա է ունեցե, սաղ ոսկի, կսեր մերս օսկին կուդար, թասով ալուր կառնիր հարստներից, խուս կէներ, օր ուդեինք, չմեռնեինք: Մամաենքս 37 փողոցի վրա կապրեին, մանկատան մոտ, գերեզմնների ճամփին:

* * *

Բանասաց՝ ***Ժաննա Մելքոնյան***, ծնվ. 1948 թ.
ք. Լենինական: Պատմում է հորից՝ **Վլադիմիր Մելքոնյանից** լսածը պապիկի՝ Գասպարի (ծնվ. 1895 թ. Ալեքսանդրապոլի գավառի Ավդիբեկ [ծնթ.38] գյուղում, մահ. 1966 թ.) մասին:

Կապված ռուսական հեղափոխության հետ՝ ցարական բանակը սկսել է քայքայվել, և 1918 թվականի հունվարին ռուսական զորքերը, լքելով ռազմաճակատն ու գրաված հողերը թողնելով թուրքերին, հետ են վերադարձել: Բնական է՝ զինվոր պապիկս էլ նրանց հետ վերադարձել է տուն: Գյուղում նրանց ընտանիքից ոչ ոք չէր մնացել: Մայրը՝ Նոյեմն անսպասելի մահացել էր: Ասում են՝ սովից: Հիշում եմ՝ Վալյա հորաքույրս (պապիկիս եղբայր Հովհաննեսի դուստրը), ով շատ փխրուն սիրտ ուներ, ամեն անգամ ճոխ սեղան գցելիս, թեև իր պապիկին ու տատիկին երբեք չէր տեսել ու չէր էլ ճանաչում, զսպված արցունքներից խեղդվող ձայնով նույն բանն էր ասում՝ «Քոռանամ, պապիկս ու տատիկս (այսինքն՝ Իլյան

ու Նոյեմը) լինեին, մի կուշտ փորով ուտեին, ես տեսնեի՝ հանգստանայի»:

Եղբորը՝ Հովհաննեսին նույնպես տարել էին դաշնակցականները: Քույրերը զրկվել են վերջին՝ եղբայրների թեկուզ և շատ փխրուն պաշտպանությունից: Ճիշտ է՝ որբուկներին օգնել են երկու՝ Ավո ու Բագրատ մորեղբայրները, բայց, դե՛հ, սովի տարիներին նրանց բազմանդամ ընտանիքներում հացի ավելորդ պատառներ չեն եղել: Ավագ քույրերից՝ Արուս և Աննման հորաքույրերից եմ իմացել: Ամեն առավոտ խեղճ երեխաներն անլվա, ցնցոտիները հագերին, իրարից ոչ մի քայլ չհեռանալով, վազել են գերեզմանոց՝ օրը մայրիկի ու հայրիկի մոտ, նրանց հետ անցկացնելու: Պարզ է՝ այսպես իրենց ապահով են զգացել, կարծել են, թե ծնողները հսկում են իրենց: Թե ի՞նչ են կերել, ինչպե՞ս են գոյատևել՝ դժվար չէ, ավելի ճիշտ՝ դժվար է պատկերացնել: Չորս որբեր: Խեղճուկրակ որբեր: Մութն ընկնելուն պես վերադարձել են տուն ու քնել՝ միմյանց կպած: Օրերից մի օր նկատել են, որ գյուղ մտնող ճանապարհի եզրին մի մարդ, ոչ իրենց գյուղից, կանգնել ու իրենց է նայում: Նա երեխաներին մոտ է կանչել ու հարցուփորձ արել: Աննմանը պատասխանել է, որ ծնողները մեռած են ու այստեղ են պառկած, և իրենք նրանցից հեռու չեն գնում, որ չկորչեն: Կեսօրին Պարնիի կողմից մի սայլ է եկել ու կանգնել գերեզմանոցի մոտ: Առավոտյան հարցուփորձ անողի հետ սայլի վրա եղել են ևս երկուսը: Երեխաներին կանչել են, հաց տվել, նստեցրել սայլին ու տարել դեպի Պարնի: Քույրերը սկսել են լաց լինել, բղավել, փորձել են թռչել սայլից, փախնել... Բայց չեն կարողացել դուրս պրծնել երեք մեծահասակների ձեռքերից: Պարնիում էլի երեխաներ են նստեցրել սայլին ու տարել Համամլու [ծնթ.39]: Երբ հավաքած որբերի քանակը շա-

տացել է, նրանց բոլորին տարել են Ալեքսանդրապոլ, հանձնել ամերիկյան որբանոց:

Երկու կրտսեր քույրերը՝ Բալասանն ու Բուրաստանը շատ գեղեցիկ են եղել: Որբանոցում նրանց մի խումբ այլ երեխաների հետ առանձնացրել են: Լուր է տարածվել, որ «…սիրուններին ջոկում են Ամերիկա տանելու համար»: Մի առավոտ Արուսն ու Աննմանն արթնացել են ու փոքրիկներին չեն տեսել: Լացուկոցերին որբանոցի աշխատակիցները հաղորդել են, որ փոքրիկները գիշերը տիֆից մահացել են, որ նրանց տարել են հողին հանձնելու: Հնարավոր է, որ այդպես էլ եղած լիներ՝ փոքրերը մահացած լինեին որբանոցում մոլեգնող համաճարակից (շատ երեխաներ մահանում էին): Բայց… Գիտենալով, որ մահացածների դիակներն ամեն առավոտ սայլով են հանում որբանոցից, քույրերը 3 օր հետևել են այդ սայլին, սակայն այդպես էլ փոքրիկներին չեն տեսել: Ու մինչև կյանքերի վերջը չէին հավատում, որ իրենց՝ արդեն քչիցշատից կայտառացած քույրիկները մահացել էին: Չէին հավատում ու չէին համակերպվում: Վստահ էին, որ պարբերաբար որբանոց այցելող, անծանոթ լեզուներով խոսող հարուստ զույգերից մեկն այս անգամ էլ որդեգրել ու Ամերիկա է տարել հենց իրենց սիրասուն քույրիկներին: Եվ այսպես կորել են բոլոր հետքերը:

Առաջ անցնելով՝ ասեմ, որ այս փաստի հետ չէր ընտելանում նաև պապիկս: Ընտելանալու բան էլ չէր, որ ընտելանար: Իհարկե՝ նա այստեղ ոչ մի մեղք չի ունեցել, բայց արի ու տես, որ նրան այլ կերպ էր թվում: Որպես տան ավագ՝ իրեն պատասխանատու էր զգում թե՛ եղբոր, թե՛ քույրերի համար: Ու այդպես ամբողջ կյանքում, չցանկանալով ընդունել անխուսափելին, ապրեց անմեղ մեղավորի զգացումով: Ցավն այնքան խորն էր, անձնական, որ նա նախընտրում էր այդ մասին չխոսել:

Գյուղ երբ հասել է, արդեն թուրքերն այնտեղ են եղել, բայց բնակչությունը սրի քաշված չի եղել: Ոչ մեկին ձեռք չեն տվել շնորհիվ թուրք զորքի հրամանատար Գեղամ փաշայի: Ինչպես պատմում էր հայրիկս, Ավդիբեկի բնակիչներից մեկն իր 10-12 տարեկան տղային՝ Գեղամին ինչ որ չարության համար ծեծում է, սա պոկվում է հոր ձեռքից, դուրս փախչում տնից ու այդպես էլ չի վերադառնում: Ամբողջ գյուղով փնտրում են: Ծնողները սուգ են անում ու, թեև չեն մոռանում, բայց կամաց-կամաց ինչ-որ չափով ընտելանում են՝ աչքերը վերադարձի ճանապարհին: Անցնում են երկար ու ձիգ տարիներ: Ու երբ 1918 թ. թուրքերը լցվում են գյուղ, երկու ասկյար մտնում են տարիներ առաջ որդուն կորցրած գյուղացու տուն ու նրան, հրացանների առջը զգած, տանում՝ ասելով, որ փաշան կանչում է: Կինն ու երեխաները սկսում են լաց լինել, ասկյարների ոտքերն ընկնել, բայց … ապարդյուն: Երբ գյուղացին, ներս մտնելով օդան, տեսնում է զինվորական հագուստով, փայլուն ուսադիրներով ու կոճակներով թուրք փաշային, ոտքերը ծալվում են ու ծունկի է իջնում: Վախից դեռ ճանապարհին վարտիկը կեղտոտած է լինում: Չոքեչոք առաջ է գնում՝ փաշային խնդրելու, որ չսպանի իրեն: Փաշան վեր է կենում նստած տեղից, գյուղացու թևից բռնում, կանգնեցնում ու ասում՝ «Հայրիկ, չե՞ս ճանաչում, ես եմ, Գեղամը»: Հայրը թքում է ու ասում. «Շան լակոտ, չնայած փաշա ես, բայց էլի մարդ չես դառել: Որ մարդ լինեիր, հորդ վարտիկի մեջ քաքել չէիր տա:» Գեղամ փաշայի գալուն պես Համամլուի գավառում կոտորածները դադարում են: Պատմում են, որ եթե նա մի շաբաթ շուտ հասներ, Ղալթախչիի, Աղբուլաղի [ծնթ.40] և մյուս հարևան գյուղերի բնակչությունը կփրկվեր կոտորածից: Թուրքերի հետ գնալուն պես Գեղամը հանում է փաշայի համազգեստը, դեն նետում ու մնում հայրենի գյուղաում: Այդպես էլ մինչև կյանքի

վերջը Սպիտակի շրջանում նրան Գեղամ փաշա էին ասում: Երբ նա անցնում էր գյուղի կամ Պարնիի փողոցներով, բոլորը հարգանքով ոտքի էին կանգնում ու խոնարհվում: Այսօր էլ նրան հարգանքով են հիշում ու Գեղամ փաշա անվանում:

Երկու օր թուրքերից թաքնված մնալով՝ պապիկս գիշերով իրենց տան հետնի սարով փախել է Համամլու: Երբ լուսինը լուսավորել է ձյունապատ սարը, թուրք ժամապահը գյուղից կրակել է սարն ի վեր մագլցողի վրա, բայց բարեբախտաբար չի կպել: Համամլուում դաշնակցական պարետները պապիկիս բռնել ու տարել են Դիլիջան, ուր գտնվում էր դաշնակցական 6-րդ գունդը, որը սարսափելի ծանր մարտեր էր մղում: Թուրքական զորքերի դեմ պայքարի արյունահեղ մարտական գործողություններին մասնակցելով սկզբից մինչև վերջին կրակոցը՝ պապիկս իրեն դրսևորել է որպես համարձակ ու վճռական զինվոր, մեծ ներդրում ունեցել տարած հաղթանակների մեջ և դարձել է բազմաթիվ մարտական պարգևների ասպետ: Բայց ինչպես ցեղասպանությունից մազապուրծ ողջ հայ ժողովուրդը, անփորձ պապիկս էլ, իրենից անկախ, պատանդ է դարձել տարբեր կուսակցությունների, շարժումների ու կազմակերպությունների քաղաքական հավակնությունների ու ձգտումների: Ու միշտ լուրջ սպառնալիքների տակ է եղել. և՛ վիրավորվել է, և՛ կոնտուզիա է ստացել, և՛ շրջափակման մեջ է մնացել, և՛ թուրքերին գերի ընկել: Ով հասել՝ «գլխին տփել է»: Վերքերի, խոշտանգումների հետևանքները տանջում էին պապիկիս մինչև կյանքի վերջը: Գերի եղած ժամանակ թուրքերը օրերով սառը հորի մեջ են կախել, ինչի արդյունքում գերմրսել է ու թոքերի բորբոքում ստացել (ինչն իրեն զգացնել է տվել տասնամյակներ անց, դարձել մահվան պատճառը): Հիշում եմ՝ ամբողջ մեջքը ծածկված էր մաշկի մակերեսին արտացոլված խոշոր, երկար, տռուզ, վար-

դագույն երանգի սպիներով: Թե այս երեխայի միջոցով ռազմական ինչ գաղտնիք են ուզել բացահայտել, թուրքերեն լեզուն չհասկացող գյուղացի տղային համար այդպես էլ անհասկանալի է մնացել …: Ազատել են դաշնակները, բայց շատ չանցած, հենց նրանք էլ բանտարկել են ու զգել բոլշևիկների խուցը: Զինվորական դատարանը 1920 թ. ապրիլին նրան դատապարտել է գնդակահարության՝ իբր բոլշևիկներին միանալու, հեղափոխական գործունեություն ծավալելու համար: բայց լավ է, գնդակահարությունը փոխարինվել է 40 հատ մտրակահանության՝ շարասյան առջև: Թուրքերի մտրակից մեջքին թողած սպիներին ավելացել են նորերը՝ հայկականները, դաշնակներինը:

Սրբորեն հավատալով երջանիկ ապագային զինվորագրվել է բոլշևիկյան գաղափարախոսությանը: Նա առաջին անգամ բոլշևիկների հետ շփվել է հենց այս բանտարկության ժամանակ և հենց այդ հեղափոխականների՝ Ենոք Մկրտումյանի, Սեդրակ Հակոբջանյանի, Հովհաննես Սարուխանյանի, Շավարշ Ամիրխանյանի, Անանիա Բերբերյանի, Վասիլի Ալեքսենի գաղափարախոսության ազդեցության տակ նրա մոտ հասունացել է այն խորը համոզմունքը, որ բոլշևիկների կուսակցությունը պրոլետարիատի դիրքորոշումը պաշտպանող միակ կուսակցությունն է: Եվ սրբորեն հավատալով, որ բոլշևիկյան սկզբունքներով է հնարավոր կառուցել ժողովուրդների երջանիկ ապագան, ընտրել է իր կյանքի ոչ այնքան հեշտ՝ հեղափոխական պայքարի ուղին: Ընտրել ու ընդունվել է Կարմիր բանակի շարքերը՝ պայքարելու հայ գյուղացու, բանվորի լավ կյանքի, հայ ժողովրդի լուսավոր ապագայի համար: Ավելին՝ պապիկս անդամագրվել է հայ հայրենասերների այն խմբին, որը հասկացել է, որ միայն ռուս զինվորի հետ ուս ուսի է հնարավոր կռիվ տալ թուրքի դեմ: Այդ ժամանակից ի վեր իր կյանքն անքակ-

տելիորեն կապելով կարմիր բանակի հետ՝ նա զինվորից հասել է հրամանատարի աստիճանի: Հրամանատարական պաշտոններում մասնակցել է նաև խորհրդային կարգերի հաստատմանը Հայաստանում և Վրաստանում: Այս ամենի համար պապիկս անհատական թոշակառու էր:

Գալով գյուղ և իմանալով քույրերին որբանոց տանելու մասին՝ պապիկս գնացել է Ալեքսանդրապոլ նրանց գտնելու: Մի քանի կոպեկ կամ մեկ կտոր հաց վաստակելու համար մտել է Ալեքսանդրապոլի շուկան կամ, ինչպես այն տարիներին անվանում էին, շուկա-խափանը: Այն գտնվում էր ներկայիս կենտրոնական հրապարակի տեղում, երկու եկեղեցիների միջև ընկած տարածքում, Մունդառ չայ [ծնթ.41] գետի ձախ ափին: Քաղսովետի (քաղխորհրդի) շենքի հիմնադրման կապակցությամբ շուկան տեղափոխվել է քիչ հարավ և բաժանվել երկու մասի: Ներկայիս ավտոկայանի տեղում գտնվող հատվածը կոչվել է «մալի մեյդան», որտեղ վաճառվել են անասուններ, տարբեր տեսակի իրեր և շորեր: Իսկ մյուսը ներկայիս կոլտնտեսային շուկան է: Հենց այստեղ է, որ պապիկս, զուռնադհոլի ձայն լսելով, մոտեցել է ու տեսել, որ քյանդրբազ (լարախաղաց) են խաղում:

Պապիկս մենակ չի եղել: Մարդիկ ամեն կողմից շտապել են այն դիտելու: Քարացած, շրջապատից լրիվ անջատված՝ բոլորը ահասարսուռ հայացքով, բերանները բաց, հետևել են լարախաղացի պարին, երբ հանկարծ լսվել են կրակոցներ ու հանդիսատեսին շրջապատել են դաշնակցական բանակի զինվորները՝ մաուզերիստների հրամանատարությամբ: Պարզվել է, որ շաբաթը երկու-երեք անգամ դաշնակները, լարախաղացություն կազմակերպելով, շուրջկալ են սարքել, բռնել գյուղերից ու քաղաքից այստեղ հավաքված՝ բանակից խուսափող երիտասարդներին, հրացան տվել ու,

բառի բուն իմաստով, քշել հայ-թուրքական ռազմաճակատ: Անխոս՝ շուրջկալներում որսացած, այստեղից-այնտեղից հավաքած մարդկանց անկազմակերպ խմբերը, ինչպես ասում էր պապիկս, երբեք բանակ համարել չէր կարելի: Եվ ինչքան էլ դաշնակցական սպաները ջանք չ՛խնայեին մի քանի օրում հավաքագրվածներին հրացանով կրակելու ու մարտ վարելու տարրական ձևերը սովորեցնելու համար, միևնույնն է, արդյունքը ոչ թե գոհացուցիչ, այլ առհասարակ չէր ստացվում: Շատերը առիթ էին փնտրում ու կարողանում էին ծլկել:

Միամիտ պապիկս, այդպես էլ որբանոց չհասած, քույրերին չտեսած, դաշնակներից հրացան է ստացել ու, ոգևորված, գնացել է Հայրենիքը պաշտպանելու, թուրք ստահակի դեմ կռվելու վաղեմի իր երեզանքն ի կատար ածելու: Այս անգամ առաջին մարտը տեղի է ունեցել Սև Ղուլի [ծնթ.42] տարածքում: Թուրքերի հարձակվող բազմաքանակ զորքին դիմավորել են՝ բարձունքներում խրամատավորված: Բերդից սկսված պաշտպանության գիծը անցել է հենց ներկայիս Մայր Հայաստան հուշարձանի տեղով, իջել Սևերսկի զինանոցները և շարունակվել դեպի հարավ: Դաժան և անզիջում է եղել մարտը: Այդ օրը թուրքերը երեք անգամ գրոհել են ու երեք անգամն էլ ետ շպրտվել Ախուրյան գետի աջ ափը: Պապիկս, վրեժ ու ցասումից բռնկված, մարտը վարել է՝ գետնից դուրս ցցված մի մեծ լեռ քարաբեկորի հետևում պահկված: Կրակելիս է եղել, երբ թուրքերի արձակած գնդակը կպչել է այդ քարին ու, անդրադառնալով, մտել աջ ուսը:

Հայրս լավ հիշում էր այդ ծանր և կատաղի, հերոսական մարտերի տեղանքը: 10-12 տարեկան հասակում հաճախ է հոր և մոր հետ գնացել այդ քարի մոտ: Հետո էլ մեզ էր տանում այնտեղ: Քաղաքից դուրս ամայի դաշտեր էին: Կանգնում էինք քաղաքից

դեպի Ախուրյանի կամուրջը տանող խճուղու եզրին ընկած քարի մոտ ու հայրս պատմում էր մարտի մասին, ասում, որ՝ «Այ, այստեղ պապաս վիրավորվել է առաջին անգամ»: Քարի վրա պարզ երևում էր պապիկիս ուղղված թուրքական գնդակի հետքը: Հիմա այդ քարաբեկորը չկա, այն տեղահանվել ու հեռացվել է տարածքից «Մայր Հայաստան»-ի հուշահամալիրը կառուցելիս:

Ոգևորված ուժեղ դիմադրությունից, երեք գրոհները հաջող տապալելուց՝ հայ աշխարհազորայինները սպասել են հաջորդ գրոհին, երբ օրվա երկրորդ կեսին լուր է ստացվել, որ թուրքերը Օրթաքիլիսայի [ծնթ.43] կողմից լցվել են քաղաք: Դրությունն ավելի է բարդացել: Մեկ ելք է եղել՝ նահանջել: Շրջապատումից ու գերությունից խուսափելու համար բոլորը ծխի և փոշու քուլաների մեջ հետ են քաշվել ու քաղաքի փողոցներում իրար կորցրել: Պապիկս, վիրավոր ու սոված, գնացել է Դուզքենդ՝ [ծնթ.44] մորաքրոջ տուն, այնտեղից հասել է Քյափանակ մյուս մորաքրոջ տուն, ավելի մոտ իր հայրենի գյուղին: Հենց վերքը մի քիչ լավացել է, Չրախլիով իջել է իրենց գյուղ՝ Ավդիբեկ (ներկայիս Ծաղկաբեր):

## ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ

*Բանասաց՝* ***Հարությունյան Համլետ Վազգենի***, *ծնվ. 1948 թ.*
գ. Գուսանագյուղ: Ձայնագրություն 151223-0325

Գուսանագյուղը հիմնադրել են իմ նախնիները՝ Ավո, Դավիթ, Մակար և Մարգար եղբայրները 1828 թ., որոնք այստեղ են տեղափոխվել Ալաշկերտի Խաստուր գյուղից: Գյուղի բնակչության 60-65 տոկոսը նրանց սերունդներն են: Հետագայում նույն գյուղից ուրիշ ընտանիքներ էլ են տեղափոխվել ու հաստատվել այստեղ, 1914թ. գյուղ են եկել Մուշից, իսկ 1918թ. նաև Կարսի մարզի գյուղե-

րից, որի արդյունքում գյուղի բնակչության թիվը բազմապատկվել է՝ հասնելով 1500-ի:

1918 թ. ապրիլի 5-ին թուրքերը մտել են գյուղ, գյուղացիները 15-20 հոգով եկեղեցու բարձունքից կրակել են ու չեն թողել նրանց մտնել գյուղ: Մորական տատս (այդ ժամանակ եղել է 18 տարեկան) պատմում էր, որ առավոտյան տեսել է, որ մոտակա բարձունքից կարծես սև ոչխարի հոտ է իջնում սարից, բայց երբ մոտեցել են, հասկացել է որ զինվորներ են դրանք: Պապս էլ այդ ժամանակ հանած է եղել իրանց անասուններին տան վերևի քարափներում արածացնելու: Տատս վազել, պապիս ասել է, պապս եկել է հավաքել հարևան կանանց ու երեխաներին, անասունները քշելով, սայլերով սարերով փախել են Թալին, հետո՝ Էջմիածին: Գյուղում մնացածները որ կրակել են, թուրքերը չեն ուզեցել զոհ տան, երկու կողմից եկել են հյուսիս-արևմտյան կողմ, նոր մտել են գյուղ: Գյուղացիների էն մասին, որոնք փախել են դեպի Հոռոմ, բայց չեն հասցրել, թուրքերը բռնել, հետ են բերել, շատ տղամարդկանց գերի են վերցրել, կանանց որոշ մասին բռնաբարել են, որոշին տարել են Հոռոմ: Մորական պապս պատմում էր, որ հոռոմցիներն ասում էին, որ իրենց գյուղի կենտրոնական կալերից մեկում հավաքեցին շրջակա գյուղերի ժողովրդին, տղամարդկանց կանգնեցրին, կանանց ու աղջիկներին բռնաբարեցին, հետո մարագներում այրեցին: Մեր գյուղից մի 16 տարեկան աղջկա գլխին հրացանով խփել են, էդ աղջիկը կուրացել է, հետո ընկել է որբանոց, տեղափոխվել Ամերիկա, որտեղ ապրել է մինչև 1960-ական թթ. ու այնտեղից օգնում էր իր հայրենակիցներին՝ ինքը Օքրենց տոհմից էր: Ես դա հիշում եմ: Հետո Նախշքարյան Փուռիկ կար, նա էլ էր Ամերիկայից օգնում:

Մորական պապիս հերը էդ ժամանակ եղել է մոտ 50 տարեկան մարդ, թուրքերը որ եկել են, փախել է գյուղից, ասել է գնամ

Չիթանքով, իրանց մի մասը Չիթանքովի Հունանենցից են, փախել է հորեղբոր տղաների տունը, բայց թուրքերը բռնել են, էդտեղի մոտակա գյուղերի՝ Զարնջա և այլն,փախստականներին լցրել են մոտ 120 հոգի մի մարագ, առավոտյան վառել են: Ես սովետի տարիներին Մարալիկի մշակույթի բաժնի վարիչ էի աշխատում, էդ մարագի ավերակները հլա կար, այդտեղ 1978 թ. մի փոքր հուշաքար դրեցինք, հետո, 1990-ականներին խնամիս, որը կոլխոզի (գյուղսովետի) նախագահ էր ընտրվել, դրա փոխարեն մեծ խաչքար տեղադրեցին: Եթե չեմ սխալվում 1991 թ.-ին ՀՀՇ-ականները դրեցին, ես էլ մասնակցել եմ այդ արարողությանը:

Թուրքերը մեր գյուղում մնացել են մինչև հոկտեմբեր ամիսը, մեր գյուղացիները հիշում են, որ գյուղում Զուռնաչոնք ազգություն է եղել, դրանք հարուստ ու գրագետ մարդիկ են եղել՝ անգլերենի, գերմաներենի դասատուներ են եղել, դաշնակցական են եղել, 33 թվին սրանց աքսորել են: Դրանց երկու հարկանի տունը, որ գյուղի կենտրոնում է եղել, թուրքի սպան է նստել: Ուրեմն էդ 15 հոգի տղամարդկանցից, որ կրակել են մի մասը փախել են, մեկը՝ Աբգարյան Հայկազը զոհվել է, մի հատ ֆիդայի՝ Փիչիկյան Հակոբը փորձված է եղել, Անդրանիկի բանակում կռված է եղել, շորերը փոխել է աղքատի շորեր հագել ու մնացել է գյուղում: Մեր գյուղացիները պատմում են, որ մի օր թուրքի զինվորները կանգնել են գյուղի մեջտեղը՝ հիմիկվա ակումբի տեղը ու կրակել են բերդի կարմիր քարին, որի հետքը մինչև հիմա երևում է, քանի որ չեն կարողացել ուղիղ կրակել, էս Հակոբն ասել է տվեք ես կրակեմ ու մի ձեռքով պահելով խփել է ուղիղ քարի մեջտեղը: Սրանք հասկացել են, որ նա հասարակ գյուղացի չի, ուզեցել են բռնեն, բայց վերջինս հրացանի կոթով երկուսին էլ խփել է որ չսպանի, բայց ուշագնաց լինեն ու ինքը փախել է: Ինքը պապիս հարևանն է եղել, ասում են ձին

պահել է՝ պատ է շարել որ չերևա ու սպասել է, որ թուրքերը երբ գնան, ինքն էլ գնա: Եկել է պատը քանդել է, նստել է ձին, զենքերը վերցրել է ու փախել սարերը: Հետևից կրակել են, բայց չեն կարողացել հասնել ու նա այդպես փախել է: Գյուղացիները թուրքերին ասել են, որ նա իրենց գյուղացի չէ, որ իրենց վնաս չտան: Թուրքերը մարդկային շատ վնաս չեն տվել գյուղին, մենակ գնալուց շատ սայլեր են տարել, մոտ 20-25 սայլ եզներով ավար՝ մթերք, անասուն, նույնիսկ դուռ ու լուսամուտ:

Իսկ 20 թվին նորից հոկտեմբերին են մտել թուրքերը գյուղ, սկզբում Նորաբեր են մտնում, որ Ջալալի էր առաջ կոչվում, մեզնից 2,5 կմ դեպի սահման, որը փոքր գյուղ է ու դիմադրություն չի ցույց տվել: Մերը թմբի վրա է ու դիմադրել հնարավոր է: Էս անգամ թուրքերը ձիավոր զորքով են եկել, հետևակ համարյա չի եղել, արագ գյուղը գրավել են, մարդ չի կարացել փախնի: Ու ահագին նեղություն են տվել, էլի աղջիկներ, կանանց են տարել: Էս անգամ 20 հոգի են եղել ու նույն տունն էլ մնացել են, հարկ են հավաքել՝ սայլմայլ ու սնունդ են հավաքել իբր զինվորների համար: Օրինակ պապիս հերը, որ 5 աղջիկ է ունեցել, նրանց խաթր վախեցել ու ենթարկվել է և սայլով բեռ է տարել դեպի Սարդարապատի կողմերը: Թուրքերը ապրիլին են նահանջել, էդ ժամանակ դաշնակցական իշխանությունը չկար, բայց թուրքերը հլը մնում էին ու մեր գյուղում 25 հոգի մարդ են սպանել ոչ միայն գյուղի մեջ, այլև դրանից դուրս: Օրինակ իմ պապիս հորը, որը իր սայլով գնացել է թուրքերի հետ բեռները տանելու, Թալինի մոտ սայլը ձեռից վերցրել են, իրան էլ սպանել ու գցել Կաթնաղբյուրի ձորը, մինչև պապս լսել է, գնացել, էնքան էլ շատ են դիակներն եղել ու արդեն քայքայված են եղել որ չի կարացել գտնի: Հետո թուրքերը հետ գնալուց հարս ու աղջիկ են իրանց հետ տարել:

Ու մի դեպք էլ էին պատմում. ուրեմն մորքուրիս կեսարը՝ Քյամալենց Կարոն, հարուստ է եղել, ոսկի է ունեցել, պապս պատմում էր, որ թուրքի սպան 20 հոգանոց ջոկատով ամենավերջում, արդեն թուրքերն էլ էին գնացել, սրանք հետնից՝ Բաքվից էին գալիս, եկել է գյուղը, եկեղեցու մոտ մարդիկ կանգնած են եղել, ասել է ոսկի ծախող կա՞, շատ թանկ՝ 4 անգամ ավել գնով առնում եմ: Էս Կարոն էլ (հարուստները չէ որ ագահ են լինում) լսել ու ցարական ռուբլով բռնել իր ոսկիները ծախել է: Ես արդեն մեծ տղա էի, էդ փողերը հլը յաշիկով գոմում դրած էր, մորքուրիս տղի հետ հանում էինք, տանում խանութ, մեր վրա ծիծաղում էին ու մի բուռ կոնֆետ տալիս:

Թուրքերը մինչև 20 թիվը շատ նեղություն են տվել, գյուղից շատ բան են տարել՝ հորական պապիս, որը 19 թվին եղբոր հետ հանկարծամահ են եղել, նրա պահած ցորենը, եզները գտել տարել են, երևի տեղը իմացած են եղել:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մեր գյուղից շատ մարդ են տարել, օրինակ հորական պապիս՝ Ավոյան Հմայակ Հարությունի, 12 հոգու հետ 1915 թվին տարել են, Մինսկի մատույցներում էլ կռվել են: Հեղափոխությունից հետո թե զորացրվել են, թե փախել եկել են չգիտեմ: Պապիս հորեղբոր տղան, որը հորս պահել էր, պատմում էր, որ երբ եկան, չամադանի տակ երկտակ սարքել էին ու կարաբին հրացան էին բերել, որը պահեցին, հետո գարնան զլուխ, երբ ուտելու բան չունեին, քանի որ թուրքերը տարել էին, հանել է, /ինքը պատերազմից որ եկել է դաշնակների ժամանակ գարաղավոյ [ծնթ.45] է եղել Լենինականում/ ծախել է, ալյուր ու ուրիշ բաներ է առել, բերել է մի կերպ յոլա են գնացել:

Իսկ 18 թվի էն 15 հոգին, որ կռվել էին, դրանցից մեկը, մեր ազգից Ավոենց Լևոնը, ձի է ունեցել ու փախել է Սոգյութլու, ինքն էլ

նալբանդ է եղել, մնացել է ընդեղ: Ուրիշ գյուղերից էլ են էդտեղ փախածներ եղել, դաշնակ Սողոն 150 հոգանոց ջոկատով էդտեղ է եղել, մեր Լևոնն էլ է մասնակցել ինքնապաշտպանական կռիվներին: Պապս պատմում էր, որ 1936 թ. էդ Լևոնին 3 ախպերով ու իրանց ազգից էլի 3 ընտանիք, այսինքն 6 ընտանիք 38 անձով աքսորել են որպես դաշնակ: Լևոնը ծառայել է Սողոյի ջոկատում՝ ձիերն է նալել, գյուղացիների եզներն էլ է նալել, որ ընտանիքը պահի, որին հետն է տարած եղել, դրա համար համարվել է դաշնակ: Իրա ընկերն էլ Հոռոմից Ալեքը, էլի նալբանդ, կոմունիստ է եղել, Սողոն ուզել է սպանի, ինքը չի թողել, համոզել է, թե վերջինս կոմունիստ չի, թե չէ ինքը ոնց կարող էր նրա հետ ընկերություն անել ու այդպես փրկել է: Հենց սրա համար գյուղացիներից մեկը հետագայում մատնություն է գրել, իբր Լևոնը եթե դաշնակ չէ, ոնց է կարողացել Սողոյին համոզել, որ կոմունիստին չսպանի, ու նրան բռնել, աքսորել են:

## ՋՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ

*Բանասաց՝* ***Վանցյան Անդրանիկ****, ծնվ. 1932 թ.,*

գ. Սալթա, 1946 թ. ընտանիքով եկել է Ջույգաղբյուր: Ձայնագրություն 150104-2059

Ես 1957 թվին եմ եկել ըստեղ. էդ Ղոչի աղբյուրն [ծնթ.46] շինել ենք, եկել մնացել ստեղ. իրեք եղբայրս ու հայրիկս: Մենք Ջավախքից ենք, հորական պապս Սաթխայից եկել է, էս քարափից իջել է, մորս ծնողների տունն եղել է ըստեղ, մորական պապս ըդտեղ կանգնած է եղել, /հորական պապիս անունը Կարապետ է, իսկ մորական պապիս՝ Արշակ/ երկուսով իրար հետ ծանոթացել են: Այդ ժամանակ գյուղում աղբյուր չի եղել, ջուրը հեռվից են բերել:

Իրանց խոսքի վրա 15 տարեկան մերս էդտեղով անցել է, հորական պապս մորականիս հարցրել է, թե էդ ում աղջիկն է, սա էլ ասել է, թե իմ: Պապս ասել է, որ ըդպես է, Արշակ ախպեր, բեր բաշիքյարթմա [ծնթ.47] անենք, աղջիկդ տուր իմ տղուն, ես աղբյուրը ձրի սարքեմ: Այդպես պայմանավորվում են: Հորական պապս հարցնում է դուք կավ ունի՞ք, ցույց են տալիս կավի տեղը, ինքն էլ փողրանք [ծնթ.48] է շինում էդ կավից, ջուրը քաշում, տանում մորական պապիս դուռը հասցնում ու կապվում էդ գյուղի հետ: Սա քեռանցս գյուղն է:

Պապս, հերս, գյուղացիք ինձի պատմել են, որ 18 թվին երբ թուրքը քաշվել, գնացել է, նորից հետ է եկել, թուրքի փաշեն ըստեղ մահացել է, էս մեր տան հետևը փաշին թաղել են: Մեր կողքը տերտերի տներն են, պատից խալին հանել են, փաշին թաղել են, բայց երբ թուրքերը քաշվել են, տերտերը քանդել, իրա խալին հանել ա, իսկ սևլավն էլ եկել, փաշին տարելա: Հետո 20 թվին Ամասվա կողմից վերադառնան զը, մեծահասակ մարդիկ աղ ու հացով դեմերը կերթան, կխնդրեն, որ իրենց ձեռ չտան: Սրանք ասում են – եթե մեր կորուստը տեղը եղավ, ձեռ չենք տա, հլա մի բան էլ լավ կլինենք: Կգան կտեսնեն, որ իրանց փաշեն չկա, խալին էլ հանած, տերտերի պատից կախած է: Էդ պահին խանչալը [ծնթ.49] կոխում են տերտերի փորը, սպանում են, էս գյուղի ողջ երիտասարդներին հավաքում, հանում են էս գյուղի վերևը փակ տարածություն կա, ըդտեղ բոլորին ջարդում են, մարդ չեն թողնում կենդանի մնա: Հիմա էդ տեղին մեռելի արտեր են ասում:

Հարց – Շատ հեռու է՞ այդ տեղը:

-Չէ, քարափից որ ելնում ես, վերևն է: Երիտասարդներին սպանել են, գյուղը թալանել են, հարս ու աղջիկ փախցրել, տարել

են: Հայեր են եղել, որ դրանց ասել են, թե որտեղ են թաքնված հարսներն ու աղջիկները:

Ասում են, մեծերը պատմում էին, թե Անդրանիկն եկել է գյուղ, լավ վերաբերմունք ցույց չեն տվել, տեղ չեն տվել, ձիերին կեր չեն տվել, ելել, գիշերով գնացել է:

Հայրիկս ասում էր օսմանյան թուրքերի գնալուց հետո ադրբեջանական թուրքերը եկան ու ավելի մեծ վնաս տվին դրանք՝ Ամասիայի թուրքերը, բայց օսմանցիների անվան տակ: 25 գյուղ թուրքեր կային Ամասիա: Հայրիկս ասում էր դրանք ավելի շատ են հայերին ջարդել ու թալանել: Մեկ էլ բողոքում էր Խաչլվա [ծնթ.50] հայերից. մի մարդ դուրս էր մնացել, ես բերի մեր տուն, հերս ասավ Խաչլվա հայերը թուրքերի հետ հայերին ջարդել են:

Հարց- Հայերը հայերին են ջարդե՞լ:

-Որ հարսների ու աղջիկների տեղերը ցույց են տվել թուրքերին, էդ ջարդել չէ՞, պարտադիր պիտի հրացանով խփե՞ն: Շատ են դավաճանել: Հիմա որ կռիվ լինի ամբողջ հայությունը, սփյուռքի հայերն էլ գալիս են օգնության, էն ժամանակ էդպես չի եղել, ամեն մարդ իր գլխի ճարն է տեսել, իր մասին մտածել:

* * *

*Բանասաց՝ **Թումասյան Բեգզադ Անդրանիկի**, ծնվ. 1929 թ.*
գ. Ջույզաղբյուր: 1952 թ-ից ամուսնացել ու ապրում է Գյումրիում:
Նյութը գրանցել է Հասմիկ Գալստյանը Վահրամաբերդում՝ բանասացի աղջկա տանը:

1. Թուրքի վախտը քիչմ գարի կընգնի մամիս [ծնթ.51] ու մորքուրիս ձեռը: Մամս կսե գարին տար մարագը մեռելներու տակը պահե: Մորքուրս օր կերթա, թարս ու շիտակ մեռելներն իրար վրա

քցած, մեռելի թաթերն օր կտնգե, մեռելը թիք կկայնի: Կսե – անա [ծնթ.52], վախենամ զը, կսե- ինչի՞-Կարմրավան Մովսես ամին (առաջ Կարմրավան չեն ըսե, Ղզլքիլիսեցի Մովսես ամին) ելավ թիք կայնավ: Կսե – Մաք ջան ոտներն ես կոխե, ետ արի, կընգնի: Մորքուրս հետ կուզա, էտի թրխկ կընգնի, սիրտ կառնե, օր մեռած է: Թուրքի սպանած մեռելներին էդին-էնդին կքաշե, զարին կկոխե մեռելներու տակը, օր ձմեռը բերե խեձախ էնե, ուտեն:

2. Մամս օխչար է ունեցե. թուրքը քաշվե գնացել է, քանիմ հայ տղամարդ կա գեղը անոթի, կուզան օր Մարզրիտի օճխրները տանին: Մամս ոտի ձենը կառնե. մամս օր կելլե դուռը բանա, դուռը վրեն կզրզեն (զրզա կենեն, կքցեն): Թխքթխքցնեն զը, մամս օր ձեռը կքցե օր զռզեն [ծնթ.53] բանա, մամիս բիլակը կբռնեն, օր կդրեն: Իրա ախպոր տղեն էլ կեղնի էդոնց հետ. կիանի դանակը կդնի էդոր կռթլղին [ծնթ.54], կսե կռթլղդ կկդրեմ, հորքուրիս բիլակը [ծնթ.55] չկդրես: Էդման կթողեն կերթան, էլ չեն տանի օխչրները: Մամս կսե վախենալուս բերինք ուրդեղ օր մենք կքնեինք, կամ դրինք, օխչրոնց դրինք: Օխչրները տակը, մենք էլ վրեն, օր չզողնան տանին հետո: Իրանցը խոտ էր մնացե, խոտը տվել-օխչար էին առել: Գիտես թուրքը բա՞ն էր թողե. ինչ տարել-տարել էր, մնացածն էլ մորթե-կերել էին: 6 ամիս մնացել էին 20 թվին:

Որ կսեն թուրքը էկավ, մամս պապիս կսե (պապս նալբանդ է էղել, իրան ուստա են ասել)- ուստա, արի մենք շատվոր չենք՝ ես, դու, աղջիկս ենք, ինչ օր ունինք մեզի ուտելիք, զողինք [ծնթ.56], բառնանք, անցնինք Լոռի Ղարախաչով: -Ընչի զա ընձի ի՞նչ կենե, փարա կուզեն, փարա կուդամ, օսկի կուզեն՝ օսկի կուդամ, իրան ձիանը կնալեմ, ընձի ինչ կենէ: Թուրքն էլ գուկա, տղամարդկանց մթնով կտանի Գյուլիբուլաղ [ծնթ.57], 4-5-ին իրար կկապե, կսպանե. մորթել են, չեն էլ գյուլլե, գյուլլին էլ են ափսոսացե. 4-5 տղա-

մարդ իրար կապած-մորթած: Մերս կսէ առավոտը մեր գեղի շները կելլեին կերթային Գյուլիբուլաղ ջանդակ ուտելու, իրիկունը գու-կային: Գարնան գլուխ օր թուրքը կքաշվի, 6 ամիս կմնան, կելլին կերթան օր ամենն իրա մեռելին գդնի: Մերս կելնի հետները կեր-թա: Օր հորս չդարձրին, կսէ, ինչխօր նոր մորթեին՝ էնման արունը գնաց. կեմով [ծնթ.58] կապած: Մերս էլ է եղել շենքի մեջ: 4-5 հոգու դուս են կանչե, էդոնց կապե, մորթե ու էկել են. ըդպես մալի պես մորթվել են, մալի պես...

Պարզիր, աղբյուր պարզիր, բեկի տղին ջուր տանեմ,
Աղբյուր գիտե՞ս քրդեր մեզի ինչ կանեն,
Իսլամները եկան մեզի տանելու
Լուս հավատից եկան մեզի հանելու...

## ԼԵՌՆՈՒՏ

*Պատմող՝ **Կարինե Ալեքսանյան**, ծնվ. 1963 թ.*

ք.Գյումրի: Պատմում է իր մորական տատից լսած պատմությունները: Ձայնագրություն 151024-1915 շարունակություն, սկիզբը Ձորակապ

Տատիկս Արխվալի [ծնթ.59] գյուղից է, 1918-20 թթ. եղել է 6-8 տարեկան, իր պապը եղել է գյուղի մուխտարը՝ գյուղապետը: Ինքը պատմում էր, որ 18 թվականին թուրքերը այնքան էլ մեծ վնաս չեն տվել: Իսկ 20 թ. պատերազմի ժամանակ, երբ թուրքերը գալիս են գյուղ, տատիկիս պապը աղ ու հացով դիմավորում է թուրքերին, որ գյուղին վնաս չտան: Դեռ 18 թ. նա տղային ու հարսին տեղափո-խում է Թիֆլիս, որ ավելի ապահով լինեն, իսկ իրեն պահում են իրենց մոտ: Տատս պատմում էր, որ տանն այնքան ալյուր կար, որ մինչև առաստաղը շարած էր, այսինքն լավ են ապրել: 1920-ական թթ. իրենք իրենց մոտ հյուրընկալել են ամենայն հավանականու-

թյամբ Սեպուհի ջոկատներին, որովհետև տատս պատմում էր, որ Սեպուհը իրենց ասում էր. - մի վախեցեք, մենք ձեզ կպաշտպանենք: Բայց մի օր, հանկարծակի, առավոտյան, երբ թոնիրը վառել են որ հաց թխեն, դիմացի սարից թուրքը իջել է ներքև և իրենք հանկարծակիի են եկել: Տատիս պապը՝ Բաղդասարյան Մկրտիչը աղուհացով գնացել է դիմավորելու թուրքերին, որպեսզի գյուղի բնակչությանը չկոտորեն: Բերել են թուրքերին տեղավորել են գյուղի ամենահարուստ տներից մեկում, որտեղ եղել է մի շատ գեղեցիկ կին: Տատս պատմում էր, որ այդ կինն այնքան գեղեցիկ էր, որ երբ ջուր էր խմում, պարանոցից երևում էր, թե այդ ջուրն ինչպես է իջնում: Ու այդ կինը շատ օգնել է համագյուղացիներին, քանի որ փաշայի սիրտը շահել է: Փաստորեն այդ կինն ու գյուղի մուխտարը փորձել են թուրքի փաշային սիրաշահելով հնարավորինս գյուղացիներին փրկել: Որոշ ժամանակ հետո, սակայն, երբ տատիս պապը այլևս չի կարողացել նրանց ածող պահանջները բավարարել, նրան սպանել են: Արդեն սկսվել են զանգվածային կոտորածները, տատս պատմում էր, որ իրենց տարել են ու լցրել Հաջի Նազար [ծնթ.60] գյուղի մարագները, որ այրեն: Տատս պատմում էր, որ բոլորը սպասում էին որ այրվելու են, բայց առավոտյան եկել է մի ձիավոր, որը հանել է մի մեծ թուղթ ու սկսել կարդալ ու թուրքերն արագ նստել են ձիերն ու փախել: Այդպես իրենք կարողացել են փրկվել՝ ինքը և 6 տարեկան քույրը, որին ինքն է խնամել, երբ պապին ու թերևս նաև տատին սպանել են թուրքերը: Հետո Թիֆլիսից վերադարձել են հայրն ու մայրը, որոնք հետները բերել են բավականին ոսկի ու կարողացել են վերականգնել իրենց տնտեսությունը, որն ամբողջությամբ քարուքանդ է եղել: Տատս պատմում էր, որ տան դռներն ու լուսամուտներն անգամ քանդել, տարել էին, ոչինչ չէին թողել:

Տատս պատմում է, որ երբ սելավը սկսվեց՝ մայիս ամսին թերևս, ու երբ սարերից ջուրն իջավ ցած, այնքան շատ դիակներ էր բերել, որ փակել էր ջրի ճամփան, այդ ժամանակ նոր հասկացանք, թե ինչ ահավոր կոտորած է կատարվել, որովհետև մինչև էդ իրանք չեն պատկերացրել էդ չափը:

Մի հետաքրքիր բան էլ էր պատմում տատս, թե ինչպես է փրկվել. իրեն կանգնեցրել են կտուրին, երդիկի վրա, ու, երբ թուրքերը գալիս էին, քանի որ պապս շատ հարս ու աղջիկների է իր տանը պահել, ինքը քար է գցել ցած, որ նրանք կամ թաքնվեն, կամ մուր քսեն երեսներին, որ դեմքերը չերևա: Ասում էր, որ մի անգամ, մի ասկյար իրեն նկատելով կրակել է, բայց գնդակը անցել է թևի տակով ու ինքը նույնիսկ չի հասկացել, թե ինչ է կատարվել, երբ այդ զինվորը վազելով եկավ գրկեց իրեն ասելով, թե վայ, ինչ լավ է որ չմեռար, որովհետև մայրս ինձ ապսպրել է, որ երեխա չսպանես:

Տատս պատմում էր, թե ինչ դաժանությամբ են վարվել այն կանանց հետ, որոնցից ուզել են իմանալ իրենց ոսկիների տեղը. Երբ վերջիններս չեն ասել, տաքացրած շամփուրներով դաղել են նրանց մարմինները, ու երբ քաշում էին շամփուրները, կաշին մսի հետ միասին դուրս էր գալիս: Տատս պատմում է, որ էդ վառած մսի հոտից մեր ուշքը քիչ էր մնում որ անցներ: Սա ասում եմ նրա համար, որ հասկանանք, թե ինչու էր ժողովուրդը վախեցել թուրքերից ու կատարել նրանց պահանջները, որովհետև ահավոր դաժանությամբ են նրանք վարվել բնակչության հետ:

Մի հետաքրքիր պատմություն էլ էր պատմում տատս գյուղից մի կնոջ մասին, որին ես էլ եմ տեսել, նրա մի ոտքը կաղ էր, Աչե են ասել նրան, երբ թուրքերը ներս են մտել, ուզել են իմանալ նրանց ոսկիների տեղը, ինքը չի ասել ու թուրքերը ջարդել են իր ձեռքը, ինքը ջարդած ձեռքով սարերով գիշերը փախել է յայլաները,

հասել է իր քավորի տուն, դուռը բացել է, որ թուրքերն այդտեղ նստած են: Թե հետո ինչ է եղել ես չգիտեմ, բայց նա ապրեց մինչև 90 տարեկան ու միշտ պատմում էր այդ պատմությունները:

Իմ տատիկը ամեն օր պատմում էր այս պատմությունները, սակայն, ցավոք լսողները քիչ էին, իր 14 թոռներից միայն ես էի հետաքրքրվում, ինչը ցավ էր առաջացնում նրա մեջ:

*** * ***

*Ձայնագրություն 151024 - 1948 շարունակություն:*

Տատս պատմում էր, որ գյուղում մի կին կար Օսան անունով, ով թուրքերին ասում էր, թե ով որտեղ ոսկի ունի պահած, նա երդիկներով անցնում էր, լսում թե ինչ են խոսում ու խաբար հասցնում թուրքերին: Նրա մատնությամբ թուրքերը տարան պապիս մի պղինձ ոսկին, որ նրա ընտանիքը բերել էր Արևմտյան Հայաստանից:

Մի ուրիշի մասին էլ էր պատմում, ով թակում էր համագյուղացիների դռները և երբ վերջիններս բացում էին դուռը, թուրքերը հետևից մտնում էին նրանց տուն ու թալանում: Թուրքերի գնալուց հետո նրա դեմ դատ են բացում, որի նյութերը արխիվում ես գտել եմ: Թուրքերի գնալուց հետո շատ մատնիչների ու դավաճանների այդպես դատել ու սպանել են նաև ուրիշ գյուղերում:

Տատս պատմում էր, որ էն կինը, որի տանը մնում էր փաշան, մի տղա է ունեցել Անդրանիկ անունով: Մի օր, երբ տղան չի երևացել, դուրս է եկել ու գոռացել Անդրանիկ, Անդրանիկ, փաշան դա լսելով անմիջապես հագնվել է ու նստել են ձիերը որ փախնեն, վախենալով թե Անդրանիկ զորավարն է, մեկ էլ հասկացել է որ դա

Անդրանիկ զորավարը չէ, տեղնուտեղը այդ տղայի գլուխը կտրել է: Հետագայում այդ կինը նորից ամուսնացել է ու որդու անունը նորից Անդրանիկ է դրել, որին ես ճանաչում եմ: Տատս ասում էր, որ երբ թուրքերը անսպասելի հրաման են ստացել ու արագ փախել են, իրենց մոտ հավաքած ոսկիները չեն հասցրել տանեն ու թողել են այդ կնոջ մոտ: Սա էլ ամուսնացել է գյուղի աղքատներից մեկի տղայի հետ, 7 երեխա է ունեցել, էդ ոսկիներով բոլորին կրթության է տվել ու շատ շատերին օգնել:

## Կ Ա Մ Ո

*Բանասաց՝* ***Ղազարյան Ավետիք Արամայիսի****, ծնվ. 1961 թ.*
գ. Կամո: Ձայնագրություն 150105 – 1834:

Էս պատմությունները որ պատմում եմ, ես լսել եմ իմ մորիցս, որն էլ լսել է իր հորից ու մորից: Երկուսն էլ եղել են Արևմտյան Հայաստանից. պապս եկել է Մշո Բուլանխի Շրվանշատ (Շիրվանշեխ- **Կ.Բ.**) գյուղից, իսկ տատս՝ հարևան Լիս գյուղից: Պապիս ընտանիքը մեծ է եղել՝ 7 եղբայրներ են եղել և մեծահարուստ ընտանիք. ունեցել են բատրակներ, մշակներ, տանը 12 օրոցք է դրված եղել: Որպես իրենց հարստության նշան դրոշակ են կպցրել իրենց տան կտուրին: Պապիս հայրը Երուսաղեմ է գնացել ու Հաջի դարձել: 1913 թ. թուրքը գալիս է գյուղից հարկ հավաքելու, հանգրվանում է պապիս հոր տանը: Նա լավ հյուրասիրություն է կազմակերպում, երբ մտնում է անասնագոմ, տեսնում է, որ թուրք զինվորը ձեռք է զցում իր տան աղախնին, սպանում է նրան ու աղախնի հետ սպանվածին հորում եզան սալի տակ: Հետո որոշ ժամանակ անց տանուտերը գալիս, նրան ասում է.- Հաջի Ղազար, տղաներիդ փախցրա գյուղից, թուրքերը հոտ են առել, որ իրենց զինվորը էս

գյուղում է կորել, տար որ հանկարծ չգտնեն: Պապիս հերը տղանե-րին ուղարկում է Թիֆլիս, իր բարեկամների տուն: 15 թվի ջարդի ժամանակ, իմանալով որ ընդեղ կոտորածը սկսվել է, պապս միա-նում է կամավորական խմբերին ու գնում Արևմտյան Հայաստան: Ճանապարհին հանդիպում է համագյուղացուն, որն իրեն հայտ-նում է, որ իր ընտանիքից ոչ ոք չի մնացել, թուրքը բոլորին սպանել է: Մաթոս պապը միանում է Համազասպի ջոկատին ու մինչև 19 թվականը մնում Անդրանիկի ընդհանուր հրամանատարության տակ: 19 թվից սկսում են կամավորական ջոկատներով գաղթա-կաններին տեղափոխել Արևելյան Հայաստան. բերում Արաքսը անց են կացնում, սպասում մյուս խմբավորման գալուն: Ճանա-պարհին ծանոթանում է տատիս հետ՝ երկու երեխաների մայր /մե-կը նորածին, մյուսը 8 տարեկան Բարսեղ և Անահիտ, մեկն էլ գաղ-թի ճանապարհին մահացել է/, նրան հասցնում Թիֆլիս: 21 թ. պապս գալիս է Թիֆլիս, այնտեղ հանդիպում նորից տատիս, գնում են Բոլնիս-Խաչեն՝ տատիս քրոջ տուն, այդտեղ մնում են 6 ամիս, հուսալով, որ խաղաղություն կտիրե ու սահմանները կբացվին, իրենք էլ հետ կգնան հայրենի բնակավայր: Այդ նպատակով հետ են գալիս, հասնում Ապարանի Ալի-Քուչակ [ծնթ.61] գյուղ, 1,5 տարի մնում են ընդեղ, հետո պապիս միտքը փոխվում է, գալիս են թուր-քական սահմանին մոտ՝ մեր գյուղ, որ սահմանը բացվելուն պես հետ գնան: Մինչև պապիս մահանալը՝ 49 թիվը, իր զենքը մնում էր մեր տանը: Իր տանը կից խանութ է եղել, պապս պահակություն է արել, իրեն սպանել են խանութի գողության ժամանակ: Դրանից հետո տատս իր զենքն ու դանակը գցել է թոնիր, վառել, որ հորս ձեռքը չընկնի: Պապիս ազգանունը եղել է Աստվածատրյան:

Ուրիշ մեծերից ես լսել եմ Բաբոռի մասին, որը ղաչաղ է եղել, մենակ է գործել. գիշերը պարանով կապված իջել է երդիկներից, սպանել ասկյարներին, նորից երդիկներով դուրս եկել ու փախել:

Կառնուտ գյուղի պատմությունը ես այսպես գիտեմ. որ 18 թ. թուրքը որ եկել է էս կողմ ու անցել մինչև Կիրովական, թուրք փաշեն վիրավոր է եղել, Կառնուտից մի տարիքով կին նրա վերքերը մշակել է, կապել, գիշերը պահել ու փրկել է: Երբ 20 թ. թուրքերը նորից եկել են, հրամայել է, որ Կառնուտ ոչ մի ասկյար չմտնի, դրա համար Կառնուտին ձեռ չեն տվել թուրքերը:

* * *

*Բանասաց՝ **Բաղդասարյան Ռուզաննա**, Ավետիքի կինը:*

Շարունակություն 150105-1845 ձայնագրության:

Պատերազմի լուրը իրանք լսել են, իրանք կապ են ունեցել հայդուկների հետ, իմացել են, որ թուրքը շարժվի զը դեպի Հայաստան: Մինչև թուրքի հասնելը, մեր գյուղում եղել է 23 ընտանիք, գաղթականները գյուղի բնակչության հետ փախել են, որովհետև իրանք կոտորածը տեսել էին ու վախը դեռ իրանց մեջ էր: Ալի Քուչակում ծնվել է կեսրարիս մեծ ախպերը՝ Արամայիսը, որի անունը երևի կեսրարիս հոր կորցրած ընտանիքի անդամների անունից էր: Կեսրարս պատմում էր, որ իր մայրը իրեն պատվիրել է, որ տղա ունենա անունները դնի իր կորցրած զավակների անունները՝ Աղասար, Համազասպ: 20 թվին երբ թուրքը հետ է գնացել, նոր կեսրանքս հետ են եկել էս գյուղ: Տատիկը մահացել է 59 թվին ու մինչև մահը սպասում էր, թե սահմանը կբացվի ու ինքը հետ կգնա Էրգիր: Տատիկը ավելի շատ էր պատմում անցյալից, քան պապիկը, որը քչախոս էր:

Մարագում վառելու մասին իմ կիսուրս կպատմեր, ես որ գյուղի պատմությունով կհետաքրքրվեի, կասեր թող սերնդից-սերունդ փոխանցվի մեր գյուղի պատմությունը, ինքը անուններով կպատմեր, ես դպրոցում երեխաներին պատմելիս անուններ չեմ տալիս, որ շատ բան չիմանան, թե ինչ մարդիկ են գյուղում եղել՝ այդ թվում նաև դավաճաններ: Մեր գյուղի եկեղեցու կողքը մարագ է եղել, դրա մեջ մարդկանց լցրել են, բայց չեն հասցրել այրել: Գյուղում երկու կանայք են եղել՝ փաշի սիրուհիները, որոնցից մեկը շատ վատն է եղել, իսկ մյուսը, որի անունը Բետո է եղել, տղամարդ կին է եղել, որը դիտավորյալ կապվել է փաշի հետ՝ գյուղը փրկելու համար: Իսկ մյուսը, երբ մոտը որևէ մեկը բան ասեր, ասում էր.- սպասեք, ես հեսա փաշին կասեմ, իսկ Բետոն, ընդհակառակը փաշին միշտ սիրաշահել է, համոզել, որ գյուղին շատ վնաս չտա: Հենց էդ կնոջ շնորհիվ է, որ մարագի ժողովուրդը փրկվել են, չնայած երդիկից արդեն նավթ են լցրած եղել վառելու նպատակով: Կեսուրիս անունը իր հորաքրոջ անունով են դրել, որին հղի վիճակում գցել են ջրհորը՝ թուրքերից ազատելու համար: Հարս ու տալ են եղել իրար հետ, երկուսին էլ գցել են ջրհորը, հորաքրոջ ամուսինը թողել փախել է, հետո, երբ եկել է, տեսել է երկուսն էլ խեղդվել են:

Գյուղից մի մարդ կար, Տաճո (Տաճատ) էր անունը, նա զաղթական էր, ինքը պատմում էր, թե ինչպես են ժողովրդին տարել Հազզի ձորը, սպանել: Ինքը կենդանի է մնացել ու իր տեսածները պատմել է գյուղացիներին:

* * *

Ձայնագրություն 150105-1854, շարունակություն

Մեր Զունո մամը (սկեսրայրի մայրը) կուսակցություններից էր դժգոհում, ասում էր երբ կուսակցականները գալիս էին, նամանավանդ դաշնակցականները, թուրքերն ավելի էին կատաղում: Մարդ կար մենակ իրա մասին էր մտածում. ես համադրում եմ պատմությունն ու մեր օրերը, շատ նմանություններ եմ տեսնում, ես հավատում եմ, որ Գևորգ Չաուշին մերոնք են սպանել, Անդրանիկին մերոնք են հալածել: Անդրանիկի զինվորը իմ մորս հայրն է եղել: Նա դրական հիշողություններ ուներ Գարեգին Նժդեհից, բայց վատ էր խոսում Դրոյից, պատմում էր՝ որ աղջիկը որ գյուղից իր դուրը գալիս էր, ուրեմն իրեն պետք է պատկաներ և այլն:

* * *

Ձայնագրություն 150105-1914, շարունակություն

Իմ տատիկը կպատմեր, տատս 1907 թիվն էր, այսինքն 11 տարեկան է եղել, ասում էր մաման պապան մեզ դրեցին սայլի վրա, տան եղած-չեղածն էլ հետն են բարձել ու գնացել են, բայց շատ երկար չեն հասցրել գնալ առաջ, ուզեցել են Բանդիվանի մոտ սարերի մեջը թաքնվեն, չեն հասցրել, թուրքերն եկել են, բայց, փաստորեն երեխեքին վնաս չեն տվել, երևի 20 թվին է եղել, բայց մեծերին սպանել են: Պապիս ազգից մի փոքր տղա է եղել, ուզեցել է փախնի, թուրքերը իրաականջը կտրել են: Մենք որ փոքր էինք, կսեինք թե Սաքո պապը մի ականջով է ծնվե, բայց որ մեծացանք, այս պատմությունն իմացանք: Այդ ժամանակ շատ շատերն են ծնողազուրկ

մնացել, սովից փրկվելու համար իմ տատիկս ու իրա ախպերը մնացել են Ամերկոմի որբանոցները: Պլպլան ժամի [ծնթ.62] մոտ է եղել, տատիկս շատ գոհ էր այդ որբանոցից, ասում էր բերում էին ապրանքը պահեստը լցնում էին, թաղի մարդկանց կանչում էին, ասում՝ ով ինչ ուզում է, տարեք: Տատիկս անգլերեն գիտեր, խոսում էր: Երբ որբանոցները պիտի փակվեին, տատիկս արդեն 17 տարեկան էր, ասում է ով հարազատ, ազգական կամ տեր ուներ, ամեն ինչով՝ հանդերձանքով ու անձնական իրերով թողնում էին: Օրինակ իմ տատիկին լավ օժիտ են տվել, ինքն էլ շատ սիրուն է եղել, հորեղբայրը որոշել է ամուսնացնի, իսկ եղբորն էլ պահի, մտածելով, որ ավելի լավ է իր աչքի առաջ մնան, քան գնան Ամերիկա: Տատիկս պատմում էր.- երբ տացուն [ծնթ.63] ինձ բերեց իրանց տուն, 7 տեղով ինձ ուզող եկան:

* * *

*Բանասաց՝* ***Շահինյան Անդրանիկ Ենոքի****, ծնվ. 1939 թ.*
Ձայնագրություն 150105 – 1927:

Մենք արմատներով Մշո Բուլանխի Շիրվանշեխ գյուղից ենք, 6 ախպերներով 1845 թ. եկել են Արևելյան Հայաստան և ցրվել տարբեր կողմեր: Մեր գյուղը հիմնադրվել է 1831 թ., սկզբից 4 տուն են եղել, ռուս-թուրքական պատերազմներից հետո գաղթականությունը սկսվեց և գյուղն ընդարձակվեց: 1918 թվականի մասին ասեմ. մեր տանից իմ հորս հորեղբայրը և իր կինը, պապայիս հորքուրն ու իրա երեխեն զոհվել են: 18 թվին թուրքերը որ եկել են, տատիկս իր տալերի հետ փախել են Խնկոյան գյուղ, իբր ընդեղ

ավելի ապահով կլինի, բայց թուրքերը եկել են էդտեղ, հավաքել են բոլորին, տարել: Տատս հորս հետ թնդիրն են մտել, փրկվել են: Հերս թաք տղա է եղել, ունեցել է 9 երեխա՝ 6 աղջիկ, 3 տղա: Հորս հերը դաշնակցական է եղել, 11 թվին Ամերիկա է եղել, դրա համար հորս 1933-35 թթ. նստացրել են, 35 թվին աքսորել Վորկուտա: Ինքը նստել է Վաղարշակ Նորենցի, Գուրգեն Մահարու, Ալազանի հետ: Հերս կպատմեր, որ 24 թվին, երբ ինքը որբանոցն է եղել Շիրազի հետ, հերը կգա, որ իրեն մոր հետ տանի Ամերիկա, բայց ռուսները չեն թողնի:

18 թվին թուրքերը որ եկել են մեր գյուղ, ջարդ է եղել: Գյուղում մշեցի մարդ է եղել գաղթական: Թուրքերը ժողովրդին հավաքել են գյուղում մի մեծահարուստ մարդ կար, դրա տները, որ վառեն: Էդ մշեցի բիձեն գոմից կբերե եզը կկանգնեցնե երդիկի տակը, ինքը կելնի երդիկից, էդ երեխեքին սաղին մեկ մեկ կհանի դուս, գիշերով կելլին սարերը, ըդպես երեխեքը կփրկվեն: Մամբրե է եղել անունը: Հետո հրաման է եկել, որ մարդկանց չսպանեն, ու թուրքերը պիտի գնային Բաքու, որի ամենամոտիկ ճանապարհը Ղազախով էր: Ախալքալաքով էլ են գնացել, իմ հորոխպորս ու իրա կնգան էդ ճամփին են վերջացրել:

Թուրքի փաշեքը օր կուգան, շատվորանց երկու սիրուն կնկտանց կջոկին, իրանց կնիկ կենեն. մեկը հայրենասեր կեղնի, մյուսը դավաճան: Էդ Բետոին ես հետո տեսա, էս «նիհար» կնգա պես էր, առնտուր կեներ: Կպատմեին, օր ինքը շատերի փրկել է, փաշին չի թողել, որ սպանի:

Կպատմեն, որ Մոսի Կնոն, երբ փաշեքը իրանից կնիկ կուզեն, կասե- ես ու՞մ տանիմ, իրա հարսներին, որ մի տան մեջ էին ապրում, կսե փաշեքին բան էրեք: Ըոնք փաշեքին կհամոզեն, կքնացնեն, գիշերը Մոսոն էդ երկուսին կմորթե, իրա տան մեջ հոր

կփորե, ըդոնց կդնե մեջը: Առավոտ որ կելնին, կտեսնին փաշեքը չկան, մեր գեղը կդրեն զը ահագին ջան. Կառնուտին ձեռ չէին տվել, բայց մեր գեղը ջարդել էին:

## Կ Ա Պ Ս

*Բանասաց՝ **Մարգարյան Վրեժ Հմայակի**, ծնվ. 1943 թ.*

գ. Կապս: Ձայնագրություն 150104-0000:

Հայրս 18 թվի պատմություն է պատմել, երբ թուրքերը լցվել են Ալեքսանդրապոլ: Քաղաքը տիրելուց հետո թուրքերը որոշել են հսկողություն սահմանել, բայց հայերի հետ միասին: Հայրիկս էլ այդ ժամանակ որպես ոստիկան է ծառայել: Ասում էր, որ իբր միասին էր հսկողությունը, բայց իրանք ուժեղ էին ու թալան, կողոպուտ ու բռնաբարությամբ էին զբաղված: Կսե մենք բացարձակ ոչ մի օգնություն չէինք կարող անել. մենք երբ հասնում էինք տեղ, արդեն դեպքը եղել, վերջացել էր: Իրեն թուր են տվել այդ ժամանակ, մի անգամ օգնել է մի հանցանքի ժամանակ մի ընտանիքի, որի համար բռնել են հայրիկիս, ահավոր ծեծել են ու տարել գերաններ են կրել տվել: Էդ գերաններն էնքան ծանր են եղել, որ ընկել է գերանների տակը: Ժողովուրդը նկատել է, որ մարդ է ընկել ու բղավել են –Անդրանիկը եկավ, Անդրանիկը եկավ,- թուրքերը վախեցել ու փախել են, էդ ձևով հայրս փրկվել է, թե չէ կսպանեին:

Մայրս ավելի շատ բան գիտեր ու երգի միջոցով էր ասում: Հասան դալեն էր երգում. Հասան դալի ջուրն է անուշ... և այլն: Հետո պատմում էր, որ Ղարսը ծախեցին: Ռուսերեն էր երգում, ես որ ծովից գալիս էի, էդ բոլոր կայարանները տեսա: Հիշեցի մորս երգած երգը. Егескои (Гегечкори-Կ.Բ.) карту играл, Батум проиграл, в

это время в Цхинвали Карса торговал. Այսինքն Ցխինվալիում Ղարսը տվել են, Սուրմալին փոխանակել են Բաթումի հետ: Թուրքերը որ գրավել են, էս գետը եղել է որպես սահմանային գիծ: Բաթումիի տարածքը Սուրմալիից փոքր է եղել ինչ որ չափով, դրա համար էս Աղբաբա ասածդ կամ Ամասիան զիջել են: Էն ժամանակ Ռուսաստանի հետ է եղել գործարքը, բայց ներկա դրությամբ Սուրմալին մնաց թուրքերին, իսկ Բաթումը Վրաստանին:

Հետո էդ ժամանակ թուրքերը էկել, հասել են Ախուրյան գետի աջ ափը՝ Կապսի դիմացը, էնտեղից կրակել են: Գյուղացիք փախել են սարով, սարի հետևը շատերին խփել են: Հետո երկու քեռի եմ ունեցել: Թուրքերը ժողովրդին հավաքել, տարել են Ջաջուռի «Ջարդի ձորը»: Քեռիներս հարմարացրել, փախել են ու տեղափոխվել են Պարնի գյուղ: Հայրս էր պատմում, որ թուրքերը արդեն Լոռին էին վերցրել, էլի էդ ժամանակ ինքը որպես ոստիկան է եղել, թուրքերի հետ գնացել է ու ասում էր, որ ամեն տեղ նույն բանն էր՝ ալան, թալան, բռնաբարություն, իսկ իրենց բանի տեղ չեն դրել: Թուրքերի քաշվել-գնալուց հետո ինքը այլևս ոստիկանություն չի արել, եկել է գյուղ, զբաղվել գյուղատնտեսությամբ:

Հարց.- ինքը քանի՞ տարի է եղել ոստիկան

- Դե երևի 18-20 թվականները: Ուրեմն հորեղբայրս 1904 թիվն էր, իսկ հայրս 1897թ.- 7 տարվա տարբերություն կար մեջները: Շատ սիրուն տղա է եղել, 6-7 տարեկան է եղել, թուրքերեն է իմացել. թուրքի փաշեն տարել է որպես իրեն տղա պահելու, ինքն էլ շատ ճարպիկ է եղել: Խնդրել է, թե ես միակ մայր ունեմ, թող երթամ: Փաշեն համաձայնել է, ասել է թողնում եմ, գնա: Հորեղբայրս ասել է ոնց գնամ, ինձ ճամփին կբռնեն, կսպանեն: Փաշեն 2 ասկյար է դրել հետը, որ ուղեկցեն ու նամակ է գրել, որ ձեռք չտան:

Դրանք բերել, հանձնել են իրան մորը: Ուզում եմ ասել, որ մեջները խղճով մարդ էլ է եղել:

Իմ զոքանչի քեռին Ախուրիկից, անունը Սենո, Ղարսում էր ծառայել: Նա ասում էր, որ Ղարսի բերդը սարի վրա էր, տակը պարենային պահեստներն էր, գնացինք դատարկեցինք (անցք են բացել, դատարկել), զմռսեցինք ու պայթացրինք: Իրա հորաքույրը Սոսեն է եղել, իրա հայրը գյուղի ղեկավար է եղել, 5 հարկահավաք են եկել գյուղ, Անդրանիկը, որ էդ տանն է եղել, թաքնվել, լսել է, որ դրանք ասում են մեզ աղջիկներ բեր զվարճանալու համար: Անդրանիկը երդիկից իջել է, 5-ին էլ սպանել է ու Սոսեի միջոցով գնացել միացել է Սերոբ փաշի ջոկատին ու էդ ժամանակվանից սկսել է պայքարել թուրքերի դեմ:

Մի ուրիշ պատմություն էլ. էդ Սենոն մի հարուստի ձիեր է վաճառել, էդ հարուստը չգիտեմ ինչ պատճառով /փող բերելու, թե ինչ/ դուրս է եկել: Իրանք 3 ընկերով տեսել են արկղ կա, արկղը քանդել են, տեսնեն մեջը ինչ կա /իրանք էլ սոված մարդիկ/, տեսել են Տիգրան Մեծի նկարը փղոսկրի վրա, տարել վաճառել են կոլեկցիոների: Էդ կոլեկցիոներն էլ գնացել գտել է էն հարուստին, որից տարել են նկարը: Փաստորեն էդ հարուստը նորից պիտի առնի իր նկարը, սա իմացել է, թե ովքեր են եղել նկարը գողացողներն ու դատի է տվել նրանց: Դատավորը հայ է եղել, երեք տարով նրանց դատել է, բայց հետո բաց է թողել՝ արձանագրելով որպես դատված: Էդպես փրկվել են:

* * *

*Բանասաց՝* ***Մարգարյան Մարիամ****, ծնվ. 1929 թ.*
գ. Մարմաշեն:

Հարց- Տատ ջան ինչ ես հիշում թուրքերից

Պատասխան. – Ինչ հիշեմ, հարս, աղջիկ խայտառակ են էրե փողոցները, սարերը, լցել են մարագները պաժառ տվե, վառել են:

Հարց- Դու էդ ժամանակ ծնված չես եղել, քեզ ով է պատմել էդ մասին

Պատասխան -Կիսուրս. 1903 թիվն էր, պատմում էր, որ ամենից շատ վնաս հարսներին ու աղջկներին են տվել, որտեղ որ բռնել, խայտառակ են էրե:

Զրույցին ներկա աղջիկները առաջարկել են պատմել իր հոր ու իրա ընտանիքի մասին, որոնք Մարմաշենից են:

-Հերս կսեր Մշու երգրից գաղթվանք, եկանք ձագ ջան, ինչ հասկցանք, եկանք ըստեղ:

-Իսկ էնտեղից ինչի՞ գաղթեցին, էլի՞ թուրքերի պատճառով:

-Հա, բա, էլի թուրքերի պատճառով: Ընտանիքով են փախել, Գյուլիզարը իրան ախպոր կնիկն էր /ընտանիքի մեծը մամս էր, ջոջո կսեինք/:

Աղջիկները պատմում են.-իրանք Մանազկերտի Յաղման գյուղից են եղել, 15 թվի կոտորածների ժամանակ փախել, եկել են Մարմաշեն, մեծ գերդաստանով են եղել, տուն ու տեղ են դրել էդ-տեղ: Պապս կերգեր. «Պարսկաստանեն փախա եկա, կարոտ, փափագ հայրենիքս, հայրենիքս»

Թոռը ավելացնում է. ինքը (տատը) միշտ պատմում էր, որ իրանք շատ հարուստ են եղել, իրանց ունեցվածքը խլելու համար են թուրքերը հարձակվել: Իրանք փախել են, բայց իրա հորքուրին

թուրքերը բռնել, պահել են, տատի հայրը հետ է գնացել, որ քրոջը հետ բերի, բայց չեն տվել, նույնիսկ մազերն են կտրել, որ չճանաչեն:

* * *

*Բանասաց՝* ***Գոհար Երվանդի Սարգսյան-Արիստակեսյան****,ծնվ. 1942թ.* գ. Կապս: Ձայնագրություն 150107- 2231

Նախ պատմեմ նկարի մասին. նկարում իմ պապս է /Հովհաննես Մուրադյան, մականունը Ճիլիլ/, 12 տարի աշխատել է Ծաղիկովենց գործարանում [ծնթ.64]: 1909 թ. պապս գնացել է Ամերիկա. ինչի է գնացել: Գյումրիում կռիվ է գնացել հնչակների ու դաշնակների միջև: Ինքը Ծաղիկովների մոտ ֆայտոն է քշել, անցնելիս է եղել, ժողովուրդը հավաքված է էղել հրապարակում: Պապս հետաքրքրվել է, թե ինչ է եղել, ինչի են կռվում, ասել են հնչակներն ու դաշնակներն են, ամեն մեկը կուզենա իր խոսքը առաջ տանի: Էդ ժամանակ մոտենա գը, կսե - ձեր ղեկավարն ով է, կսեն-դու ով ես, կսե- ես ես եմ, բայց ձեր ղեկավարը ով է: Ցույց կուդան, կմոտենա կսե – ախպեր ջան հայ ես, կսե- հա, -դեմինդ էլ է հա՞յ, - հա, -հբը օր հայ եք, ընչի եք իրար հետ կռվում: Դե օր հայ եք, միացեք իրար ու ինչ օր պղի էնեք, արեք հանուն ժողովրդի, իրար մի վատաբանեք, ասել է, հայհոյել ու գնացել է: Ըդեղ էղել է մի մարդ կայնած, երբ որ գնացել է Ամերիկա, էդ մարդուն հանդիպել է Պոլսում: Էդ մարդն իրան ճանաչել է, ասել է ես քեզ հիշում եմ, ես դաշնակ եմ, քելե քեզ ծանոթացնեմ դաշնակների հետ, իմացի դաշնակներն ով են: Էդ մարդը եղել է Ջալաբից [ծնթ.65],ինքն էլ դաչաղ /հմիկվա գողականները էն ժամանակ դաչաղներն են էղել/. հեչ մարդուց չի վախեցել, շատ ռիսկով է եղել, նույնիսկ թուրքի ժամանակ: Իրանք Ամե-

րիկայից եկել են 16 թվին, հավաքված են եղել Ղարախաչ,իմ պապս ու դաչաղ Մինասը իմացել են, որ թուրքերը եկել են, էդ Մինասը թուրը քաշել է թուրքերի վրա, ըսել է հմի ձեր վզերը կկտրեմ, կերթաք ձեր փաշեքին կսեք թե հայերը ով են: Ըդտեղ մի 15-20 հոգի են եղել, կեսին սպանել է ու ինքը դուս է եկել: Օր սպանել է, էդի փաստ է, քանի որ պապս է պատմել: Հետագայում իրան սպանել է Մեղրաշատի տերտերը, որի հետ անձնական հաշիվներ է ունեցել:

Պապս կսեր մենք արտերը կվարեինք (Կապսա արտերը սարերի դոշին էր) մեկ էլ գյուղից կրակոցների ձեներ եկան, մենք վազեցինք գյուղ ու ինչ տեսանք. Կապսը 3 կողմից ձորերով անջատված է, մի կողմից մենակ փախնելու տեղ կա դեպի սարը: Իրանք եկել էին Բայազետից՝ պարսիկներից էին փախել-եկել, իրանց պապն ըսել է, թե մենք կմնանք ըստեղ: Իրանք 22 թվին են եկել, Գյումրին չեն հավանել, ըսել են, որ մեր Բայազետը ավելի մեծ քաղաք էր, իսկ Կապսը բնական պաշտպանվածություն ունեցող տեղանք է եղել, դրա համար մնացել են ըստեղ: Ինչ վերաբերում է 18 թվին, թուրքերը ներխուժել են ապրիլ ամսին, պապս ունեցել է 3 տղա,ինքը բաժնել է տղերքին, ուղարկել տարբեր կողմեր պաշտպանելու, մինչև գյուղը դարդկվի: Իրանց հետ մի քանի հոգի էլ են եղել, պայմանավորվել են, որ երբ գյուղը դարդկվի, խաբար անեն, որ իրանք էլ առաջ շարժվեն: Ինքը էդ ժամանակ կվիրավորվի, ջահել տղերքը չեն մնա իրան քովը, ինքը նրանց կուղարկի, իսկ ինքը թևից ու ոտքից վիրավոր, գըռքաշ կհասնի իրանց տունը, որը ձորին մոտ էր: Ամերիկայից նոր եկած մարդը ինչեր կունենա, կսեր նայեմ զը թե ինչ վերցնեմ, բայց հետը վերցնե զը մե յաշիկմ պաղրոն, էլ բան չի վերցնե ու կթողե տնից դուս կուգա:Կհասնի գյուղի աղբուրը, կտեսնի որ կնիկմ ընգած է, գյուղի հարսներից, երեխեն կրծքի վրա կուրծք կուտե, բայց ինքը անշարժ է. նայե զը ինչ էնե, ոչ կրնա էդ կնգան օգնե,

ոչ էրեխուն: Ընդեղ տղա էրեխեք կտեսնե, կսե գնացեք դրա մարդուն գտեք, ըսեք կնիգդ ընգած է, թող գա տիրութուն էնե: Էդ ժամանակ էդ կնիգը մեռած չի էղնի, կրակոց կեղնի,գնդակը կուգա, կըկպնի պապիս շապղի կռնգին, կերթա կկպնի էդ կնգա սրտին, տեղում կմեռնի: Ինքը վիրավոր, մի թևը հրացան, մյուսում պատրոնները, էդ էրեխին կուղա թևի տակ, ոտը քաշ տալով էրեխուն կտանի, հերը կգա էրեխուն տիրություն կենէ: Ես էդ էրեխին տեսել եմ, կհիշեմ, որ ինչքան պապիս տեսներ ծունր կդներ, թե իրան փրկել է:

– Փաստորեն գյուղից բոլորը դուրս են եկել:

– Հա, գնացել են Մայիսյան, որ էն ժամանակ Օրթաքիլիսա են ասել, կեսը սարերն է բարձրացել: Թուրքերը մտել են գյուղ, ավիրել, սրբել գնացել, հետո նոր ժողովուրդը հետ է եկել: Եղել են մարդիկ, որ գնացել են գյուղ ապրանք բերելու, նրանց թուրքերը բռնել են, Արփաչայի ձորի բերնին կանգնեցրել ու սպանել են:

20 թվին որ եկել են, սարսափելի է եղել. կսեր գյուղը դարդակվել էր,էրեխեքից շատերը որբ էին, ուտելիք չկար, հաց կմուրային, բայց էդ հացն էլ չկար: Ում տունը թնդրի ծուխ կելլեր՝ հաց կթխեին, էրեխեքը կհավաքվեին ընդեղ,տան տերերը բոլորին կկերցնեին, պիտի բոլոր էրեխեքը հաց ուտեին:Էդ տարիներին որբանոց շատ էրեխեք են գնացել, պապս գյուղի էրեխեքին չի թողել: Հմի էլ օր Կապս մտնես, հարցնես, բոլորը կպատմեն, թե պապս ինչ մարդ է էղե:

Իրանք Բայազետից բերած Ավետարան են ունեցել, մեծ ախպոր տունն են թողել: Ինքը, թոփը ոտի մեջը, էդ տան հարսը, որ Թիֆլիսի աղջիկ է եղե, գրքերը լցրել է փեշի տակը, հանել է սարերը, տեսել է թուրքերը գալիս են, դրանք լցրել է քարերի տակերը, պահել է: Մի տարի հետո նոր դրանք հետ են բերել:

Հարց – Իսկ Անդրանիկի մասին ինչ կպատմեք

-Անդրանիկի մասին պապս կպատմեր, որ Անդրանիկն էկել է,

Գյումրի, այգու մեջ ժողով է անցկացրել: Պապս կպատմեր, որ ինքը լավ կհիշեր, որ Անդրանիկն ասել է, եթե բոլորդ թասիբ ունիք, Բայթարից մե հոգիմ չթողնիք կենդանի. Բայթարցիները էղել են հույն, իրանք Անդրանիկի զորքին դավաճանել են՝ թուրքերին ցույց են տվել Անդրանիկի զորքերի տեղը, սրանք հարձակվել են, 200 հոգի հազիվ փրկվել են, մնացածը սպանվել է:

Անդրանիկի համար պատմեր զը հորքուրիս կեսրարը. ինքը Ղարսից էր, ավարտել էր Գևորգյան ճեմարանը, պիտի արդեն ձեռնադրվեր, 15 թվին երբ պատերազմը սկսվել է, ինքը գնացել է պատերազմ ու կռվել է Անդրանիկի հետ: Ինքը շատ գրագետ մարդ էր, զորքը եկել հասել է Գյոզալդարա [ծնթ.66]՝ Արագածի փեշերը, գաղթականներին բերել է, գյուղերում տեղավորել է: Հետո Բաքուն ի հայտ է եկել իրա դավաճանությամբ: Անդրանիկն իրա զորքին ըսել է մենք Բաքու չենք մտնի, դրա հետ գործ չունինք, որըդ գուզեք մնացեք ըստեղ, որըդ չէ՝ եկեք ընձի հետ գնանք արտասահման: Իմ հորքուրիս կեսրարը չի գնացել. կնիկը մահացել է, 2 երեխեքը որբ են մնացել, հետո իրա հարազատները գյուղում են եղել: Ինքը մնացել է, 5 գյուղում դուրգյար կաշխատեր.սել, փոցխ, գերան, ըդպես բաներ կսարքեր: Ես դպրոցական էի, իրա հետ կխոսայի, ինքը կպատմեր իրան անցած ճանապարհը, թե Ղարսից ինչղ են եկել, ինչեր են ունեցել, ինչ են բերել: Ղարսից օր կուզան չիդեմ ինչ կարմունջ կա, Արփաչայի վրա է եղել, Ղարսա կամուրջ կսեն, ըտեղ լռվել են ու իրանք սաղ ունեցվածքը թողել են, եկել: Ես կսեի- Սահակ պապ, դու էդքան կարդացած, գրագետ մարդ ես եղել ու կերթայիր գյուղում աշխատելու՞: Կսեր աղջիկ ջան, էն ժամանակ գոյություն ուներ բռնել. եթե ես ի հայտ գայի, թե ով էի, կամ երթայի եկեղեցի, ուրեմն ինձ կբռնեին, ընտանիքս կմնար անտեր, ըդոր համար առա ուրագս ու չագուչը, ընգա գյուղերը:

Նժդեի մասին պատմեմ (Գարեգին Նժդեհը 1921թ. Ալեքսանդրապոլի գավառում չի եղել, բանասացը շփոթում է ուրիշի հետ կամ թվականներն է խառնում-**Կ.Բ.**). 20 թիվը անցել է, թուրքերը Գյուլուբուլաղ, Ազիզբեկով [ծնթ.67] իրանց տեղն են մնացե, շատ անասուն ունին, հայն էլ վայ նաչարին [ծնթ.68] կապրե. պապս կսեր, իրանք հայերին կօգնեին. կուտային վարելու եզները, սերմացուն՝ մարդիկ իրանց հողը կվարեին, կցանեին: Պապիս ախպերը ջահել է մեռել, իրա ընտանիքի հոգսը մնացել է պապիս վրա: Կսե պառգած եմ, հմը քնած չեմ, մեկել դուռը զարգեցին, ըսի էս ով է գիշերով դուռը կզարգե, ելա բացեցի. տեսա քեռու տղեն Նժդեհի ու երկու զինվորի հետ: Նժդեն քեռու տղուն կսե – ինչ անենք, որ էդ թուրքերի անասունները բերենք, էս էլ կսե, ես բարեկամ ունիմ, որ էդ թուրքերին լավ ծանոթ է ու կբերե պապուս մոտը, կսե էս Նժդեն է: Պապս կսե նայեմ, մեզի պես մարդ է. կսե մենք եկել ենք, որ մեզի ուղղություն ցույց տաս, մենք էդ անասունները պտի տանենք: Պապս կսե տանելուն բան չունիմ ըսելու, բայց էդ անասուններով իրանք էս կողմերի հայերին կօգնեն, որ տարար էդ անասունները, էս մարդիկ ինչով պիտի վարուցանք էնեն: Կսե գարնան գլուխ էր արդեն, էս էլ կսե – ինչ օր կենե, թող էնեն. թուրքերը տարել են հայերի ունեցածը, մենք էլ պիտի տանենք իրանց ունեցածը: Հմի կամ գլուխդ, կամ ուղեկցես պտի մեզի: Պապս կսեր մտքիս մեջ ըսի հլա դու մենակ ըլնեիր, ես գիդեի քեզ հետ ինչ հաշիվ կենեի, բայց հիմա ինչ կրնամ էնե: Էդ 21 թվին էր, կսե ես ձեզի կուղեկցեմ մինչև էդ գյուղերը, ընդեղից հետ կուգամ, Կապսից առաջ չեմ գա, դուք ինչ կուզեք գնացեք, էրեք, եթե դու հայասեր մարդ ես, հայերին կուզես օգնես, թուրքերից էլ վրեժ լուծես, քո գործն է, ինչ ձևի կուզեք էրեք: Կսե գնացինք ետ եկանք, մեր Արփաչայը ունի լավ քարափներ, մտա մե քարափի տազը ու դուս չեկա: Պապիս քեռու տղին կհարցնեն, Մարդ

ուր է բարեկամդ, հմի իրան օր բռնենք, կսպանենք. անասունները բերել են, ձորից չեն կրնա հանե, Արփաչայն էլ ողողվել է, հնար չունին, թե ինչ ձևով պտի ելնին, կովերի կեսը կփախնին էն կողմ, կեսին կհանին, պապս էլի այան չի ելնի, տուն չի գա, մինչև որ կիմանա, օր եկել են մարդիկ քաղաքից՝ իշխանությունից ու Նժդեհին չեն թողել անասունները տանելու: Բայց պապս կսեր, մի 500 գլուխ էլի հասցրած տարած կեղներ: Ըդոր համար երբ իրա մոտ Նժդեհի անունը կուղային, կսեր ինքը լավ մարդ չէր, ուրիշ է, որ Անդրանիկի կամ ուրիշի անունը տան:

-Իսկ Դրոյի մասի՞ն

- Դրոյին տանել չէր կրնա, որովհետև, կսեր, Դրոն է ծախել Ալեքսանդրապոլը:

-Ո՞նց է ծախել

-Ըդպես, կերավ, խմեց, տվեց: Պապս կսեր ընչի չեն ըսե, որ իրանք ծախեցին Հայաստանն, օր կսեն բոլշևիկները ծախեցին. Ինքը կսեր դաշնակները ծախեցին, ինքը դաշնակներին տանել չէր կրնա: Կսե մարդ է՞լ իրան հողը, երգիրը ծախե. Արփաչայի վանքի, եգեղեցու մոդը նստել կերել, խմել են, պայմանագիր են ստորագրել թե ինչ, իրանք թողել գնացել են: Պապս իրանց չէր սիրե, կսեր էդ մարդիկ հայ չեն, ինչ հայ, եթե հեչ մի բանի չեն հասել, չեն կռվել, ժողովրդին իրար դեմ են հրահրել, դրանք ինչ մարդ: Անդրանիկի համար ուրիշ: Դրոյի խմբի համար ինքը վաբշե լավ չէր խոսա. կսեր ինչ կէնեին կմտնեին մեկի գոմը, տունը, ունեցածը կտանեին, ուրդեղ լավ հարսմ կտեսնեին կմտնեին, կտանեին, ինչ կենեին դաշնակները: Ինքը ճշտի կողմ մարդ էր, Դրոյի համար միշտ կսեր մի քանի հոգով եկան Արփաչայի եկեղեցու մոտ կերան, խմեցին, Հայաստանը ծախեցին:

## ԿՐԱՍԱՐ

*Բանասաց՝ **Հովհաննիսյան Մարգար,** ծնվ. 1940 թ.*

գ. Կրասար: Ձայնագրություն 150101- 2336

1915 թ. կեսերին հերս էկել է, փախցրել է մորս /մերս Հնաբերդցի է/ նորից գնացել Արևմտյան Հայաստան: Ընդեղ ախպերս է եղել, որ հիմա Կույբիշևում է, 101 տարեկան է: Փախեփախի ժամանակ, մենք խմբապետ հորոխպոր տղա ենք ունեցել՝ Մելքոն, կելնեն կռվով կհասնեն Ղլիճ, կտեսնեն ընդեղ Լենին ճառ կկարդար Խնուսաբերդում (շփոթում է ուրիշի հետ. Կ.Բ.): Հերս ուզեցել է որ զարգե, դարանավորվել է որ զարգե, հորոխպերս քաշել է թե մի արա, մեզի ազգով կկտրեն: Ըդպես փախե եկել են: Կսեր թուրքին մենք հաղթել էինք, թուրքը բուռմ խեձախ չուներ, օր տար իրա զորքին: Լենին եկավ Աթաթուրքին համ զենք տվեց, համ հաց տվեց, համ էլ շոր: Նրանք էլ էկան ու սկսեցին մեզի ջարդել:

Հարց - Ձեր հայրիկը որ Արևամտյան Հայաստանից եկել է, եկել է միանգամից այստեղ, Կրասա՞ր:

Պատասխան - Տո չէ, ինչ Կրասար. սկզբում էկել են էջմիածին, Երևան. էջմիածին էդ ժամանակ կսեն մալարիա է եղել, թե ինչ, չգիտեմ, կսե ջուր կհավաքվեր փորերը, փորերը կուռեին, ըդպես կմեռնեին: Ըդտեղից փախել է եկել Երևան, ըդտեղ է չէ հարմարվել, էկել է Կիրովական. ստեղ մեր գեղից մարդ է էղել ծանոթ, իրան բերել է ստեղ, մնացել է, մենք էլ ընգել ենք կրակը:

Առաջին անգամ որ էկել է, նշանված չի եղել, 34-35 տարեկան է եղել, եկել է Հնաբերդ /Խրդագիրման/ քառսուն ջաղաց կասեն, մորս փախցրել է Արևմտյան Հայաստան, ընդեղ մեծ աղբերս է եղել: Երկրորդ անգամ եկել է 18 թվին: 18 թվին ինքը որ Արևմտյան Հայաստան է էղե, ընդեղ մենք վանք ենք ունեցե, սուրբ Դանել

վանք, ըդեղ 500 գլոխ ոչխար է պահե հորոխպերս: Թուրքերը սաղ թալնած տարած են եղե 500 ոչխար, 30 կով: Երբ գետը անցնելուց են եղե՝ Մուրադ գետ, մենք Կարմիր Ավետարան ենք ունեցել, կսե գետը ելավ սաղ քշեց տարավ՝ գողինք, Ավետրան, սաղ տարավ: Եկել են ստեղ, գյուղում մի քանի տուն է եղել, իրանք ուզեցել են շենք սարքեն, գնացել են գիշերը Սեպասար, առավոտ եկել տեսել են, որ շենքը քանդած է եղել. թուրքերը քանդել են:

Հարց – էդ ժամանակ այստեղ թուրք է ապրե՞լ:

-Աղբաբու թուրքերը. Ամասիայի ռայոնը սաղ թուրք են եղել, էդ թուրքերն են քանդել: դրանք իսկական թուրքերի հետ կապ են ունեցել, տեղի հայերին թալանել են:

Վերջը տեսել են դաշտերը լավ կանաչ, իրանք էլ անասուն են պահել, մնացել, բնակռել են ստեղ:

Գեղից դավաճան է էղե՝ Ստեփանի ազգությունից, ժողովուրդը մտել է հորի մեջ, մե կնիկմ է էղե, տեղն ըսել է, գնացել են մարդկանց հանել, կոտորել են:

Սեպասար չեն ջարդել, ֆռանկներին ձեռ չեն տվե:

* * *

*Բանասաց՝* ***Սարգսյան Գրիգոր Միսակի****, ծնվ. 1944 թ.*
Ձայնագրություն 150102- 0025:

Առաջ զոհը հենց մորս հերն է էղե: Մերոնք 18 թվին եկել, հետո նորից գնացել են:

Հարց- Ո՞րտեղից են եկել ձերոնք

-Մշո Բուլանըղից: 18 թվին եկել են, հետո գնացել, նորից 20 թվին էկել ու էկել են: Մերս կպատմեր մարտի վերջին, ապրիլի

սկզբին իրանք նոր բաժնվել են (դպրոցի մոտ էն ցանոցն օր կա, ըդտեղ), մերս խնոցին ձեռն էր, ձեռս բռնած դուս էկանք, թուրքերն լցվան գյուղ: Կրակոցն էկավ հին գերեզմների կողմից. առաջինն օր զարգել են մորս հերն է էղե: Ու էկան սկսեցին ջարդուփշուր էնել: Կսե գնացինք լցվանք ծուռ Գալեների տուն. ամենամեծ տունն էդ էր: Հետո Բաղիկին են զարգե, մյուս հորոխպորը, բայց դիակը հետո է դուս եկե: Փախցնողն էլ յարանն է էղե, որ Մուռդուշ բան էկել են, ըսել է թե - բա տղերքն ու՞ր են, կանչա բեր, ըսել է հես է փաշա ջան, կբերեմ: Մտել է տուն, թնդիրը վառե, ծուխ-մուխ քցե, տղերքին փախցրե: Հմը Ռուբիկենց օր մտնիս, գոմի դեմը քար կա. ելել են ըտեղ, փախել սրբի սար, մութը տվել էր մնացել էին ըտեղ. Սումբատ ամոյի ոտի մատներն էտեղ էր մրսե, թափե: 10-15 հոգի փախել էին Սեպասար, կաթոլիկներին չէին ջարդե, կաթոլիկ եկեղեցին նրանց հովանավոր էր կանգնել, ըդպես փրկվան մարդիկ: Ով որ մնացել էր, ջարդել էին. խուժանն էր էկել, գիդես զորքե՞րն էին: Ենի-յոլի [ծնթ.69] կողմից եկան անպետք թափթփուկները. օղորմածիկ զորավարն օր եկել է, ասել է թողեք դրանց ջարդեմ, չեն թողել, թե Անդրանիկ ջան դրանք մեզ բարեկամ են: Կսե Անդրանիկն օր Ղարախաչ անցավ, իրկուն լցվան սկսեցին թալանը:

Մերս կպատմե, կսե - բալա ջան փոքր տեղմ ունեինք ոսկի քամարներ տղամարդկանց, հարսների զարդեր, բան. Տեփան տացուի՝ մեծ հորոխպոր գլխին զարգել են, ըդպես վիրավոր մնացել է, իմացել են մեռել է. բերել են բրդով-բանով պահել են, հետո եկան՝ բռնեցին. գեղի միջից մատնող է եղե, թե էդ մարդը սաղ է: Նորից կսե էդ խուժան խաժամուժը էկավ լցվավ, նոր փրկազին տվինք, որ փրկվավ, բոլոր որբերին առավ իրա թևի տակ:

- Բանասացի կինը հարցրեց, թե էն ու՞մ էին տղոցկանի շոր հագցրել, որ չսպանեին:

- Տեփան տացուին:

Սկզբի ժամանակ Վիտոյի Երվանդ կգա Բայտար գյուղից, կսե ժողովուրդ փախեք, Բայտար կջարդեն, թուրքեր պաժառ են տվե: Կսեն հա էլի, շան որդին ստից կխոսա, որ տները թողենք, զան թալան էնեն: Իրգուն արդեն ջարդը կսկսեն մարդիկ:

Բանասացի կինը՝ Հովհաննիսյան Էսմա, 1951 թ., Ախալքալակի Ջանդուրա գյուղից

Առաջվա գյուղերը փանջարեքով [ծնթ.70] կապ են ուեցել: Փաշեն մեր գյուղը մնացել է, իրա կանանցից մեկը հայ է եղել, զաղտնի խաբար է էրե. փախեք, ինչքան կրաք շուտ փախեք, էսոնք ձեր գլխի տակ բարձ կդնեն: Մամս 8 տարեկան է էղե էդ ժամանակ, կպատմե էդ ժամանակ թուրքերը կգային տղերքին կսեին քուր չունեք, բերեք հետներս խաղան: Իրան հորոխպոր կնիկը թուրքի հետ կկապվե, իրան հերանց տունն է ապրե թուրքի փաշեն, կսե մեզի կծեծեր, չէր թողնի որ խաղայինք հետները: Հետո կսե հավաքե մի խումբմ փանջարեքի մեջ վառել են, մյուսին չեն թողել որ վառեն ըսել են թե կարմիրբանակայիններն եկել են: Մեկի մոր ոտերի տակը կսե զոպա են քաշե [ծնթ.71], զոպեն ինչ է չիդեմ, վառել են:

Հարց- Փաստորեն թուրքերի գնալուց հետո ավելի դժվար է եղել:

-Բա ինչ է էղե, սաղ թալանած, ջարդ ու փշուր էրած, մարդկանց սիրտը կոտրած: Գրիգորյան Սամվելի քրոջն են տարել Ղարս, նամակ կգրեր. Լեննազան կերթար նամակ կգրեր. մինչև 70-ական թվականները կար: Ստեղից էլ տարան էն մեր Գարեի քրոջը. էնի ստեղ Իբիշ [ծնթ.72] էր, մերը հետո /37-38 թթ /գնացել էր անգամ, ճանչցել էր, բայց նա ասել էր չէ, արդեն սահմանափոխ [ծնթ.73] եմ, չէր էլ ուզեցե հետ գա:

## ՀԱՅԿԱՁՈՐ

*Բանասաց՝* ***Գասպարյան Երանոս Ազատի****, ծնվ. 1957 թ.*
գ. Հայկաձոր: Ձայնագրություն 151028-2052

Պատմությունները, որ պիտի ներկայացնեմ, լսել եմ մեր մեծերից, իմ պապերից, որոնք ծագումով մշեցի են: Կոնկրետ թուրքերի ներխուժման մասին ես լսել եմ իմ մորական տատիկից, որը Հայկաձորից էր: Նրա առաջին ամուսնուն թուրքերը սպանել են, ինքը մի կերպ ճողոպրելով փրկվել ա, հետո երկրորդ անգամ ամուսնացել ա իմ պապի հետ, որից ծնվել է մայրս:

Հարց- իսկ ինչպես է ճողոպրել

Պատասխան- Երկուսով են եղել, երբ թուրքերը մտել են գյուղ, ամուսինը պայքարել ա թուրքերի դեմ՝ տատիս ասելով, որ փախնի.- Փախի, Զոյա, փախի, տատիկս փախելա ձորերը, թաքնվել ու այդպես ողջ մնացել: Գյուղում կոտորածներն իրականացրել են քրդերը՝ թուրքերի գլխավորությամբ: Մեր գյուղում Տայո Բեգն ա եղել իր աշիրեթի զինվորների հետ, այսինքն իրանք թուրքական զորքերի հետ մտել են Շիրակ, հետո տարբեր գյուղերում կայազորեր են դրել, իսկ մեր գյուղում իր կայազորով մնացել է Տայո բեգը: Քանի որ լսել են, թե թուրքերը տղամարդկանց են կոտորում, դրա համար գյուղի տղամարդիկ թողել են գյուղը, թաքնվել ձորերում ու պարտիզանական պատերազմ մղել թուրքերերի դեմ: Կանայք ու երեխաները մնացել են գյուղում, թուրքերի մեջ, որոնք շատ կանանց ու երեխաների տարբեր աստիճանի վնասներ են տվել, անգամ սպանել: Մայրս պատմում էր իր մորից լսած պատմությունը, թե ինչպես կրակը վառած է լինում, փոքր երեխան վազում է դեպի կրակը, ու այդ երեխային՝ գրկանոց, քրդերը վերցրել քցել են կրակի մեջ, որ տեսնեն թե ինչ կլինի: Կամ հղի կնոջ փորը ճղել են, որ տես-

նեն երեխան ինչ ա՝ տղա, թե աղջիկ: Գյուղում մնացած կանանց մի մասին էլ տարել են Չիթհանքով ու այրել մարագներում: Ընդհանրապես գյուղում զոհերը հիմնականում կանայք ու երեխաներն են եղել, բայց հստակ թվերը չեմ կարող ասել, դրանք տասնյակներ են: Հետո տղամարդիկ հետ են վերադարձել, էդ 20 թվականին, երբ թուրքերը հեռացել են, տղամարդիկ հետ են եկել, իսկ այդ Տայո բեգը չի կարողացել ժամանակին գյուղից դուրս գալ ու որոշել է թաքուն փախնել, դրա համար հագել է կանացի շորեր, բայց մեր գյուղից մի պատանի տեսել ու ճանաչել է նրան, հարձակվել նրա վրա, ասելով ես սրան ճանաչում եմ, սա Տայո բեգնա: Հայկական զինվորները, որ եկել էին գյուղ, բռնել են նրան ու տեսել, որ իսկապես դա տղամարդ է ու տեղում սպանել են: Հիմնականում սա է, որ գյուղը մեծ է եղել, բայց դիմադրություն չի կազմակերպվել, քանի որ տղամարդիկ լքել են գյուղը, որ կոտորածներ չլինեն:

### ՀԱՑԻԿ

*Բանասաց՝ **Միքայելյան Լենա**, ծնվ. 1936 թ.*

գ. Կարմրաքար, Հացիկում հարս է եկել: Ձայնագրություն 150105 – 2333

Մեր գյուղում կոտորած չի եղել, քանի որ բոլորը ինքնապաշտպանության են դուրս եկել:

Հարց – էդ 1918, թե՞ 20 թվին ա եղել

Պատասխան. – սուտ չեմ կարա ասեմ, չգիտեմ, թե որ թվին, բայց մի անգամ հաստատ կռվել են:

Հարց – Քեզ ո՞վ ա պատմել դրա մասին

Պտասխան.- Կիսուրս, մերս, գյուղի ժողովուրդը, պատմում էին, որ ժողովրդին հրահրում էին թե միք վախենա, պաշտպանվեք:

– Ո՞վ էր ասում պաշտպանվեք:

- Իմ կիսուրը. ինքը շատ խելացի, անվախ կնիկ էր: Իրան հարգում էին, իրանք տեսել էին թուրքերի կոտորածները, դրա համար կռվեցին ու գյուղում կոտորած չեղավ:

* * *

*Բանասացի աղջիկը՝ **Հասմիկ Նիկողոսյան:***
Ձայնագրություն 150105-2338

Մեր գյուղում իմ երեխա ժամանակ մի ծեր մարդ կար, Երվանդ էր կարծեմ անունը, նրան ծաղրով, հեգնանքով էին վերաբերվում, խենթ էին համարում: Բայց հետո երբ իմացանք նրա պատմությունը, հասկացանք, որ շատ հայրենասեր ու ըմբոստ մարդ է եղել: Երբ թուրքերը եկել են, շատերը՝ տղամարդիկ, թողել են տուն, տեղ, վախեցել, հեռացել են: Ինքը ունեցել է զենք, ելել է սարերը ու երբ թուրքերը եկել-անցել են, ինքը կրակել է: Ինքը մենակ է պայքարել, հետո իրեն եկել, գտել են: Բանավոր զրույցներից գիտեմ որ տղամարդկանց հավաքել տարել են Հզազի ձորը ու գլխագին պահանջել բաց թողնելու համար: Մերոնք կարողացել են էդ գլխագինը տալ, հետ են եկել, սկզբում Գյումրի են գնացել, հետո էստեղ են եկել ու մնացել:

## ՀՈՂՄԻԿ

*Բանասաց՝ **Քնարիկ Մյասնիկի Արշակյան**, ծնվ. 1969 թ.,*
գ. Հողմիկ: Ձայնագրություն 150104 - 2230

Իմ հիշողությունները մնացել են իմ մորական տատիկի՝ Սիրանուշ Հարությունյանի պատմածներից: Գյուղում ապրում են իմ քեռիները, իրենց ընտանիքն ունեցել է սուրբ գիրք, որի պատ-

մությունը ըստ տատիկիս հետևյալն է. 1828 թ. երբ իրենց ընտանիքը գաղթել է Արևմտյան Հայաստանից, իրանց սուրբ գիրքն իրանց հետ է եղել, սակայն Ախուրյան գետն անցնելիս կորցրել են գիրքը: Հետո իրա հորը գիրքը երազ է եկել ու ասել, որ գտնվում է ջրի տակ, ու որ գնան հանեն: Տատիկը պատմել է, որ գիրքը գտնելուց հետո զարմանալի է եղել, որ գրքի թերթերը թրջված չեն եղել: Էդ գիրքը հիմա էլ կա, իրենց տան տեղում մատուռ են կառուցել ու պահում են այնտեղ, իսկ դրա նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են քեռիները: Պատմում են, որ երբ 18-20 թթ. թուրքերը գյուղում են եղել, մարդիկ իրենց տան պատերի մեջ անցքեր են ունեցել, որով տեղափոխվել են մի տնից մյուսը: Պատմում էր, որ իրենց տան մոտ թուրքերը սպանություններ են կատարել. ասում է տղային սպանեցին՝ գլուխը կտրեցին ու հորը ստիպում էին, որ էդ արյունը խմի: Հետո պատմել է, որ իրենց հրացանների սվիններով թուրքերը 3 անգամ խփել են տատիկիս հոր գլխին: Հայրը չի մահացել, իսկ թուրքերը գիրքը վերցրել են, որ տանեն: Գյուղի ներքևով գետ է հոսում, առաջ շատ ջուր է ունեցել, դրանց ձիերը չեն անցել, իրենք էլ հետ են վերադարձել, գիրքը հետ են բերել պապիկին, ասել են ձեր գիրքը շատ զորավոր է, զյավուր ու գնացել են: Բայց շատ ավերածություններ են արել գյուղում, մարդկանց հսկայական ունեցվածքները տարել են: Դրանից երկար տարիներ հետո, 40-ական թթ., սովետական կարգերի ժամանակ, երբ մամայիս պապան գնացել է թուրքական գյուղ կար Ամասիայում՝ Ազիզբեկով, հիմա կարծեմ Արեգնադեմ է կոչվում, ուր թուրքերը իրեն հյուր են կանչել, դրանց տանը տեսել է հայկական գորգ, որն ինքը ճանաչել է. դա եղել է տատիկիս ընտանիքի գորգը:

Տատիկս պատմում էր, որ գյուղից հավաքում էին մարդկանց, լցնում մարագը ու ծխի էին տալիս, խեղդում: Հիմա էդ մարագը

չկա, տեղում մի ծառ է մնացել, իսկ կողքին սուրբն է: Իրանց քավոր թուրքերի հետ կապ է ունեցել, ու ինքը իմանալով կարողացել է գիշերը տատիկիս ընտանիքին դուրս բերել գյուղից, բայց ասում էր, որ շատ մարդիկ խեղդվեցին էդ ծխից: Հսկայական ավերածություններ են արել թուրքերը, որոնք մինչև 21 թ.-ը մնացել են գյուղում: Ասում էր պարբերաբար գալիս էին, ինչ ուզում անում էին, տատիկս պատմում էր, որ գյուղում մի սիրուն հարս է եղել, չեմ հիշում որ ընտանիքից, իրենց առել-տարել են: Հետո էդ աղջիկը կարողացել է փախնել թուրքերից, բայց քանի որ թուրքերն են իրեն փախցրած եղել, ամուսինը չի ընդունել նրան ու ինքը թողել գյուղից գնացել է ուրիշ տեղ:

Մարդիկ զենք չեն ունեցել, պաշտպանվելու միջոց չեն ունեցել, բայց ինձ թվում է, որ մեր հայությունն է մեղավոր, որ իրենց հետ այդպես են վարվել: Գյուղի մեծերը՝ տատիկս, պատմում էին, որ այդ տարիներին թուրքերը գյուղից 7 թե 11 մարդու տանում են, որ դաշտում սպանեն. հիմի այդ մարդիկ չէ՞ին կարող հարձակվել էդ 2 թուրքի վրա, սպանեին, զենքերն էլ վերցնեին: Տարել են 2 հոգով էդքան մարդուն դաշտում սպանել, վերացրել են: Բնականաբար մեր ազգն էլ ունի իրեն մեղքի բաժինը, չէ՞ որ ինչքան գլուխդ երկարացնես, էդքան շուտ կկտրեն, բա չպայքարեի՞ն:

## ՀՈՌՈՄ

*Բանասաց*՝ ***Մելքոնյան Ծաղկանուշ,*** *ծնվ. 1951 թ.*

գ. Հոռոմ: Ձայնագրություն 151023-2144, 2211

Էս պատմությունները լսել եմ կեսրարիս մորից, որը 102 տարեկան նոր մեռել է: Ինքը պատմում էր մեզի 18 թվի պատմությունը, որ թուրքերը էկել են ըստեղ, մնացել են: 18 թվին թուրքերն էկել են

ըստեղ Հոռոմ, էկել են լավ մեծ տուն են ման էկել, իմ կեսրանք էլ մեծ տներ են ունեցել, առաջվա տները, ոչ թե հիմիկվա: Մեր գեղից վով է էղե ես չիդեմ, դրանց քցել է հետնը բերել է կեսրանցս՝ Մել-քոնյան Խաչատուրի տունը: Թուրքերը մնացել են կեսրանցս տու-նը, կարծեմ հաշունք է էղե, Խաչատուրը թուրքերին ասել է.- Էկել եք, զենքերդ դրեք ճարը /մարագի պես տեղ է էղել/, հանեք լցրեք մեշոկը, թե մեկ զենք շարժվավ, տնիցս կհանեմ: Թուրքերը մնացել են 5-6 օր, հացը ջուրը իրանք են էրե: Երբ որ թուրքերը ուզեցել են գնան կողքի գյուղերը, Խաչ ամին /Խաչատուրը/ ֆուրղունը լծել է, 4 հոզու մեջը լցրել է, ինքը եզները քշել է, բայց ասել է հիմա չեմ տա-նի, գիշերը կտանեմ: Տարել է Ղարաղուն[ծնթ.74] գետը, արդեն լավ մութ է էղե, ինքը իրա նստելու տեղը, տակից թուր է ունեցե, էդ թու-րը վերցրել է, հետնանց տվել 3 թուրքին սպանել է, չորորդը ուզեցել է մոդենա Խաչ ամուն, ձեռը հետնանց քցել է, բայց Խաչամին շատ ուժեղ տղամարդ է էղե, դրան քաշե, քցել է ու կոխրջելով է սպանե ու քցել է Ղարաղուն գետը: Կուզա տուն, մյուսներին կսե տարա տեղ հասցրեցի, իջցրի, առավոդն էլ դուք կերթաք: Իրզվան էս մեր Վարսեն տատը՝ աբան, անմարդ կնիկ է ըլնում, իրա մարդուն սպանում են թուրքերը, ինքն էլ ըդուր ոխը հանում է: Խաշիլ է խսե, 3 թե 4 չանաղ լցրել է, եղը լցրել է ու վրեն թույն է ցանե, բայց չիդեմ թե ինչ թույն է եղե: Էդոնց կերցրել է, երբ կերել են Խաչամին ըսել է էկեք ձեզ էլ տանիմ, չի ուզե, որ իրա տունը մեռնին, նորից դրել է ֆուրգունը, գիշերը 11-12-ին տարել է նույն տեղը: Մինչև տեղ հաս-նելը դրանք արդեն մեռել են ու էլի 4 թե 5հոզի են էղե, քցել է ջուրը, բայց մինչև իրա էթալը շները ըդոնց հանել են ջրի միջից կերել են: Ըղման պրծել են էդ թուրքերից:

20 թվին, թե էլի 18-ին է էղել, Անդրանիկ փաշեն իրա զորքով վերին գեղերից գալում է ըստեղ: Էս պատմությունը ասեմ ոնց

էղավ. Մի օր ամուսինս Անդրանիկի նկար էր բերել, աբան հարցրեց թե ով է, ասեցինք Անդրանիկն է, նայեց, ասեց էսի ինչ Անդրանիկ, Անդրանիկը ըսման գլխարկ չի դրել, օչխրի դմակը որ կա, դրա կաշին հանել չորացրել, գլխարկ էր արել քաշել էր գլխին:

Ուրեմն Անդրանիկ փաշեն օր կուգա գյուղ, իրա զորքը 20-30 հոգի կլներ, կսե էնման տուն ասիք, օր իրանք ջուր ունենան, գեղի մեջ էլ մենակ մենք ինք ջուր ունեցե՝ ջրհոր, ըսել են տարեք Մելքոնանց Հովանեսի տունը,՝ մեր տունը, ըշտե առե էգել են ըտեղ մնացել են, մեր Խաչ ամին միլիոնատեր է էղե, բերել է ձիթհանքը օրական մի օչխարմ, մե մոզիմ, մե մե հորթմ մորթե, էդ 30 հոգուն կերցրել է: Էդ հորի վրեն էլ կերել են, խմել են, թնդրի վրեն ջուր են դրել լողցրել են: Հետո սուրհանդակը էկել է թե Անդրանիկ փաշա քելի, պտի էրթանք Գուսաննա, ըշտը ելե են մերոնք 4 հատ ֆուրղուն են ունեցե, էդ ֆուրղուններն են նստե, որը ֆուրղունով, որն էլ ոտով գնացել են Գուսաննա:

Հարց – բա էդ 10 հոգուն որ սպանել են, հետևանք չի ունեցել, ոչ ոք չի եկել հարցրել, թե դրանք ուր են:

Պատասխան- Չէ, էդ թուրքի վերջին գալուն է էղե, հետո մարդ չի էկե:

Հա հիշեցի, էն թուրքերի մասին, պատմեմ:

Էդ թուրքերն օր գալըմ են մեր տուն, որպես հարստի տուն, մնում են ըդտեղ, էթըմ են սաղ գեղի հարս ու աղջկանց բերում են մեր տուն, ըսըմ են Մելքոնանց կուսանոցը, օր իմանում են աղջկերանք ու հարսները մեր տունն են, Աղեկանց Գարենը գալիս է, ասըմ է Խաչամի, արի սրանցը վերացնենք, ասըմ է ինչխ վերացնենք, էն է փաշեն պուճախումը քնած է: Պայմանավորվում են, իրգըվան Գարենը գալըմ է, փաշին կապըմ են, հետո աղջկներին նայողներին

են կապըմ, աղջկներին ու հարսներին հանըմ են, տանըմ են հուրիշ տեղ: Էդ թուրքերին էլ, արդեն պատմեցի, թե ոնց սպանեցին:

Աղեկանց Գարենի մասին մի ուրիշ պատմություն պատմեմ: Փաշեն օր մեր տունը կմնար, երբ ամուսնացող կլներ, հարսին կբերեին առաջ փաշի մոտ, հետո կտային փեսին: Մի անգամ էս Գարենը կերթա մուրը պահ կմտնի, երբ փաշեն կուգա հասնի մոտը, կսպանի էդ փաշին, հարսին կառնի, կփախնի:

## ՁԻԹՀԱՆՔՈՎ

*Բանասաց՝ **Ղազար Կարապետի Հունանյան,***
Ձայնագրություն 151023-2023 և 2031, 2035:

Ծնվել և ապրել եմ Ձիթհանքով գյուղում, մեր գյուղի մեծահասակներից լսել եմ, որ 1920 թ. թուրքերի վայրագ ջոկատները մտել են նաև Ձիթհանքով գյուղ: Ավերածություններից հետո նրանք հավաքել են շրջակա գյուղերի երիտասարդ տղամարդկանց, գյուղի կենտրոնում եղել են մարագներ, նրանց լցրել են այդ մարագների մեջ, մի քանի օր պահելուց հետո նավթը լցրել ու այրել են: Որոշ ժամանակ հետո դուռը բացել են ու ասել, եթե կենդանի մարդ կա, դուրս արեք, ոչինչ չենք անի: Մի քանի հոգի համոզվելով դուրս են գալիս, բայց նրանց անմիջապես տեղում սպանել են: Դրսից մարդիկ ձայն են տվել, եթե կենդանի մարդ կա, հանկարծ դուրս չգաք: Հետո սվիններով մտել են էդ մարագները, սվիններով սկսել են դիակներին հարվածել, որ եթե կենդանի մարդ կա, սպանեն, նոր հետո գնացել են: 3 հոգի փրկվել են. հիշում եմ, մեկի անունը Իշխան է եղել, մեկինը Հակոբ, մեկինը Սմբատ: Նրանք հենց գյուղից են եղել, Իշխանին անձամբ ես հիշում եմ՝ ձեռքը պարալիզացված էր էդ դեպքերից հետո, էդ սվիններով որ խփել են, պապը իր հետ է

եղել, առել է իր թևի տակը, թոռին պահել է, թևն է վնասել, բայց փրկվել է:

Գիտեմ, որ շրջակա ուրիշ գյուղերից էլ են բերել, այրել, բայց փրկվողներ եղել են, թե չէ, չգիտեմ: Հաստատ գիտեմ, որ Մաստարայից են շատերին բերել: Երբ հուշարձանը դրվեց, մաստարեցիները սկսեցին այստեղ գալ իրենց զոհերի հիշատակը հարգելու: Ամեն տարի Եղեռնի զոհերի հիշատակի օրը այստեղ միջոցառումներ են կազմակերպվում: Միայն էս տարի չեղավ, կորոնավիրուսի պատճառով:

Հիմնականում տղամարդիկ են եղել, ով չի հասցրել փախնել, նրանց են բռնել, էն ժամանակ միամիտ մարդիկ են եղել, զենքը տեսել են, վախեցել են պայքարել, թուրքերն էլ մեծ զորքով չեն եղել, փոքր ջոկատ է եղել: Ջարդից հետո թուրքերը հավաքել են շրջակա գյուղերի անասուններն ու գնացել են, հետո լսել եմ, որ մի քանի գեղեցիկ աղջիկներ են տարել, որոնք չեն ենթարկվել, սահմանի վերջում նրանց սպանել են:

Իմ պապերը տեղացի չեն Ալաշկերտի Խաստուր գյուղից են տեղափոխվել 1926 թ. էս գյուղ, բայց տարեցները իրանց անցյալը միշտ հիշում էին ու ես իրանցից եմ լսել էս բոլորը: Իմ պապերը երկուսն էլ նույն գյուղից են, 1914 թ. փախել են ու մի քանի գյուղերում ապրելուց հետո, վերջնականապես տեղավորվել են Ձիթհանքովում ու Թալինում:

Էս պատմությունները բոլորը գյուղում գիտեն, բայց ավելի մանրամասներ իմացողներ չկան: Էս բոլոր դեպքերը 1918 թ.-ին են եղել, 1920 թ.-ի մասին ոչինչ չեմ լսել:

Հուշաքարը 1990-91 թթ. դրվեց, որպեսզի հետագայում տեղում կառուցվի հուշահամալիր: Նախաձեռնությունը գյուղսովետինն էր, սակայն ֆինանսների բացակայության պատճառով չկառուցվեց:

2015 թ. Ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ դրա մոտ դրվեց խաչքար և տարածքը բարեկարգվեց:

* * *

*Բանասաց՝* ***Հովհաննիսյան Մարետա Գեղամի****, ծնվ. 1951 թ.*
գ. Չիթհանքով: Ձայնագրություն 170127-0054:

Պատմությունները, որ հիշում եմ, լսել եմ իմ հորից՝ Գեղամ Հովհաննիսյանից, ծնվ. 1909 թ. և մեր հարևաններից: Մենք ունենք երկու ազգանուն՝ Շախպազյան և Հովհաննիսյան: Մեր գյուղի հիմնադիրներից մեկը եղել է իմ հոր պապը, իսկ իմ պապը եղել է գյուղի տանուտերը: 1918 թ. երբ թուրքերը եկել են, իրանք 4 ախպեր են եղե, փոքր ախպերը՝ Կարապետը շատ կռվարար է եղե, 1894 թ.-ից կռվել է Արևմտյան Հայաստանում, եղե Անդրանիկի զինվորը: Ես իրա ծննդյան թիվը չգիդեմ, ինքը ամուսնացել է իրանց հարևանի աղջկա՝ Ջավահիրի հետ, որը շատ սիրուն կին էր, ես իրան տեսել եմ: 14 թ.-ին ունեցել են մի աղջիկ, անունը Արաքսի, հիմա իրանք բոլորը չկան: Շախպազյան Կարապետը որ իմացել է, որ իրանց գյուղը լրիվ ջարդել են, ինքը Անդրանիկի հետ գժտվել է, իրա ջոկատն առել է, որ գա գյուղ օգնության: Էդ ժամանակ Անդրանիկը Դրոյի հետ չիդեմ ինչ վիճաբանություն է եղե, գնացել են Նախիջևանի կողմերը: Ինքը եկել է գյուղ, ինչ տեսնա. գյուղը չկա: Գյուղի դեմը դուրան է, ամբողջ գյուղը Բոզդողանից [ծնթ.75] սկսած ջանդակներ է փռած, Արփաչայի էն կողմից սկսած սաղ գյուղերի տղամարդկանց ու կնիկմարդկանց հավաքել են մեր տունը, վառել (իմ պապը ունեցել է հսկայական մարագ 100 մետրանոց, Մաստարայի խաս քարից, դե ինքը հարուստ տանուտեր է եղե), պապաս կսեր 7000 հոգի:

Ես որ երեխա էի, մեր տունը, ասեցի, շատ մեծ էր, որ մնար թանգարան կլներ, թնդիրը կվառեինք, քուրսին կդնեինք, (էն ժամանակ թնդիրով ճաշ, հաց, ջուր կեննեինք,) հիրգուն մալը կպրծներ, թաղի բոլոր կնիկ, տղամարդ կհավաքվեին մեր տունը, ինչխ օր առաջ ու կսկսեին պատմություններ պատմել: Մենք իրեք քուր ինք, երկուսը կքնեին, ես կնստեի, կլսեի՝ երրորդ-չորրորդ դասարանի երեխա էի, չէի հասկնա, կսեի, ընչի ըռնք լաց կեղնին: Պապաս էլ միշտ լաց կեղնիր, կերթար սաղը կնստեր, էդ քարի վրա կնստեր ու կլացեր, մենք հորթը կտանեինք ըդեղ արծցնելու: Կըսեի պապ ջան, ընչի կգաս ըստեղ կնստիս, լաց կեղնիս, կսեր – բալա ջան ըստեղ իմ հերն ու հորոխպերը վառան:

Պադմությունը հմի ըսեմ. 18 թվին, թուրքն օր կհարցակվի, քուրդ խուժանը առաջի հերթին գյուղ կմտնի կջարդի, կթալանի, նոր կանոնավոր բանակը կմտնի: Ինչքան օր տղամարդ, երեխա կա դեմերը քշած կբերեն, որն օր կփախնի կսպանեն, որն էլ օր վախը սիրտը չի փախնի, կհավաքեն, էդ մարագի մեջը կլցնեն: Պաբաս կսեր, որ – Ես ինը տարեկան էի, ունեի լավ տատիկ (տատիկը Լանջիկից է էղե, մերն էլ): Իրա մերը շատ հոյակապ, գեղեցիկ կնիկ է էղե, դե տանուտերի կնիկ, փուշին գլոխը: Առաջվա հարսները կեսուրի հետ երեխա կբերեին. մեծ տղեն ամուսնացած էր, աղջիկը իրա գրկին, ծծին էր: Պաբաս կսեր.- թուրքը որ ընգավ մորս ետնից, օսկի գուզեր (առաջվա կնգտիքը շորերի տակից օսկիները կկարեին, որ պահեն), ըսպես մազերը օր քաշեց, մամաս փախավ, հուսը մնաց թուրքի ձեռը, գոռաց – Գեղամ փախե, Համոյին փրգե (հինքը 9 տարեգան է էղե, ախպերը 4):Աղջիկը 3 տարեկան գիրկն է էղե, կսե - ետնից թուրքը սուրը թիկունքից խփեց, դոշից դուրս եկավ: Կսե մերս հավի նման, օր վիզը կդրեն բերանը բաց ու խուփ կենե, ըդպես ախ ըսեց, կռնգի [ծնթ.76] վրա ընգավ: Թուրքը տագի շորերը

հանեց, ես ըսեցի - անայիս (հիրանք մորը անա կսեին) էս ինչ է էրավ, Համոյին էլ պայել էի սան ետևը, վազեցի հասա քուրոջս վերցրեցի, իրա հազը թազա, կապուտ գույնի մահուդից շոր էր,- թուրքը կընգնի հեղնիցս: Կսե թուրքն օր ընգավ եղնես, ես վախից ընգա սան եղնը, էրեխեն գիրքս, թուրքը բռնեց քրոջիցս, քաշեց, էրեխեն կղժա, կփաթթվե վզովս, - կսե ձեռիցս քաշեց, երեխին զարգեց սալերին, գլոխը ցխավ, արունն ու ուղեղը թափավ վրես: (Ինչ է տեսե խեղճ հերս, 9 տարեկան էրեխա:) Կսե - էրավ օր ինձ սբանե, մեզելն ըսավ – ընչի կմեռցնես, վախից մեռած-պրծած է: Հազից շորերը հանել են, թողել, գնացել: Ինքը թումբնով, մթնով, գնացե, մոր ողերից քաշե, տարել է օչխրի փայենի [ծնթ.77] մեջը պայել է, թե մերը կլավնա, չիդե, թե էդ փայենի մեջը ջիլիզ կօրթնի [ծնթ.78]:

Ես էն ժամանակ օր կսեին, չէի հասկնա, թե լլկելն ինչ է (վերջում հասկցա օր մունդռել է) – տատիս էնքան էին լլկե, օր չէր կրնա քելե: Տատիս կպայեին ինչի համար. – կսե, օր իրանց հաց ու ջրի տեղն ըսե: Իրանք շատ ցորեն են ունեցե, զարի են ունեցե, էդ հորերն եմ տեսե, օր ցորեն, զարի լցրել են, վրեն թրիք են լցրե, օր թուրքերը չգդտեն: Բայց գոմի մեջը հոր են ունեցել, վրեն սալ է էղե, դրա մեջը հարս ու էրեխեքին են լցրե, բերանը ծածկե, մի տրուբա են թողել, օր օդ շնչեն, չխեղդվեն, մինչև թուրքը քաշվի, էրթա:

Կսե հորս ու հորոխպորս տարան, իսկ հորոխպորս էրեխեքը, որ կդորմ հասակով էին՝ մեկը 6 թիվն էր, մյուսը՝ 7-ը, 8-ը, ըդոնք դաշտը մալերն են տարել արածացնելու, գարնան գլոխ (իրանք շատ մալ են ունեցել, եզ են ունեցել, օչխար). Թուրքն օր կմղնե գյուղ, իրանք կհավաքեն էդ մալն ու կփախնեն Փանիկի կողմ, էդ կողմից էլ կելնեն Աբարան: Կսե - ես էի մենակ մնացե ու Համոն, - գիշեր տաղը կմտցնե իրանց հորը՝ հարսների քովը: Կսե - ես կէրթայի մարագը, հորս ու հորոխպորս կպատմեի, թե ինչ է էղե, ջուր

կտանեի, հաց կտանեի: Տատս ինչքան կարա հաց կկապեր ողներս ու փորս, որ տանեի իրանց: Կսեր – օր կմդնեի մարագ, վողի տեղ չկար էդ հսկայական տարածքի մեջը, էնքան մարդ կար: Կսեր հացն օր կտանեի, կկդրեին, կդրեին – մանրեին, կտային մանդր էրեխանց՝ Ղռխի [ծնթ.79] գեղերի (գետի բերանի գեղերն էին, հիմի չկան): Կսե – սաղ ընտանիքներով՝ 3-4 հոգով, բայց մինակ տղամարդ, կնիկմարդ չի էղե մեջները, ող-ողի վրա կայնելու տեղ չկար: Մե շաբաթ ըդպես սոված-ծարավ կպայեն ժողովրդին մարագների մեջը. ոչ հաց, ոչ ջուր:

Հորոխպոր՝ Ստեպի աղջիկը, 16 տարեկան, անունը Հռիփսիմե, շադ սիրուն էր, (էդ Ստեպը շատ սիրուն, ուժեղ մարդ էր, բայց շատ վախկոտ. 400 կիլանոց օջախի քարը, կսե կառներ կդներ օջախի վրեն, բայց վախկոտ էր: Իրա կնիկն էլ կսեն շատ սիրուն է էղե, էրեխեքն էլ՝ 3 տղա ուներ, հետո կասեմ իրանք ուր էին:) Ուրեմն թուրքը կնգնե Հռիփսիմեի եդնից, կտանե փաշի մոդ. Փաշեն տեսե, հիացե, ասել է –էս իմ հարեմի մեջը կփայլե: Կսե – մերը (հորոխպոր կնիկը) հասավ թուրքի հեդնից, ճանգը քցեց, աչքերը պոռթեց, արնեց, որ իրա աղջկան տարավ, էս էլ բան չասեց, թուրը հանեց ու թրաղեց: Ինքն էրեխա, կերթա մարագի մեջը կպադմե իրա հորոխպորը, թե հարսիկին ըսման էրին, Հռիփսիկին ըսման տարան. – ինչ զիդենա, կհարցաքննեն, թե ինչ կա դուսը, ինքն էլ կպադմե: Կսե ժողովուրդը ծարավ, սոված էր, վերջի օրը հաց եմ տարե ես, բայց թուրքերը էլ չթողին դուս գամ, պայեցին մարագի մեջը:

Արդեն կպադմե մարագի միջի եղելությունը: Բերեն կաչկեքով ջուրը կդնեն մարագի դուռը, ժողովրդին կսեն դուս արեք, խմեք: Որը, կսե, բաժակը (իրանք մուշուրբա կսեն) բերանը չտարած, եդնից վզերը կթռցնեն: Մարագի միջից դուս ելնողն օր նես չի գա, նեսի ժողովուրդը կխառնվի, կսեն, թե մեզի սաղին կսպանեն,

ժողովուրդն էլ դուս չի գա ջուր խմելու: Կսէ նեսը լիքը մարդ, օդ չկա շնչելու, տեղ ու դադար չկա, 7000 հոգին մի զորք է: Մեծերն ըսեցին մեզի օր սբանեցին, մատղաշ էրեխեքին բերենք դնենք ծնգների արանքը, գոնե մի քանի հոգի սաղ կմնան, կելնին կփախնին: Կսէ ըդման էլ էրեցին: Թուրքերը պլիմոտները լուսամուտներից սաղ դրին ու սկսեցին սաղին ջարդել, կոտորել էդքան ջանդակ: Էրեխեքը, ճիշտ է կմնային, բայց արունը ելավ մարազների լուսամուտներին: Էդ ժամանակ իրա պապի ախպերը (Ստեպը) գլուխը կդնէ իրա ախպոր՝ Նուրոյի չոքին, կսէ – ախպեր ջան թող գլուխս դնեմ չոքիդ -ու կմեռնի, ինֆակտը կխփե. Դէ էդքան բան օր կտեսնի ու կիմանա աղջկա, կնգա մասին, սիրտը չի դիմանա: Հորոխպերը իրան կհարցնէ – գոնե Երվանդն ու Գևորը փրգվա՞ն – հերս կսէ հա, Խաչիկին ու Համոյին Քալան (տատիկին քալա են ըսէ) կոխեց հորը, Երվանդն ու Գևորն էլ մալը առէ փախել են: Վարկյանական սիրտը կտրաքի, կմեռնի:

Ցիրգուն եղավ, կսէ արունն ելէ, կխեղդեր, էրեխեքն, օր մադղաշ էիր չփրգվան, ջանդկների տակը մնացին, խեղդվան, բայց տքոցները կգար՝ վիրավոր էին, ինչ էին, տքոցները կգար: Կսէ բերեցին մազութները լցրեցին մարազների վրեն ու վառեցին, մսախանձահոտեն մենք կխեղդվեինք: Ցիրգուն էր, կսէ, անձրև էր, ելա սողեսող, սաղ ջարդվել են, հերս չկա, հերս օր ընձի գրգել էր, ես հորս ձեռի միջից ելա, կկծեմ ձեռները, ձեն կուդամ, ձեն չի հանե, արդեն հերս փայտացել էր: Մե կերպ կսողա դուս կուգա, կքցե Աստծուն, ինչ էղավ, էղավ: Որ դուս կուգա, կտեսնի իրանց մարազների դեմը ցան-ամրոց է էղած, էդոնք թուրքերը կվառեն, մեծ պղինձները դրած, ոչխրի ջանդկները մորթեն զը, փլավ են քցե, կուդեն, չորս կողմը կրուգոմ մատղաշ էրեխա աղջիկ, հարսներ, լրիվ տզլոր, տզլորցրել են, միջները իրանք պար գը խաղան, որը մազ ունի

ամոթը կծաձգե, որը մատղաշ երեխա է՝ չէ. որին որ ասքյարը ուզե-նա, կքաշե, կտանի: Աղջիկ կար կճվար, կծվատեր, չէր ենթարկվի, կսպանեին:

Պապաս օր փախել է, իրան հետ մե քանի հոգի էլ են էղե (մե-կիմ անունը Իշխան էր, ես իրան տեսել եմ), իրանք օր ժամի դոշով կելնեն, թուրքերը խաբար կեղնին, - վայ կսեն- մարդ կա կենդանի: Պապաս կսեր – ընզան մեր եղնից, Իշխանը կվախենա (ինքը ավելի փոքր է էղե), ձեռները կթուլնան: Կսե – ժամի դոշով մենք փախանք, ընզանք Կնոյի ձոր, ելանք ըդպես Լանջիկ: Լանջիկից օր կելնես, ջաղացներ կար, 40 ջաղաց է էղե, որից 20-նն էղե իրանց ջաղացնե-րը (էն վախտ ջուր կուզար վերնից, հետև կտրեցին մաստարեցիք): Կսե ըդպես փախանք. զարնան գլոխ մութ, անձրև, խշրիկ [ծնթ.80], ես բոբիկ, սոված, լացով կերթանք, (կմտածե էրթա Լանջիկ պապի տուն. իրա պապը լանջիկցի է էղե), մինչև Լանջիկի ծեր հասնինք ինչ տենամ օր. 12 հատ քահանա/տերդեր իրար գլխի շարված: 12-ին էլ, կսե, ես ճանչցա, մեր տերդերներն էին, տզլորցրել են լրիվ, մուրուքները կդրել են ու սեռական օրգանները, ուրիշ բան՝ չէ ու կսեն – դե ձեր քարոզը տվեք: Կսե ես քարի տազը պայ մդաձ կտե-նամ թե ինչ կկադարվի: Թուրքը կսե – դե դու քո նամազդ էրա, փրզվի: Մե տերդերը, կսե, ըսպես ձեռները վեր հանեց առ Աստ-ված, աղոթեց, Հայր մերը ըսավ, նոր կտրեցին իրան, վիզը չէ, մորուքն ու դեմը:

Կսե մե հադմ կնիկ կար, աղջկա ձեռը բռնած, իմ ձեռն էլ բռնեց ու կփախնի, ընձի ըսավ – եթե ես մեռնիմ, տղա ջան դու էս աղջկան տիրություն կենես, - ու բոմբը քցին, էդ կնիկը մեռավ: Կսե բռնել եմ էդ աղջկա ձեռն ու կփախնիմ, բայց ուր կփախնիմ, ես էլ չիդեմ, եղնից հա կռմբակոձեն, կանոնավոր զորքը մարդկանց ջար-դելով արդեն կելնի Սոզթլու: Գնցինք մտանք մե քարփիմ տակ ու

կդողանք (էդ աղջիկ էրեխեն էղե 6 տարեկան), էդ էրեխեն կպե իմ դոշին ու կդողանք: Կսե չիդեմ ինչղ էղավ, կելնեմ օր տեսնեմ թուրքը քաշվավ, թե չէ, գյուլլեն [ծնթ.81] էկավ, էդ աղջկան տարավ:

Մնացե հերս մենակ, ընգե ճամփա լացով, կելնե կհասնի Հոռոմի հեղնի սարերը, ըտեղ մի հաղմ բուն է տեսե, ընձի միշտ ցույց կուդար, կսեր – բալա ջան էդիկ իմ տեղն է էղե: Կսեր աչքերս կխփեի ու ձեռով կտփտփեի, կասեի աշես գել կա ըտեղ, թե չկա, զգացի օր փափուկ խոդ է. Գուսաննայի չոբնները տեղ են սարքե, որ մնան, ես էլ մդնեմ զը ու կքնեմ: Քնա, մեկ էլ չիդեմ լուսը բացվել է, կլեսմ մեկը կսե – հիռի, հիռի – վախից դողացի, տակս թռչի, էն էլ չոբան էր Գուսաննայից, ըսավ – մի վախի բալա ջան, դու ով ես, ես էլ վռազ ըսի – ես ձիթհանքովցի քյոխվա Մուրոյի տղեն եմ: Չոբանն ըսավ – հա, ձերոնք Փանիկից ելան Աբարան, բայց կարող է Փանիկ են մնացե: Կսե մենք Փանիկ սանհեր ունինք, կզնա երկուսին կգդնի՝ իրա պապի ախպեր Մուգուչին, օր վերջում ինքն է էղե տանուտեր, մնացածը մալն առե, փախել են:

Կսե իրար գդանք, արդեն խախնդել է, եդ պդի դառնանք, գեղ էրթանք: Էկանք գեղ ինչ տենանք, շներն էնքան են ջանդկները կերե, օր դառել են գել, ժողովուրդը ռիսկ չեն էնե, օր հետ գան: Սաղ ջարդվան, կոտորվան, տուն կար օր էլ մարդ չմնաց, սաղ վերացան: Թուրքերն օր քաշվել են, իմ տատը հորից հանել է էրկու հարսին ու էրկու թոռին, մնացածը հորի մեջ մեռել են:

Եկել են ինչ տեսնեն. տատիս էնքան են լլկե, օր մնացե ճողված, այլանդակված: Հերս կսեր – բալա ջան ես էսի քեզ մանրամասն կպաղմեմ, օր ըդոնց միջի սզլըխը [ծնթ.82] դու ես, դու գրի կառնես: Օր էկել են, պապաս վախեցած է էղե, քուրոջն օր աչքի առաջ սբանել են, իրա հոգեկանը խանգարված է էղե, կսե – մորս, հորս օր կհիշեի, աչքիս կուգային, ուշքս կանցներ: Էն վախտ

տերդեր են բերել, աղոթել են վրեն, ինչ են էրե, 40 օր շորը քաշել են էրեսը, թե՝ մեռավ-մեռավ, աբրավ-աբրավ:

Իրա հորոխպերը վարբեղ է էղե, էդ սաղ տները ինքն է սարքե ախպրտանց հետ: Կսե ճրագը կմլմլար, ելել եմ օր դուսը ջուր թափեմ, ճեղքից կտեսնեմ (էդ տունը կապուտ լուսամուտներով հմի էլ կա) հորոխպերս կլացե ու կռանդե. փեդ կռանդեր: Կռավաթի վրա (ես էդ փեդի կռավաթն էլ եմ տեսե), կսե, ջանդակ կար, վրեքը շոր էր քցած, ըսի – Ամի ջան էդ ինչ է կսարքես – ըսավ բալա ջան դու ընչի ես զարթնե, գնա, գնա քնի: -Ամի ջան դու ընչի լաց կեղնիս, կսե – բալա ջան բան չկա, դու գնա քնի: Կսե շորը օր էրեսներից եդ քաշի, տեսա Եղոյին ու Ֆրոմվելին (իրա հորոխպոր տղերքին, երկուսն էլ նոր ամուսնացած) ու կնգտանց մերկ ու տկլոր: Կապել են սներից, մարդկանց աչքի դեմը բռնաբարել են էրկու հարսին, տղամարդկանց սեռական օրգանները կկտրեն, կդնեն կնկտանց բերանը, նրանցն էլ կկտրեն, կդնեն մարդոց բերանը: Կսե ես օր ճվացի – վայ, ամի ջան էս մեր Եղոենք ընչի են քնե, ըսավ- հա, բալա ջան քնել են, հավերժ քնով քնել են: Դագաղը սարքեց, բերավ իրա տղերքին ու հարսներին պառկցրեց իրար կողք՝ երգու դագաղ, սելը բերեցին, եզները լծեցին, տարան մեր զերեզմանատունը թաղեցին:

Կսե ժողովուրդն օր հեդ էգան, տանուտերը տվեցին Մուգուչին. 7-8 տարի ինքը էղել է Չիթհանքովի քյոխվեն: Հմի ասեմ ով էր մնացել իրանցից. Մուգուչից կար մե տղեն, օր մալը առե փախել էր, 1908 թ. ծնված էր ու 3 աղջիկ, որ տատը հորի մեջ էր պահե: Մուգուչի կնգան էլ էին սբանե: Նուրոյից մնացել է հերս ու Համոն (Համայակը), Ստեպից մնացել էր 3 տղեն, որից էրկուսը մալը առե փախել են, մե տղուն ու աղջկան տատը հորի մեջ է պահե: Էդ որբերին սաղ պահել է էդ տանուտեր հորոխպերը:

Մեր գյուղի մոտ Սույզ կա (հըմի Ցամաքասար գյուղն է) ՝ Զարնջիի մոտ, քրդերը ըդտեղ բուն են դրե. էդ քրդերի մաս-բաժինն էլ կա մեր գյուղի ջարդերի մեջը, իմ հերանց մատնելը: Ինչքան որբ էրեխա կար դրանք հավաքել, պահել են իրանց մշակ, ստրուկ դարձնելու համար:

Կարոն իմանալով իրա գյուղի ավերումը, որ անջատվել էր Անդրանիկից, իրանից էլ էր վրդովված, թե ընչի էր գնացել Բուլղարիա, թող մնար կռվեր: Էդ հորոխպերս կգա ու քրդերին կկդրե, ահավոր ձևով, քրդերի դեմ կկռվե, ջրից էն կողմ կանցնի Արփաչայը, կկռվի, կանցնի էս կողմ – կկռվի: Իմացել է, օր Գյումրի – Ալեքսանդրապոլը որբանոց է բացվել, ինքը ընգել, հայ էրեխեքին է հավաքել: Քրդերի ապրուստը կգողնար, նորից կտար քրդերին՝ էրեխա կազատեր, կբերեր կհանձներ Գյումրվա որբանոցը: Մե հադմ էրեխա (մոդը էլ ոչ մի բան չի էղե), քուրդը կայնե, ըսել է – չէ, փողը նաղդ պիտի տաս, - կսե չունիմ, արի պայման կապենք, էսինչ օրը կուղամ, հիմա էրեխին տուր, - չի տա: Կսե օր չես տա, քրդին կդարձնե ու թուրը թիգունքից կկոխե: Ինքը մե ահավոր, ահավոր մարդասպան, զազզած, էկե ոչ կնգա է տեսե, ոչ աղջկան է տեսե, սաղ տուն ու տեղը ավիրված: Պապաս կասեր մենք 40 հոգի ենք էղել, մնացել ենք էդ քանիմ հոգին, սաղին բրթել, սբանել են: Էդ քուրդը տգից թրով կզարգե Կարոյի աչքին, տեղը սպի է մնացե: Էդ ժամանակ իրա անունը կդնեն դաչաղ, գող Կարո: Մեր գյուղացիք օր կպադմեին քուրսու տակը պառկած, կսեի յարաբ, իմ պապը գող է էղե, էն ժամանակ ինչ գիդեի դաչաղն ինչ էր: Պապայիս օր կհարցնեի, ինքը կսեր – բալա ջան Հովհաննես Թումանյանի ախպերն էլ է դաչաղ էղե, ինքը գո՞ղ էր:

Օր կսկսեին պադմել, արդեն կսեին, թե ում տնից ինչքան են սպանել, ում տունն ինչ են էրե, ես ըդրանք սաղ կհավաքեյի: Պապս

օր տանուտեր է էղե, ինքը մինչև մեռնելը՝ 1933 թիվը կոլխոզ չի մտե, սաղի էրեխեքին ինքն է պահե:

Կարոն օր էրեխեքին հավաքել ու որբանոց է հանձնել, դարձել է որբանոցի տնտեսվարը: Կսե կուգային սելերը, ֆայտոնները մալերը, ձիերը կլծեին, սալոմը կլցնեին, էրեխեքին քրչերի մեջ կփաթթեին, կտանեին Բաթում, ըտեղից էլ ինքը կտաներ Ամերիկա: Երկրորդ անգամ օր կուգա, ախպորը կհամոզե, կսե- Մուգուչ ջան, ըստեղ իշխանություն չկա, ըսիկ սատանի իշխանություն է, ելի հավաքվի, առնենք մեր ամեն ինչը էրթանք, ընդեղ երգիր է, էրթանք ապրենք: Պապս լաց կեղնի, կսե- ես 40 զերեզման ու՞մ տամ, իմ հող ու ջուր, իմ հայրենիք ու՞մ տամ, Կարո ջան ես գալող չեմ: Ախպորը կհամոզե, որբանոց կտանե Համոյին ու Խաչիկին, էրկուսն էլ 1914 թ. ծնված, իրա ազգանունով կգրե Շախպազյան, բայց Մուգուչը կէրթա, որբանոցից կհանե, կբերե, կսե ես էղնիմ տանուտեր, իմ էրեխեքին տանեն որբանո՞ց: Կարոն կսե – ես մինչև գամ քո ամեն ինչը հավքի, սաղիդ տանեմ Ամերիկա, լավ էլ կապրինք, կարողա հեդո գանք մեր հող ու ջրին, կհամոզե: Երրորդ անգամ պիտի գա, որ մնացած որբերին տանե, չեղուկ բոլշևիկները կայնեցրին, չթողեցին ետ գա, մնաց ընդեղ. ոչ կնիկը կրացավ էրթա, ոչ աղջիկը: Մինչև 1930-31 թիվը իրանից նամակ է էկել: Իրա աներձագը էղել է բջիջի մեջ, հեղափոխական, ինքն անգրագետ, մե ահավոր կերպար, դավաճան թուլա, նամակը կտանա Ամերկայից, ըման եռանկյունի, կբացե կկարդա, կսե- ըիմ, դաչաղ Կարոն հասե Ամերկա, կուզե իմ քուրոջը տանե. դոլլար ունիս, ղրգե գա, ուղենք, նամակը կճղե, կքցե քամուն, կսե – թող էրթա քոռ Կարոյին: Ոչ քրոջը կսե, ոչ էլ ախպրտանցը: Կարոյի կնիկն էլ տեքոր թևի տակ էղ մե էրեխուն պայեց, մեծցրեց, նշանեց, նրա մարդն էլ գնաց պատերազմ չեկավ, հմի ոչ հորքուրս կա, ոչ էլ աղջիկը:

Հերս լաց կեղներ, կսեր – լավ, ինքը ըդման կռվող, թասիբով մարդ, գնաց անհայտ կորա՞վ: Բայց ինքն ընդեղից դոլլար էլ է ղրգե, կարի մեքենա է ղրգե, բայց անհայտացավ ու անհայտացավ: Վերջի նամակը էկավ 29 թվին Սան Ֆրանցիսկոյից թե Լոս Անջելեսից, կգրեր, թե կինո է տեսե մեր գյուղի ջարդերի մասին: Ու դրանից հետո էլ խաբար չեկավ ու չեկավ:

Տարիներ անցան, 30-ական թվերին իմ հորոխպեր Գևորը, որի մորը սպանեցին ու քրոջը տարան, կորոշե գնա իրա Հռիփսիմե քրոջը գտնե, ինքը խաբար է ունեցե: Հլա երկար ժամանակ Ղարսի գնացքը աշխատել է, ինքը նստել է ապրանքների մեջն ու գնացել, իջել է Ղարս: Որպես ձի նալող, կհազնե էտուր շորերը, կերթա կգտնի իրա հորոխպեր Վանոյին (ինքը 48 թվին էկավ), էսի կսե ես տեղը գիդեմ, իրանք շատ հարուստ են, Կարինի կողմերն են, բայց ըստեղ հողեր ունեն, բինա [ծնթ.83] կսեն, ու զուկա կտեսցնե: Կտեսնե 8 կնիկ ոչխար կկթեն, մեկն էլ իրա քուրը, որին ինքը կճանչնա, քուրն էլ հղի: Երգի միջոցով հասկցնե զը քրոջը, էդուր չխերուկ փաշա մարդն էլ հեռու նստած է, քուրը կաշե ախպորը լաց կեղնի, ախպերը կաշե քրոջը լաց կեղնի, ձին օր կնալե, չիդե, թե մխն ուր կզարգե, աչքը քրոջից չի կդրե, բայց կտեսնե, օր քրոջ փեշը բարձր է: Հասկցնե զը, թե ես կուզեմ քեզի տանեմ, քուրն էլ երգով կպատասխանե, թե ախպեր ջան ես ունեմ 8 հատ էրեխա, էն տղեն օր կվազե օչխրներու հեդ, իմ առաջնեկն է: Ախպերը կջղայնանա, թե էկել ես թուրքի սերունդը կշատցնես, հավատդ ուրացել ես, կուզե քրոջը սպանե, բայց ձեռը չի էրթա, ջիգյարը չի թողնե: Էնի էլ կսե իմ մարդը էնքան լավն է, օր կթողե ես գնամ էն բլած եկեղեցու մեջը իմ աղոթքն ենեմ: Փաշեն կկանչե Վանոյին, կասե – էդ ձի նալողին հեռեցրա, էդի Հոլոյի ախպերն է, թե չէ քեզ էլ, իրան էլ ու քու

տունուտեղն էլ ջարդել կուղամ: Վանոն կվախենա, վերցնե գը Գնո-րին, նորից վեշերի մեջը կդնե, կուղարկե Հայաստան:

Մեր գեղի նախագան Նիկողոս անունով, մե չխերած, մե լկտի, ստոր մարդ, էտի սկզբում էղել է բրիգադիր, գողցել է ցանքի ցորե-նը, պապաս տեսել է, գնացել հանել է: Էս էլ ըսել է, թե Գեղամ, ջու-րը ձկան վրա ինչխ կչորցնեն, ըդման ես քո վրա կչորցնեմ: Մաղնե գը, թե ինքը քյոխվի տղա է, դաշնակ է ու հորս կաքսորեն: Հերս կվերցնե մորս, կերթան Թիֆլիս, կաշխատեն, երբ էդ ստորը կմեռ-նի, հետ կգան գյուղ: Մի հատ Սարգսյան Գեղամ կար, գործկոմի նախագահ էղավ Մարալիկ, ինքը Ալաշկերտի Ճզխլըր գյուղից էր, հոյակապ մի անձնավորություն, գյուղը ծաղկավ դրա ժամանակ:

Դպրոցական ժամանակ անընդհատ կլսեի քյոխվի ծոռ, քյոխ-վի ծոռ, բայց չէի հասկնա, կուգայի պապահս կսեի ինչի ինձ կսեն քյոխվի ծոռ, ասում էր, ոչինչ, ժամանակը կուգա, կհասկընաս:

Հմի անցնեմ մամայիս. Մամաս ծնվել է 1920 թ. փետրվարին զարնան զլոխ Ջույգաղբյուր գյուղում: Իրանք էղել են 4 քույր էրկու ախպեր, մեծ ախպերը հորից մեկ է, մորից տարբեր, իրա մաման ծննդաբերության ժամանակ մահացել է: Իրանք էլ շատ հարուստ են էղե, տատս՝ Անուշը իրան պայել մեծցրել է: Թուրքն օր մտել է գեղ, իմ տատս մորովս հղի է էղե, պապս ելել է հրացանը ձեռը օր փախնի, ըսել է – Անուշ ջան թուրքերը ցավ քաշող կնգան ձեռ չեն տա, մի վախենա: Տատս լացել է, թե ինձ մենակ մի թող, ու քաշել է չուխի գոտուց, գոտին մնացել է ձեռը, պապս գնացել է: (Մինչև կյանքի վերջ տատս էդ չուխու գոդիկը ծոցը կպահեր:) Պապս սա-րերով ու ձորերով փախել է, սաղ ճամփեն դիակներ են էղե, գելերը դրանց հոշոտել են ու չի էրեվացել, թե ով ով է: Պապս ըդպես կփախնի: Կեղնի օր թուրքերը կուգան, խշտիկը կհանեն, օր տա-տիս փորը ճղեն, արդեն մերս կեղնի, հմը իրա ախպերը քաշե, չորս

թուրքին էլ կգյուլլե, իրա մորը կազատե, իմ մոր պորտը կկդրե, բալուլը քրչերով կփաթթե, կառնե կպահե դեզի մեջ:

## ՁՈՐԱԿԱՊ

*Բանասաց՝ **Նազարեթյան Վալեր,** ծնվ. 1987 թ.*
Ձայնագրություն 151024 – 1915:

Էս պատմությունը ես լսել եմ մորիցս, քեռուցս ու մորական պապիկիցս: Պատմությունը մորական պապիկիս պապիկի ու տատիկի պատմությունն է, էլի մորական: Իրանք Ձորակապում մեծ ազգ են եղել, երկու ազգանուն են ունեցել՝ Վարդանյան և Սահակյան, բայց իրանց Վարդանենց են ասել, իմ պապիս պապը եղել է Վարդանանց Ավետիսը: Նա եղել է գյուղի տանուտերը՝ քյոխվան, երբ 18 թ.-ին թուրքական կանոնավոր բանակը մտել է Շիրակ, կարծեմ Սառնաղբյուրի կռիվների ժամանակ է եղել: Մամայիս մայրն է իրեն պատմել՝ Սանոյան Գարանը, որի հայրը Ավետիսն է եղել, Ավո պապը, որ այդ ժամանակ գյուղում փրկել է կյանքեր: Ինքը իմացել է նաև թուրքերեն ու ռուսերեն և երբ թուրքերը Ձորակապ են մտել, գյուղի վերևում Սբ. Աստվածածին եկեղեցի կա, հավաքել ու այդտեղ են լցրել գյուղի տղամարդկանց՝ ջահելներից մինչև տարեցները, որ հաջորդ օրը այրեն: Որպես պահապան մի զինվոր են կանգնեցրել դռանը, որ հսկե, մինչև մյուս օրը ուրիշների էլ բերեն, նոր սկսեն սպանդը: Ավո պապը այդ զինվորի հետ զրուցել է ու իմացել, որ նրա ընտանիքում ինչ որ հայկական հետք կա, սկսել է համոզել, թե էս ինչ ես անում, դու կարող ես մարդկանց փրկել, իսկ ես էլ քո լավության տակից դուրս կգամ: Ասել է դու թող գնա, մենք քեզ կօգնենք, որ փախնես ու չբռնվես, սա էլ համաձայնվել է, դուռը բացել է, ինքը փախել, իսկ պապս ազատել է եկեղեցում փակված-

ներին ու նրանց տեսափոխել դեպի Լեռնակերտի կողմը, էդ ձևով փրկվել են, բայց երբ հետո ետ են վերադարձել իրանց տները, տեսել են, որ թուրքական խուժանը, ոչ թե զորքը, մտել են տները թալանել ու ավիրել են, կողոպտել ու տարել: Էդպես Ավետիք պապը փրկել է գյուղացիների կյանքը:

Պատմում էին, որ խուժանները հաճախ են ասպատակել իրենց գյուղը, նրանք միշտ օգտվել են առիթից, երբ թուրքական բանակը տարածքում է գտնվել, որ թալանեն հայ բնակչությանը: Պապը ասում էր, որ կանոնավոր բանակի զինվորների հետ հնարավոր էր լեզու գտնել, հատկապես 18-19 տարեկան երիտասարդների հետ, նրանք ավելի բարեգութ էին, քան խուժանը, որի հետ հնարավոր չէր խոսել:

Երբ գյուղի բնակչությունը փախել է, պատմում են, որ ճանապարհին մի երեխայի լացի ձայն են առել, կանանցից մեկը ասել է, թե դա իմ երեխան է, վերցրել է նրան գտնող մարդկացից բարուրը, որը բավականին ծանր է եղել. պարզվել է, որ բարուրի մեջ լցրել են ընտանիքի ոսկեղենը, որ այդ ձևով փախցնեն:

## ՂԱՁԱՆՉԻ

*Բանասացներ՝ **Մխեյան Աստղիկ Պողոսի**, ծնվ. 1938 թ.,*
***Աբրոյան Մկրտիչ Հովսեփի**, ծնվ. 1937 թ.*

գ. Ղազանչի: Ձայնագրություն 150102-2034:

Մերս է պատմել, որ թուրքերը եկե լցվել են գյուղ, ինչ ձևի թալնած են, սպանած են ժողովրդին՝ ցորեն, գարի, հագուստ բոլոր թալնած ու կողոպտած, գացած են: 6 ամիս նստած են էդի, հմեն հորեր բացած, ցորեն ու գարի հանած են էդի:

-Մերդ չի՞ ասել, էդ Աղբաբայի, թե՞ Թուրքիայի թուրքերն են եղել:

-Չէ, չի ասի, բայց Աղբաբու մասին լսած եմ:

-Բա ոչ ոք թուրքերի դեմ չի՞ եղել, կռվել:

-Ընձի հորոխպերմ էղի շա՛տ թուրք է ջարդե: Ինքը ազաբ տղա է էղե, հետո մեր գեղացին տեսե, օր իմ էդ հորոխպեր երկու թև կտրած երկու ասկյարի մեջ ընգած կերթա:

-Հորոխպորդ անունն ի՞նչ է եղել:

-Կոզոլ Մխեյան: Փոքր ի էղի, Կոզոլ են ըսե:

-Բա ո՞րտեղ է թուրքերին սպանել.գյուղում,թե՞ կռվել է ուրիշ տեղեր:

-Հենց գյուղի ներսում լը սպանություն էղի, ուրիշ տեղեր լը սպանություն էղի: Հորս դռան առաջն էնքան են ծեծած օր:

-Իսկ գյուղից չե՞ն փախել, գնացել ուրիշ տեղ:

-Գնացած են. Էջմիա են գնացե:

-Իսկ Անդրանիկը ձեր գյուղ եկե՞լ է:

-Էկե, մերս էլ Անդրանիկին տեսել է: Մերս պատմեր, օր Անդրանիկ լավ մարդ էր, հայերուն պաշտպանել է:

-Մերս ի կսեր, օր սիրուն հարսներ, աղջկներ երեսնին մուր ու չամուռ կքսեին, որ թուրքերը թամահ չենեին-տանեին: Հորս կսեն չաքուջ բեր,որ թուրքի ասկյար աղյալ-մաղյալ կիավքե հարս ու աղջիկ իր քովը տանելու: Հերս օր գիկա չաքուջ տանելու, հարսներին կսե. հարսներ ըսպես բան կա, ամենքդ փախեք: Հարսներն տներու մեջ պատի ծակեր կար, էդ ծակերով փախել են: Հերս օր կուշանա, կբռնին էնքան կջարդեն օր: Մերս կսեր օր փախնելու եղա օսկի քյամար է ունեցած, օր թողնին փախնինք օսկի են ուզած. ջարդած գերնդիով քյամարը քանդած, պոկած, քանի օսկի ուզած են, տված. կսեր կդրիք ու տվինք, կդրինք ու տվինք: Մերս լավ-լավ շորեր է ունեցած, լավ ունեցվածք, օր թալնե-տարել են թուրքերը: Շորերը սնդուկների միջից քանդած-հանած, մերս մինչ ի մեռնելը կպատմեր, կլացեր:

* * *

*Աբրոյան Մկրտիչ*

Մեր գյուղը Ղալաչյան Ամլիկոս կար, թուրքի մեծը ըդոնց տունը կնստեր: Ինքը պատմել է, օր էդ թուրքի մերն իրեն ասել էր, որ գյուղն օր կմտնես, ոչ մեկին ձեռ չես տա, կպաշտպանես ընպես, ինչ որ ես քու մայրն եմ, քեզ եմ պաշտպանել: Էդ մարդը պատմում էր, որ այդ թուրքը շատ խելացի, բարեխիղճ անձնավորություն է եղել: Ու էդ թուրքը 6 ամիս էդ մարդու տունն է նստե ու ոչ մեկին ձեռ չի տվե: Ինչ որ իրա մերն ըսել է, ինքն էլ արել է էս գյուղի հա-սարակության համար:

Մի ուրիշ պատմություն կա. մեր գյուղից մի 13 հոգի Թուր-քիայից գերի կբռնեն, սրանք հետ կգան էս կողմը, մոտիկ գյուղ կա Աղբաբա, կգան ըդեղ: Մեր գյուղացիներից մեկը ծանոթ կունենա, կսե էրթանք գիշերենք ծանոթիս տունը, առավոտ կգնանք մեր գյուղը: Էդ թուրքը գիշերը կելլա էդ 13 հոգուն կսպանե:

Մամս կսեր թուրքերը բոլորի տուն էլ մնացել են: Ժողովուրդը կելլեր կերթար իր գործին, հետ կգար, թուրքերն էլ իրանց տները մնացին էնքան, մինչև թողեցին գնացին:

* * *

*Բանասաց՝ Միխեյան Աստղիկի եղբոր հարսը՝* ***Լուսինե***
Ձայնագրություն 150102-2134

Կեսրարս պատմում էր, որ իր հորեղբայրը՝ Սրապ Միխեյանը շատ քաջ երիտասարդ է եղել և 18 թ. երբ թուրքերը հարձակվել են այստեղի՝ Ամասիայի թուրքերը նույնպես օգտվելով ստեղծված իրավիճակից եկել են, որ սպանդ կազմակերպեն: Մեր հորեղբայրը,

իմանալով այդ մասին, աղ ու հացով դիմավորել է, լավ կերակրել, պատվել է, անկողին է փռել, որ գիշերը հանգրվանեն այստեղ: Գիշերը, երբ բոլորը քնած են եղել, ինքն արթնացել է ու բոլորին գլխատել: Հետո, սակայն թուրքերն էլ իրեն են սպանել:

* * *

*Բանասաց՝* ***Եզանյան Հռիփ Միրեկանի****, ծնվ. 1938 թ.*
Ձայնագրություն 150102-2141

Մերս պատմում էր /ինքը Փալթլիից [ծնթ.84] էր/, երբ 18 թվին թուրքերը եկան, իրանք երկու մեծ հոր ունեին, որոնց մեջ ցորեն ու գարի են պահել:Մորական տատս ու պապս տունը նստած են եղել, թուրքերը մտել ու հարցրել են. – Ձեր աղա տղեն ուրդեղ է, - տատս ըսել է. – Աղա տղես /մեծ քեռիս/ գնացել է արտը վարելու: Ըսել են. – Բա քու հորե՞րն ուր են. պապս ըսել է. – ես հոր չունիմ, վեց մեշոկ ցորեն ունիմ, բայց ցանելու համար է: Պապս կմտածե, որ էդ վեցն ըսեմ, որ դրանք տանին, հորերին ձեռ չտան: Բայց դե մարդ էր ըսել երևի, թուրքերը կսեն.- քելե, դու մառան ունես, մառանի տակ հորեր կան, էդ հորերը բացեք,ցորենը լցրեք պարկերը, տվեք մեզ: Պապս կսե չունենք, բայց սրանք կմտնեն մառան: Պապս կդիմադրե, հենց ըտեղ էլ կսպանեն: Էս բոլորն էղել է Փալթլի: Մերս երբ դարձել է 15 տարեկան, ամուսնացել, եկել է Ղազանչի: Տատս մորս իրա ծոցն է պահել, մինչև եղել է 16 տարեկան, որ դատ ու դատաստան չէղնի: Մայրական պապս եղել է ջաղացպան, շատ ճանաչված ու հարգված մարդ, կողքի գյուղերից շատերն են հյուր եկել իրա տուն:

Էդ սև ու մութ թուրքերը (նկատի ունի Ամասիայի թուրքերին- Կ.Բ.) էնքան կապ են ունեցել հետները, որ անգամ Ղազանչվա որոշ

հարստների հետ քավոր-սանհեր են էղե: Մի հադմ Ղալաչյան Ամլիկոս կար, որ 4 հատ թուրքի քավոր էղավ:

18 թվին թուրքն օր էկել է, մեր գյուղ ջարդ չի էղե: Էս միակ գյուղն է էղե, օր ջարդ չի էղե:

Հարց – Բա ասում են թուրքերը ստեղ վեց ամիս մնացել են Ամլիկոսի տունը:

Պատասխան – Իրանք իրեք ախպեր են՝ Ամլիկոսը, Իսկոսը ու Լևոնը: Թուրքերը որ սկզբից էկել են, մնացել են Իսկոսի տունը: Սրանք թուրքերին պաշտպանել են, փաղաքշել են: Փալթլի ըդպես բան չի էղե. մորս էրեսին մուր են քսե, որ թուրքերը չտանեն: Փալթլիից մե բանմ էլ հիշողությանս էկավ. ուրեմն մի աղջիկ է եղե մորս թայ, շատ սիրուն, կսեն մի լուսի կտոր երեխա, անունն էղե Հռիփսիմե: 14 տարեկան է էղե, էրեսին ինչ ասես օր չեն էրե, էլ մուր են քսե, շիբ են քսե, ճանկռտել են, բայց օգուտ չի էղե: Տեսել են օր թուրքը պիտի տանի, գիշերը տղամարդու շոր կհագցնեն, պեխեր կդնեն, անուն կդնեն Միշա: Ժողովուրդը կելլեն կփախնեն սարեր, կսպասեն մինչև թուրքը քաշվի, հետո հետ կգան: Իմ հորոխպորն ու իմ պապին սպանել, անցել են կողքի երկու տուն: Ով որ վատ է էղե, տեսել է, որ մարդկանց կսպանեն, լավ է դարձել:

Իսկ ստեղ թուրքերից ոչ մի վնաս չի էղե. մարդ չեն սպանե, մենակ կերել ու կտրել են, որովհետև էդ պղինձ սարքողներն օր ստեղ էին /ըստեղ պղինձ կձուլեին/ ըդոնց շատ վրա կուդային, օր ըդոնց հարստությունը տանեին:

## ՄԱՅԻՍՅԱՆ

*Բանասաց՝* ***Նվարդ Հարությունի Խաչկայյան,*** *ծնվ. 1926 թ.*
Ձայնագրություն 150103 – 1820:

Ես Մայիսյանցի եմ, կեսուրս Ղարսից է եղել, 20 թվին փախել եկել են Լենինական: Լենինականում մի կերպ տուն, տեղ, գործ ստեղծել, ապրել են: Կեսուրս կպատմեր, որ ինքը երկու տղա ուներ, էդ ժամանակ թուրքը ստեղ նստած է եղել, իրա տղերքին բռնել են: Ինքը իրան մեծ մարդու տեղ է դրել. բռնել է երեսը մրոտել է, շոր-մոր փոխել է, գնացել է թուրքի մեծին: Թուրքի մեծը նստած է եղել 16 փողոցը, որ կուգա կիասնի հրապարակ, ժամի քովը, ըտեղ է նստած էղել: Գնացի խնդրեցի, ասեցի թե պառավ կնիկ եմ, տեր ու տիրական չկա, ինչ կեղնի, տղոնցս բռնել բերել են ձերոնք, ազատես: Էդ թուրքը, կսե, կանչեց ըղոնց մեծոնցը, ասավ գնացեք էս դոջա ղառու [ծնթ.85] տղոնցը /հավաքել, լցրել էին պադվալը, թե ինչ պդի էնեին, չիդեմ/ անունները կուդա, առեք բերեք տվեք էս դոջա ղառուն, թող էրթա: Էդպես, կսե, բերեց, տվեց, գնացինք:

18 թվին էլ օր փախանք, էկանք, հետո օր թուրքերը քաշվան, գնացին, հետ եկանք Ղարսի մեր տունը տեսանք քանդած, ավիրած: Էդտեղ մի անկյուն գտանք մի կերպ կուձուրանք, քնանք: Առավոտ որ ելանք, տեսանք մեր հայաթը երկու մեշոկ ցորեն ու գարի է դրած, հետո մէ էծմ ու մէ ոչխարմ: Ըսկսինք վախենալ, կսե, ըսինք այ մարդ էս ով է բերե ըստեղ դրե. հեսա կուգան մեզի նորից կըսպանեն: Ամբողջ օրը ձեռ չտվինք, կսե, մեկ էլ հանգարծ մեկմ էկավ, իրիկվա մութն էր, ծանոթ էր, ըսավ. – Մուգուչ ախպեր /կեսրարիս անունը Մուգուչ է եղել/ էս ույը, օչխարը, ցորենը, գարին ձեր համար եմ բերե, օր ուտեք, ապրիք, մինչև աշխատեք, ստեղծեք, ապրիք: Ըղիկ թուրք է էղե, օր էդ լավությունն էրել է: Կեսուրս էն թուր-

քի մասին էլ կսեր, օր լավություն է էրե, երեխեքին տվել է, մնացածին, կսե, տարան ջարդին:

-Փաստորեն, ըստ պատմածի, լավ թուրքեր էլ են եղել, մենակ վատը չի:

-Հա: Ղարսում էլ, կսե, չոլն է էղե կեսրարս, թե ինչ է էղե, թուրքերը ճամփեն բռնել են, թե շորերդ հանե, կեսրարս էլ հանել է: Ըսել են շորերդ տուր, օր չարնոտի, պտի տանինք, քեզ էլ պտի սպանենք: Կեսրարս կսե դուք էրեխա չունի՞ք, վերնն աստուն աշեք, ներքնն էլ ձեզի, ես էլ էրեխա ունեմ, պղի պահեմ, ընչի կսպանեք, ես ինչ եմ էրել ձեզի: Կսեն գյավուր, աստու անուն օր տվիր, գնա, գնա ռադ էղի, շորերս հանին, ինձի վռնդեցին, կեսուրս կպատմեր:

-Էդ կեսուրիդ պատմությունն էր, դե հիմա մորդ պատմությունն ասա:

-Մերս կսեր միշտ էլ էդ թուրքերը, նախքան հարձակվելն էլ /հատուկ կհարձակվեին/, մեկ էլ տեսար գռուպայով կլցվեին գեղը: Ֆուրգոնները կբերեին, ու՞մ կրնանք կանչե. զորք չկա, բան չկա, մարդ չկա, մեկիմ ըսես թե էկել են: Կայնեինք զը դրաղ [ծնթ.86], կսեին ինչ օր ունեք, հանի, տուր, կհանեինք, կուդայինք: Շիշը ձեռը տան մեջ ման կուգային, գետնին զարգեին զը /գետին էր, պոլ չէր/, ուրդեղ կդպար, կսեին ըստեղ դարդագ է:Մենք, կսե, ցորենները հորինք զը գեղնի տազը, վրեն կծածկեինք, զիդեինք, օր դրանք կգան: Ըդպես կուգային, շշերով կգդնեին, կհավաքեին, կերթային. ինչ օր ունեինք հարստություն, կհավաքեին, կերթային: Սորվել էին, կսեր, հայերը հավաքել են օսկի-մոսկի, մե տարի մեջ կուդանք, հաջորդ տարի գլխներին կզարգինք, կտանինք: Հայրիկս էլ 7 տարի ծառայել էր Ռուսաստանները բանակում: 20 թվի էդ պատմությունները, օր պտի վերջանար /էդ կռիվները/ բերել են իրանց Ղարս, Ղարսի ստանցին հայեր էին բոլոր, ռուսներ էլ են էղե հետները, /ես 8 տա-

րեկան եմ եղել, հերս կպատմեր, լավ չեմ հիշե/ հայերին հավաքեցին, մենք ըսինք հեսա մեզի կսպանեն, բայց մեզ ձեռ չտվին, ռուսներին լցրին վագոններն ու բոլորին վառեցին: Վառեցին ու ըսեցին հայերն են էրե: Քցեցին հայերի վրա, թե հայերն են վառե վագոնմ ռուսներին: Հետո իրանք ցրվել են, քանի որ տիրություն անող չի եղել: Հերս կսեր եկա մեր գյուղը՝ Մայիսյան, տեսնիմ մեր ընտանիքը ուրդե՞ղ է, ի՞նչ է: Ներս կմտնի, կտեսնի որ ոչ ոք չկա, մերոնք էկած կեղնին Լեննագան պատսպարվելու համար: Տունը դափ դարդակ էր, մտա, կսե նայեյի զը, տեսնայի ինչ կա-ինչ չկա, մեկ էլ մե կամանդիրմ թուրքի ու մե սալդատմ նեւ մտան ու ընձի քֆրդեցին՝ էս է, էն է, ըստեղ ընչի էս մտե, ուր ա ձեր ունեցվածքը, գյավուր: Ես էլ կուզեմ ըսեմ ինչն ինչոց է, մեկ էլ էդ սալդատներից մեկը հասավ ու ինձ շպպեց երեսիս: Ինքն օր շպպեց, /հերս ռիսկով ու հաղթանդամ, խոշոր մարդ էր/ կսե - ըսի էսիկ ինձ օր խփեց, մեկ է կխփի, սպասի ես էլ իրան զարգեմ, ինչ կեղնի, թող էղնի, մի հադմ էլ ես հասցրի: Էս սալդատն օր հառաջացավ ընձի խփեր, կամանդիրն ըսավ կայնի, էսիգ տղամարդ է, տղամարդուն խփել չի կարելի: Ըդպեսով հերս փրզվել է:

Մամս էլ կպատմե. թե որ թիվն է էղե՝ վերջինն է էղե, թե 18 թիվը, մեզի լցրեցին մարազը ու վրեքս դուռը փագին. ամբողջ գյուղը, ով կրացե փախե, ով չէ մնացե: Հետո մնացինք ըդպես մինչն մութն ընզավ: Մութն ընզավ, ասի թե այ կնզտիք արեք /առաջ օր հավ կպահեին, հավնոցը մե քարմ կղնեին, որ հանեին հավը ներս ու դու էներ/ էս ծակը բանանք, մեձցնենք, արանքով ելնինք փախնենք, էրթանք, մեկ է ըստեղ մեզի վառեն բըդի: Ավելի լավ է ճամփեն տեսնին, խփեն: Ամենքը չէ, որ ուզեցան, մի քանի հոգով ճանկերով սկսինք քանդել, փորել, վերջը մի 7 հոգով փախանք, փրզըվանք, իսկ մնացածներին վառին:

Մամս կսեր ամբողջ գյուղի երիտասարդությունը հավաքին, տարան Հզազի ձորը սպանեցին: Ըդտեղ բոլոր կողմերից բերել ու սպանել են հայերին: Իրա երկու տղին էլ են սպանել 17 ու 18 տարեկան:

Մամաս էլ կսեր սովետն էկավ, էլ մեր խաթրին կպնող չեղավ: Թե չէ ամեն տարի թուրքը գուքար, դուռը կբացեր, ինչ կուզեր կառներ-կտաներ, ռիսկ չէինք էնե դեմն առնե: Որ դիմադրեիր՝ կսպանեին, ըդպես կառնեին օսկիքը, ունեցվածքը, կերթային:

## ՄԵԾ ՍԱՐԻԱՐ

*Բանասաց՝* ***Հովիկ Կարապետյան****, ծնվ. 1959 թ.*

գ. Մեծ Սարիար: Ձայնագրություն 151128- 2329 և 2350:

Թուրքական արշավանքի մասին ինձ պատմել են իմ երկու՝ մորական ու հորական տատիկները: Հորական տատիկիս անունն է Կարապետյան Արփենիկ Սրապի, որը ծնվել էր 1910 թ.-ին և տեսել էր թուրքերի ներխուժումը և՛ 1918 և՛ 1920 թ.-ին: Մորական տատիս անունն էր Ազիզբեկյան Թագուհի Գրիգորի, ծնված 1911 թվին, երկուսն էլ Մեծ Սարիար գյուղից էին: Մեր գյուղը սահմանակից է Լեռնուտ /Արախվալի/ գյուղին, որն ունի հենց իր անունով կոչվող սար: Տատերս պատմում էին, որ 18 թ.-ին թուրքերը երևացին հենց Արախվալի սարի գլխից, նրանք ասում էին, որ սարից իջնելուց դրանք այնքան բազմամարդ էին, որ իրենց կարմիր ֆեսերից սարի դոշը կարմրել էր: Դրանից ամբողջ գյուղը սարսափի մեջ է ընկել ու որոշել են, որ տղամարդիկ փախնեն, որ փրկվեն ու գյուղում մնացել են ծերերը, կանայք ու երեխաները: Տղամարդիկ փախել են սարերը, ավելի շուտ իրենց յայլան՝ Փոքր Սարիարը, ու հետ են վերադարձել թուրքերի գնալուց հետո:

Թուրքերը գրավել են գյուղը, բայց այս անգամ ոչ մի մարդու չեն սպանել, միայն զբաղվել են թալանով ու բռնություններով հատկապես կանանց նկատմամբ, որոնց բռնաբարությունը սովորական բնույթ է կրել: Զինվորները մտել են տնետուն ու փաշայի համար կին են փնտրել, ում հավանել են իրենց հետ տարել են: Թուրքերը գյուղում ապրել են 7 ամիս, զինվորները տեղավորվել են գյուղացիների տանը, բայց քանի որ մեծաթիվ էին, վրաններ էլ են ունեցել, որտեղ ապրել են: Սրանք մեր գյուղը կոչել են Քյուչուկ Ստամբուլ [ծնթ.87]:

Սարիարցիները վերին Բասենից են եկել Շիրակ ու շատերը արհեստավորներ են եղել, մեխ են կտրել, մեխ պատրաստող գերմանական մեքենաներ են ունեցել, որ հետները բերել են, մետաղալարերից մեխեր են պատրաստել ու վաճառել: Գյուղում եղել են նաև որմնադիրներ, հյուսներ, մի խոսքով բացի անասնապահությունից զբաղվել են նաև արհեստներով: Իմ նախապապը, որ գյուղի հիմնադիրներից է, զոտի սարքող է եղել, դրա համար իրեն ասել են դայիշչի Հովանես, դրանից էլ մեր տոհմը մինչ օրս գյուղում հայտնի է Ղայիշչոնք անունով: Սարիարցիները Բասենում շատ հարուստ են եղել ու երբ 1828-29 թթ. եկել են, կարողացել են իրենց հետ տեղափոխել ոչ միայն հարստությունը, այլև գույքը, չի եղել տուն, որ չունենար կիլոներով ոսկեղեն: Թուրքերը որ եկել են, արդեն ինֆորմացիա ունեցել են, որ Սարիարցիները հարուստ են: Մեր գյուղացիները Ղուկասյանի շրջանում են իրենց յայլան հիմնել ու անունը դրել են Փոքր Սարիար: Թուրքերը, հաստատվելով գյուղում, սկսել են ոսկիները ման գալ, տնետուն մտնելով պահանջել են իրենց հանձնել ոսկիները, ովքեր հրաժարվել են՝ տանջել են: Տատս պատմում էր, որ նույնիսկ ատամներն էին քաշում բերաններից, որ ոսկու տեղն ասեն: Տատս պատմում էր, որ իր մոր մեջքին

եռացրած ջրով լի կաթսա են դրել, որ ոսկիները տա, ասում էր խանձած մսի հոտը տնով մեկ լցվել էր, խեղճ կինը ցավից ոռնալով հանում, տալիս է ոսկիները, որոնք պահել էին գոմի օդայի սյուների տակ: Բացի այդ տարել են նաև բրդեղեն, մթերք՝ յուղ, դավուրմա և այլն: Գյուղում եղել են դավաճաններ, որոնք ցույց են տվել էն տները, որոնք հարուստ են եղել, բայց նրանք էլ, երևի ստիպված են ասել, քանի որ վախեցել են, դրանց էլ են կտտանքների ենթարկել, որ իրենց ուզածն իմանան, սրանք էլ մատնել են:

7 ամիս հետո թուրքը հետ է քաշվել ու նորից եկել 1920թ. սեպտեմբերին, բայց այս անգամ սկսում են սպանությունները՝ հատկապես տղամարդկանց: Որին սպանում են իրենց տան դռանը, հարազատների աչքի առջև, իմ պապի հորը 5 տղաների հետ մոր աչքի առջև սպանել են, մենակ թողել են պապիս, որը 1909 թ. ծնված է եղել, ասել են -չոջուխ, չոջուխ- իբր երեխա է ու չեն սպանել: Տղամարդկանց կապել են, թե ձեզ տանում ենք աշխատեցնելու, մի վախեցեք, դուք արհեստավորներ եք, մենք ձեզ կվճարենք, այդպես հավաքել ու տարել են: Վերցրել տարել են ու Վաղակաչի ձորը [ծնթ.88] բոլորին խշտիկել են, 94 հոգու այդպես սպանել են Սարիար գյուղից: Սարսափելի դաժան են եղել, տղամարդիկ գրեթե չեն կարողացել փախչել գյուղից, գլուխներն են կտրել, ձորն են գլորել, տատերս ականատես պատմում էին, բայց հորական տատս ավելի շատ էր պատմում: Միայն մեկն է կենդանի մնացել, որ դիակների տակ պահ է մտել. երբ թուրքերը սկսել են խշտիկել, էդ Խաչոն իրան սպանվածի տեղ է դրել, անունը նույնիսկ դրել են Խուժան Խաչո, որ մյուսների հետ չի մեռել ու փրկվել է:

Այդպիսի սարսափելի դեպքեր են եղել, բայց, այնուամենայնիվ դիմադրություն չի եղել, խաբել են, թե աշխատելու են տանում: Մեր գյուղացիներից եղել են նաև մարդիկ, որ ուրիշ տեղերից բեր-

վածների հետ սպանել են Հզազի՝ Ջարդի ձորում, բայց հիմնակա-նում, այսինքն 94 հոգու, Վաղակաչի ձորում են սպանել: Դեպի Ջա-ջուռ որ գնում ես, դիմացը երևում է, սովետի ժամանակ էդտեղ վա-դակաչ է եղել: 1970-80-ական թթ. հողը մշակելու ժամանակ տրակ-տորները ոսկորները դուրս էր հանում հողի տակից:

Կանանց ու երեխեքին լցրել են գյուղի մարագը որ վառեն, տատս ասում էր վերջին պահին հանկարծ սպիտակ դրոշը ձեռքին թուրքի ասկյարը եկավ, չթողեց որ վառեն: Ասել է հրաման եմ բե-րել, որ կանանց ու երեխեքին չսպանեք: Իսկ Կրաշեն գյուղում իրոք վառել են, տատս ասում էր էդ վառած մսի հոտը, խեղճ ժողովրդի ոռնոցը մինչև մեր գյուղը գալիս էր: 20 թվին էլ էլի եղել են բռնաբա-րություններ, մատնություններ: Որոշ դիմադրության դեպքեր են եղել, մասնավոր, երբ տղամարդիկ եղաններով հարձակվել են թուրքերի վրա: Իմ պապի եղբայրը, որի անունը Պետրոս է եղել, սրան սվինով խփել են, վիրավորվել է, բերել հասցրել են հարևանի տունը, երբ հարսներից մեկը վազել է բժշկի տունը ու կանչել, թե – դոխտուր ջան, արի, Պետրոսը յարալու [ծնթ.89] է, արի բուժե-էդտեղ գտնվող թուրքերը, լսելով որ Պետրոսը վիրավոր է, գնացել ու տեղնուտեղը սպանել են:

Կա էսպիսի մի պատմություն. կանանց որ եկել տարել են չէ, մամս կսեր – բալա ջան աղջկները, հարսները իրանց կմրոտեին, կկեղտոտեին, որ չճանչնային, թուրքերը չտանեին: Մի դաժան իրո-ղություն են պատմել, որ ես հայ իրականության մեջ լսած չկայի: Ուրեմն գալիս մտնում են մեկի տունը, տան մեծ կնոջը՝ Թութո մա-մին ասում են, թե հարսիդ պիտի տաս տանենք: Քանի որ տղա-մարդիկ սարում են եղել, տանը տղամարդ չի եղել, էս Թութո մամը հարսին պահել է, ասել է հարսիս չեմ տա, կտամ օրիորդ աղջկաս: Նա որոշել է, թե որ երբ տղան հետ վերադառնա ու իմանա որ կնո-

ջը բռնաբարել են, կարող է հիասթափվել նրանից ու տվել է իր աղջկան: Փաստորեն էդ Թութո մամը իր աղջկան զոհաբերել է հարսի պատիվը պահելու համար:

## ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ

*Բանասաց՝* ***Գրիգոր Թորգոմի Աղանյան****, ծնվ. 1962 թ. Լենինական*

Ձայնագրություն 151027-0500

Պատմում է իր հորական տատի ու պապի մասին հիշողությունները, որոնք Մեծ Սեպասար գյուղից էին:

Հայրս՝ Թորգոմ Ավետիսի Աղանյանը ծնվել է Ալեքսանդրապոլի գավառի Աղբաբայի դիստանցիայի Մեծ Շիշթափա գյուղում 1925 թ.: Հորս մայրը՝ Եղիսաբեթ Մարտիրոսի Մելիքյանը՝ Պողսիկների ազգատոհմից, ծնվել է 1900 թ., այսինքն 1918 թ. թուրքական արշավանքների ժամանակ եղել է 18 տարեկան: Իմ պատմությունը հիմնված է պապիկիս՝ Ավետիս Աղանի Մկրտչյանի (ծնվ. 1896 թ. նույն գյուղում), հորս և մեծ հորաքրոջս՝ Տիրուն Ավետիսի Աղանյանի (ծնվ. 1924 թ.) և տատիկիս հորեղբոր աղջկա՝ Քրիստինե Մելիքյանի հուշերի հիման վրա: 1918 թ. գարնանը, երբ թուրքական զորքը մտավ Աղբաբայի դիստանցիա, մտան նաև իմ հայրական գյուղ, որը կաթոլիկ հայկական գյուղ էր, իսկ Փոքր Շիշթափան, որը թուրքական գյուղ էր և հարևան մյուս գյուղերը՝ Յենի-յոլ և այլն, որոնք ևս թուրքական, կամ որ ավելի ճիշտ է ղարափափախական էին և իրենց աղալար Մուրթուզ աղայի հետ լավ հարաբերություններ ունեին հայերի հետ: 1918 թ. թուրքական զորքերն իրենց ղեկավարության հետ նստած էին Ենի-յոլ գյուղում, ավելի ճիշտ թուրքական զորքի հրամանատարը, որը հազարապետ էր կամ բինբաշի, նստած էր Ենի-յոլում, իսկ զորաջոկատները տեղակայված էին

տարբեր գյուղերում: Մեծ Շիշթափայում ևս կար կայազոր և մարդիկ հավատացած էին, որ թուրքերը ոչ մեկին ձեռք չեն տալու, որ հայ կաթոլիկ գյուղերում սուտ լուրեր էին տարածվել, թե Հռոմի պապը խնդրել է օսմանցիներին չկոտորել կաթոլիկ հայերին: Այս օրերին իմ տատիկի հորեղբոր աղջիկ Քրիստինենն գալիս է իրենց տուն հյուր և հեռանալիս տատիկս նրա հետ դուրս է գալիս որ ճանապարհի, քանի որ իրենց ազգի բոլոր տները կից էին: Երբ նրանք հասնում են հարամած ջրհորի մոտ (հարամած էր համարվում այն ջրհորը, որի ջուրը չէր բարձրանում ու տիղմի էր վերածվում), երկու թուրք ձիավոր քշում են իրենց վրա: Տատիկս վախենում է և հորեղբոր աղջկան ասում, թե եթե այդ թուրքերն իրեն մոտենան և ձեռքով դիպչեն, ինքն իրեն կգցի ջրհորը:Նա բացում է ջրհորի կափարիչը, որը դրվում էր ջրհորի գարշահոտը չտարածվելու համար ու իրեն զցում ջրհորը: Դրանից հետո թե ինչ է լինում չգիտեմ, որովհետև այդ մասին պատմություններ չկան: Քրիստինենն լուր է տանում հարազատներին, որ Եղսոն իրեն նետել է ջրհորը: Հաջորդ օրը տատիս եղբայրները՝ Ալեքսանը և Վարդը գալիս են իրենց հոր՝ Մարտիրոսի և մոր՝ Աննայի հետ Եղիսաբեթին հանելու: Աննա տատն արդեն ողբում էր իր աղջկան, որն ըստ իրենց արդեն խեղդվել էր: Ալեքսանին կապում են պարանին ու իջեցնում են ջրհորը, բայց կեսից նա կանչում է, թե ես խեղդվեցի, ինձ դուրս հանեք, քանի որ ահավոր գազեր են հավաքվել ջրհորում ու շատ տհաճ հոտ է եկել: Հետո Վարդն է իջել բայց դարձյալ չի դիմացել ու դուրս է եկել: Այդ ժամանակ հայրը՝ Մարտիրոսը ասում է ուրեմն պետք է պարանին կարճ մանգաղ կապել, իջեցնել ու դրա օգնությամբ հանել, քանի որ աղջկա մեջքին բարակ արծաթ գոտի է եղել, մանգաղի ծայրն անցկացնել գոտու մեջ ու դուրս քաշել: Այդ ձևով պարանն այնքան են նետում ցած ու քաշում, մինչև մանգաղը հագնում է գո-

տիկին ու ձգելով հանում են դուրս: Քանի որ արդեն երրորդ օրն է եղել դեպքից հետո, բոլորը մտածում են, որ նա մեռել է ու փաթաթում, տանում են որ թաղեն: Փառք Աստծո, այդտեղ է լինում Մարտիրոսի հորեղբոր տղան, որը հայտնի ժողովրդական բժիշկ էր Աղբաբայի դիստանցիայում: Նա ասում է- սպասեք, ոնց որ թե այս աղջիկը շնչում է, ու տատիս տանում է իրենց տուն՝ խնամելու ու բժշկելու համար: Տատիկս ուշաթափված ու հյուծված է եղել, բայց ոչ մի վնասվածք չի ունեցել: Իսկ բժիշկը, որը նաև լավ սնխչի [ծնթ.90] է եղել, որպեսզի թուրքերի կասկածները փարատի, թե ինչպես եղավ, որ մեռածը վերակենդանացավ, տատիկիս մարմինն ամբողջությամբ կապկպում է փայտե տախտակներով, իբր թե նա ընկնելուց ջարդուխուրդ է եղել, փշրվել է, անշարժացնում է մարմինը՝ թողնելով միայն գլուխը: Յուզբաշին, որը իմացել է այս դեպքի մասին, զարմացել է որ աղջիկը ողջ է մնացել, գալիս է նրան տեսնելու բժշկի տուն, որին Աղբաբայի բոլոր թուրքական գյուղերում շատ էին հարգում: Հարյուրապետը երբ մտնում է մեծ օդան, տեսնում է տատիկիս ու ձայն է տալիս, նա ռեֆլեկտոր գլուխը շուռ է տալիս ու աչքերը բացում է: Տատիկս շատ գեղեցիկ է եղել՝ մուգ, սև սաթի գույնի մազերով ու երկնագույն- կապույտ աչքերով, երկար թարթիչներով ու երբ նայել է յուզբաշուն, վերջինս ասել է.- էդ գյոզերը (աչքերը) որ դու ունես, բա պիտի քեզ գցեիր ջրհորը: Քանի որ չես մեռել ուրեմն ապրիր խաղաղությամբ, քեզ ձեռք տվող չկա: Այս պատմությունը դարձավ լեգենդ, սակայն ծանր հետևանքներ ունեցավ տատիկիս համար, որը հետագայում այդ երեք օրվա խոնավության մեջ մնալով ձեռք բերեց ռևմատիզմ ու 41 տարեկանում մահացավ այդ հիվանդությունից, որբ թողնելով իր 4 զավակներին:

* * *

Ձայնագրություն 151027-0547 շարունակություն:

Ավելացնեմ, որ չնայած Մեծ Շիշթափայում թուրքերը ավերածություններ ու կոտորած չեն արել, բայց սուրբ Ծննդյան օրը գյուղի եկեղեցու բակում սպանել են Մեծ տերտերանց ընտանիքից Տեր Դավիթ քահանա Կոստանյանին, որի իրական պատճառները հայտնի չեն: Տեր Դավիթ քահանան թաղված է գյուղի եկեղեցու բակում:

Պապիկս՝ Ավետիս Աղանի Մկրտչյանը, 1914 թ. 1-ին աշխարհամարտի հենց սկզբում, զորակոչվում է ռուսական բանակ: Նախնական զինվորական պատրաստությունն անցնում է Թերեքյան մարզի /Терская область/ Գրոզնի քաղաքում տեղակայված լեռնահրաձգային գնդում, ձմռանն արդեն իր զորամասի հետ մեկնում է Կովկասյան ճակատ, որտեղ մասնակցում է մի շարք նշանավոր ճակատամարտերի և հայկական շրջանների ազատագրմանը: 1918թ. մասնակցում է Բաշ Ապարանի ճակատամարտին: Մինչև 1920թ. ծառայում է հայկական տարբեր զորամասերում: Նույն տարում զորավար Սեպուհի զորաջոկատի կազմում մասնակցում է մայիսյան ապստամբության ճնշմանը, որի մասին վախվորած էր հիշում: 1920 թ. սեպտեմբերին Սեպուհի զորաջոկատի մի քանի մարտիկների շարքում արձակուրդ է ստանում, նա 6 տարի չէր եղել հարազատ գյուղում: Գալով գյուղ պապիկս իր ավագ եղբայրներին՝ Միսակին և Սեդրակին հայտնում է, որ քեմալական թուրքերը կարող է նոր պատերազմ սկսեն Հայաստանի դեմ և որպեսզի չկրկնվի 1918 թ. դաժան իրողությունը, երբ թուրքերը հետ քաշվելիս տարան ողջ գյուղի հացահատիկն ու սերմնացուն, հորդորում է եղբայրներին իրենց ամբարած ցորենն ու գարին պահ

տալ տնից դուրս որևէ վայրում: Գիշերով երեք եղբայր գյուղից դուրս մի մեծ փոս են փորում և այնտեղ տեղափոխում ամբարած հացահատիկը, փոսի բերանը ծածկում են կաշվով և լաթերով և փակում Ախուրյանից բերված ճիմով: Մի քանի օրից քեմալական բանակը և Աղբաբայի թուրքերից կազմված բաշիբոզուկների ջոկատները մտնում են գյուղ և սկսում ձերբակալել տեղի երիտասարդներին, պապիկս, որ զինվորական համազգեստով էր, առաջիններից մեկն է ձերբակալվում, սակայն նրան հաջողվում է չեզոքացնել մարազը հսկող ասկյարին (իր խոսքերով ասած ցարական բանակում սերտած ձեռնամարտի հնարքների շնորհիվ) և վերցնելով սրա կարճ գերմանական կարաբինը Բայթար գյուղի վրայով հասնում է իր զորամաս:

1921 թ. ապրիլին, երբ թուրքական զորքը քաշվեց Աղբաբայի դիստանցիայից, բանակից զորացրված պապիկս գալիս է գյուղ, եղբայրների հետ հանում է պահ տված սերմնացուն: Թուրքերը մինչև վերջին հատիկը տարել էին գյուղացիներից և օգտվելով դրանից եղբայրները սկսում են վաճառել սերմնացուն և ստացված գումարով Վրոնցովկայի /այժմ Տաշիր/ մոլոկաններից գնում են թեթև սայլ-կալյասկա, որին որպես գրաստ լծում էին զույգ ձի: Հետագայում պապիկիս մայրը՝ Նորսոյենց Աննան, որպեսզի գովերգի իր որդու՝ Ավետիսի խելքն ու հնարամտությունը, ասում էր, «Օ՜յ, իմ Ավետիս Կանաչ կալյասկովն ի (սայլակի ճաղերը կանաչ էին ներկված եղել) խելք ունի»:

## ՄՈՒՍԱԵԼՅԱՆ

*Բանասաց՝ **Հակոբյան Գարեգին Հովսեփի**, ծնվ. 1928 թ.,*
գ. Մուսայելյան: Ձայնագրություն 150104-1908

Թուրքերն օր մտել են գյուղ, գյուղացիք փախել են Կալինինո: Մեկը թոփալ էր, չէր կրա էրթա, ձի ուզեցին գտնեն, բայց ձի էլ չկար, էդման մնաց գեղը: Էդ ժամանակ ես չեմ էղե: Իմ մերս, ըդեղ մեծ ջուր է էղե, սարի հետևը, իմ մամս էշ մե ունեցե, իրանց գողինքը բարձել են, էդ ջուրը չեն կրացե անցնե, գլուխ անցրե իշու տակը, շալկե, ջուրն անցրել է: Կմնան Կալինինո, մինչև թուրքերը կքաշվին, իրանք կգան հետ: Անդրանիկը էդ սարերին դիրքեր փորեց, գնաց Կալինինոյի թուրքերին ջարդեց:

## ՇԻՐԱԿ

*Բանասաց՝ **Արտյոմ Գրիգորյան**, ծնվ. Գյումրիում*
Պատմությունն ուղարկվել է գրավոր տեքստով

1920 թ. գանանը թուրքերը եկել են Շիրակի մարզի Շիրակ (Ղռնախղռան) գյուղ: Սկզբում հավաքել են գյուղի բոլոր տղամարդկանց՝ ներառյալ երիտասարդներին , ասել իբրև Ջաջուռ կայարանում գործ կա, տղամարդիկ պետք են: Դուրս են բերել մայրուղի, որտեղ հավաքել են տարածաշրջանի բոլոր արական սեռի ներկայացուցիչներին (բոլոր գյուղերից): Այնուհետև մի քանի ասկյարներով, որոնք զինված են եղել հրացաններով ու սվին դանակներով, գերևարված ամբոխին քշել են դեպի Ջարդի Ձոր: Մինչ հասնելը, ասկյարներից մեկը, երբ կանգնել է հոգալու անձնական կարիքները, տատիս հայր Ալեքսանը (կնոջ անունը Զարդար), կարողանում է մի քանի հոգու հետ ճողոպրել, սակայն շարքից ինչ-որ մեկը ա-

սում է, որ փախչողներ եղան: Ասկյարները կատաղած գնում են գյուղ, որպեսզի այս անգամ բոլորին՝ կանանց ու երեխաներին էլ բերեն սպանելու: Երբ մտնում են գյուղ, Ալեքսանը փախչում մըտնում է խոտի դեզի մեջ, թուրքերը սվիով այնքան են հարվածում խոտի մեջ, մինչև սպանում են, այնուհետև հանում են դեզի միջից, գլուխը կտրում, հետո մարմինը երկու մասի բաժանում ( բարձրահասակ տղամարդ է եղել, չի տեղավորվել, երկու մաս են արել) ու գցում ջրհորը ընտանիքի աչքի առաջ: Եվ հավաքել են բոլորին՝ կանանց ու երեխաներին՝ տարել Ջարդի Ձոր, միացրել գերեվարված ամբոխին: Այդտեղ սարերի վրա չորս կողմից կանգնած են եղել ասկյարները թնդանոթներով, որպեսզի ով փախնի դրանցով խփեն: Իսկ ներքևում ով ինչպես կարողացել է (մորթելով, հրացանով, գլուխները դրել սվինների վրա ուրախացել, քեֆ արել) սպանել են: Երբ մնացել են մի քանի հոգի ընդամենը, Ալեքպոլից եկել է ըստ երևույթին ինչ-որ հրամանատար, դեռևս ողջ մնացած խմբից մի տարեց մարդ ծնկի է եկել և խնդել, որ խղճա այս «չոջուխներին» [ծնթ.91], սա էլ ասել է, լավ, թողեք էդ մի քանի հոգուն: Տատիս մայրը Զարդարը մահամերձ է եղել, ճանապարհին մահացել է, հասել են գյուղ, գիշերով թաղել են գյուղի եկեղեցու պատի տակ ( ես տեղը գիտեմ), իսկ երեխաները հայտնվել են մանկատանը Սլաբոտկա թաղամաս, Ալեքսանդրապոլ: Մեծ ընտանիքից փրկվել են տատս՝ Արաքսի Դեմոյանը, եղել է 6 տարեկան, երեխաներից ամենափոքրը, իր մեծ քույրը՝ Անգին Դեմոյանը եղել է մոտ 14 տարեկան և Տիրունը՝ մյուս քույրը: Մանկատանը Անգինին վերցրել են որպես աշխատող՝ երեխաներին ճաշ բաժանող: Երբ եկել են ԱՄՆ-ից որպեսզի երեխաներ տանեն, ուզել են տանել նաև տատիս՝ Արաքսին, բայց մեծ քույրը՝ Անգինը, իմանում է և չի թողնում, ասում է, որ մենք քեռի ունենք, մեզ տեր կկանգնի: Այն նավը, որով տանելու էին

մանկատան երեխաներին Ամերիկա, խորտակվում է... Տատիս ճակատագիրը փրկվելն էր: Նա ամուսնացել է 1928թ. ունեցել է 11 երեխա:

Ես տատիս ամենափոքր թոռն եմ, ամենափոքր աղջկա տղան: Ապրում եմ Գյումրիում:

## ՇԻՐԱԿԱՎԱՆ

Բանասաց՝ ***Մենիկ Անդրանիկի Բալոյան***, *ծնվ. 1947թ.*
գ. Շիրակավան: Ձայնագրություն 151208-0021:

1918-20 թվականների մասին ես լսել եմ իմ հորից ու իրեն տարեկից մարդկանցից: Էդ ժամանակ հայրս եղել է 13-15 տարեկան, էնպես որ հավաստի են նրա հուշերը: Ես նույնիսկ նրա ձայնագրությունը ունեմ, չնայած չգիտեմ թե որտեղ է ընկած հիմա: Մի անգամ կինս հարցրեց թե - Հայրիկ, հեչ ինչ ես հիշում թուրքական ներխուժումներից, - ու այդպես էլ սկսվեց պատմությունը հիշելը: Հիմա ես բառացի կրկնեմ իմ հոր խոսքերը: Նա ասում էր – թուրքը Հայաստանի տունը քանդեց, - ինքը էդպես էր մեկնաբանում: Էդ տարիներին որ թուրքը լցվել է, դրանից առաջ ռուսական բանակը հասել էր մինչև Էրզրում, Բայազետ ու սահմանը պահում էր, դա պատմությանը հայտնի է, բայց երբ հեղափոխությունը եղավ մարդիկ թողին գնացին իրանց երկիրը, թե ընդեղ հեր ու ախպեր իրար են սպանում, հայր ու որդի իրար են սպանում, կարմիր ու սպիտակ են խաղում, վոբշեմ, հենց ռուսը իր ոտը քաշեց (բառացի իր խոսքերն եմ ասում), թուրքը հետևից դուղեն տնգեց ու էկավ: Ասում էր թուրքը մի քանի ասկյարով կրնար մե գեղմ վերցներ, դեմը ոչ դիմադրող կար, ոչ զորք կար, ոչ մի բան չկար: Սկսվում է փախեփախը ու մեր գյուղի ժողովուրդը փախնում է դեպի Արագածի փեշերի

գյուղերը: Հայրս ասում էր, որ էնքան թուրքի ասկյարը չէր վնաս տալիս, ինչքան իրանց հետևից եկող խուժանը, որոնց մեծ մասը, համոզված եմ, որ քրդեր են եղել: Մարդիկ առաջին անհրաժեշտության ինչ հասցրել են, վերցրել գնացել են, սրանք եկել են, ինչ հնարավոր է էղել քանդուքարափ են արել, բարձել են սայլերն ու տարել են, նույնիսկ մենք սուրբ Մինաս սրբավայր ունինք, դրա դուռն են քանդել տարել: Մեր գյուղ Շիրակավանը կամ Տավշանղշլաղը շեն գյուղ է եղել, երկու ձիթհան են ունեցել ու երկու ջրաղաց, երբ որ եկել են, ամեն ինչ սրբել-տարել են: Հայրս ասում էր, երբ որ եկանք, տեսանք ամբողջ թալանած ու քանդած էր: Ձիթհանն ինչի համար ասեցի, էդ ձիթհանի քարը պտտեցնող գերանը որ կոչվում էին դոշաթ, Սարիղամիշից էր բերած, ամուր փայտից էր, նույնիսկ էդ գերաններն էին տարել, ձիթհանքից ոչինչ չէր մնացել, բացի սալաքարից, քանի որ դրանք էնքան ծանր էին, որ չեն կարողացել տանեն, թե չէ էդ էլ կտանեին: Էսքանն էր հիշում հայրս:

Հարց- Իսկ ձեր գյուղում սպանություններ չե՞ն եղել

Պատասխան- Չեմ լսել էդպիսի բան, սուտ ինչի խոսեմ, բայց շատ եմ լսել, որ ուրիշ գյուղերում էն մարդկանց, ովքեր չեն ենթարկվել, հավաքել են, չեն նայել տղամարդ, կին, աղջիկ, լցրել են մարագները, ծղոտը լցրել են ու կրակ տվել, որ խեղճ մարդիկ խեղդամահ լինեն: Ու մի գյուղում չէ, շատ գյուղերում են արել, դա թուրքերի ձեռագիրն է:

***

Բանասաց՝ ***Մկրտչյան Թամար***

Ես իմ հոր պատմածներն եմ հիշում, ինքը 1909 թ. ծնունդ էր, էդ տարիներին 9-10 տարեկան երեխա է եղել: Հայրս պատմում էր,

որ երբ թուրքերը եկել են, իրենք Ալեքսանդրապոլ են փախել, մնացել են ինչ որ բարեկամի, թե ծանոթի տանը: Հիշում եմ, որ պատմում էր, թե մեծերը վախենում էին տնից դուրս գալու ու մեր տարիքի երեխաներին էին ուղարկում առևտրի: Էդ հիշողությունը հայրիկս միշտ կրում էր, ասում էր հատկապես տղամարդիկ խուսափում էին տնից դուրս գալ, որովհետև տղամարդկանց հավաքումտանում էին իբր աշխատեցնելու, էդպես հորաքրոջս ամուսնուն էլ են տարել: Երբ թուրքերը նրան տարել են, ինքը մի տղա ու մի աղջիկ է ունեցել, տղան մեծ է եղել, եկել է մորը կանչել, թե արի, հայրիկին թուրքերը տանում են, գնանք, տեսնենք: Հորաքույրս փոքրիկ աղջկան թողնում է կեսուրի մոտ, այդ ժամանակ թոնրի վրա ձեթով կաթսա է եղել դրված, երևի ճաշ եփելու համար, երբ հետ է եկել, տեսել է աղջիկը ընկել է մեջն ու այրվել, մահացել: Հորաքույրս հետագա ողջ կյանքի ընթացքում ողբում էր թե ամուսնու, թե կորցրած աղջկա համար:

## ՋԱՋՈՒՌ

Բանասաց՝ ***Աշխեն Երեկլիի Դավթյան,*** *ծնվ. 1928 թ.*

գ. Ջաջուռ: Ձայնագրություն 150105-2129

Ես պատմությունները լսել եմ իմ հորից՝ Երեկլի /Հերակլես/ Դավթյանից՝ ծնվ. 1878 թ. և մորիցս՝ ծնվ. 1886 թ.: Իմ պապաս մինչև մորս հետ ամուսնանալը մի անգամ ամուսնացած է էղե Ղալթախչիից մեկի հետ, Բուրաստան անունով մի աղջիկ է ունեցել էդ ժամանակ: Երբ թուրքերը եկել են, ինքն էր պատմում, որ տղամարդիկ, զենք չունեին, դրա համար փախել են: Պապաս էլ է փախնում Գյորան [ծնթ.92], իսկ կինը մնում է էստեղ: Մեր տան հետևը կալ է եղել, իրա եզը, սելը: Էդ ժամանակ շատ դաժանություն է էղել,

աղջիկ ջան, իմ պապայիս կնոջ, աղջկան վզից կտրիլ, սելի կռնից կապել ին: Ամեն օր իմ պապան կպատմեր. հետո իր աղբոր կնոջն ու էրեխին Արաքսի ու Եպրաքսի անուններով էլի վզները կտրել ին կապե սելից: Գյորանում իմանում են, որ թուրքը կամաց-կամաց հեռանում է, իսկ կանայք գերի են ընկնում էս Կամո գյուղը, մամաս էլ է մեջերը լինում: Պապաս կսեր, երբ իմացա որ թուրքերը քաշվում են, կամաց-կամաց եկա էս մեր Պուլուզիկի /մեր սարի անունը Պուլուզիկ է/ գլուխը. նայեմ, որ թուրքերը հեռանում են: Ինքը առաջինը գյուղ կգա, կտեսնի օր թալանել ին. անասունները որը կերած, որը տարած, հորեր են ունեցի, օր ցորենը, գարին մեջն են պահել, տեսել է ձիերը կերակրած, որոշ բաներ մնացած է էղի, ինքը սկսել է թաղերով ման գալ ու մնացած մթերքը կուտակել: Տարել է հոր տուն, որը կողքին է եղել, մյուս կողմում ախպոր տունն է եղել, կերթա սերմացու հավաքի աղբոր համար: Երբ գյուղ կգա, արդեն ընտանիք չունի, կբերե իրա մորքուրին, մարքուրի աղջկան /որը Շիրակ էր ամուսնացել, բայց փախել էր Ջաջուռ/, մորքուրի տղուն իրա տունը կպահի, քանի որ իրանց մարդկանց սպանել էին, կհավաքե իրա ընտանիքում կպահե, կկերցնե: 19 թվին մորքուրի աղջկան կամուսնացնե գյուղում հարսանիքով: Հետո կբերի հորքուրին, իրա քրոջը, քրոջ տղին: Հորքուրս կբերե առուն պապայիս գուլպեքը լվա, ըտեղ մամայիս կտեսնե, կհավանի: Կգա պապայիս կսե էլո ջան, էլո, էդ Զաղիկի քրոջը՝ Նուշիկին պիտի քեզի ուզիմ: Մամայիս առաջին մարդն էլ վայեննի է էղի, զոյվել է, ինքը էկել է հորանց տուն, աղբոր հետ կապրի: Ըդպես կկազմակերպին մամայիս կբերին, 22 թվին նոր առաջին էրեխեն կծնվի Բուրաստան անունով:

Մամաս կսեր երբ լսեցին որ թուրքերը գալիս են, սաղ հարսներ ու աղջիկներ Պռսե մեծ տուն կսին, էդ մեծ թնդրատունը սաղ գյուղացիներս հավաքվանք, լցվանք ըդտեղ. լաց, կոծ, էս էն, հետո

թուրքերը կգան, սաղին դուս կենին, մե հատ տղամարդ է մեջներնին էղի Մելիք անընով: Էդ Մելիքի մաման իրան կնգա շոր կհագցնե, կթրաշե, թե իբր կին է, բայց թուրքերը ճանչցել ին, էդ Մելիքին շատ են ծեծած, քիթ բերան արունլվիկ էրած, բայց լավ է, չի մեռած: Կնկտանց ըդտեղից ծեծելով, ջարդելով տարել ին Կամո, մեծ տուն ին լցրած, ըդտեղի ժողովրդի հետ: 6 ամիս պլեն ի մնացած, իմ մամաս կպատմեր, էդ տան մեջ: Իմ մորքուրս Եղսան անունով ու իրանց մորաքուրը էդ ժամանակ Ջաջուռ ի գալի, ինքը թուրքերեն գիտեր. իմ մորքուրի մարդը նաչալնիկ էր, բայց Կիրովական էր փախել: Իմ Եղսան քուրը,- մերս կսեր,- մեր էրեսին մուր կքսեր, էդ կեղտոտները կգային, լավ-լավ աղջիկներ, հարսներ կջոկեին, կտանեին, ամոթ է ըսել, կբռնաբարեին: Բայց իմ մորքուրս թույլ չէր տա, կպաշտպաներ երկու քրոջն էլ՝ Անուշին ու Նուշիկին: Իրանց ախպերը՝ Համայակը թուրքերի ձիերը կպահեր, մերս ու մորքուրս կսեին Համայ ջան, դու չսես, թե ըստեղ հարազատ ունիմ. ինքը մեզի մթերք, բան կգողանար, կբերեր: Մեր գյուղից Բաղդոյի կնիկ Սինամ, Արխվալցի է էղի, դավաճան կեղնի. սաղ լավ-լավ աղջկներին /թուրքերը Օկսեն քեզի հետներս կտանինք Թուրքիա. մեր գեղից երկու հոգի տարել ին/ գերիների մեջ մատնացույց կեներ էդ մեկ, մյուսը՝ իրան կհարցնեին ձեր գյուղը ոսկեղեն, հարստություն ունեցող ո՞վ կա, ինքը տեղերն ասել է: Սինամի մասին գիտե՞ս ով կպատմեր ընձի, Հայկուշ անունով իրա տալը, էղի իմ հետ կաթվոր էր, կսեր Աշո ջան, Սինամը կբերե փաշեքին կկանգնեցնե իմ գլխուն, կսե էսի գիտե ջոջոների ոսկիների տեղը: Կսեր -տատս կբերե կհավաքե սաղ հարսների ոսկիները գոմի վերևը ցլիկ կսինք, դրա տակը կպայե: Էդ երկու փաշեն ընձի ոտով, ձիերի հետևն ընգած Կամոյից բերին, հասցրին Ջաջուռ, տարա տեղը ցույց տվի, հանեցին տոպրակով: Էդ Հայկուշի լփի մեջ այ ըսենց նշան կար.

կսէ ձեռքս երկրցրի, ես գիղեմ ընձի բանմ կտան, ճիպոտով ընբես տվեցին, որ ձեռիս մեջը բացվավ, մրմուռը տվեց ջանս: Ինձ էլ քցեցին ձիերի առաջ, նորից տարան քցեցին էդ պլեն կնկտոց մեջ:

Հետո Սինամին չտարան, ինքը բոյով, ջանով կնիկ էր, բայց գիշատես էր, հիմի էկել է, Բաղդոն չի ուզէ առնէ, կսէ ինքը թուրքերին կնիկ է էղէ. Բաղդոն իմ ամուսնու ընգերն էր, գլխավոր հաշվապահ էր, կսէ ինքը ընձի պետք չէ, ես կվռնղեմ, նոր ջոջոն՝ տատիկը խնդրելով, աղաչելով կիամոզէ, թէ Բաղդասար ջան թուրքի զուլում էր, թուրքի զուլում, ներէ, իրան պաշտպանելու համար է էրէ, վերջը կպայէ: Հետո լավ էրեխեք ունեցավ, 5 աղջիկ, 3 տղա:

****

Բանասաց՝ ***Եվգինե Միշայի Գևորգյան,*** *ծնվ. 1965 թ.*
գ. Սարակապ, դպրոցի պատմության ուսուցչուհի:
Ձայնագրություն 151107-1942 և 1948:

Ես իմ ողջ կյանքում ապրել եմ այն մարդկանց հետ, որոնք տեսել են 1915 թ. ցեղասպանությունն ու մինչև 1920 թթ. կոտորածները: Մեր գյուղում ևս թուրքական յաթաղանը եղել է ու կատարել մեծ ոճրագործություններ: Ես շատ լավ հիշում եմ ու իմ գլխում անընդհատ հնչում են մեր տատիկի խոսքերը, որն ամեն անգամ լացելով պատմում էր այն չարագործությունները, որ թուրքերը կատարել են 1918-20 թվականներին:

Ես հարս եմ գնացել Կիրակոսյան ընտանիքում, որի տատիկը՝ Դալալ Կիրակոսյանը /օրիորդական ազգանունը Ավետիսյան/, ծնունդով Ջաջուռ գյուղից էր ու իր ասելով ազգականը Մինաս Ավետիսյանի: Ինքը պատմում էր, թե ինչպես 1918-20 թթ., ինքը լավ չէր հիշում թե դա որ թվականն էր, բայց ասում էր որ ինքը եղել է 6-

7 տարեկան երեխա, երբ աշնան մի օր, երբ չէր չորացել հավաքած ու ամբարված բերքի երեսը /բերքը երբ հավաքում էին, լցնում էին հորերը ու բերանը հողով ցեխ անում, ծածկում, որ թուրքերը չիմանան թե որտեղ է պահված բերքը/, ուրեմն այդ հողը դեռ չէր չորացել, երբ անակնկալ թուրքերը հարձակվեցին մեր գյուղի վրա: Ասում էր ահավոր ոճրագործություններ կատարեցին, տղամարդկանց ոչնչացրեցին, իսկ կանանց, երեխաներին ու ծերերին հավաքեցին ու լցրեցին գյուղի եկեղեցին: Ասում է էդ եկեղեցու մեջ էլ շնչելու, շարժվելու տեղ չկար, և երկու ասկյարի կանգնեցրել էին եկեղեցու դռանը, որ ոչ մեկը չկարողանային ոչ դուրս ոչ էլ ներս անել: Ասում է այդպես մենք մնացինք օրերով այդտեղ սոված, մենակ մեր բախտը բերել էր այնքանով, որ իր մեծ եղբայրը՝ Սամսոնը, որին թուրքերը չէին բռնել, քանի որ պահ էր մտել, գիշերները, երբ ասկյարները քնած էին լինում, կարողանում էր ինչ որ մնացել էր գյուղում՝ մի բուռ ալյուր կամ ցորեն, հավաքում ու բերում էր եկեղեցու պատուհաններից տալիս էր մեզ, որ մենք ուտում էինք, բայց եղբայրս էլ մահացավ եկեղեցու մեջ, քույրիկս էլ, ու լաց լինելով ասում էր չգիտեմ, թե ես ինչու կենդանի մնացի մորս հետ: Ասում է էնքան մենք մնացինք էդ եկեղեցու մեջ, որ մարդիկ չէին դիմանում, մահանում էին ու ամեն օր ասկյարները գալիս սայլերով դիակներ էին հավաքում ու տանում եկեղեցուց: Դրանից հետո ասում է արդեն մենք կարողանում էինք քայլել եկեղեցու մեջ, էնքան որ մարդ էր մահացել սովածությունից, հյուծվածությունից: Ասում էր մի երեխա, - դա իր հիշողության մեջ էր մնացել,- որի ծնողները մահացան, ինքն էլ կլիներ մի 3-4 տարեկան, մնացել էր եկեղեցու կնունքի համար սարքված գռի մեջ, արդեն ոչլոտել էր էր էդ երեխան, ոջիլները հավաքում ուտում էր: Այդպիսի սարսափելի տեսարանի վկա է եղել մեր տատիկը:

Հետո, ասում էր թուրքերը գտան հացահատիկի ամբարները և թուրքի զորքին պետք էր հաց, դրա համար եկան, եկեղեցու մեջից մայրիկիս ու հասակակից կանանց ստիպողաբար տարան, որ հաց թխեն զինվորների համար: Ասում է ես էլ կանգնում էի ընդեղ, մի անկյունում և մայրիկս հաց էր թխում, բայց թուրք ասկյարները կողքները հսկում էին, որ հանկարծ մի կտոր հաց մեզ չտային ուտելու: Մի անգամ, ասում է, մի թուրք եկավ, ով էր ասել, թե ինչպես գիտեր, մորս ասեց փուլ /ոսկի/ տուր, մայրս էլ, Եսթեր էր անունը, պատասխանեց, թե ոսկի չունեմ, որտեղից տամ քեզ: Էդ ժամանակ թուրքը ինձ բռնեց ու կախեց վառվող թոնրի մեջ, մայրիկս վախեցած բղավեց կտամ, կտամ, կասեմ ոսկիների տեղը: Ի միջի այլոց ասեմ, որ նրանք ունևոր են եղել, նրա հայր Աղանը գնացքի մեքենավար էր, Ղարս էր գնում, ասում է էնտեղից նաբաթ շաքար էր մեզ բերում, մենք լավ էինք ապրում: Ասում է մայրիկս տեսնելով, որ ինձ կախել են թոնրի մեջ, վախից, դռան վերևում ոսկիները պահած են եղել, շեմի վերևից հանում է ոսկիներն ու տալիս էդ թուրքին: Ասում է.- էդ ժամանակ որ ինձ կախեցին թոնրի մեջ, մազերս խանձվեց, մինչև հիմա աչքերիս առաջն է էդ տեսարանը, հետո էդ թուրքը իր սրով ոտքս ճղեց,- ու բացում ցույց էր տալիս վերքի տեղը, որ մնացել էր:

Հետո երբ հայկական բանակը առաջացել էր, թուրքի փաշան զորքի գլուխն անցած գնում էր իր հետ տանելով ինչ որ հավաքել էին ժողովրդից, ինչպես նաև շատ գերիների: Հանկարծ, ասում է, ինչ որ տեղից կրակեցին ու էդ փաշային սպանեցին: Երբ փաշային սպանեցին, զորքը սարսափահար փախավ, թողնելով էն ամենը, ինչ վերցրել էին տանելու, քանի որ մեր զորքը հաղթել էր թուրքերին: Տատիկը իր ծննդյան թիվը հստակ չգիտեր, բայց անձնագրի մեջ գրված էր 1912 թ., ինքը պատմում էր, որ երբ թուրքերը գնացին,

նոր մենք կարողացանք գնալ մեր տները ու տեսանք հայրիկիս սպանված հենց մեր դռանը, բերանքսիվայր ընկած էր ու քանի օր մնացել էր այդպես առանց թաղել: Ու ոչ միայն իմ հայրիկը, այլև մեր գյուղի շատ տղամարդիկ, որոնք չէին կարողացել հեռանալ, կամ թաքնված են եղել, թուրքերը մտնելով տները թալանելու ժամանակ տեսել են և սպանել: Հետո, ասում է, երբ թուրքերը հետ քաշվեցին, մենք տեսանք թե ինչքան մարդ էին տարել ու սպանել Ջաջուռի ձորը /նկատի ունի Ջարդի ձորը – Կ.Բ./: Ասում էր - մեռելներին էնքան էին լցրել, էնքան էին լցրել,- բալա ջան, - ուռել, կապտել, փտել էին, շները, բորենիները նրանց վրա էին, ասում ու լաց էր լինում, թե ինչ սարսափելի տեսարանների վկա է եղել ինքը: Քանի որ հայրիկը մահացել է, մայրիկն էլ չի կարողացել իրեն պահել, տարել է իրեն Գյումրվա՝ Ալեքսանդրապոլի ամերիկյան որբանոցը: Հետագայում մայրիկը կարողանում է նրան հետ վերցնել որբանոցից, որից հետո, մեծանալով ամուսնանում է մեր գյուղ՝ Սարակապ, Ավետիք Կիրակոսյանի հետ, որը ամուսնու պապիկն էր:

**ՋՐԱՌԱՏ**

Բանասաց՝ ***Մանուկյան Ռոբերտ,*** *ծնվ. 1950թ.*

գ. Ջրառատ: Ձայնագրություն 151221- 2231, 2235:

Իմ հորական կողմը Ղարսից է: Պապս պատմում էր, որ 18 թվին իրանց ընտանիքը փախել, եկել է էս գյուղ, հետո՝ 1919 թվին, երբ թուրքերը հետ են քաշվել, նորից վերադարձել են տուն, վարել, ցանել են, բայց 20 թվին, երբ հեղափոխություն էր եղել, թուրքերը նորից հարձակվան ու իրանք նորից փախել են: Պապս էդ ժամանակ 10 տարեկան է եղել: Էս անգամ եկել են Ջաջուռ հորքուրիս տունը ու տեսել են, որ թուրքերն արդեն ըտեղ են: Էդ ժամանակ

իրանք 17 հոգի են եղել, պապս ասում էր տղամարդկանց, երիտասարդներին կոտորել են, հավաքել են կնիկմարդկանց ու էրեխեքին, ներս են էրել գոմը: Ամեն իրիկունը ասկյարները գուքային, դուռը կբացեին, մեկ-մեկ մեծերին թևից բռնած կտանեին մարագի դուռը, կխշտիկեին, կսպանեին, կքցեին մարագի մեջը: Ասում էր ըդպեսով մեծերին վերացրին, մնացինք 17-ից 7 երեխա, մեզ էլ կաշխատցնեին. ձիերին կեր կուդայինք, խոտ կբերեինք: Փաշեն կնստեր հօղի վերևը ու ասկյարները իրա համար հարս ու աղջիկ կտանեին: Երբ կնիկմարդկանց հանեցին, մեզ էլ հետները տարան, էդ ժամանակ հորքուրս ըսավ.- էս երեխին ինչ կլնի թողեք գնա մեր համար ուտելու բան ճարի, բերի: Ասկյարի մեկը թողել է, պապս գնացել է ընկել է տները հացի փշրանք, աղի կտոր, ինչ որ գտել է, լցրել է ծոցը բերել է, բայց հետ գալուց ճամփեն կորցրել է, մտել է մի մարագի մեջ, սալոմների վրա պառկել ու գիշերը քնել է: Լուսն օր բացվել է, ելել է ու տեսել, որ իր պապին 3 հոգու հետ խշտիկով սպանել, քցել են մարագը: Ըսում էր պապիս տեսա, ինչխոր քարացած էղներ. Ագնոցներն մե կողմ ընգած, մի ձեռը թաշկինակը, աչքերն էլ արցունքոտ ընգած մեռած: Ըսում է մի կերպ էկա ասկյարի թևի տակից պլստացի, որ ընգնեի գոմը, ասկյարը բռնեց շորիցս, բլուզս պադռավ, օր պադռավ, ես կուզեի փախնեի, ասկյարը գոռաց – էդ էրեխին բռնեք: Կնիկներն սկսան լաց ըլնել, ըսեցին, որ երեխեն չիշիկ անելու է գնացել, մի վնասե երեխուն ու ինձ պահեցին իրանց փեշերի տակ ու ես ըդպես փրգվա: Մի օր էլ էկան, 7 էրեխից մնացել էինք իրեքս, մեզ տարան, մտցրեցին հորերը. Ըըմ է – ընձի տարան, մտցրին մի հատ խորունկ հոր ու ըսին – գյավուր, ինչ որ կա, տուր: Պապս ըըմ էր.- ցորեն, գարի, պանիր, եղ, հաց, ինչ ըսես կար էդ հորի մեջը, լրիվ տվեցի, էս ասկյարները հանեցին ու թոկը պտի իջցնեին, որ ես բռնվեի,

հանեն, բայց ասկյարը վերից ըսավ.- չոջուխ, դրախ, - յանի դրախ կայնի ու մի հատ քար վերնից քցեցին հորը: Քարն օր քցեց, ես փախա, քարն ընկավ ու կտտուն էկավ, ասկյարներն ըսին էլ բան չկա, հորի վրի սալը քաշեցին վրա, ինձ թողին մեջն ու գնացին: Հերս ըսըմ էր - մտածըմ էի ոչ թե սոված կմնամ, այլ որ չխեղդվիմ: Ըդպես քնել եմ, մեկ էլ աչքս բացում եմ, որ հորի մեջն եմ, տեսա, օր արևի ճառագայթը հորի մեջն է ընգե, ըիը, ըսեցի, չեմ խեղդի: Անցավ ժամմ երգուս, թուրքերն էկան, քարը հորի վրայից բացին, թոկը իջըցրեցին, ըսին – չոջուխ, գյալ բուրա [ծնթ.93],- քաշին, հանին, ղրգեցին ձիերին խոտ բերելու: Ըսըմ էր մեկ մեկ էլ կնգտիք լուսադեմին ճվըմ էին Անդրանիկ փաշա, Անդրանիկ փաշա, թուրքերը վախենըմ էին:

Թուրքերն ուզըմ էին Ջաջուռը վառե, բայց չեն վառե, ըսըմ էր –Լենինն ըսել է Արփաչայն անցեք, կայնեք: Ըդպես մե օրըմ աչքերս բացեցինք, օր թուրքը չկա, դուռը քաշեցինք, բացեցինք, ոչ մի ասկյար չկա: Ըդորից հեդո պապոնքս էկել են Չրախլի:

Հմի պատմեմ, թե 20 թվին մեր գեղը ոնց են վառե: Ասկյարներն օր լցվել են գյուղ, սաղ ժողովրդին հավաքել են, լցրել են Օսկանենց այվանը՝ մեծ տուն է էղե, ժողովրդին ըսել են, մեզի օսկի տվեք, մեկ էլ Նիգալայի փող, ձեզի ոչ կսբանենք, ոչ էլ կվառենք: Ով կարացել է, օսկիները շորերի տակ պահել է, ով չէ, հանել տվել է, սրանք վերցրել են ու ժողովրդին դուս են էրե, բերել են էդ այվանը [ծնթ.94], ըսել են ձեզի կլցնենք էդ տունը ու մենք կթողինք կերթանք: Էդ տունը Համբարենց տունն է էղե, եկեղեցուն կից: Լաց ու կոծն ընգել է ժողովրդի մեջը, թուրքերը սրանց վրա դուռը փագել են ու տունը վառել են, տեսել են, օր լավ չի վառվըմ, ելել են ծածկը քանդել են, բլել են ժողովրդի վրա: Ուրեմն ամիսուկես, երկու ամիս էդ ժողովրդի տքոցը գալըմ էր: Ով էլ օր փախել էր, մտել էր վերնի

քարանձավները, իսկ տերդերը մտել էր էս ներքնի քարանձավը: Նախքան ժողովրդին վառելը, երբ օր օքիսկ են էրել, տեր Մինասը փախել, էկել է էս քարանձավ: Թուրքերը 3 -3 ասկյար կանգնեցրել են գյուղի իրեք կողմերը, որ մարդ չփախնի: Տեր Մինասը մի օր մնացել է, երկրորդ օրը դուրս է էկել, էս սրբի քարանձավի աստի-ճաններով, որ սարքել եմ, բարձրացել է, որ տեսնի թուրքը քաշվել է, թե չէ, հենց սուրբ Հագոբի դեմը թուրքերը բռնել են: Հմի ըսեմ, թե էս պաղմությունը ընձի ով պատմեց: Ուրեմն երբ էս քարանձավը բացում էի՝ 95-96 թվին, երևի 97 թիվն էր, հոգնած պառկել էի մսուր-քում, քնիս մեջը ձեներ եկան, ելա տեսնեմ կին, էրեխեք էկել են սուրբը մոմ վառելու: Էրեխեքից մեկը ձեն տվեց, թե տատիկ, տա-տիկ ըստեղ մարդ կա քնած, ես բարձրացա ու տեսա մեր գյուղի Պայծառ տատն էր: Ինձ որ տեսավ, ասավ Ռոբերտ ջան, էս ինչ մեծ գործ էս էրե, ըստեղ սուրբ կա, մեր պապերն էլ են տեսե, սուրբը ձիավոր է էղե, իջել է ըստեղ գիշերով ու գնացե: Ըսավ հմի քեզ մի բան պդի պատմեմ ու պատմեց էս պատմությունը: 20 թվին, երբ թուրքերը մեր գյուղը պդի վառեին, մեր տերդերը ըստեղա պահ մդել, օր իրան չվնասեն: Երբ երկրորդ օրը դուս է էկել, ասկյարները բռնել են, մեկը հրացանը քաշել է, որ կրակե-սբանե, մեկելը ձեռը բռնըմ է, ըըմ է մի սբանե, ընչի էս ուզում սբանե, էդ պաղրոնը մե-զի շադ պետք կուգա, կողքից հանում է խանչալն, որ դրանով սբա-նե, էն երրորդ ասկյարն է բռնում սրա ձեռը, թե մի սբանե: Էն եր-կուսն ըըմ են ինչի, էս էլ թե չէ որ էս էլ իրանց մոլլեն է, մի սբանեք, թող մնա: Ըըմ են, հբը ինչ պատիժ տանք սրան, որոշում են շորե-րը հանեն (արդեն դեկտեմբեր ամիսն էր) չբլղցնեն թողեն էրթա, իրա աստվածն իրա հետ. մեռավ՝ մեռավ, աբրավ՝ աբրավ: Շորերն օր հանըմ են, տեր Մինասն ըըմ է – գոնե վարդիկս թողեք, ամոթ է: Ըդպես մենակ վարդիկով տեր Մինասն ելնըմ է դեբի Խանվալի՝

[ծնթ.95] գյումրեցոնց յայլեն, ընդեղ հլը մարդիկ կային աբրող: Էրթըմ է ըղեղ, ձեռն ու ողը դնըմ են սառը ջուրը, հետ են բերըմ: Երբ թուրքերը քաշվըմ են, տեր Մինասը հետ ա գալըմ ու էս պատմությունը պատմում ա իրան թոռին՝ Պայծառին, Պայծառն էլ պատմեց ընձի:

1963 թե 64 թվին, երբ էդ տեղը քանդեցին, կոշով հողը հանելուց մարդկանց ոսկորները ելան. ես ուշադիր նայում էի, մի 13 տարեկան աղջկա գանգ ելավ, մազերը երկու հուս արած, ուրիշ գանգեր ելան: Մեր մեծերը որոշեցին, որ էդ ոսկորները նորից թաղեն ու տեղում հուշարձան կանգնեցնեն:

*** * ***

*Ձայնագրություն 151221-2259 շարունակություն:*

18 թվին թուրքերն օր էկել են մորական Այվազ պապս էղել է դաշտը, ինքը թուրքերեն է գիդեցել, որոշել է թուրքերին պատիվ տա, որ գյուղին վնաս չտան: Հարևան Սարոյին ըսըմ է մե գառմ տուր, մորթեմ ըսոնց պատիվ տամ: Սա էլ ըսըմ է ընչի էս ըդոնց պատիվ տալըմ, գլոխդ պրձցնելու համար, ու չի տալիս գառը: Սա որ չի տալիս, գնըմ է տեր Մինասի պապին՝ Ավեդիսին է ասըմ գառմ տուր: Սա ասըմ է տիա, Այվազ ջան գնա որը գուզես վերու: Պապս մորթել է գառը, կերցրել թուրքերի ռազվետկին ու ասել է, որ գյուղին վնաս չտան: Թուրքերն էլ, թե չէ Էյվազ ջան, ձեռ չենք տա ու գնացել են: Իսկ 20 թվին դիմադրել են զենքով, ցածի քյափանակցիք էլ են դիմադրել, էդ լիջը օր կա /Կառնուտի ջրամբարը/ էն ժամանակ չկար, ըտեղ են դիմադրել, բայց թուրքերը գնդացիրներով կրա-

կել են, ժողովուրդը փախել է: Դրանից հեդո թուրքերը մդել են ու գյուղերը վառել են, շատ անխիղջ են էղել:

Իմ պապիս մորն էլ թուրքի փաշեն է տարել Ղարսում: Իմ պապերս երկու ախպեր են էղե, Մուգուչ պապս ու Սաքո պապը: Մանուշակ տատին օր տարել են, Սաքո պապն ըսել է – Մուգուչ, դու էրեխեքին ու կնկտոցը առ փախի Գյումրի, ես մնամ մորս ազատեմ, բերեմ: Էդիկ 18 թվին է էղնըմ: 19 թվին երբ օր հետ են էրթըմ, պապս ուզըմ է ախպորը գդնի,թուրք հարևաններին հարցնըմ է խաբար եք, Սաքոն, ախպերս մնացել էր օր մորս գդներ, ախպերս ինչ էղավ: Սրանք էլ, թե ախբորդ մեր թուրքերը սբանեցին: Ինչխ են սբանե. Ուրեմն Սաքո պապը թուրք ընգերներ է ունեցե, ըսոնց ըսել է–տըղերք, ես ձեզ օսկի կուդամ, կրնաք իմանաք, թե փաշեն մորս որ կողմ է տարե: Սրանք էլ, թե Սաքո ջան, մենք կիմանանք, քեզի կսենք: Ընգերներն ըսել են դու կելնիս երթիկը, մենք քեզի ըշմար կուդանք, թե գդել ենք, արի, օսկին կբերես, մենք քեզի տեղը կսենք: Ըշտե օր Սաքո պապը ելել է երթիկը, թուրքերը, օր իրա ընգերներն են էղե, կանչել են, տարել են օսկիներն առել են ու իրան էլ սբանել են:

*** * ***

*Բանասաց՝* ***Անդրանիկ Յայլոյան****, ծնվ. 1957 թ.,*

գ. Ջրառատ: Ձայնագրություն 151208-2207:

Ես իմ պապերից եմ լսել թուրքական արշավանքների մասին: Թուրք ասկյարները երբ 1920 թ. մեր գյուղ են մտել, դիմադրություն է կազմակերպվել, բայց չեն կարողացել նրանց դեմներն առնել: Գևորգ և Սարո անունով մարդիկ են եղել, որոնք զենք են ունեցել, դրանք գյուղի բլրի վրայից կրակել են ներքևից եկող թուրքերի վրա, բայց քանի որ թուրքերը մեծաթիվ են եղել, չեն կարողացել կանգ-

նեցնել: Թուրքերն էլ հավաքել են մեր գյուղի, Մեծ Քյափանակի [ծնթ.96] ու Փոքր Քյափանակի [ծնթ.97] գյուղացիներին, լցրել են Համբարենց մեծ տունը, որը իմ մայրական պապիս տունն է եղել, դռնից ինչքան որ տեղ կար լցրել են, հետո էլ երդիկից են լցրել մարդկանց որ շատ մարդ առնին ու վառել են: Հովհաննիսյան Հարութ անունով մարդ կար, որին ես տեսել եմ, 70-ական թվականներին է մեռել, էդիկ փախել է տան հետևը մաղարա [ծնթ.98] կա, պահվել է ըդեղ: Նայել է, երբ թուրքերը մոտերքում չեն եղել, գնացել է տուն, իրեն ուտելու բաներ է վերցրել որ սովամահ չլնի ու նորից հետ դարձել մաղարեն: Պատմում են, որ էդ հողը 7 օր ելնում ու իջնում էր, շնչում էր, մեջի մարդիկ որը շուտ է մեռել, որը երկու ժամ, երկու օր հետո, խեղճերը տանջվել են, դրանից էլ հողը վեր ու վար է եղել: Հետագայում երբ 60-ական թվերին հուշարձանը եկան կառուցելու ըտեղ, մարդկանց ոսկորների հետ կճուճներ են դուրս եկել, որտեղ մայրերն իրանց երեխեքին պահել էին որ չվառվեն, դրանց միջից հանում էին էրեխեքի ոսկորներն ու մազերը, մի դաժան պատմություն:

Իմ հայրական մամիս 9 երեխայով լցրել են ըդտեղ, վառել են, փրկվել են 4-ը, որոնք փախել են վերի գյուղը՝ Խանվալի, որտեղ թուրքը չի անցել:

Հարց- Իսկ ձեր գյուղում թուրքերը մնացե՞լ են:

Պատասխան- 18 թվին որ եկել են, մնացել են, բայց ոչ մի մարդու վնաս չեն տվել: 20 թվին ուրիշ փաշա է եղել, զորքով է եկել ու երևի ուրիշ հրաման է ունեցել:

- Իսկ հուշարձանը ու՞մ միջոցներով է կառուցվել:

- Գյուղացիները ով ինչքան կարողացել է հավաքել է, հետո գյուղացի բարերարներն էլ ավելացրել են ու կառուցել: Պետական աջակցություն չի եղել:

*******

Բանասաց՝ ***Ռսկանյան Սաշա***, *ծնվ. 1949 թ.,*
գ. Ջրառատ: Ձայնագրություն 151208-2229:

Էն ինչ որ լսել եմ, պատմել է իմ պապը, ծնված 1906 թվին, որը 1920-ին 14 տարեկան է եղել: Իմ պապի պապը թուրքերեն է գիտեցել, դրա համար գյուղացիները իրան ասել են արի աղ ու հաց տար թուրքերին, որ մեր գյուղին վնաս չտան: Ես շատ բան չեմ հիշում, որովհետև պապս շուտ է մահացել ու ես երիտասարդ եմ եղել այդ պատմությունները լսելու ժամանակ, հիմա շատ բաներ մոռացել եմ, բայց էն վատ բաները, որ լսում ես, մարդու մոտը նստվածք է տալիս: Էն պատմությունները, որ թուրքերը գյուղում բոլորին հավաքել են, հիվանդ, կին ու երեխա, հղի ու ծեր բոլորին հավաքել են Համբարենց տունը ու կրակը տվել, վառել են: Պապս որ պատմում էր, թե մեկ-երկու շաբաթ էդ վառված տան տեղում հողը շարժվում էր, ես 20-21 տարեկան տղա էի, հուզվում էի, լացս գալիս էր ու հիմա էլ եմ հուզվում: Ասում էի. – պապ, բա հնարավոր չէր թուրքերի դեմ պայքարել, մի 5 հոգի թեկուզ, եթե կռվեին ու թեկուզ մեռնեին, բայց շատերին կարելի էր փրկել:

*******

Բանասաց՝ ***Գևորգ Հովհաննիսյան***, *ծնվ. 1963թ.*
գ. Ջրառատում: Ձայնագրություն 151221-2328:

Թուրքերի ավիրածությունների մասին ես լսել եմ իմ պապիցս՝ Հովհաննիսյան Հարությունից, որը իր աչքով էր տեսել էդ բոլորը: Ինքը ըսում էր մեր գյուղից 40 տղա ու Մուսայելյան /Քյափանակ/ գյուղից 40 տղա իջել են Կառնուտի լճից դենը մի դուրան տեղ՝

կռվելու: Տեսել են, օր թուրքը քաղաքն անցավ ու զորքով գալիս է, ըսում են մենք էս 80 տղով ինչ պդի էնենք, որոշում են 10-10 հոգի գյուղացոնց գյուղից հանեն: Պապս 10 հոգով կուգան, 10-ն էլ Մուսայելյանից, օր տեղափոխեն ժողովրդին: Մարդկանց մի մասը փախել են Սպիտակի գյուղերը, կեսն էլ վերի գյուղերը: Տեղափոխելու ժամանակ թուրքը արդեն հասել է գյուղը, մեր գյուղի հետևը ձորի առու կա, որն էդ առվից անցել է էն կողմ, փրգվել է: Մի հատ Փյուր տատ կար, ինքը միշտ կգար իմ պապիս կտեսներ, օր ընձի դու ես փրգե Հարութ պապ: Պապս իրան գրկե, կանցնե ու ինքը նորից ետ կուգա: Էդ 10 տղով ետ կուգան, թուրքերը ձիով, իրանք էլ ինչ, մեկական հրացանով /պապս կսեր ես անգլիական հրացան էի գդել/ հեղ են էկել: Թուրքերը տեսել են, օր մարդիկ փախնեն գը, կկրակեն ու պապիս ոտին կկպնի, ես հիշում եմ, մինչև իր մահանալը պապիս մի ոտի կոշիկը միշտ զակազ էին տալըմ, որովհետև ոտի երեսը ուռած էր: Պապս ըսըմ էր, օր իրեք տղով փախել են, ամենքը տարբեր ուղղությամբ, որ թուրքերը հետևներից չգան, պապս անցել է քարափի եղևը, ու կրակել է: Որ խփել է ըսոնց էրկուսին, էն երրորդը վախեցե, եդ է գնացե: Էրկու թուրքին խփելուց հեդո պապս գնացել է, մենք եղևը քարանձավ ունինք, էդ քարանձավում է մնացե ու իր աչքով տեսել է, թե թուրքերը ինչ են արե գյուղում: Էսօրվա հուշարձանի տեղը գյուղի ամենամեծ տներն են էղե, ժողովրդին՝ կնիկ, էրեխա, մեծ ու փոքր, սաղին լցրել են ըտեղ, սյուները բլել են, ծածկը իջցրել են ժողովրդի վրեքը, էդ ձևի, ըսըմ էր 3 օր իջնըմ, ելնըմ էր հողը վրեքը:

Պապս քարանձավը մնացել է էնքան, մինչև թուրքը քաշվել, գնացել է, նոր հեդ է էկե:

Գյուղի մեջ պապս մեծ տուն է ունեցե, մեծ շվաքով, դպրոցականներին պատմության դասատուները բերում էին ըտեղ, էրեխե-

քը նստըմ էին, պապս էս պատմությունները պատմըմ էր:Էդ դասատուներից ես հիշում եմ Սաֆարյան Լևոնին, որը հիմա մահացել է:

## ՍԱՐԱԿԱՊ

*Բանասաց՝* ***Վահրամ Մկոյան****, ծնվ. 1919 թ.*

գ. Սարակապ: Ձայնագրություն 151028-2150:

Իմ տատիկը՝ Մկոյան Արաքսյան, ծնվել է 1903թ. Սարակապ գյուղում, որը նախկինում կոչվել է Բոզդողան: Իմ տատիկի պատմելով թուրքն օր գալըմ էր, ամեն օր հերթապահներ կային սարում, որ հատուկ նստըմ էին վերևները, օր նայեն, երբ թուրքի սալդատը անցնում էր Արաքս գետը, գիշեր թե ցերեկ, գալում գյուղի վերևից ժողովրդին տեղյակ էին պահըմ, ասըմ էին–փախեք, թուրքը գետն անցավ:

Հարց- Խոսքը Ախուրյան գետի մասի՞ն է, ինչու եք ասում Արաքս: Պատասխան- դե Ախուրյանը հետո միանըմ է Արաքսին, մեր սահմանն էլ Արաքսով է, դրա համար Արաքս ենք ասըմ:

Ժողովրդի ըսելով, երբ թուրքը գետն անցավ, իրանք փախնում էին վերի գեղերը՝ Մաստարա, Չիթանքով: Տատս պատմըմ էր, որ մի անգամ երբ փախել են Չիթանքով, թուրքը լցվել է Չիթանքով, որը մեծ գեղ է եղել, ուրիշ գեղերից էլ շատ մարդ է եղել ըտեղ, ըսըմ է թուրքը էկավ, մտավ Չիթանքով: Բոլոր տներում լիքը մարդ կար, թուրքի զինվորները մեկ-մեկ մտան տներն ու բոլոր տղամարդկանց հանեցին, բերին սարի փեշին դուրան տեղ կար, կալ էին ասըմ, բերին էդ կալը հավաքեցին, հայերի մեջ նվագողներ կային, կսե դրանց էլ բերին, ով կրնար նվագե, ըսեցին դուք նվագեք դավուլ-զուռնով, մյուսներին ստիպեցին, դե դուք էլ պարեք: Ըսում էր ամբողջ ժողովուրդը՝ փախած ժողովուրդը, իրանց ժողովուրդը,

թուրքերը, բոլոր կայնած նայըմ էին էդ պարող տղամարդկանց: Ստիպըմ էին որ պարեն, ու շատ երկար պարեցին, հետո տարան լցրին Չիթանքովի մարագներն ու սկսեցին ջարդել տղամարդկանց: Ըսըմ էր կին մարդկանց ու էրեխեքին էդքան էլ շատ վնաս չէին տալըմ, բայց տղամարդկանց ջարդին: Իմ տատիս պատմելով, ես չեմ կրնա ըսե, թե իրան ինչ բարեկամ, կսե ջարդից հետո շտիկ-նոժերով թուրքերը սկսըմ են ծակոտելը դիակները, օր սաղ մարդ չմնար: Տատիս էդ բարեկամը սաղ էր մնացե, դիակների տկից դուս էր էկե ու հետո պատմել էր, բայց վիրավոր էր էղե, երկար չապրավ, մահացավ:

Տատս ըսըմ էր էլի մի անգամ փախեփախին Չիթանքով են փախե, էս անգամ սաղ հավաքվածներին՝ մենակ տղամարդկանց չէ, լցրել են մարագներն ու վառել են: Իմ տատը պատմըմ էր, ըսըմ էր ես 18 թվին էլ եմ տեսել էդ ջարդը, 20 թիվ չէր ասըմ, ավելի ճիշտ ասըմ էր մեկ էլ 14 թվին եմ տեսել ջարդերը: Հետո ասըմ էր, որ ջարդերից բացի հավաքըմ էին սիրուն հարսներին ու աղջկներին տանըմ էին: Թուրքի սալդըթներից հետո գալըմ էր իրանց լեզվով ըսած թուրքի խուժանը, էդիկ զինված ուժերի հեդ կապ չունեցող մարդիկ են, որոնք գալըմ են թալանի ու ինչ կար-չկար թալնըմ, տանըմ էին ժողովրդից: Հացից հետ տանըմ էին, քանդըմ, վառըմ էին տները:

Հարց - Իսկ ձեր գյուղում ի՞նչ դեպքեր են եղել այդ ժամանակ:

Պատասխան- դե ես ասեցի, որ գյուղի ժողովուրդը հենց իմանըմ էր, օր թուրքը գալըմ է, փախնըմ էր, բայց երբ հետ էին գալըմ, տեսնըմ էին, օր սաղ տները թալնած, ավիրած: Դե փախեփախին խեղճ ժողովուրդը ինչ կրնար իրա հետ տանե, ավտո չկար, սելերը լցվըմ, լիքը տունը թողած փախնըմ էին, խուժանն էլ լցվըմ էր ու թալանըմ:

Էսքանն եմ հիշըմ տատիս պատմածներից:

* * *

Ձայնագրություն 151028-2200 շարունակություն:

Հարց – Իսկ դիմադրություն կամ ինքնապաշտպանություն չի՞ եղել, դրա մասին պատմություն չկա՞:

Պատասխան – Չէ, դիմադրություն չի էղե, զենք ունեցողներ էղել են, տատիս ազգական է էղե, անունը Եսայի, ըսըմ է ինքը միշտ զենքով էր, էլի զենք ունեցողներ են էղե, որ զենքով են ման էկե, որ պետք էկած վախտ օգտագործեն, բայց որ ջոկատով կռվեն չի էղե, ես չեմ լսե:

– Իսկ թուրքը որ եկել է, ում տունն է մնացել

– Իմ տատս պատմում էր, ինքը հարուստ ընտանիքից է էղել, գեղը իրեք հարուստ է էղե, մեկը իմ տատիս ընտանիքն է էղե, իրանք երկու հարկանի տուն են ունեցե, հար հմի կա, բայց վերի հարկը քանդած է: Ըըմ էր թուրքն օր գալըմ էր ըստեղ, թուրքի փաշեն նըստըմ էր մեր տունը: Էդ ժամանակ, երբ ժողովուրդը հետ էր գալըմ, թուրքի փաշեն ժողովրդին էդքան մեծ վնաս չէր տալըմ, հազառակ, իրա զինվորին, սալդատին ըըմ էր ժողովրդին ձեռ մի տվեք, թողեք գնան դաշտերը, ինչ ուզում են քաղեն, ուտեն: Բայց երբ թուրքի զորքը էրթըմ էր, թուրքի խուժանն էր գալըմ, արդեն համ ժողովրդին էր ջարդըմ, համ էլ իստակ թալնըմ էր:

## ՍԱՐԱՏԱԿ

*Բանասաց* ՝ ***Գալստյան Արթուր Վարդանի****, ծնվ. 1950 թ.*

գ. Սարատակ: Ձայնագրություն 151026-044:

1918-20 թթ. մեր գյուղի բնակչությունը փախել է վերի գյուղերը: Ես հիշում եմ, պապս, մամս պատմում էին, թե մենք գնացինք

Արախվալի, էնդեղ թուրքերը չեն հասել: Մեր գյուղում կոտորածներ թուրքերի կողմից չի եղել, որովհետև էդ ընթացքում գյուղից բոլորը փախել են Արախվալի, Մանթաշ, մնացել են այնքան, մինչև նրանք դուրս են եկել, նոր վերադարձել են:

## ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

*Բանասաց՝* ***Մխիթարյան Վարուժան Արտուշի****, ծնվ. 1939 թ.*
գ. Սպանդարյան: Պատմում է իր մոր՝ Վիկտորյայի ու տատի պատմածները: Ձայնագրություն 151025 – 2205:

Հիմա որ մենք ապրում ենք, էդ տան կողքին եղել է պապիս տունը, բակ է եղել, որտեղ հավաքել են մորս հորը (Հովհաննես), հորոխպորը (Մկրտիչ), հորս հորոխպորը (Մինո), նաև գյուղից մի քանի հոգու, թիվը հստակ չգիտեմ 6-8-11 հոգի են եղել, դաժանաբար սպանել են: Մամս պատմում էր, որ երբ թուրքերը տանում են ամուսնուն, ինքը 4 երեխա ուներ, ասում է մատի կալցոն հանեց, շպրտեց դեպի ինձի, բայց էդպես էլ չկրցանք գտնեինք, կորավ: Ըստ մամիս պատմելու, բերել են էդ բակը, շրջան են կազմել, խանչալներով էնքան են խփել, որ սպանել են: (Գյուղի դպրոցի պատմ. ուսուցիչ Ա. Սարգսյանի տվյալներով ձավարծեծիչներով են խփել, սպանել) Թուրքերը այդպես սպանված թողել, գնացել են, գյուղացիներն են տարել բոլորին թաղել, բայց տեղը կորել էր: Հետագայում Ակուլենց Արտաշ կար, գերեզման փորելու ժամանակ 5-6 հատ գանգ էր գտել, համագյուղացիներին տեղյակ է պահել, փորձել են գտնել, թե դրանք ովքեր են: Ես գնացի մորս ասացի, որ գանգեր են գտել, որոշեցի, որ դրանք մեր պապերի ոսկորներն են: Մերս ասում էր բալա ջան, մի հատ կճաքար կար, որ փոքր էինք, գնում նստում, դրա վրա լացում էինք, հետո տեղը կորցրինք: Ասեց որ էդպես է, ձեռք մի տա,

հողը բերեք վրա, թող մնա, տեսնենք ինչ ենք անելու: Հետո Սովետը քանդվավ, ամեն ինչ փոխվեց ու էլի մնաց այդպես: Սա 20 թ-ի դեպքերն են, որովհետև մերս 19 թ. ծնված էր:

Երբ թուրքերը եկել են, մամս ըսել է փախեք, տեքրոջը, ամուսնուն, մյուսներին: Պապս ու եղբայրը բանակում ծառայած են եղել, շինելները հագերը, դրա համար են վախեցել, որ թուրքերը իմանան, կսպանեն: Տղամարդկանց մի մասը իջել են ձորը, փախել դեպի Արևշատ, որը սահմանային գյուղ է եղել և ով հասցրել է անցնել սահմանը, փրկվել է, որովհետև թուրքերը այդտեղ կանգ են առել: Հորս ու հորոխպորս տան մեջ ղալաղ [ծնթ.99] են ասում, մտցրել են ըտեղ, շարել են, բայց գյուղից ինչ որ կին թուրքերին ասել է, որ մեր տան ղալաղի մեջ մարդիկ կան, եկել են երկուսին այդտեղից տարել են, մնացածներին էլ այլ տեղերից են բռնել, բերել մեր բակ ու սպանել: Ես սա լսել եմ տատիցս:

Թուրքերն ըստեղ են մնացել, մի մարդ՝ Խաչատուրի Վահան են ասում, չիդեմ անունը, սրան սպանել են, դեզի տակ են պահել: Գարնան գլուխ գյուղացիք տեսնում են, որ շները գնում են դեպի դեզը, հետևից գնալով, գտնում են էդ մարդուն, որի ոտքերը շները արդեն կրծած են եղել: Թուրքերը դրանց տունն են մնացած եղել, Խաչատուրի օդա էին ասում: Գյուղում երկու փաշա են նստել, մեկը զինվորներով մնացել է էդ Խաչատուրի տունը, մյուսը Հակոբի տունը, սրանք քվեարկության են դրել գյուղը վառեն, թե չէ: Իմ տատիկս Քյափանակից է (Բասենից), ընդեղ էլ իրա երկու ախպորը՝ մեկի անունը Հովանես, մեկինը Բաղո թուրքերը տարել են, իբր՝ աշխատանքի, բայց էդպես էլ հետ չեն եկել:

Մեր գյուղի ժողովրդին լցրել են եկեղեցին, որ պիտի վառեն. մի փաշեն դեմ է եղել, մյուսը՝ կողմ, վերջը դրել են քվեարկության, մի ձայնով առավելությունն անցել է նրա կողմը, որը դեմ էր վառելուն,

դրա համար էլ չեն վառել: Ես պատմում են այն, ինչ լսել եմ մի քանի հոգուց:

Մամս գեղեցիկ կին էր, որբների, ասում էր մի հատ թուրք կար՝ ասկյար, որ չլիներ էս հարս ու աղջիկներին բոլորին կտանեին: Մեր հարսներն ու աղջիկները երեսներին կեղտ էին քսում, որ գեղեցկությունը չերևա, երբ թուրքերը գալիս էին նրանցից որևէ մեկի հետևից, էդ թուրքը գալիս էր ու չէր թողնում: Մամիս կիսուրը Ղարսից էր, թուրքերեն գիտեր, հարցնում է, թե էդ ինչից է, որ բոլորը մեր տղամարդկանց սպանում են, դու մեր աղջիկներին պաշտպանում են: Սա պատասխանում է, թե երբ տանից դուրս էի գալիս, մայրս ինձ երդումի քաշեց. բացեց կուրծքը, ասեց գլուխդ դիր ու երդվիր, որ դու հանկարծ հայ կնոջ մատով չես դիպչի ու չես սպանի: Ես իմ խոստումը կատարում եմ:

Հայրս պատմում էր, որ թուրքերը Ալեքսանդրապոլի կողմից են եկել, նրանցից առաջ դաշնակ ձիավորներն են եկել, բայց գյուղում չեն մնացել Ղուլդուղի ձորում հետևից եկող թուրքերի վրա մի քանի կրակոցներ արձակելով անցել են ձորը, գնացել դեպի Ապարան: Սա 18 թ.-ին է եղել,երևի շտապել են հասնեն Ապարանի կռվին:

Շատ բան հիմա չենք հիշում, ժամանակին գլխի չենք ընկել, որ մեր մեծերին հարցնենք, մինչև 64 թվականը վախենում էինք նման թեմաներից խոսել, Ստալինի սարսափը դեռ կար:

* * *

*Բանասաց՝* ***Արմեն Սարգսյան,***

Պատմության ուսուցիչ: Ձայնագրություն 151025-2225:

Գյուղում, ավերված վիճակում պահպանվել է այն մարագը, որտեղ մարդկանց են սպանել: Այն գտնվում է Բոզոյան Օնիկի տա-

րածքում: Այստեղ 1920 թ. հավաքել են գյուղացիներին, լցրել մարագն ու սպանել: Գյուղում սպանվածներից մեկ-երկուսի անունն են հիշում՝ Էլոն, Վարդանյան Սերյոժայի պապի հերը՝ Հովակը, որ Դավոյենց Մամիկոնի փեսան է եղել, բայց պահպանվել են 10-12 տապանաքար:

Գյուղի փաշաների մասին լսել եմ, որ էդ երկու փաշաները՝ Օմն ու Յուսուֆը աղբյուրի մոտ նստած են եղել, թուղթ են խաղացել: Թուրքի ահ ու սարսափից գյուղում վախեցել են տնից դուրս գան, բայց Խաչոենց Մարիամը հղի է եղել էդ ժամանակ, ասել է ես դուրս կգամ, կտեսնեն, որ պատճառավոր կին եմ, ոչ մի բան չեն աsի, խո չենք կռնա ծարավ մնա, մեկը պիտի գնա ջուր բերի: Աղբյուրի մոտ փաշաները նրան տեսնում են, մեկը ասում է էս կինը տղա կբերե, մյուսը թե չէ, աղջիկ կբերե, էդ վիճաբանությունը այնքան է թեժանում, որ որոշում են հենց հիմա տեսնել տղա է, թե աղջիկ, սվինը զցում են փորը ճղում են, երեխուն առնում են սվինի վրա, էդ կնոջն էլ զցում են հորը, խեղճ կինը ճվա-ճվա, էդպես մնացել ու մեռել է:

Մխիթարյան Վարուժան. – ես ճիշտն ասած էդպես չեմ լսել, լսել եմ, որ էդ կինը զաղթական է եղել, թուրքերը սպորվել են, տվել փորը բացել են, հետո զցել են փոսը ու չեն թողել, որ ոչ ոք մոտենա: Մի քանի օր էդ խեղճ կինը տանջվել ու մահացել է:

* * *

**Արմեն Սարգսյան**: Ձայնագրություն 151025- 2325:

Մենք գյուղում ունենք խոլերայի գերեզման, էդ խոլերայից՝ ժանտախտից շատ մարդիկ են մահացել ու կենդանիներ: Այդ տեղում մի քանի տասնյակ տապանաքար դեռևս պահպանվում է: Իսկ

ինչ վերաբերում է անասուններին, որոնք վարակվել են խոլերայով, դրանց տարել սպանել ու այրել են, ոմանք էլ կամավոր են իրենց հիվանդ անասուններին հանձնել սպանդանոց ու անգամ պարգևավճար են տվել այդ կամավոր հանձնողներին: Գյուղում պահպանվել են այդ պարգևավճարի չեկերը:

## ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ

*Բանասաց՝ **Ջորի Սամվելի Էլբակյան**, ծնվ. 1980 թ.*

գ. Վահրամաբերդ: Ձայնագրություն 151025 – 0320:

Պատմելու եմ իմ հոր պապի՝ Սարո Էլբակի Հակոբյանի մասին, իր կարճ կյանքի դառը պատմությունը: Սարո Հակոբյանը եղել է Ներքին Ղանլիջա – այժմ Վահրամաբերդ գյուղի քյոխվան: 19 թ. թուրքերը եկել են Մարմաշենի վերևի բլրի լանջին վրան են խփել ու մարդ են ուղարկել, որ քյոխվին ասի երկու կույս աղջիկ ուղարկի իրենց մոտ՝ զբաղվելու համար, որ չմտնիմ իրա գյուղը էսօր: Մեր Սարո պապը այլ ելք չունենալով երկու որձ այծ /թաքյա են ասում թուրքերենով/, առել ինքը անձամբ տարել է թուրքերի մոտ: Ըստ իս տարել է որպես ընծա, չնայած մեր ազգում այլ մեկնաբանություններն էլ կան, որպեսզի թուրքերը չմտնեն գյուղ: Թուրքի փաշեն չի թողնում որ իր զինվորները սպանեն նրան՝ իր հանդգնության համար, ուղարկում են հետ պապիս: Պապս հետ է գալիս, ամբողջ գիշեր նազանը ձեռքին աչքը դռանը սպասում է, թե երբ են իր հետևից գալու, բայց ստահակը ոչ թե դռնից, այլ երդիկից է խփում պապիս: Կրակոցից հետո լաց, կոծ է սկսվում, աղմուկ, իմ պապը՝ Մամիկոն Սարոյի Հակոբյանը (հետո են դառնում Էլբակյան) այդ ժամանակ 1 տարեկան է լինում, իսկ եղբայրը՝ Ապետը 14 տարեկան, տանը եղել է նաև պապիս հորեղբայրը, որին պիչի (փոքր)

ամի ենք ասել, որը Ղարսից է եկած եղել ու ապրել է պապիս տանը: Մենակ ինքն էր ողջ մնացել իր ընտանիքից ու պապը բերել է հոբեղբորը իր տուն: Էդ ողբին, լացին վրա են հասնում, որ արդեն չկա Սարո պապը: Ապետը նայում է, որ դուռը փակ է, ֆայմում է որ երդիկից են խփել, վերցնում է հոր նագանը, նայում է վեր, տեսնում է հոր սպանողը հետ է վերադարձել, տեսնի իրոք սպանել է, թե պետք է նորից կրակել, 14 տարեկան տղան, ներքևից կրակում է բերանին ու սպանում հորը սպանողին: Ցավը նրանում է, որ պարզվում է, որ սպանողը ոչ թե թուրքն է, այլ հայը, որը մեր գյուղացի է՝ թուրքի շոր հագած, քիսիկով [ծնթ.100] օսկին ծոցը: Պապս մեզ այդպես էլ չասեց, թե ով էր եղել այդ մարդը, որ թշնամություն չլինի, ասում էր ես վրեժս առել եմ, բայց թե ինչպես, չգիտեմ: Լույսը չբացված երկրորդ դավաճանությունը. մատնում են, որ Սարոն ունի նաև նշան դրած սիրուն աղջիկ Սիրանուշ անունով: Թուրքերը գյուղի մոտակայքից մի քանի այլ աղջիկների հետ տանում են նաև նրան: Իսկ Ապետին իր հասակակից մի քանի տղաների հետ տանում են Հացիկ գյուղ, որտեղ ցորենի պահեստ է եղել, տանում լցնում են էնդեղ: Ապետը հոր համար այնքան է լացել, որ ուժասպառ է եղել ու քնել է ու երբ զարթնել է, գերանի արանքից լույս է տեսել, թուրքերի վառած կրակի լույսերը: Բոլորը քնած են եղել էդ ժամանակ, պահակներն էլ են քնած եղել, ինքը քյամար է ունեցել, հանել է ու դրանով պատը քանդել, քարը հանել է դուրս ու փախել է, բայց շորերը հանել է ու այդտեղի ցորենից լցրել, բերել է, որ քույրն ու պապս ուտեն: Սարերով փախել, եկել է մեր ձորի մաղաբեքը երկու տարի. (դրանց տեղը ինձ ցույց է տվել իմ հայրը, որին էլ իր հորեղբայրն է ցույց տվել) մինչև 21 թիվը ինքը վախով է եկել գյուղ, չի մնացել գյուղում:

Թուրքերը որ եկել են էնպիսի վախի մթնոլորտ է եղել, որ բոլորը վզները կախ ենթարկվել են, ոչ մի դիմադրություն չի եղել, պատմում են, որ մեկին, որի անունը Ներսես է եղել ձին տվել են, ասել են պահի, խելոք կանգնել, պահել է, չնայած կարող էր նստել ձին ու փախնել:

Պապիս թաղել են Մարմաշենի մոտ, ոչ թե գյուղի գերեզմանոցում, բայց գերեզմանաքարը հետագայում է կանգնեցվել:

* * *

*Բանասաց՝ **Բարսեղյան Բալասան Հարությունի**, ծնվ. 1898 թ.*
գ.Վահրամաբերդ: Ձայնագրությունը կատարվել է 1984 թ., մեզ է
փոխանցվել Հասմիկ Մաղաքյան-Գալստյանի կողմից, որին,
իր հերթին տրամադրել է պատմողի թոռ ***Հովհաննես Մկրտչյանը***:

Հարց. – Մամ, պատմի առաջի փախի դեպքերը

Պատասխան. – Չորեքշաբթի օր էր, լուսադեմ էր, տեսանք թուրքերը զինված դեմեն գալըմ են, մենք էլ էն վախտ գեղը սել ու մալն առանք, գնացինք դիբա Ղոնախղռան [ծնթ.101]: Էրթըմ ենք, էրթըմ ենք, հասանք, թուրքեն հեռեցանք, մեզ բան չեղավ էդ վախտը, տղամարդու զիան [ծնթ.102] չեղավ: Հըմը էս վերջի կռվին, յամա՛ն-յամա՛ն: Ես հարս գնացել իմ, ախպերս խաբար է էրե Բետուշի հետ, թե գնա Բալասին ըսա գա, ինչ օր ունին, շեվ ու շալակ ունին, քցե սելերը, էրթանք: Աչառն է մնացե, վիռն է մնացե, մե էրկու մեշոկ ալուր քցենք, մեզմ էլ շել ու շալակ, էրթանք: Էկա, օր նանեն նստել է (մենք հորքուրմ ունեինք, նանե էինք ըսըմ), բանջար է էփըմ: Առաչի օրը գնացե բանջար է բերե, թնդիրը վառել է, կաթով բանջար է էնըմ: Ըսի նանե ջան, թուրքը գալըմ է, փախեփախ է, էրթանք բղի, գա՞ս բղի, ըսավ – հյա, թնդիրը վառած, կերագուրը վրեն

գալու՞ եմ, չէ: Չեգավ, ես էլ բերեցի մաշինեն դրի, խալի-կարպետը դրի էդ վիոյի վրեն, հլը փոշմնություն քաշում եմ, թե իմ գողինքս թաժա, դնեի ֆուրղունին ինչ պդի ըլներ՝ ընդամենը մի-էրգու փութ բան, ընչի չքցի: Ընդից էլ ըսման էրի. ըսի ընչի քցեմ, տեքերկնկտանց մնա, իմը տանի՞մ, թող մնա: Թողեցի մնաց, մենք էլ ընգանք հարսիս խմորները. իրգվորե խմորը էրե, գրդնկըմ է, ըդման մնաց, ելանք: Մեր ապերն ու Խաչոն, մեյմ էլ ախպերս գնացել էին Ախլքալաք դարմնի. զարնան գլոխ էր, սելով, մալով, ֆուրղընով դարմնի են գնացե: Մեր սանիերը՝ ախպերս քավոր էր, եկավ, թե մեր ճոպանը տվեք, մենք էրթըմ ենք, քոչերը բարձել էրթըմ ենք, դուք հեչ տերը չեք էղնի: Օսանը (եղբոր կինը-Կ.Բ.) ըսավ – ինչ տեր էղնինք, Ռուբենը տունը չէ, սել ու մալ չկա, մենք ուր ենք էրթըմ: -Ի՞նչղ թե ուր ենք էրթըմ, ձեզի բդի ազատ էնեք, գալըմ է թուրքը:

Ելանք ընգանք ճամփա, անոթի-ծարավ, թախումով, Ղոնախդռան՝ Անգինի հերանց տունը. օսկեքը բուգս, քյամարը մեջքս շխկըր-շխկըր, խնամիք հասան, ըդոր մերը լավ, խելքը գլխին կնիգ էր, ըսավ.- Աստծու խաթեր, հմի թուրքերը քեզի նգարեցին, զիքսը [ծնթ. 103] վրեդ քեզ էլ հեղը կտանին, անաստված: Տեղոցտեղ փուլիները քցավ նեսս, հին շորերը քցավ վրես, մեզի հաց ու ջուր տվավ, կերանք, ելանք թախ Աղբուլաղ:Հասանք Աղբուլաղ, չիդեմ, օր հարսիս զարգել են, տերդերին: Գնացի հարսիս քրոջը՝ Սոնային, հարցրի Օսանից խաբար ունիս, ընչի չի էկե, ասեց Օսանին էլ, հորս էլ զարգել են: Հաց չունինք, կատոլների մեջը ալուրը լցավ, Աղբուլաղի մեջը տարավ, որ հաց թխե, զարու ալուր շաղեց, թխեց, էդ գիշեր լուսացավ, եգանք Պարնի գեղ: Չախոենց հետ էկանք, մե 10-12 օր կեցանք, հլը մեր սելերը չեն էկե՝ ապերը, Խաչոն, իմ ախպերս: 5-6 օր անցել էր էկան, զիդեն օր գեղը էդման փախեփախ է էղե, սարերով էկել են,տեսել են մեր արչոները չայիրներու մեջը արաձըմ են, ըսըմ

են տիա, մեր մալերը արաձեն գը,կա-չկա մեր շելլիքը [ծնթ.104] հող են: Էզան ինչ՝ լաց, օրոտմունք,թե Օսանը ըսման է էղե. ախպերս էդ մե կնիգն ունի, ինչ էնե, էղե պրձել է, ինչ պդի էնե: Ըղեղ 12 օր կեցանք, հրաման էկավ, թե իջեք, վերաբնակեք իրանց տները, օնբաշին [ծնթ.105] ըդման են ըսել թուրքերը: Ելանք էկանք, ասկյարներն էկան Ռենիզի մարդուն՝ Գարենին,հերոս տղա–զարաղավոյ էր, Նեսի ախպորը, Չախոյենց Եփրեմին քովերես ջոզին, տարան: Մեր քովն էլ լիքը փարա է, ապերը էրկու օր առաջ իմացել է, փողերը բերե, ամենքուս փարա է տվե՝ 1000-ներով դրեք ծոցերդ, օր չմնա տունը: Ապերն ուզեց փողերը տա ախպորն ազատի, պաբն ըսել է, թե դու թուրքի ինչին ես հավադըմ, կառնին ու չեն պրձցնե: Մանզասարենց տղեն, լավ, հարուստ մեզուճար տղա, ինչ օր ունեցվածք ունեին տունը՝ օսկի, արձաթ, տվին, էդ ըսաձի պես, էդ տղին էլ բաց չթողին: Ախպերս ըդեղ պրծավ, ինչ օր տարել էինք՝ ալուր ու շորշալակ, բարձինք սելը հետ էկանք: Էկանք, տեսանք կրակն ընգել է մեր տունը վառըմ է, ցորենի բարդանները մարագի դարմանի մեջ էինք պահե–վառըմ է, զարի-մարի-վառըմ է, զմբռղալեն կդավաղը, մարքները վառեն զը:

Էզանք օրա, քաղաք մնացինք մեր մալը ում օր կուղայինք, ըդոնց տունը մնացինք: Մի օր գիշերը Խաչոն ու ապերը գնացին գյուղ, տեսան օր հորի ցորենը մնացել է. դռանը քարից մեծ հոր ունեինք, ձեռ չէին տվե, հանել էին մի քանի մեշոկ բերել քաղաք: Հորի բերանն օր բացել էին, իրանցից հետո թուրքերը էդ էլ տարան:

## ՓՈՔՐ ՔԵԹԻ

*Բանասաց՝* ***Գոհար Երվանդի Սարգսյան-Արիստակեսյան****, ծնվ. 1942թ.*
գ. Կապս, Ձայնագրություն 150107- 2231:

Իմ կեսրանք եղել են Փոքր Քեթիից, տեղի ժողովուրդը եկել են Բասենի Ախա գյուղից, գյուղում մի մարդ է եղել Սարո անունով, որը Այվազենցից է եղել: Կիսուրս կպատմեր, էդ ժամանակ ինքը ե-ղել է 7 տարեկան, ախպերն էլ 5 տարեկան, իրանց ծնողներին սպանել են, թուրքերը գեղի երեխեքին հավաքել են, 20 թվի նոյեմ-բերին, երբ սովետը եկել է, թուրքերը պատրաստվել են էրթալու, հավաքել են 2 գեղի երեխեքին, տարել լցրել են Մեծ Քեթի գյուղի մեծ մարագը, թե գոմը չիդեմ, որտեղ խոտի դեզեր են եղել: Կեսուրս կսե խոտը փռել են երեխեքի տակը ու պատրաստվել են կրակ տա-լու. կսեր ինձանից մեծերն էլ կային, ծնողներ, մի մասը հավաքվել է մի կողմը, մյուսը՝ մյուս, լաց, ողբ, վայնասուն, մեկ էլ բացվավ գոմի դուռը, էդ Սարոն ըսել է հերթով դուրս եկեք կամաց, իրար չխան-գարեք: Իրանք թուրքերի հետ ինչ էին խոսե, ինչ դակումենտ էին ցույց տվե, չգիտեմ, բայց գոմը չեն վառե ու իրանք փրկվել են:

